ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, 2011 թ.

Ռեսուրսների ձեռնարկ

Համաշխարհային ժառանգություն

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



ՅՈՒՆԵՍԿՕ

Համաշխարհային ժառանգության կոնվենցիա

ԻԿԿՌՕՄ

ԻԿՕՄՕՍ

IUCN

Published in 2018 by the United Nations Educational, Scientific and Cultural Organization, 7, place de Fontenoy, 75352 Paris 07 SP, France

© UNESCO /ICCROM/ICOMOS/IUCN 2018

This publication is available in Open Access under the Attribution-NonCommercial-ShareAlike 3.0 IGO (CC-BY-NC-SA 3.0 IGO) license (http://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/igo/). By using the content of this publication, the users accept to be bound by the terms of use of the UNESCO Open Access Repository (www.unesco.org/open-access/terms-use-ccbyncsa-en).

Original title: **Preparing World Heritage Nominations (Second edition, 2011)**
Published in 2011 by the United Nations Educational, Scientific and Cultural Organization.

The designations employed and the presentation of material throughout this publication do not imply the expression of any opinion whatsoever on the part of UNESCO concerning the legal status of any country, territory, city or area or of its authorities, or concerning the delimitation of its frontiers or boundaries.

The ideas and opinions expressed in this publication are those of the authors; they are not necessarily those of UNESCO and do not commit the Organization.

ICCROM
Via di San Michele 13
I-00153 Rome
Italy
Tel.: +39 06 585-531
Faks: +39 06 585-53349
E-mail: iccrom@iccrom.org
http://www.iccrom.org

ICOMOS
11 rue du Séminaire de Conflans
94220 Charenton-le-Pont
France
tel.: +33(0)1 41 94 17 59
fax: +33(0)1 48 93 19 16
e-mail: secretariat@icomos.org
http://www.icomos.org

IUCN
Rue Mauverney 28
1196 Gland
Switzerland
tel.: +41 (22) 999-0000
fax: +41 (22) 999-0002
e-mail: worldheritage@iucn.org
http://www.iucn.org

UNESCO World Heritage Centre
7, Place de Fontenoy
75352 Paris 07 SP
France
tel.: +33 (0)1 45 68 11 04
http://whc.unesco.org

Cover photo: uKhahlamba / Drakensberg Park, South Africa
© OUR PLACE – The World Heritage Collection • www.ourplaceworldheritage.com
Original Graphic design, cover design and typeset: Recto Verso

Adapted by: Hasmik Stepanyan, Nerses Kostanyan

Printed by: Master Print

Printed in Yerevan 2018

Հրատարակվել է 2018 թ. **ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնում,** 7 Ֆոնտենոյ հրապարակ 75352 Փարիզ 07 SP, Ֆրանսիա

Սույն հրատարակությունը մատչելի է բաց հղմամբ՝ հեղինակության հաստատման – շահույթի չհետապնդման – տարածման 3.0 IGO (CC-BY-NC-SA 3.0 IGO) լիցենզիայի շրջանակներում (http://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/igo/):

Սույն հրատարակության բովանդակությունն օգտագործելիս՝ կիրառողներն ընդունում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի բաց ավանդապահոցի կողմից կիրառման համար սահմանված շրջանակները (www.unesco.org/open-access/terms-use-ccbyncsa-en):

Բնօրինակ անվանումը. **Preparing World Heritage Nominations (Second edition, 2011)**
Հրատարակվել է 2011 թ. ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակութային կազմակերպության կողմից:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնը, ԻԿԿՌՕՄ-ը, ԻԿՕՄՕՍ-ը և IUCN-ը և այլ մասնակից կազմակերպություններ պատասխանատվություն չեն կրում սույն ձեռնարկի թարգմանության ընթացքում թույլ տված բացթողումների կամ դրա շրջանակներում որևէ տվյալում մեկնաբանության արդյունքում կատարած հիմնական սխալների համար:

Սույն ձեռնարկը երկրորդ հրատարակությունն է: Առաջին հրատարակությունը՝ Հրատարակություն 2010, Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման Գործառնական ուղեցույցի (2008 թ.) վրա հիմնված նյութ է: Սույն ձեռնակը հիմնված է Գործառնական ուղեցույցի նոր տարբերակի վրա (2011 թ.):

Սույն ձեռնարկի առանց շահույթ հետապնդելու օգտագործումը /վերարտադրումը/ խրախուսվում է, եթե մշտապես հղում է կատարվում բնօրինակին:

ԻԿԿՌՕՄ
Դի Սան Միշել 13
I-00153 Հռոմ
Իտալիա
Հեռ. +39 06 585-531
Ֆաքս. +39 06 585-53349
Էլ. Փոստ. iccrom@iccrom.org
http://www.iccrom.org

ԻԿՕՄՕՍ
Սեմինար դե Կոնֆլանս փողոց 11
94220 Շարենտոն-լե-Պոնտ
75015 Փարիզ
Ֆրանսիա
Հեռ. +33 (0)1 45 67 67 70
Ֆաքս. +33 (0)1 45 66 06 22
Էլ. փոստ. secretariat@icomos.org
http://www.icomos.org

IUCN
Մովերնեյ փողոց 28
1196 Գլանդ
Շվեյցարիա
Հեռ. +41 (22) 999-0000
Ֆաքս. +41 (22) 999-0002
Էլ. փոստ. worldheritage@iucn.org
http://www.iucn.org

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն
7, Ֆոնտենոյ հրապարակ
75352 Փարիզ 07 SP
Ֆրանսիա
Հեռ. +33 (0)1 45 68 18 76
Ֆաքս. +33 (0)1 45 68 55 70
Էլ. փոստ. wh-info@unesco.org
http://whc.unesco.org

© ՅՈՒՆԵՍԿՕ / ԻԿԿՌՕՄ/ ԻԿՕՄՕՍ/ IUCN, 2018

Շապիկի լուսանկարը: uKhahlamba / Drakensberg Park (,ուԽալամբա / Դրակենսբերգ այգի), Հարավային Աֆրիկա
© OUR PLACE–Համաշխարհային ժառանգության հավաքածու
www.ourplaceworldheritage.com
Գրաֆիկական ձևավորումը՝ Recto Verso

Կազմեցին: Հասմիկ Ստեփանյան, Ներսես Կոստանյան
Տպագրվել է: «Մաստեր Պրինտ» ՍՊԸ
Հրատարակվել է՝ Երևան 2018

With the support of Ireland

Comhshaol, Oidhreacht agus Rialtas Áitiúil
Environment, Heritage and Local Government

Համաշխարհային ժառանգության մեթոդական ձեռնարկների շարքի մասին

1972 թ.-ին Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի ընդունումից ի վեր՝ Համաշխարհային ժառանգության ցանկը շարունակաբար փոփոխվել է և կայուն կերպով ընդլայնվում է: Ընդլայնմանը զուգընթաց անհրաժեշտություն է առաջանում ուղղորդել անդամ պետություններին կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ: Փորձագետների տարբեր հանդիպումների և պարբերական զեկույցների ներկայացման արդյունքում բացահայտվել է տարբեր ոլորտներում վերապատրաստման ու կարողությունների զարգացման վրա կենտրոնանալու անհրաժեշտություն, երբ անդամ պետություններն ու Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարիչները կարիք ունեն աջակցության: Համաշխարհային ժառանգությանը նվիրված մեթոդական ձեռնարկների շարքը ստեղծվել է այդ կարիքներին ի պատասխան:

Շարքի հրատարակումը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի խորհրդատվական երեք մարմինների (ԻԿԿՌՕՄ, ԻԿՕՄՈՍ և IUCN) ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի՝ որպես կոնվենցիայի քարտուղարության, համատեղ նախաձեռնությունն է: Համաշխարհային ժառանգության կոմիտեն իր 30-րդ նիստի ընթացքում (Վիլնյուս, Լիտվա, 2006 թ. հուլիս) իր աջակցությունը հայտնեց այս նախաձեռնությանը և պահանջեց, որ Խորհրդատվական մարմինները և Համաշխարհային ժառանգության կենտրոնը սկսեն մի շարք թեմատիկ Մեթոդական ձեռնարկների նախապատրաստական և հրատարակման աշխատանքները: Կոմիտեի 31-րդ (2007) և 32-րդ (2008) նիստերի ընթացքում հաստատվեցին հրատարակման պլանը և սահմանվեց առաջնահերթ գրականության ցանկը:

Խորհրդատվական երեք մարմինների և Համաշխարհային ժառանգության կենտրոնի անդամներից բաղկացած խմբագրական խորհուրդը պարբերաբար հանդիպում է նախապատրաստական և հրատարակման տարբեր ասպեկտների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Ելնելով թեմատիկայից՝ յուրաքանչյուր ձեռնարկի համար խորհրդատվական մարմիններից մեկը կամ Համաշխարհային ժառանգության կենտրոնը հանդես է գալիս որպես համակարգող ղեկավար մարմին, մինչդեռ վերջնական հրատարակումն իրականացվում է Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից:

Մեթոդական ձեռնարկները նպատակ ունեն կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ ուղղորդված ուղեցույց տրամադրել անդամ պետություններին, ժառանգության պաշտպանության ոլորտում ներգրավված մարմիններին, տեղական կառավարման մարմիններին, հուշարձանի կառավարիչներին և Համաշխարհային ժառանգության հետ կապ ունեցող տեղական համայնքներին, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերին՝ բացահայտման և պահպանության գործընթացներում գործունեություն ծավալելու համար: Դրանց նպատակն է գիտելիք և աջակցություն տրամադրելով՝ ձևավորել ներկայացուցչական և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկ, որը բաղկացած կլինի լավագույնս պաշտպանված և արդյունավետ կառավարվող հուշարձաններից:

Ձեռնարկները կազմվում են որպես հարմարավետ գործիքներ, որոնք ծառայելու են Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի վերաբերյալ կարողությունների զարգացման և իրազեկվածության բարձրացման նպատակին:
Դրանք կարող են առանձին գործածվել որպես ինքնուսույց, ինչպես նաև գործնական դասընթացների նյութ և պետք է լրացնեն այն հիմնական դրույթները, որոնք անհրաժեշտ են կոնվենցիայի բուն տեքստը և դրա կիրարկման Գործառնական ուղեցույցը ընկալելու համար:

Սույն շարքի գրականությունն առկա է նաև առցանց՝ PDF ձևաչափով և հնարավոր է անվճար ներբեռնել:

Գրականության ցանկը՝
Համաշխարհային ժառանգությանն ուղղված աղետների ռիսկերի կառավարում (2010 թ. հունիս)
Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապատրաստում
Համաշխարհային մշակութային ժառանգության կառավարում
Համաշխարհային բնության ժառանգության կառավարում

Նախաբան

Անընդհատ փոփոխվող աշխարհում, որտեղ ամեն օր ի հայտ են գալիս պահպանվածության հետ կապված մարտահրավերներ, հարմարվելու կարողությունը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի հիմնական հատկություններից մեկն է: Քանի որ կոնվենցիայի բուն տեքստը, ըստ էության, փոփոխության չի ենթարկվում, դրա կիրարկման Գործառնական ուղեցույցը, որի դրույթների միջոցով կյանքի են կոչվում կոնվենցիայի սկզբունքները, նախատեսում է նոր հասկացությունների և գործընթացների ինտեգրումն ու զարգացումը: Կոնվենցիայի կիրակման Գործառնական ուղեցույցի վերջին լրամշակված տարբերակը (2011 թ. օգոստոս) ներառում է ոչ միայն այդ նոր գաղափարները, այլև արտացոլում է օրեցօր աճող մեր հավաքական փորձը:

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների ան–վանակարգային փաստաթղթերի մանրամասն վերլուծությունը՝ իրականացված 1990-ականների վերջում, բացահայտեց մի իրավիճակ, որը կարող էր վտանգել կոնվենցիայի արժանահավատությունը: Այնպիսի տարրերը, որոնք նույնքան կարևոր են, որքան ցանկում ընդգրկված հուշարձանների սահմանները, հաճախ մնում էին չհստակեցված և անհայտ: Անվանակարգային փաթեթները կազմված էին մի քանի էջերից՝ պարունակելով բավականին ընդհանրական տեղեկատվություն: Նման սահմանափակ անվանակարգային փաթեթների պատճառով նույնիսկ ցանկում ընդգրկված հուշարձանի պաշտպանությունն ու կառավարումը կարող էին վտանգվել:

Նման բացթողումները անվանակարգերի ներկայացման գործընթացը բարելավելու հիմք հանդիսացան: Անվանակարգերի ամբողջականության ստուգման պահանջը ներմուծվեց 1999 թ.-ին: Մինչ այդ անվանակարգային փաթեթներն ավտոմատ կերպով փոխանցվում էին խորհրդատվական մարմիններին՝ առանց ստուգելու դրանց պարունակությունը քարտուղարության կողմից: Ստեղծված իրավիճակի հետևանքով 1978-1998 թթ. ընթացքում ցանկում ընդգրկված հուշարձանների անվանակարգային փաթեթները հիմնականում անհամապատասխան են պահպանվածության ապա–հովման տեսանկյունից:
Երբ 2005 թ.-ին Գործառնական ուղեցույցի վերանայված տարբերակն ուժի մեջ մտավ, Համաշխարհային ժառանգության կոմիտեն պաշտոնապես հաստատեց ամբողջականության ստուգման պահանջը և անվանակարգերի համար մշակված նոր, առավել մանրամասն ու նկարագրական ձևաչափը: 1999 թ.-ից ի վեր անվանակարգերում ներկայացված տեղեկատվության որակը և խորությունը էապես բարելավել են Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու գործընթացը: Ավելին, այն օգնել է ամրապնդել կոնվենցիայի կիրարկումը՝ էապես բարձրացնելով և խթանելով ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանվածության վիճակի մոնիթորինգը:

Առավել համապարփակ պահանջների հետ մեկտեղ անվանակարգերի նախա–պատրաստումը դարձավ կարևոր, բայց բավականին բարդ գործընթաց, որը պահանջում է տարբեր անհրաժեշտ պայմանների լավ ընկալում: Տեղի բնակչության մասնակցությունն անվանակարգերի պատրաստման գործընթացներին կարևոր է նաև այն տեսանկյունից, որ նրանց հնարավորություն է ընձեռվում անդամ պետության հետ միասին կիսել հուշարձանի պահպանության պատասխանատվությունը, ինչը մեծապես խրախուսվում է:
Անվանակարգային փաստաթուղթը խորհրդատվական մարմինների գնահատականի հետ միասին այն առաջնային հիմքն է, համաձայն որի կոմիտեն որոշում է կայացնում հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու վերաբերյալ:

Համաշխարհային ժառանգության կարգավիճակի մեծ հեղինակության և ճանաչման հանգամանքով պայմանավորված՝ աճում է հետաքրքրվածությունը և շահագրգռվածությունը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու նկատմամբ: Այսպիսով, քանի դեռ փորձարկվում է «նախնական գործընթացի» նպատակահարմարությունը, սույն ձեռնարկի արժեքը ակնհայտ է դառնում անդամ պետությունների կողմից նոր անվանակարգերի մշակման տեսանկյունից, որում ներկայացվում են Համաշխարհային բացառիկ արժեքի նոր հիմնավորումներ, ինչպես նաև ի հայտ են գալիս նոր թեմաներ անվանակարգերին աջակցելու ներկայացման համար:

Ավելին, մեկնաբանություններն ու գործնական ուղղորդումներն անհրաժեշտություն են՝ հաշվի առնելով առաջադրվող հուշարձանների բարդության աստիճանը, օրինակ՝ անդրազգային սերիական հուշարձանների անվանակարգերի աճող թիվը՝ ներառյալ միջմայրցամաքային նշանակության որոշ հուշարձաններ:

Սույն մեթոդական ձեռնարկը մշակվել է՝ հաշվի առնելով վերոգրյալ կարիքները, ինչպես նաև խորհրդատվական մարմինների և մի շարք փորձագետների աջակցության շնորհիվ: Հուսով ենք, որ հաջող անվանակարգերի նախապատրաստման ժամանակ այն կդառնա Գործառնական ուղեցույցի տեքստը լրացնելու արդյունավետ գործիք՝ Համաշխարհային ժառանգության պաշտպանությունն ապահովելու համար:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրեն
Կիշորե Ռաո
(2011-2015 թթ.)

Աջակիցներ

Համակարգող հեղինակ
Դունքան Մարշալ

IUCN-ի հեղինակներ
Թիմ Բադման
Բասթիան Բոմհարդ
Պեդրո Ռոսաբալ
Փոլ Դինգուոլ

ԻԿՕՄՕՍ-ի հեղինակներ
Դունքան Մարշալ
Սյուզան Դենյեր

Խմբագիրներ /այլ համագործակցողներ/
Ալեսանդրո Բալսամո
Գվենել Բուրդին
Քրիստալ Բաքլի
Էյնջել Կաբեզա
Կլոդին Դեոմ
Ռեգինա Դուրիգելլո
Ֆիլլիս Էլլին
Նիկոլաս Ֆոշեռ
Ջան Գուո
Թիլման Ջեգեր
Լյուբա Ջանիկովա
Քիոնգ Լու
Ջոու Լու
Վեբբեր Նդորո
Քրիստոֆ Ռիվե
Մայքլ Թըռներ
Գամինի Վիջեսուրիյա

Ստորև ներկայացվում է համագործակցող այլ անձանց ցանկը, ովքեր մշակել են բնության և մշակութային անվնակարգերի մեթոդական նախորդ ձեռնարկների նախագծերը, որոնք սույն համակցված ձեռնարկի հիմքն են.

ԲՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐ

Խմբագիրներ
Ալեսանդրո Բալսամո, Համաշխարհային ժառանգության կենտրոն
Գայ Դեբոնե, Համաշխարհային ժառան–գության կենտրոն
Մարկ Փաթրի, Համաշխարհային ժառան–գության կենտրոն
Կիշորե Ռաո, Համաշխարհային ժառան–գության կենտրոն
Մեխթիլդ Ռոսլեր, Համաշխարհային ժառան–գության կենտրոն
Փիթեր Սթոթ, Համաշխարհային ժառանգության կենտրոնի նախկին աշխատող

Ջո Քինգ, ԻԿԿՌՕՄ
Գամինի Վիջեսուրիյա, ԻԿԿՌՕՄ

Թարեք Աբդուլհավա, IUCN
Դելվին Դյուպուա, IUCN
Էլերի Համիլթոն – Սմիթ, IUCN
Կարի Լաիթի, IUCN
Ջոզեֆինե Լանգլի, IUCN
Ջեորջինա Փիռդ, IUCN
Պեդրո Ռոսաբալ, IUCN
Դեյվիդ Շեփարդ, IUCN
Կումիկո Յոնեդա, IUCN

Ջիմ Բարբորակ, WCPA
Ստեֆանիե Էյսինգ, WCPA
Վինոդ Մաթուր, WCPA

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի համակարգում
Վեսնա Վուժիչիչ Լուգասսի
Լորա Ֆրանկ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐ

Հայեցակարգ
Բենեդիկտ Սելֆսլագ, ԻԿՕՄՕՍ

Աջակիցներ
Գվենել Բուրդին, ԻԿՕՄՕՍ
Միշել Քոթ, ԻԿՕՄՕՍ
Ռեգինա Դուրիգելլո, ԻԿՕՄՕՍ
Յուկկա Յոկիլեհթո, ԻԿՕՄՕՍ

Խմբագիրներ
Ալեսանդրո Բալսամո, Համաշխարհային ժառանգության կենտրոն
Մեխթիլդ Ռոսլեր, Համաշխարհային ժառանգության կենտրոն
Աննե Լեմեյստր, Համաշխարհային ժառանգության կենտրոն

Քրիստալ Բաքլի, ԻԿՕՄՕՍ
Ալֆրեդո Կոնտի, ԻԿՕՄՕՍ
Սյուզան Դենաեր
Նոբուկո Ինաբա, ԻԿՕՄՕՍ
Յուկկա Յոկիլեհթո, ԻԿՕՄՕՍ
Էդվարդ Մատենգա, ԻԿՕՄՕՍ
Բենեդիկտ Սելֆսլագ, ԻԿՕՄՕՍ

Բովանդակություն

Նախաբանը՝ Համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրեն Կիշորե Ռաոյի 2

Աջակիցներ 4

Առաջաբանը՝ ԻԿՕՄՕՍ-ի և IUCN-ի 6

Ներածություն 8
Մեթոդական ձեռնարկի համատեքստը և ակնարկ
Համագործակցություն անդամ պետությունների միջև
Ու՞մ համար է նախատեսված մեթոդական ձեռնարկը

1 | *Համաշխարհային ժառանգության մասին /պատմություն/* 10
1.1 Իրազեկվածություն
1.2 Համաշխարհային ժառանգության անվանակարգի պատրաստման նկարագրություն
1.3 Համաշխարհային ժառանգության հայեցակարգերի նկարագրություն

2 | *Նախապատրաստում* 51
2.1 Հուշարձանի վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկատվություն
2.2 Խմբի ձևավորում
2.3 Տեղի բնակչության և այլ շահագրգիռ կողմերի մասնակցություն
1.2 Նախապատրաստման գործընթացի փուլային պլանավորում և առաջարկվող հիմնական փուլերը

3 | *Հուշարձանի առանձնահատկությունների սահմանումը և ընկալումը* 56
3.1 Պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք, ատրիբուտները և սահմանները
3.2 Լրացուցիչ խորհուրդներ

4 | *Անվանակարգային փաթեթի շարադրումն ու նախապատրաստումը* 94
4.1 Հիմնական խորհուրդներ
4.2 Անվանակարգի ձևաչափը
4.3 Լրացուցիչ խորհրդատվություն

5 | *Գնահատման գործընթաց* 125
5.1 Հիմնական
5.2 IUCN-ի գնահատման գործընթացը
5.3 ԻԿՕՄՕՍ-ի գնահատման գործընթացը

Մատենագիտություն 130

Կոնտակտային տեղեկատվություն 135

Նախաբան

Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապատրաստում ձեռնարկը մշակվել է ԻԿՕՄՕՍ-ի և IUCN-ի կողմից և տրամադրում է լրացուցիչ ուղեցույց բնության, մշակութային և խառը հուշարձանների անվանակարգային փաթեթների նախապատրաստման վերաբերյալ՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով:

Ձեռնարկի կազմման հիմքը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման 2011թ. օգոստոսի դրությամբ հաստատված Գործառնական ուղեցույցն է, որի նպատակը այն լրացնելն է: Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապատրաստման գործում լուրջ հետաքրքրվածություն ցուցաբերող յուրաքանչյուր անձ պետք է ունենա Գործառնական ուղեցույցի վերջին տարբերակը և ծանոթանա դրա բովանդակությանը:

Մասնավորապես, ձեռնարկի նպատակը անդամ պետություններին Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման հարցում աջակցելն է, ինչպես նաև ընդհանուր սկզբունքների և անհրաժեշտ գիտելիքների մասին տեղեկատվություն ներկայացնելը, ինչը կերաշխավորի Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող և լավագույնս կառավարվող Համաշխարհային ժառանգության արժանահավատ ցանկի առկայությունը:

Համաշխարհային ժառանգության կոմիտեի և անդամ պետությունների ներկայացրած պահանջին համապատասխան՝ սա սկզբնական փուլում անդամ պետություններին աջակցություն տրամադրելու նախաձեռնությունն է՝ սկզբնական կետը, որից հետո անվանակարգը ներկայացվում է պաշտոնական գնահատման, քանի որ անվանակարգերը գնահատող խորհրդատվական մարմինները՝ ԻԿՕՄՕՍ-ը և IUCN-ը, չեն կարող ուղիղ աշխատել առանձին անվանակարգերի նախապատրաստման ուղղությամբ: Այնուամենայնիվ, հուսով ենք, որ ձեռնարկը անդամ պետություններին կօգնի ուշադրությամբ ուսումնասիրել Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապատրաստումից բխող հետևանքները և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ համոզվելու, որ գործադրվող ջանքերը արդարացված են ինչպես հուշարձանի պահպանության, այնպես էլ տեղական համայնքների ու տեղական շրջապատի այլ շահագրգիռ կողմերի բարեկեցության տեսանկյունից:

Ժամանակի սղությունը հաջող անվանակարգի նախապատրաստման ամենամեծ թշնամին է: Դրանցից շատերը նախապատրաստվել են անհիրատեսական կարճ ժամանակահատվածներում: Առնվազն մեկ տարի կպահանջվի համապատասխան աջակցող մեխանիզմներ ստեղծելու և նյութերի հավաքագրման համար, և մեկ տարի ևս՝ անվանակարգի տեքստը պատրաստելու և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելու համար: Հետազոտության անհրաժեշտության դեպքում պետք է ուժեղացնել պահպանությունը, իսկ տեղում ներդնել նոր կառավարման համակարգեր և փաստաթղթավորել այնպիսի հաշվարկով, որ գործընթացը կարող է երկարաժամկետ լինել: Եթե նպատակը հաջող անվանակարգի պատրաստումն է, որը կհանգեցնի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկմանը և հուշարձանի երկարաժամկետ պահպանմանը, ապա անհրաժեշտ է սահմանել իրատեսական ժամանակահատված:

Շատ հաճախ նախապատրաստման աշխատանքներում թերացումները հանգեցնում են նրան, որ անվանակարգերը վերադարձվում են լրամշակման կամ հետաձգվում են, ինչը բացասաբար է ազդում անդամ պետությունների, Համաշխարհային ժառանգության կոմիտեի և խորհրդատվական մարմինների վրա:

Երբեմն հանձն են առնվում քաղաքական պարտավորություններ, որոնք սահմանում են անիրատեսական ժամանակահատված անվանակարգի պատրաստման համար, ինչը հանգեցնում է անհամապատասխան և գնահատման համար ոչ պատրաստ անվանակարգային փաթեթի:

Անդամ պետություններին օգնելու նպատակով ձեռնարկը մեկտեղում է հուշարձանների անվանակարգերի պատրաստման համար առկա գիտելիքները և մատչելի ռեսուրսները: Այն նաև նպատակ ունի վերհանել և բացատրել Գործառնական ուղեցույցի այն մասերը, որոնք ուղղակիորեն առնչվում են Համաշխարհային ժառանգության անվանակարգերին: Ավելին, հստակ ուղղորդում է տրվում անվանակարգերի նախապատրաստման ընդհանուր մոտեցման, նախապատրաստական աշխատանքներին, որոնք անհրաժեշտ են նախքան հուշարձանի առաջադրման մասին որոշում կայացնելը, ինչպես նաև անվանակարգային փաթեթում կարևորագույն տարրերի ընդգրկման վերաբերյալ:

Թեև ձեռնարկը չի ներառում փաթեթի բոլոր ասպեկտները, սակայն, ելնելով խորհրդատվական մարմինների փորձից, նախանշում է նրանք, որոնք համակողմանի ներկայացված չեն բազմաթիվ անվանակարգային փաթեթներում: Հրատարակությանը աջակցել է Համաշխարհային ժառանգության հիմնադրամը և Իռլանդիայի շրջակա միջավայրի, ժառանգության և տեղական կառավարման մարմինների նախարարությունը: Մեր երախտագիտությունն ենք հայտնում ԻԿՕՄՕՍ-ին, IUCN-ին և դրանց ցանցերին ֆինանսավորման և կամավոր աջակցության համար:

ԻԿՕՄՕՍ-ը և IUCN-ը հուսով են, որ ձեռնարկում ներկայացված խորհրդատվությունը օգտակար կլինի և ողջունում են ցանկացած արձագանք առաջարկված բարելավումների վերաբերյալ:

ԻԿՕՄՕՍ և IUCN

Նախաբան

Մեթոդական ձեռնարկի համատեքստը և ակնարկ

Այս մեթոդական ձեռնարկի նպատակն է օգնել անդամ պետություններին որակյալ Համաշխարհային ժառանգության անվանակարգերի պատրաստման հարցում:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիան և Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման Գործառնական ուղեցույցը (վերջին տարբերակը 2011 թ. օգոստոսի դրությամբ) հիմնական փաստաթղթերն են և հասանալի են Համաշխարհային ժառանգության կենտրոնի կայքէջում: Գործառնական ուղեցույցը կարևոր նշանակություն ունի հասնակալու համար, թե ինչպես է կիրարկվում Համաշխարհային ժառանգության կոնվենցիան: Սույն ձեռնարկը պետք է օգտագործվի Գործառնական ուղեցույցի վերջնական տարբերակի հետ միասին, որը պարբերաբար վերանայվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից: Ուղեցույցն անհրաժեշտ է ընթերցել սույն ձեռնարկից առաջ և դրանից օգտվել անվանակարգերի նախապատրաստման ողջ գործընթացի ընթացքում:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի բուն տեքստը և վերջինիս կիրարկման Գործառնական ուղեցույցը պարունակում են հստակ խորհրդատվություն Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի իրականացման և պահանջների մասին: Սույն ձեռնարկը չի փոխարինում Գործառնական ուղեցույցին, սակայն տրամադրում է լրացուցիչ ուղղորդում: Բոլոր դեպքերում կոնվենցիան և Գործառնական ուղեցույցը մնում են հղում կատարելու հիմնական նյութը: Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի տեքստը (առկա է արաբերենով, չինարենով, անգլերենով, ֆրանսերենով, եբրայերենով, պորտուգալերենով, ռուսերենով և իսպաներենով) և Գործառնական ուղեցույցը (անգլերենով և ֆրանսերենով) հասանելի է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնում և դրա կայքէջում (http://whc.unesco.org/):

Գոյություն ունեն անվանակարգի պատրաստման տարբեր եղանակներ: Վարչական կառուցվածքների և մշակույթների բազմազանությունը պարտադիր արտացոլված են անվանակարգերում: Տեղին չէ առաջարկել «բաղադրատոմս» կամ գերադասված աշխատանքային մեթոդ անվանակարգերի նախապատրաստման համար: Դրա համար գոյություն ունեն բազմաթիվ այլ ձևեր: Խորհրդատվական մարմինները, այնուամենայնիվ, կարծում են, որ գոյություն ունեն մի քանի հիմնական սկզբունքներ, որոնցով պետք է խարսխված լինեն բոլոր լավ անվանակարգերը: Դրանցով երաշխավորվում է ամենահամապատասխան հուշարձանների առաջադրումը, ինչպես նաև հնարավորինս արդյունավետ ներկայացումն անվանակարգում, իսկ անվանակարգի ներկայացման գործընթացն ինքնին ներդրում է մշակութային և բնության հուշարձանների պահպանության, պահպանման և արդյունավետ կառավարման գործում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

նախ կարդացեք Գործառնական ուղեցույցը

Գոյություն ունեն բազմաթիվ նմանություններ, բայց կան նաև զգալի տարբերություններ մշակութային և բնության ժառանգության անվանակարգերի պատրաստման միջև: Սույն ձեռնարկի մի քանի բաժիններ կարող են համապա-տասխանաբար կիրառվել մշակութային և բնության ժառանգության հուշարձանների համատեքատում: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ մշակութային և բնության հուշարձանների չափորոշիչների նկատմամբ նախկինում կիրառված տարբերակումն այլևս գոյություն չունի:

«Համաշխարհային բացառիկ արժեք» հասկացությունը ընկած է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի հիմքում: Այն ընդգրկված բոլոր հուշարձանների հիմնաքարն է: Անվանակարգի հիմնական նպատակը հուշարձանի բաղկացուցիչների ներկայացումն է, թե ինչու ունի Համաշխարհային բացառիկ արժեք, և թե ինչպես է սույն արժեքը պահպանվում, պաշտպանվում, կոնսերվացվում, կառավարվում, մոնիթորինգի ենթարկվում և հաղորդակցվում:

Ձեռնարկը նպատակ ունի՝
- ընդգծել Համաշխարհային ժառանգության առաջադրման համակարգն ընկալելու կարևորությունը,
- ընդգծել և պարզ եզրույթներով բացատրել Համաշխարհային ժառանգության հիմնական հասկացությունները,
- ընդգծել թիմային աշխատանքի կարևորությունը անվանակարգի նախապատրաստման գործում,
- ապահովել անվանակարգի պատրաստման աշխատանքի ծավալի ճիշտ ընկալումը,
- տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն՝ հուշարձանն ընկալելու հարցում,
- տրամադրել խորհրդատվություն անվանակարգային փաթեթի նախապատրաստման վերաբերյալ՝ Գործառնական ուղեցույցի դրույթների հստակեցմանն օգնելու նպատակով:

Ձեռնարկը որոշակի խորհրդատվություն է տրամադրում Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի ընդլայնման մասով, քանի որ էական ընդլայնումը դիտարկվում է որպես նոր անվանակարգ:

Համագործակցություն անդամ պետությունների միջև

Համաշխարհային ժառանգության կոնվենցիան խթանում է միջազգային համագործակցությունը կոնվենցիայով սահմանված նպատակներին հասնելու համար: Համաշխարհային ժառանգության ցանկում անվանակարգերի ընդգրկման գործընթացը բազմաթիվ հնարավորություններ է ընձեռում նման համագործակցության համար, ներառյալ՝
- մեկ անդամ պետության կողմից մյուսին տեխնիկական և ֆինանսական աջակցության տրամադրում
- անդրսահմանային /անդրազգային/ անվանակարգերի մշակում
- հետազոտություն՝ ուժեղ համեմատական վերլուծություն մշակելու համար
- աջակցություն անվանակարգերի միջազգային փորձագիտական վերլուծություն անցկացնելու հարցում՝ նախքան պաշտոնապես ներկայացնելը:

Համաշխարհային ժառանգության անվանակարգերը չպետք է դիտարկվեն որպես մրցակցություն անդամ պետությունների միջև, քանի որ դա հակասում է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի ոգուն:

Ու՞մ համար է նախատեսված մեթոդական ձեռնարկը

Սույն ձեռնարկը առաջին հերթին նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր մասնակցում են հուշարձանի համար Համաշխարհային ժառանգության անվանակարգերի պատրաստմանը: Այն կարող է նաև օգտակար լինել նախնական ցանկերի պատրաստման, ինչպես նաև ժառանգությանն առնչվող այլ ցուցակագրումների համար:

Բացի այդ, այն կարող է հետաքրքրել՝
- անդամ պետություններին՝ դաշնային և ազգային մակարդակներում,
- ժառանգության պաշտպանություն /պաշտպանվող տարածքների պաշտպանություն/ իրականացնող գործակալություններին,
- հասարակական կազմակերպություններին (ՀԿ-ներ),
- տեղական կառավարման մարմիններին,
- տեղական համայնքներին,
- համապատասխան հաստատություններին,
- համաշխարհային ժառանգության անվանակարգերի մշակման ոլորտում գործնական պարապմունքներ կամ դասընթացներ կազմակերպող անձանց և շահագրգիռ անհատներին:

Սույն ձեռնարկը նախատեսված է, որպես գործիք՝
- ինքնուսուցման,
- գործնական պարապմունքների,
- ճեպազրույցների և կրթության համար:

1 Համաշխարհային ժառանգության մասին

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եղեք լավ պատրաստված և կազմակերպված անվանակարգը մշակելու համար:

1.1 Իրազեկվածություն

Ներածություն

Համաշխարհային ժառանգության անվանակարգի պատրաստումը կարող է ներգրավված անձանց համար ամենագոհացուցիչ և գնահատելի փորձառությունը լինել: Անվանակարգի պատրաստումը հնարավորություն է տալիս՝

- հասկանալ և միջազգային հանրությանը ներկայացնել հուշարձանը,
- քննադատաբար վերանայել հուշարձանի արդեն իսկ հայտնի արժեքները և գնահատել դրանց կապը համաշխարհային բնության և մշակութային թեմաների համատեքստում՝ տեղորոշելու համար հուշարձանը բնության, մարդկության պատմության, մշակույթի և զարգացման ընդգրկուն համապատկերում,
- միջազգային մակարդակով հուշարձանը համադրել այլ հնարավոր հուշարձանների հետ,
- ստուգել, վիճարկել և բարելավել հուշարձանի պաշտպանության, պահպանության և կառավարման համարժեքությունը՝ ներառյալ դրա միջավայրի պաշտպանությունը,
- հուշարձանի պաշտպանության, պահպանության և կառավարման ընթացքում ներգրավել հա–մայքներին, շահագրգիռ կողմերին և տրամադրել աջակցություն,
- որոշել հուշարձանում առկա շահերի շրջանակը, որը երբեմն ներառում է շահերի բախում և գտնել տարբեր շահերի արդյունավետ լուծման ուղիներ:

Համաշխարհային ժառանգության կարգավիճակից բխող որոշ հնարավոր առավելություններն են՝

- հնարավորություն ընձեռել անդամ պետությանը և տեղի համայնքին հպարտանալու հուշարձանով՝ որպես երկրագնդի բնության և մշակութային կարևորագույն վայրերից մեկը,
- հուշարձանը ազգային պաշտպանվող տարածքի /տեղանքապատկերի/ համակարգի համար հաճախ դառնում է առաջատար, այդ թվում նաև համայնքի կյանքում ժառանգության ավելի լայն ճանաչման և պաշտպանության համար,
- Համաշխարհային ժառանգության հանդեպ միջազգային հետաքրքրվածությունը հաճախ միջազ–գային համագործակցության և համատեղ ջանքերի խթան է հանդիսանում հուշարձանի պահպա–նությունը երաշխավորելու հարցում,
- ֆինանսավորումը և աջակցությունը համախմբելու հնարավորության ապահովում, այդ թվում՝ դոնորների և Համաշխարհային ժառանգության հիմնադրամի աջակցությունը,
- պաշտպանության, պահպանության և կառավարման համար մեթոդական տեխնիկայի և գործնա–կան փորձի տրամադրում, որոնք կարող են կիրառվել ազգային և տեղական ժառանգության հուշարձանների նկատմամբ:

Համաշխարհային ժառանգության անվանակարգի մշակումը ենթադրում է ժամանակ և ջանք պահանջող ընթացակարգ: Համաշխարհային ժառանգության անվանակարգի պատրաստումը պահանջում է առնվազն երկու տարվա աշխատանք, իսկ որոշ դեպքերում՝ մի քանի տարիներ: Անվանակարգի մշակման համար լավ պատրաստվածությունն ու կազմակերպվածությունը կնպաստեն այդ ժամանակի և ջանքերի նվազեցմանը: Մյուս կողմից, թերի նախապատրաստումը հաճախ հանգեցնում է պահանջվող ժամանակի երկարաձգմանը և կրկնա-պատկում ջանքերը:

Առաջադրվող հուշարձանի բնույթը նույնպես կարող է ազդեցություն ունենալ պահանջվող ժամանակի և ջանքերի վրա: Օրինակ՝ լավ ուսումնասիրված մշակութային հուշարձանը կամ տեղանքապատկերը կարող է պահանջել զգա-լիորեն պակաս բարդություն ունեցող և ժամանակի վատնում պահանջող անվանակարգի պատրաստման գործընթաց, քան օրինակ՝ ընդարձակ և բազմաֆունկցիոնալ օգտագործման բնության հուշարձանը, պատմական քաղաքը, մշակութային լանդշաֆտը կամ մշակութային երթուղին: Նման դեպքերում շահագրգիռ կողմերի քանակը նույնպես բազմապատկվում է՝ հանգեցնելով առավել բարդ կառավարման համակարգի կամ պլանի: Մյուս դեպքերում ժամանակ կպահանջվի համարժեք թեմատիկ համատեքստ ապահովելու համար, եթե համապատասխան թեմատիկ ուսումնասիրությունը դեռ հասանելի չէ:

Համաշխարհային ժառանգության անվանակարգերը հիմնականում առնչվում են հուշարձանների հնարավոր Համաշխարհային բացառիկ արժեքի հետ: Անվանակարգային գործընթացը չպետք է պայմանավորված լինի տնտեսական զարգացման հնարավորություններով: Համաշխարհային ժառանգության ցանկում առաջադրումը դեռևս միայն սկիզբն է ավելի երկար ճանապարհորդության դեպի պահպանության գործընթացների բարելավումը բոլոր մակարդակներում: Եթե առաջադրումը հաջողվում է, ապա Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցումը անդամ պետության վրա դնում է շարունակական խնամքի պարտավորություն՝ երաշխավորելու դրա Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանված, պահպանված և կառավարված լինելը բոլոր ժամանակներում:

Նախադեպ

Անվանակարգի պատրաստման ժամանակացույց

Դյու Միդի ջրանցք (Ֆրանսիա) – այս հուշարձանը ընդգրկվել է 1996 թ.՝ անվանակարգը պատրաստելու երկամյա գործընթացից հետո: Այդպիսի կարճ ժամանակահատվածը զգալի ձեռքբերում է՝ հաշվի առնելով հուշարձանի երկարությունը (360 կմ) և ներգրավված համայնքների մեծ թվաքանակը: Տարրերը, որոնք կարևոր էին համեմատաբար կարճ ժամկահատվածն ապահովելու համար հետևյալն էին.

© ՅՈՒՆԵՍԿՕ

- *արդյունավետ վերահսկիչ կոմիտեի և գիտական կոմիտեի արագ ձևավորումը,*
- *կոմիտեների անդամները մտավորապես և գործնականորեն պատրաստ էին և կարող էին մշակել անվանակարգը,*
- *տարբեր համայնքներ լիովին աջակցում էին անվանակարգին,*
- *անվանակարգի պատրաստման համար ֆինանսավորումը արագորեն կազմակերպվեց,*
- *ազգային նախարարությունների տեղական գրասենյակները լիարժեք և արդյունավետ կերպով նպաստեցին,*
- *նշանակվեց արդյունավետ համակարգող, որին ընդունեցին շատ շահագրգիռ կողմեր,*
- *գործընթացի հենց սկզբից հասանելի էր բավարար տեղեկատվություն,*
- *առաջադրման նախագիծը բոլորի կողմից ընկալվեց որպես գերազանցությանը նպատակաուղղված մտավոր վարժանք, այլ ոչ թե որպես հայտաձևը լրացնելու բյուրոկրատական առաջադրանք,*
- *տարբեր կառավարական գործակալություններ համագործակցելով՝ արդյունավետ աշխատեցին անվանակարգի պատրաստման օգտին:*

Համաշխարհային ժառանգության ուսումնասիրություն. կարևոր փաստաթղթեր

Լավ պատրաստվածության առաջին կարևոր քայլը Համաշխարհային ժառան-գության համակարգի, գործընթացների, ինչպես նաև առաջադրվող հուշարձանի վերաբերյալ այլ կարևոր տեղեկությունների լավ ինֆորմացված լինելն է:

Ստորև ներկայացված է առաջարկվող փաստաթղթերի ցանկը, որին պետք է ծանոթանալ: Սրանցից շատերը հասանելի են ինտերնետում, հակառակ դեպքում կարող եք ձեռք բերել դրանց թղթային տարբերակը համապատասխան կազմակերպություններից: Կոնտակտային տվյալները ներկայացված են ձեռնարկի վերջում:

Այս ձեռնարկի վերջում ներկայացված մատենագրությունը ևս պարունակում է բազմաթիվ այլ արժեքավոր հղումներ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնական հաղորդագրություն: Անվանակարգի պատրաստման աշխատանքներն սկսելուց առաջ ծանոթանացեք առաջարկվող փաստաթղթերին

Համաշխարհային ժառանգության վերաբերյալ կարևոր տեղեկատու փաստաթղթեր	*Մեկնաբանություններ*
Ընդհանուր	
Համաշխարհային ժառանգության կոնվենցիա (պաշտոնապես՝ մշակութային և բնության Համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա, 1972)	Կոնվենցիան ապահովում է Համաշխարհային ժառանգության համակարգի հիմնարար շրջանակը: Այն տրամադրում է առանցքային սահմանումներ, հասկացություններ, կազմակերպչական կառուցվածքներ և գործընթացներ՝ այդ թվում նաև անվանակարգերի վերաբերյալ: Հասանելի է արաբերեն, չիներեն, անգլերեն, ֆրանսերեն, եբրայերեն, պորտուգալերեն, ռուսերեն և իսպաներեն լեզուներով: http://whc.unesco.org/en/conventiontext/ (անգլերեն կայքէջ) http://whc.unesco.org/fr/conventiontexte/ (ֆրանսերեն կայքէջ)
Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման Գործառնական ուղեցույց (11/01, օգոստոս 2011)	Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման հիմնական ուղղորդումը շարադրված է Գործառնական ուղեցույցում, որտեղ առկա է մանրամասն նկարագրություն համաշխարհային ժառանգության մի շարք կարևորագույն գործընթացների, այդ թվում՝ առաջադրման գործընթացի վերաբերյալ:

Համաշխարհային ժառանգության վերաբերյալ կարևոր տեղեկատու փաստաթղթեր	Մեկնաբանություններ
	Գործառնական ուղեցույցները ներառում են նաև առաջարկվող փաստաթղթերի ցանկ, որը ներկայացված է մատենագրություն բաժնում: Սրանք նույնպես պետք է մանրազնին ուսումնասիրվեն, քանի որ որոշ փաստաթղթեր համապատասխան կլինեն հատկապես որոշակի անվանակարգերի համար: Գործառնական ուղեցույցների վերջին և նախորդ տարբերակները հասանելի են հետևյալ կայքէջերում. http://whc.unesco.org/en/guidelines/ (անգլերեն կայքէջ) http://whc.unesco.org/fr// (ֆրանսերեն կայքէջ)
Համաշխարհային ժառանգության կոմիտեի վերջին հանդիպման որոշումներ և ամփոփագրի արձանագրություն	Համաշխարհային ժառանգության կոմիտեի տեսակետների վերաբերյալ տեղեկատության կարևոր աղբյուրը կարելի է գտնել կոմիտեի վերջին հանդիպման որոշումների և ամփոփագրի արձանագրության մեջ. http://whc.unesco.org/en/sessions/ (անգլերեն կայքէջ) http://whc.unesco.org/fr/sessions/ (ֆրանսերեն կայքէջ)
Համաշխարհային ժառանգության ցանկ	Համաշխարհային ժառանգության ցանկը պարունակում է Համաշխարհային բացառիկ արժեք հանդիսացող հուշարձաններ՝ գրանցված Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից: Ցանկը կարևոր աղբյուր է, քանի որ կարող է բացահայտել հուշարձաններ այլ երկրներում, որոնք համադրելի են առաջադրման համար նախատեսված հուշարձանի հետ: Այդ դեպքում սա կարող է օգտակար տեղեկություն լինել առաջադրման փաթեթի համեմատական գնահատման բաժնում դիտարկելու համար: http://whc.unesco.org/en/list/ (անգլերեն կայքէջ) http://whc.unesco.org/fr/list/ (ֆրանսերեն կայքէջ)
Այլ անդամ երկրների նախնական ցանկեր	Սրանք այն հուշարձանների ցանկերն են, որոնք կարող են համաշխարհային ժառանգության արժեք լինել: Նախնական ցանկերը կարևոր են, քանի որ դրանք կարող են բացահայտել հուշարձաններ այլ երկրներում, որոնք համադրելի են առաջադրման համար նախատեսված հուշարձանի հետ: Այդ դեպքում սա կարող է օգտակար տեղեկություն լինել առաջադրման փաթեթի համեմատական գնահատման բաժնում դիտարկելու համար: http://whc.unesco.org/en/tentativelists/ (անգլերեն կայքէջ) http://whc.unesco.org/fr/listesindicatives/ (ֆրանսերեն կայքէջ)
Թեմատիկ ուսումնասիրություններ	Թեմատիկ ուսումնասիրությունները, առկայության դեպքում, ապահովում են շատ կարևոր տեղեկատվական աղբյուրներ, որոնք կարող են օգնել անվանակարգերի պատրաստման ժամանակ: Եթե առաջադրված հուշարձանի համար արդեն իսկ առկա է համապատասխան թեմատիկ ուսումնասիրություն, ապա այն մեծաջակցություն կլինի անվանակարգային փաթեթի համեմատական վերլուծության բաժինը պատրաստելու համար: Որոշ դեպքերում անդամ պետությունները պատրաստել են առանձնահատուկ թեմատիկ վերլուծություն որպես անվանակարգային փաթեթի մշակման գործընթացի մաս: Մշակութային հուշարձանների համար ԻԿՕՄՕՍ-ի կողմից իրականացված թեմատիկ ուսումնասիրությունները հասանելի են www.icomos.org/studies/ կայքէջում: Բնության հուշարձանների համար IUCN-ի կողմից իրականացված թեմատիկ ուսումնասիրությունները հասանելի են www.iucn.org. կայքէջում:
Համաշխարհային ժառանգության գլոբալ ռազմավարության բնության և մշակութային ժառանգության փորձագետների հանդիպման զեկույց, 1998 թ, մարտի 25-29-ը, Ամստերդամ, Նիդերլանդներ (ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կենտրոն /Նիդերլանդների կառավարություն, 1998)	Բացի այդ, հնարավոր է լինեն այլ թեմատիկ ուսումնասիրություններ, և պետք է իրականացնել հետազոտություն՝ բացահայտելու առաջադրվող հուշարձանին համապատասխան որևէ այլ ուսումնասիրություն: Այս զեկույցը պարունակում է օգտակար տեղեկատվություն, ինչպես նաև եզրակացություններ և առաջարկություններ Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ: http://whc.unesco.org/archive/amsterdam98.pdf

Համաշխարհային ժառանգության վերաբերյալ կարևոր տեղեկատու փաստաթղթեր	Մեկնաբանություններ
Բնության ժառանգությանն առնչվող փաստաթղթեր	
Համաշխարհային բացառիկ արժեք՝ բնության համաշխարհային ժառանգության համար ստանդարտներ, Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցվելու համար բնության հուշարձանների ստանդարտների վերաբերյալ ամփոփում (IUCN, 2008 b)	IUCN-ի կողմից պատրաստված այս զեկույցը վերանայում է բնության հուշարձանների վերաբերյալ Համաշխարհային ժառանգության կոմիտեի՝ գրանցման վերաբերյալ նախորդ որոշումները: Այն տրամադրում է մեթոդական ուղեցույցում ներառված համապատասխան նյութերի և որոշումների համառոտ ամփոփում, որոնք հավաքված են մեկ ձեռնարկի մեջ՝ տալով հստակ նախադեպեր, թե ինչպես մեկնաբանել և կիրառել Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ քննարկումներ՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար: http://data.iucn.org/dbtw-wpd/edocs/2008-036.pdf
Մշակութային ժառանգությանն առնչվող փաստաթղթեր	
Համաշխարհային ժառանգության ցանկ. բացթողումների լրացում, ապագա գործողության ծրագիր (ԻԿՕՄՕՍ, 2005 a)	Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային հուշարձանների վերաբերյալ ԻԿՕՄՕՍ-ի կողմից արված այս վերլուծությունը և նախնական ցանկերը հանդիսանում են համաշխարհային ռազմավարության ապագա զարգացման գործում ներդրում՝ Համաշխարհային ժառանգության հավաստի, ներկայացուցչական և հավասարակշռված ցանկ ունենալու համար: Վերլուծությունը ԻԿՕՄՕՍ-ի կողմից իրականացվող աշխատանք է և դիտարկում է ցանկերում հուշարձանների տիպաբանական, տարածաշրջանային, ժամանակագրական և թեմատիկ առումներով ներկայացվածությունները: Առանցքային նպատակն էր Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների համեմատաբար քիչ ներկայացված կատեգորիաների բացահայտումը: Այս ուսումնասիրությունը կօժանդակի առաջադրման համար համեմատական վերլուծության մշակմանը: Ընդհանուր առմամբ համեմատաբար քիչ ներկայացված կատեգորիաները ավելի մեծ հնարավորություն ունեն, քան լավ կամ չափից շատ լավ ներկայացվածները: http://www.international.icomos.org/world_heritage/gaps.pdf (անգլերեն կայքէջ) http://www.international.icomos.org/world_heritage_fre/whlgaps.htm (ֆրանսերեն կայքէջ)
Համաշխարհային ժառանգության ցանկում մշակութային հուշարձանների ընդգրկման համար ստանդարտների վերաբերյալ կոմպենդիում՝ համառոտ ամփոփում (ICOMOS, 2008	ԻԿՈՄՈՍ-ի կողմից պատրաստված այս զեկույցը վերանայում է մշակութային արժեքների վերաբերյալ Համաշխարհային ժառանգության կոմիտեի նախորդ գրանցման որոշումները: Այն տրամադրում է Մեթոդական ձեռնարկում ներկայացված համապատասխան նյութերի և որոշումների համառոտ ամփոփում՝ կոմպենդիում՝ տալով հստակ նախադեպեր, թե ինչպես մեկնաբանել և կիրառել Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ քննարկումներ՝ համաշխարհային ժառանգության ցանկում, ինչպես նաև Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու համար: http://whc.unesco.org/en/sessions/32COM/documents/ (տես WHC.08 /32.COM /9)
Թեմատիկ և տարածաշրջանային մատենագրություններ՝ պատրաստված ICOMOS-ի փաստաթղթերի կենտրոնի կողմից	Այս մատենագրություններից շատերը վերաբերում են մշակութային հուշարձաններին ներառյալ հետևյալները. Ժառանգության ժամանակակից հուշարձաններ (19-20-րդ դար) համաշխարհային ժառանգության ցանկում *Համաշխարհային ժառանգության ժայռային արվեստի տեղանքապատկեր* *Համաշխարհային ժառանգության մշակութային լանդշաֆտներ* *Համաշխարհային ժառանգության քաղաքային հուշարձաններ* *Համաշխարհային ժառանգության նախամարդկանց կացարաններ* *Համաշխարհային ժառանգություն Աֆրիկայում* *Համաշխարհային ժառանգություն Ասիայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում* *Համաշխարհային ժառանգություն Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանի երկրներում* *Համաշխարհային ժառանգություն արաբական երկրներում* *Արդյունաբերական և տեխնիկական ժառանգություն Համաշխարհային ժառանգության ցանկում* http://www.international.icomos.org/centre_documentation/bib/index.html
Հուշարձանների և տեղանքապատկերների պահպանության և վերականգնման միջազգային Խարտիա (1964 թ. Վենետիկի Խարտիա) (ԻԿՕՄՕՍ, 1965 թ.)	Այս Խարտիան մշակութային ժառանգության հուշարձանների պահպանության մասին առանցքային ուղղորդող փաստաթղթերից մեկն է: http://www.international.icomos.org/charters.htm (անգլերեն կայքէջ) http://www.international.icomos.org/chartes.htm (ֆրանսերեն կայքէջ)

Համաշխարհային ժառանգության ուսումնասիրությունը – Համաշխարհային ժառանգության կոմիտեի աշխատանքը

Շատ օգտակար է ծանոթ լինել Համաշխարհային ժառանգության կոմիտեի աշխատանքին: Դրան մասամբ կարելի է հասնել մշակութային ժառանգության կոնվենցիան և Գործառնական ուղեցույցը հասկանալու միջոցով: Ինչպես վերը նշվեց, Համաշխարհային ժառանգության կոմիտեի վերջին հանդիպումների որոշումներն ու ամփոփագիրն ուսումնասիրելը ևս կօգնի:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

առաջադրման աշխատանքները պատրաստող թիմի ներկայացուցիչ ուղարկել Համաշխարհային ժառանգության կոմիտեի նիստին

Բացի այդ, շատ օգտակար է, եթե առաջադրման աշխատանքները պատրաստող թիմի ներկայացուցիչը ներառված լինի Համաշխարհային ժառանգության կոմիտեի նիստերին մասնակցող ազգային պատվիրակության կազմում: Կոմիտեի աշխատանքներին հետևելը հնարավորություն է տալիս գաղափար կազմել դրա աշխատանքների մասին, հատկապես անվանակարգերի քննարկումների և պահպանվածության վիճակի վերաբերյալ:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի ընդհանուր նկարագիրը

Համաշխարհային ժառանգության կոնվենցիան միջազգային պայմանագիր է Միավորված ազգերի անդամ երկրների միջև: Այն նպատակ ունի բացահայտելու, պաշտպանելու, պահպանելու և ապագա սերունդներին փոխանցելու Համաշ-խարհային բացարձակ արժեք հանդիսացող մշակութային և բնության ժառանգությունը: Կոնվենցիայի Գործառնական ուղեցույցում սահմանված հատուկ չափորոշիչներն ու պայմանները օգտագործվում են բացահայտելու համար այն հուշարձանները, որոնք նախատեսվում են Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար:

Կոնվենցիան սահմանում է անդամ պետությունների պարտավորությունները պոտենցիալ հուշարձանները բացահայտելու և դրանց դերը պաշտպանելու և պահպանելու գործում: Վավերացնելով կոնվենցիան՝ յուրաքանչյուր երկիր պարտավորվում է պահպանել ոչ միայն իր տարածքում գտնվող համաշխարհային ժառանգության հուշարձանը, այլ նաև իր ազգային ժառանգությունը: Անդամ պետություններին խորհուրդ է տրվում մշակութային և բնության ժառանգության պաշտպանությունը ինտեգրել տարածաշրջանային պլանավորման ծրագրերում, ստեղծել անձնակազմ և ծառայություններ իրենց հուշարձաններում, ձեռնարկել պահպանման գիտական և տեխնիկական ուսումնասիրություն և միջոցներ ձեռնարկել, որոնք ժառանգությանը կտան որոշակի գործառույթ հասարակության ամենօրյա կյանքում:

Այն բացատրում է, թե ինչպես պետք է օգտագործվի և կառավարվի Համաշխարհային ժառանգության հիմնադրամը և ինչ պայմաններով միջազգային ֆինանսական օգնություն կարող է տրամադրվել:

Կոնվենցիան ամրագրում է անդամ պետությունների պարտավորությունները՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեին պարբերաբար զեկուցել Համաշխարհային ժառանգության հուշարձանների պահպանվածության վիճակի վերաբերյալ: Այս զեկույցները կարևոր են կոմիտեի աշխատանքների համար, քանի որ դրանք հնարավորություն են տալիս գնահատել հուշարձանի վիճակը, որոշել ծրագրի կոնկրետ կարիքները և լուծել կրկնվող խնդիրները:

Այն նաև կոչ է անում անդամ պետություններին ամրապնդել համաշխարհին ժառանգության հուշարձանների հանրային ճանաչումը, կրթական և տեղեկատվական ծրագրերի միջոցով հասնել դրանց պաշտպանությանը:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի հիմքում ընկած է այն փաստի ճանաչումը, որ մշակութային և բնության ժառանգությունը ոչ միայն յուրաքանչյուր ազգի, այլ ամբողջ մարդկության անգնահատելի և անփոխարինելի արժեքն է: Վատթարացման կամ անհետացման հետևանքով այս անգնահատելի հուշարձաններից որևէ մեկի կորուստը հանդիսանում է աշխարհի ժողովուրդների ժառանգության աղքատացում: Այդ ժառանգության մասերը, իրենց բացառիկ հատկանիշների պատճառով, կարող են համարվել Համաշխարհային բացառիկ արժեք (հաճախ որպես ՀԲԿ) և որպես այդպիսին արժանի են հատուկ պաշտպանության (այն վտանգներից, որոնք ավելի են սպառնում դրանց):

Աշխարհի ժառանգության բացահայտումը, պաշտպանումը, պահպանումն ու ներկայացումը հնարավորինս ապահովելու համար ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրներն ընդունեցին Համաշխարհային մշակութային և բնության ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան, որը հայտնի է որպես Համաշպարհային ժառանգության 1972թ. կոնվենցիա: Կոնվենցիան հիմնել է Համաշխարհային ժառանգության կոմիտե և Համաշխարհային ժառանգության հիմնադրամ, որոնք երկուսն էլ գործում են 1976 թվականից ի վեր: Համաշխարհային ժառանգության կոմիտեն մշակել է Համաշխարհային

ժառանգության կոնվենցիայի կիրարկման Գործառնական ուղեցույցը, որտեղ ներկայացված են կոնվենցիայի իրականացման վերաբերյալ պաշտոնական ուղղորդումները, որն անհրաժեշտության դեպքում վերանայվում է կոմիտեի կողմից: Կոնվենցիայի առաքելությանը հասնելու համար, այն է՝ բացահայտել, պաշտպանել, պահպանել և հետագա սերունդներին փոխանցել Համաշխարհային բացառիկ արժեք հանդիսացող մշակութային և բնության ժառանգությունը, Համաշխարհային ժառանգության կոմիտեն ղեկավարում է այն հուշարձանների ցանկը, որոնք համապատասխանում են կոնվենցիայի պահանջներին և այն կոչվում է Համաշխարհային ժառանգության ցանկ:

Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների ընդգրկման չափորոշիչներն ու պայմանները մշակվել են հուշարձանները գնահատելու և անդամ պետություններին դրանց պաշտպանության և կառավարման գործում առաջնորդելու համար: Հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար այն Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից պետք է ընդունվի որպես Համաշխարհային բացառիկ արժեք: Առաջադրման փաստաթուղթը Համաշխարհային ժառանգության կոմիտեի համար հիմք է հանդիսանում գնահատելու, թե արդյոք հուշարձանը համապատասխանում է կոնվենցիայի պահանջներին և թե արդյոք այն համաշխարհային բացառիկ արժեք է: Գործառնական ուղեցույցը նշում է այն հիմնական թեստերը, որոնք Համաշխարհային ժառանգության կոմիտեն կիրառում է որոշելու համար հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեք լինելը:

- *Կոմիտեն հուշարձանը համարում է Համաշարհային բացառիկ արժեք, եթե այն համապատասխանում է համաշխարհային ժառանգության մեկ կամ ավելի չափորոշիչների (Գործառնական ուղեցույցներ, պարագրաֆ 77)*

- *Համաշխարհային բացառիկ արժեք համարվելու համար հուշարձանը պետք է նաև համապատասխանի ամբողջականության և /կամ իսկության պահանջներին, պետք է ունենա պաշտպանության և կառավարման համապատասխան համակարգ՝ ապահովելու դրա պահպանությունը (պարագրաֆ 78):*

Եթե Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանին սպառնում են լուրջ և կոնկրետ վտանգներ, կոմիտեն որոշում է այն ներառել Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում:

Եթե հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը, որով հիմնավորվել էր դրա ընդգրկումը Համաշխարհային ժառանգության ցանկում խաթարվում է, կոմիտեն որոշում է հուշարձանը հանել Համաշխարհային ժառանգության ցանկից: Ներկայիս Համաշխարհային ժառանգության ցանկը և Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկը հասանելի են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կայքէջում (whc.unesco.org):

Կոնվենցիան կառավարվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից, որի պատասխանատվությունն է որոշել, թե արդյո՞ք Համաշխարհային ժառանգության ցանկում առաջադրված հուշարձանն անհրաժեշտ է գրանցել, թե՝ ոչ: Համաշխարհային ժառանգության կոմիտեին աջակցում են քարտուղարությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնը և 3 ճանաչված խորհրդատվական մարմինները՝ ԻԿԿՌՕՄ-ը (Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման միջազգային կենտրոն), ԻԿՕՄՕՍ-ը (Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ) և IUCN-ը (Բնության պահպանության միջազգային միություն):

IUCN-ը խորհրդատվական մարմին է, որը պատասխանատու է որպես բնության արժեքներ առաջադրված հուշարձանները գնահատելու համար, մինչդեռ ԻԿՕՄՕՍ-ը պատասխանատու է որպես մշակութային արժեքներ առաջադրված հուշարձանները գնահատելու համար:

Համաշխարհային ժառանգությունը և պահպանության այլ գործիքակազմ

Չնայած կոնվենցիայի Գործառնական ուղեցույցը սահմանում է Համաշխարհային ժառանգության հավասարակշռված, ներկայացուցչական և վստահելի ցանկ կազմելու անհրաժեշտությունը՝ այն ենթադրում է, որ ցանկը կապահովի ողջ մոլորակի բազմազան էկոհամակարգերի և բնակավայրերի ամբողջական ներկայացուցչականություն կամ մոլորակի ողջ մշակութային ժառանգությունը, որը ազգային, տարածաշրջանային և այլ միջազգային պաշտպանվածության տարածքի /տեղանքապատկերների/ համակարգերի և գործիքակազմի խնդիրն է:

Այս համատեքստում կարևոր է հաշվի առնել Համաշխարհային ժառանգության հուշարձան–ներն այլ տեսակի պահպանվող տարածքների և հուշարձանների հետ հարաբերություններում: Այս հարաբերությունները ներկայացված են բնության ժառանգության համար UNEP-WCMC-ի և IUCN-ի կողմից մշակված հետևյալ դիագրամում: Այն ցույց է տալիս Համաշխարհային ժառանգության հուշարձանների կապն այլ պահպանվող տարածքների տեսակների և համակարգերի հետ Համաշխարհային բացառիկ արժեքի և գլոբալ ցուցանիշների կիրառման տեսանկյունից՝ որպես Համաշխարհային ժառանգության ցանկում պահպանված տարածքների հիմնական գնահատման միջոց: Դիագրամը նաև նշում է բոլոր պահպանվող տարածքների կարևորությունը էկոհամակարգի, լանդշաֆտի և տեսակների պահպանման տեսանկյունից մոլորակի բնական հատկությունների ամբողջական ներկայացման ապահովման նպատակով:

Ինչպես նշված է դիագրամում, կան մի շարք միջկառավարական (Ռամսարի տեղան–քապատկերներ, կենսոլորտային արգելոցներ, գեոպարկեր) և տարածաշրջանային ուղենիշներ, որոնց կիրառությունն օգնում է բարելավել մի շարք բնության պաշտպանված տարածքների պաշտպանությունը: Այդուհանդերձ, Համաշխարհային ժառանգության կարգավիճակ կարող է տրվել Գործառնական ուղեցույցում սահմանված միայն այն հուշարձաններին, որոնք կարող են համապատասխանել Համաշխարհային բացառիկ արժեքի թեստին: Համաշխարհային ժառանգության ներուժի ուսումնասիրման ամենավաղ փուլում անդամ երկրների առաջնային խնդիրը պետք է լինի նաև այլընտրանքային տարբերակների դիտարկումը և փոխկապակցված ու համակարգված մոտեցման մշակումը՝ օգտագործելու միջազգային, տարածաշրջանային և ազգային գործիքակազմի ողջ շրջանակը, որը թույլ է տալիս ճանաչելու, պաշտպանելու և պահպանելու իրենց պաշտպանված տարածքները և ազգային ժառանգությունը:

Չնայած մշակութային հուշարձանների համար միջազգային և տարածաշրջանային պահպանության գործիքակազմի շրջանակը կարող է ավելի սահմանափակ լինել, արտահայտված սկզբունքներն ընդհանուր առմամբ նույնն են:



Աղբյուրը՝ Մեյգինի և Չեյպի հաշվետվությունից (2004 թ.)

1.2 Համաշխարհային ժառանգության անվանակարգի առաջադրման գործընթացի ընդհանուր նկարագիրը

Առաջադրման գործընթացը և Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի ընդգրկումը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի առանցքում են և կոնվենցիայի անդամ երկրների համար հանդիսանում են կարևորագույն պարտավորություն: Այս պարտավորությունները ներառում են երեք հիմնական ոլորտներ.

- նախնական ցանկերի պատրաստում,
- անվանակարգի նախապատրաստում,

• հուշարձանների արդյունավետ կառավարում, որոնք ընդգրկված են ցանկում իրենց համաշ–խարհային բացառիկ արժեքը պաշտպանելու, պահպանելու և կառավարելու համար:
Գրանցման գործընթացը ամփոփված է ստորև բերված դիագրամում՝ անդամ երկրների և Համաշխարհային ժառանգության կոմիտեի տարբեր պարտավորությունների հետ միասին:

Առաջադրման գործընթացում տարբեր քայլերի ամփոփումը, անդամ պետության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեի հիմնական պարտավորությունները

Միայն Համաշխարհային ժառանգության կոնվենցիային միացած պետությունները կարող են ներկայացնել անվանակարգեր իրենց տարածքում գտնվող հուշարձանների համար՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ներառելու հարցը դիտարկելու նպատակով: Առաջադրման գործընթացի հիմնական մասերը ամփոփված են հետևյալ կերպ:

Նախնական ցանկ

Առաջին հերթին երկիրը պետք է կատարի իր սահմաններում գտնվող բնության և մշակութային ժառանգության կարևոր հուշարձանների «գույքագրում», որոնք դիտարկվում են որպես պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք ներկայացնող մշակութային և/կամ բնության ժառանգություն և հետևաբար, հարմար են Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցելու համար (տես Գործառնական ուղեցույց, գլուխ II. C): Այս «գույքագրում»-ը հայտնի է որպես Նախնական ցանկ և ներառում է այնպիսի հուշարձաններ, որոնք անդամ պետությունը կարող է որոշել առաջիկա հինգից տասը տարվա ընթացքում ներկայացնել գրանցման: Չի ակնկալվում, որ նախնական ցանկերում ընդգրկված կլինեն բոլոր հնարավոր հուշարձանները: Դրանք կարող են ցանկացած պահի թարմացվել, և անդամ պետությունները կարող են առնվազն տասը տարին մեկ վերանայել և նորից ներկայացնել իրենց նախնական ցանկերը:

Նախնական ցանկի ներկայացման ձևաչափերը առկա են Գործառնական ուղեցույցում՝ ներառյալ սերիական անդրազգային և անդրսահմանային հուշարձանների հատուկ ձևաչափը:

Անդամ պետությունները նախնական ցանկերը Համաշխարհային ժառանգության կոմիտե պետք է ներկայացնեն որևէ անվանակարգի առաջադրումից առնվազն մեկ տարի առաջ:

Ինչու՞ են կարևոր նախնական ցանկերը

Համաշխարհային ժառանգության կոմիտեն չի կարող դիտարկել Համաշարհային ժառանգության ցանկում անվանակարգը գրանցելու հարցը, եթե այն ընդգրկված չէ անդամ պետության նախնական ցանկում:

- *Դրանք թույլ են տալիս իրականացնել համաշխարհային ժառանգության պոտենցիալ կարգավիճակի ձգտող հուշարձանների վերաբերյալ նախնական խորհրդատվություն, համագործակցություն և համաձայնության ձեռքբերում համապատասխան շահագրգիռ կողմերի միջև, ներառյալ դաշնային, ազգային, տարածաշրջանային և տեղական կառավարման մարմինները, հուշարձանի սեփականատերերը և/կամ կառավարիչները, տեղական համայնքները, մասնավոր սեկտորը և ՀԿ-ները, ինչպիսիք են տեղական կոմիտեները / ԻԿՕՄՕՍ-ի և IUCN-ի ներկայացուցիչները/:*
- *Դրանք անդամ պետություններին օգնում են կազմակերպել նախնական ուսումնասիրություններ բնության և մշակութային ժառանգության գլոբալ կարևորության պոտենցիալ հուշարձանները բացահայտելու համար:*
- *Դրանք անդամ պետություններին օգնում են բացահայտել կառավարման կարիքներն ու պաշտպանության միջոցները՝ անհրաժեշտության դեպքում թույլատրելով բնության և մշակութային ժառանգության ոլորտի փորձագետների մասնակցությունը:*
- *Դրանք անդամ պետությունների, Համաշխարհային ժառանգության կոմիտեի, Համաշխարհային ժառանգության կենտրոնի և խորհրդակցական մարմինների համար պլանավորման օգտակար գործիք են՝ ապագա պոտենցիալ անվանակարգը բացահայտելու գործում:*
- *Դրանք կարևոր ռեսուրս են համեմատական վերլուծության իրականացման համար՝ որպես անվանակարգի մշակման գործընթացի մի մաս:*

Անվանակարգային փաթեթ

Նախնական ցանկը և հուշարձանների ընտրության գործընթացն սկսելուց առաջ անդամ պետությունը կարող է պլանավորել, թե երբ ներկայացնի յուրաքանչյուր անվանակարգի փաթեթը կոնկրետ հուշարձանի համար: Համաշխարհային ժառանգության կենտրոնը անդամ պետությանը առաջարկում է խորհրդատվություն և օժանդակություն այս փաթեթը պատրաստելու հարցում, որը պետք է լինի հնարավորինս համապարփակ՝ համոզված լինելով, որ անհրաժեշտ փաստաթղթերն ու քարտեզները ներառված են: Անվանակարգը ներկայացվում է Համաշխարհային ժառանգության կոմիտե՝ դրա ամբողջականությունը ստուգելու համար: Երբ անվանակարգը համարվում է ամբողջական Համաշխարհային ժառանգության կենտրոնն այն ուղարկում է համապատասխան խորհրդատվական մարմիններին՝ գնահատման համար:

Չափորոշիչների ընտրություն

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու համար հուշարձանները պետք է լինեն Համաշխարհային բացառիկ արժեք և համապատասխանեն տասը չափորոշիչներից առնվազն մեկին, ինչպես նաև ամբողջականության և իսկության համապատասխան պայմաններին, պաշտպանության ու կառավարման պահանջներին: Համաշխարհային ժառանգության չափորոշիչները ներկայացված են Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման Գործառնական ուղեցույցում, որը կոն–վենցիայի տեքստից զատ համաշխարհային ժառանգության հիմնական աշխատանքային գործիքն է:

Չափորոշիչները մանրամասնորեն ներկայացվում են նաև սույն ձեռնարկի 34-44 էջերում: Կոմիտեն պարբերաբար վերանայում է չափորոշիչները՝ Համաշխար-հային ժառանգության հայեցակարգի էվոլյուցիան արտացոլելու նպատակով:

Ներկայացման և գնահատման ենթակա անվանակարգերի քանակի սահմանափակում

Անդամ երկրները պետք է տեղյակ լինեն Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից ընդունված որոշումների մասին, որոնք սահմանափակում են ներկայացվելիք անվանակարգերի թվաքանակը, ինչպես նաև կոմիտեի հանդիպումներում քննարկվելիք անվանակարգերի թվաքանակը:

Կոմիտեի համար ընթացիկ առաջնահերթությունը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային և բնության ժառանգության հուշարձանների թվաքանակի միջև ողջամիտ հավասարակշռության հասնելու ձգտումն է:

Ժամանակացույց

Գործառնական ուղեցույցը տրամադրում է անվանակարգի ներկայացման և գնահատման մանրամասն ժամանակացույց, որն անդամ պետությունների և խորհրդատվական մարմինների համար պարտադիր է (պարագրաֆ 168): Հիմնական վերջնաժամկետները վերջնական են և ենթակա չեն քննարկման:

Խորհրդատվական մարմիններ

Առաջադրված հուշարձանը կարող է ենթարկվել անկախ գնահատման Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի իրավասության տակ գտնվող երկու խորհրդատվական մարմիններից մեկի կամ երկուսի՝ մշակութային հուշարձանների համար ԻԿՕՄՕՍ –ի (Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման միջազգային կենտրոն) և բնության հուշարձանների համար IUCN-ի (Բնության պահպանության միջազգային միություն) կողմից:
Երրորդ խորհրդատվական մարմինը ԻԿԿՌՕՄՆ է (Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման միջազգային կենտրոն), միջկառավարական կազմակերպություն, որը կոմիտեին փորձագիտական խորհրդատվություն է տրամադրում մշակութային հուշարձանների պահպանման և մոնիթորինգի, ինչպես նաև վերապատրաստման և կարողությունների զարգացման ոլորտում գործունեության վերաբերյալ:

Համաշխարհային ժառանգության կոմիտե

Հուշարձանի առաջադրումից և գնահատումից հետո Համաշխարհային ժառան-գության միջկառավարական կոմիտեն վերջնական որոշում է ընդունում այն գրանցելու վերաբերյալ: Կոմիտեն տարին մեկ անգամ հանդիպում է՝ որոշելու համար, թե որ հուշարձանները պետք է գրանցվեն Համաշխարհային ժառան-գության ցանկում: Գրանցումն ընդունելու կամ չընդունելու որոշումից զատ կոմի-տեն կարող է նաև անվանակարգը հետաձգել կամ հետ ուղարկել լրամշակման և համապատասխան անդամ պետությունից պահանջել հուշարձանի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն:

Համաշխարհային ժառանգության կենտրոն

Համաշխարհային ժառանգության կենտրոնը (ՀԺԿ) Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի քարտուղարությունն է, իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներսում՝ Համաշխարհային ժառանգության բոլոր հարցերի վերաբերյալ Համաշխարհային ժառանգության առանցքային մարմինն ու համակարգողը:
ՀԺԿ-ն տարբեր ձևերով աջակցություն է տրամադրում անդամ պետություններին անվանակարգերի պատրաստման ընթացքում, ինչպես նաև տրամադրում է հաջողված անվանակարգերի օրինակներ, կառավարման և օրենսդրական դրույթներ, օգնում է գտնել համապատասխան քարտեզներ, տալիս ավելի կոնկրետ ուղղորդում տարբեր տեսակի հուշարձանների առաջադրման համար, ինչպես օր.՝ մշակութային լանդշաֆտներ, քաղաքներ, ջրանցքներ և ժառանգության /մշակութապատմական/ երթուղիներ կամ սերիական, անդրսահմանային հուշարձաններ: Համագործակցելով խորհրդատվական մարմինների և այլ հաստատությունների հետ՝ ՀԺԿ-ն կազմակերպում է հատուկ սեմինարներ՝ կապված անվանակարգերի պատրաստման հետ: Կենտրոնը նաև տրամադրում է դիտողություններ և առաջարկություն, երբ անդամ պետությունները քարտուղարություն են ներկայացնում անվանակարգերի նախագծեր: Կենտրոնը թարմացնում է Համաշխարհային ժառանգության ցանկն ու տվյալների բազան: Երբ ներկայացվում է պաշտոնական անվանակարգ, ՀԺԿ-ն ստուգում է անվանակարգային փաթեթի ամբողջականությունը, և եթե այն համարվում է ամբողջական, կենտրոնն այն փոխանցում է համապատասխան խորհրդատվական մարմնին, իսկ եթե համարվում է ոչ ամբողջական, ապա կենտրոնն անդամ պետությանը ուղղորդում է այն լրամշակելու:

1.3 Համաշխարհային ժառանգության հայեցակարգերի նկարագրություն

Այս բաժնում ներկայացված են Համաշխարհային ժառանգության որոշ հիմնական հասկացությունների նկարագրությունները՝ ներառյալ սահմանումները, չափորոշիչներն ու տարբեր տեսակի հուշարձանները:

Սահմանումներ. մշակութային և բնության ժառանգություն, խառը հուշարձաններ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային ժառանգության կոնվենցիան մշակութային ժառանգությունը սահմանում է հետևյալ կերպ.

- **Հուշարձաններ՝** ճարտարապետական, մոնումենտալ քանդակագործության և գեղանկարչության ստեղծագործությունները, հնագիտական բնույթի տարրերն ու կառուցվածքները, արձանագրություն–

ները, անձավային կացարանները և տարրերի համադրումները, որոնք պատմության, արվեստի, կամ գիտության տեսանկյունից Համաշխարհային բացառիկ արժեք են:

- Հուշարձանային համալիրներ՝ առանձին կամ փոխկապակցված կառույցների խումբ, որոնք իրենց ճարտարապետության, միասեռության կամ լանդշաֆտում զբաղեցրած տեղի շնորհիվ Համաշխարհային բացառիկ արժեք են՝ պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից:
- Տեսարժան վայրեր – ձեռակերտ աշխատանքներ կամ մարդու և բնության համատեղ ստեղծագործություններ, ինչպես նաև հնագիտական հուշարձաններ ընդգրկող վայրեր, որոնք Համաշխարհային բացառիկ արժեք են պատմական, գեղագիտական, ազգագրական կամ մարդաբանական տեսանկյունից (հոդված 1):

Որոշ հուշարձաններ կարող են բավարարել այս սահմանումներից մեկից ավելիին (օր.՝ լինել երկուսն էլ՝ հուշարձան և հուշարձանային համալիր):

Այս սահմանումը մշակվել է 1972թ. և այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են համաշխարհային ժառանգության հասկացությունները: Այնուամենայնիվ, սահմանումը լայնորեն մեկնաբանվել է՝ մշակութային ժառանգության բազմազանությունն ընդգրկելու նպատակով:

Գործառնական ուղեցույցը մշակութային լանդշաֆտների, պատմական քաղաքների և քաղաքի կենտրոնների, ժառանգության ջրանցքների և ժառանգության երթուղիների վերաբերյալ առաջարկում է լրացուցիչ սահմանումներ (հավելված 3): Մշակութային լանդշաֆտները քննարկվում են նաև հաջորդ բաժնում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնական հաղորդագրություն
Հստակեցրեք առաջադրված մշակութային ժառանգության կատեգորիան

Հստակեցրեք առաջադրված մշակութային ժառանգության կատեգորիան

Ստորև նշված հուշարձանների ցանկի որոշ օրինակներ տալիս են մշակութային ժառանգության առարկայական շրջանակը (այս սահմանումների տեքստն ու պատկերները վերցված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կայքէջից):

Ջամի Մինարեթը և հնագիտական մնացորդները
(Աֆղանստան)

Ճարտարապետական գործ և հնագիտական հուշարձան: 65 մետր բարձրությամբ Ջամի Մինարեթը 12-րդ դարի նրբագեղ, սքանչելի կառույց է: Ունենալով աղյուսով մանրակրկիտ պատված մակերես, իսկ գագաթում կապույտ սալապատ արձանագրություն՝ այն ուշագրավ է իր ճարտարապետական և ձևավորված որակով, որն իրենից ներկայացնում է այդ տարածաշրջանի ճարտարապետական և գեղարվեստական ավանդույթի կուլմինացիան:
Դրա ազդեցիկությունը բարձրանում է իր արտահայտիչ տեղանքի շնորհիվ՝ Գուրի գավառի սրտում՝ բարձրաբերձ լեռների կիրճով հոսող խորունկ գետի հովիտը:

© ՅՈՒՆԵՍԿՕ /Մարիո Սանտանա/

Սուկուրի մշակութային լանդշաֆտ
(Նիգերիա)

Սուկուրի մշակութային լանդշաֆտն իր մեջ ներառում է բլրի վրա տեղակայված Հիդի (առաջնորդ) պալատը, որը գերիշխում է ներքևում գտնվող գյուղերի վրա, իր տաղավարաձև դաշտերով և նրանց սրբազան խորհրդանշաններով, ինչպես նաև նախկին երկաթի արդյունաբերության մնացորդներով, իրենից ներկայացնում է հասարակության և նրա հոգևոր ու նյութական մշակույթի հիանալի պատկեր:

© ՅՈՒՆԵՍԿՕ

Հին քաղաք Լիցզյան *(Չինաստան)*

© Ֆիոնա Սթարը

Հուշարձանային համալիր: Հին քաղաք Լիցզյանը, որը հիանալի հարմարեցված է այս կարևոր առևտրային և ռազմավարական տեղանքի անկանոն տեղագրությանը, պահպանել է իր որակյալ և իրական պատմական քաղաքային տեսքը: Նրա ճարտարապետությունը ուշագրավ է դարերից եկող մի շարք մշակույթների միավորված տարրերի շնորհիվ: Լիցզյանն ունի նաև հին, բարդ ու հնարամիտ ջրամատակարարման համակարգ, որն այսօր էլ արդյունավետ գործում է:

Ցոլֆերայն ածխի հանքավայրի արդյունաբերական համալիր Էսսենում *(Գերմանիա)*

© Հեյկե Օվերման

Կառույցների խումբ և արդյունաբերական հնագիտական վայր: Հյուսիսային Ռայն-Վեստֆալիա երկրամասում գտնվող Ցոլֆերայն արդյունաբերական համալիրը իրենից ներկայացնում է 20-րդ դարի մի քանի համաշխարհային ճարտարապետական արժեք ներկայացնող կառույցներից բաղկացած պատմական ածխի հանքավայրերի ամբողջական ենթակառուցվածք: Այն էվոլյուցիայի, ինչպես նաև վերջին 150 տարիների հիմնական արդյունաբերության անկման կարևոր նյութական ապացույցն է:

Ձեռքերի քարայր (Cueva de las Manos), Գետի նկարներ (Río Pinturas) *(Արգենտինա)*

© ՅՈՒՆԵՍԿՕ

Հուշարձան /մոնումենտալ գեղանկարչական աշխատանք և հուշարձան/: Cueva de las Manos, Río Pinturas-ը պարունակում է 13,000-9,500 տարի առաջ կատարված անձավային արվեստի բացառիկ համալիր: Ձեռքերի քարայր անունը գալիս է քարայրում նկարված մարդկային ձեռքերի ուրվագծերից, սակայն կան նաև կենդանիների շատ պատկերներ, ինչպես օր.՝ վայրի այծուղտ, որը դեռևս տարածված է տարածաշրջանում, ինչպես նաև որսորդության տեսարաններ: Այս պատկերները ստեղծած մարդիկ հավանաբար եղել են Պատագոնիայի պատմական որսորդական համայնքների նախնիներ, որոնք հայտնաբերվել են 19-րդ դարում՝ եվրոպական վերաբնակիչների կողմից:

Հիրոսիմայի խաղաղության հուշահամալիր (Genbaku Dome) *(Ճապոնիա)*

© ՅՈՒՆԵՍԿՕ

Հիրոսիմայի խաղաղության հուշահամալիրը (Genbaku Dome) միակ կառույցն էր, որը կանգնած էր այն տարածքում, որտեղ 1945թ. օգոստոսի 6-ին պայթեցվել էր առաջին ատոմային ռումբը: Շատերի, այդ թվում՝ Հիրոսիմայի բնակիչների ջանքերի շնորհիվ այն պահպանվել է այն նույն վիճակում, ինչպիսին եղել է ռմբակոծությունից անմիջապես հետո: Այն ոչ միայն որպես մարդկության կողմից ստեղծված կործանիչ ուժի հզոր խորհրդանիշ է, այլ նաև արտահայտում է համաշխարհային խաղաղության և բոլոր տեսակի միջուկային զենքերի վերջնական վերացման հույսը:

Բուսաբանական այգի, Պադուա *(Իտալիա)*

© ՅՈՒՆԵՍԿՕ

Տեսարժան վայր /ձեռակերտ աշխատանք/: Աշխարհի առաջին բուսաբանական այգին Պադուայում՝ ստեղծված 1545 թվականին: Այն դեռևս պահպանում է իր բնօրինակ դիզայնը՝ շրջանաձև հողամաս կենտրոնում, որը խորհրդանշում է աշխարհը՝ շրջապատված ջրի օղակներով: Ավելի ուշ ավելացվել են այլ տարրեր՝ որոշ ճարտարապետական (դեկորատիվ մուտքեր և բազրիքներ) և գործնական (պոմպակայաններ և ջերմոցներ): Այն շարունակում է ծառայել իր նախնական նպատակին, որպես գիտական հետազոտությունների կենտրոն:

ԲՆՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային ժառանգության կոնվենցիան բնության ժառանգությունը սահմանում է հետևյալ կերպ.

• Բնության հուշարձաններ՝ կազմված ֆիզիկական և կենսաբանական կազմավորումներից կամ նման կազմավորումների խմբերից, որոնք գեղագիտական և գիտական տեսանկյունից հանդիսանում են Համաշխարհային բացառիկ արժեք:

• Երկրաբանական և ֆիզիոգրաֆիկ կազմավորումները և հստակ սահմանազատված գոտիները, որոնք ներկայացնում են կենդանիների և բույսերի վտանգված տեսակների միջավայրը և գիտության կամ պահպանության տեսանկյունից Համաշխարհային բացառիկ արժեք են:

• Բնության տեսարժան վայրերը կամ հստակ սահմանազատված բնական գոտիները, որոնք գիտության կամ պահպանության կամ բնական գեղեցկության տեսանկյունից Համաշխարհային բացառիկ արժեք են (հոդված 2):

Ստորև նշված հուշարձանների ցանկի որոշ օրինակներ տալիս են բնության ժառանգության առարկայական շրջանակը

Սագարմաթիա ազգային պարկ *(Նեպալ)*

© ՅՈՒՆԵՍԿՕ/ Ջ.Մ. Գասանդ

Սագարմաթիան բացառիկ տեղանք է՝ զգալիորեն բարձր լեռներով, սառցադաշտերով և խորը հովիտներով, որտեղ գերակշռում է աշխարհում ամենաբարձր Էվերեստ լեռը (8,848 մ.): Պարկում հայտնաբերվել են մի շարք հազվագյուտ կենդանիների տեսակներ, ինչպիսիք են ձյունե ընձառյուծն ու փոքր պանդան: Շերպերի (ազգային փոքրամասնություն) ներկայությունը, իրենց յուրօրինակ մշակույթով, ավելացնում է հետաքրքրությունն այս տեղանքի նկատմամբ:

Իլուլիսսատի Սառցե Ֆյորդ *(Դանիա)*

© M&G Թերրի Վեյս

Գտնվում է Գրենլանդիայի արևմտյան ափին՝ հյուսիսային բևեռային շրջանից 250 կմ դեպի հյուսիս, Սերմեք Կույալլեքի (Sermeq Kujalleq) ծովածոցի սակավ սարցադաշտերից մեկն է, որի միջոցով Գրենլանդիայի սառույցները հասնում են ծովեզր: Սերմեք Կույալլեքը աշխարհի ամենաարագաշարժ (օրը՝ 19 մ) և ամենաակտիվ սառցադաշտերից մեկն է: Դրանից տարեկան 35 խոր.կմ սառցաբեկոր է անջատվում, որը կազմում է Գրենլանդիայի ամբողջ սառցադաշտից

անջատված սառույցի 10%-ը և ավելին, քան Անտարկտիկայի սահմաններից դուրս գտնվող ցանկացած այլ սառցադաշտից անջատված բեկոր: Ֆյորդի ավելի քան 250 տարվա հետազոտությունն օգնել է ուսումնասիրել և հասկանալ կլիմայական փոփոխությունն ու սառցաբեկորի կազմությունը: Ֆյորդում արագընթաց և խուլ աղմուկով շարժվող սառցաբեկորների և սառցե հսկայական զանգվածի համադրությունն իրենից ներկայացնում է բնության մի հսկայական երևույթ:

Ջոգինսի բրածո ժայռեր *(Կանադա)*

© Ն. Շ. Տուրիզմի դեպարտամենտ, մշակույթ և ժառանգություն / Ուլեյ Հայես

Ջոգինսի բրածո ժայռերը Նովա Շատիա թերակղզու ծովեզերքի երկայնքով սփռված 689 հա մակերեսով պալեոնթոլոգիական տեղանքապատկեր է (արևելյան Կանադա): Այն նկարագրվել է որպես «Գալապագոսի ածխի ժամանակաշրջան» այնտեղ պահպանված ածխաերկաթային ժամանակաշրջանի (354-290 մլն տարի առաջ) բրածոների առատության պատճառով: Այս հուշարձանի ժայռերը վառ օրինակ են Երկիր մոլորակի պատմության այս շրջանի համար և հանդիսանում են փենսիլվանյան շերտի (318-303 մլն տարի առաջ) աշխարհում գրանցված ամենախիտ և ամենահաստ մասը՝ այդ ժամանակից ի վեր երկրային կյանքի առավել ամբողջական բրածոների գրանցումով հանդերձ: Դրանք ներառում են վաղ շրջանի կենդանիների մնացորդներ ու հետքեր, անձրևային անտառներ, որտեղ դրանք ապրել են՝ մնալով անձեռնմխելի և անխախտ: Ծովային ժայռերից, զառիթափերից, ժայռային պլատֆորմային ձևավորումներից և լողափերից կազմված իր 14,7 կմ տարածքում հուշարձանախմբերը մնում են 3 էկոհամակարգերով՝ հորատանցքային ավազան, անձրևային անտառներ և հեշտությամբ այրվող անտառային ալյուվային հարթավայր՝ քաղցրահամ ջրամբարներով: Այստեղ է գտնվում այս 3 էկոհամակարգերին համապատասխանող բոլոր բրածո համալիրներից ամենահարուստը, որը ներառում է 96 տեսակ և 148 բրածո, ինչպես նաև 20 հետքերի խումբ: Տեղանքը ցուցակագրվել է որպես երկրագնդի պատմության հիմնական փուլերը ներկայացնող բացառիկ օրինակ:

Ֆաունայի և ֆլորայի Մալպելո արգելավայր *(Կոլումբիա)*

© ՅՈՒՆԵՍԿՕ / Իվ Լեֆեվր

Գտնվում է Կոլումբիայի ծովափից 500 կմ հեռավորության վրա, ներառում է Մալպեո կղզին (350 հա) և շրջակա ծովային միջավայրը (857,150 հա): Արևելյան արևադարձային խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ոչ ձկնորսային գոտի համարվող այս ընդարձակ ծովային պարկը իրենից ներկայացնում է միջազգայնորեն անհետացման վտանգի տակ գտնվող ծովատեսակների համար կենսական կարևոր միջավայր և սննդանյութերի հիմնական աղբյուր, որը հանգեցնում է ծովային կենսաբազմազանության խոշոր կուտակումների: Այն «ջրամբար» է շնաձկների, հսկա պերկեսների և մարլինների համար: Այն աշխարհի հազվագյուտ վայրերից մեկն է, որտեղ հայտնաբերվել են կարճաքիթ, կոտրված ատամներով շնաձկներ: Լայնորեն ճանաչված է որպես սուզման համար նախատեսված աշխարհի լավագույն վայրերից մեկը՝ բացառիկ բնական գեղեցկությամբ ուղղաձիգ պատերի և ժայռերի շնորհիվ: Այս խորունկ ջրերը խթանում են հսկա գիշատիչների և պելագիական տեսակների բնակությանը անխախտ միջավայրում, որտեղ նրանք պահպանում են իրենց բնականոն կյանքը (օր.՝ հայտնաբերվել են 200-ից ավելի մուրճագլուխ շնաձկների և 1000-ից ավել մետաքսե շնաձկների, կետաձև շնաձկների և թունաների կուտակումներ):

Մեծ Արգելախութ *(Ավստրալիա)*

Մեծ ստորջրյա ժայռախութը ուշագրավ և գեղեցիկ վայր է Ավստրալիայի հուսիսարևելյան ափին: Այն պարունակում է մարջանի խութերի աշխարհի խոշորագույն հավաքածուն՝ 400 տեսակի մարջան, 1500 ձկանատեսակ և 4000 տեսակի խեցեմորթ: Այն նաև ներկայացնում է մեծ գիտական հետաքրքրություն, որպես ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող տեսակների բնակատեղի, ինչպիսիք են դուգոնգը («ծովային կով») և հսկա կանաչ կրիան:

© ՅՈՒՆԵՍԿՕ /Ջ Տորսել/ IUCN

Վիրունգայի ազգային պարկ *(Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն)*

Վիրունգայի ազգային պարկը (790,000 հա տարածք) ընդգրկում է կենսաբազմազանության բարձր բնակատեղիներ՝ սկսած ճահիճներից և տափաստանից մինչև ավելի քան 5000 մ բարձրության վրա գտնվող Ռվենզորի ձյան տեղանքները, և լավային հարթավայրերից դեպի հրաբուխների լանջերին գտնվող սավաննաները: Պարկում գտնվում են լեռնային գորիլաներ, գետերում ապրում է մոտ 20,000 գետաձի և ձմեռում են Սիբիրից չված թռչուններ:

© ՅՈՒՆԵՍԿՕ / Յան Ռեդմոնդ

ԽԱՌԸ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Գործառնական ուղեցույցը խառը հուշարձաններ է անվանում այն հուշարձանները, որոնք բավարարում են կոնվենցիայի 1-ին և 2-րդ հոդվածներում ամրագրված մշակութային և բնության ժառանգությունների սահմանումների մի մասը կամ սահմանումն ամբողջությամբ (պարագրաֆ 46):

Ստորև ներկայացվում են ցանկում ընդգրկված խառը հուշարձաններից որոշ օրինակներ

Տիկալ ազգային պարկ *(Գվատեմալա)*

Ջունգլիի սրտում, շրջապատված փարթամ բուսականությամբ, գտնվում է Մայա քաղաքակրթության հիմնական վայրերից մեկը, որը բնակեցված էր Ք.ա 6-րդ դարից մինչև 10-րդ դարը: Արարողությունների կենտրոնն իր մեջ ներառում է տաճարներ և պալատներ, ինչպես նաև հանրային հրապարակներ, որոնք հասանելի էին թեքահարթակների միջոցով: Շրջակա տարածքում պահպանվել են բնակելի շենքերի մնացորդներ:

© Ք. Դուցին / Լ. Լայնհոռ

Տասսիլ Ն'Այջեր *(Ալժիր)*

© ՅՈՒՆԵՍԿՕ /Բուակետ

Գտնվելով մեծ երկրաբանական հետաքրքրություն ներկայացնող տարօրինակ լուսնային լանդշաֆտում՝ այս հուշարձանն իրենից ներկայացնում է նախապատմական անձավային արվեստի աշխարհի ամենակարևոր խմբավորումներից մեկը: Ավելի քան 15,000 գծանկարներ և փորագրություններ արտացոլում են կլիմայական փոփոխությունները, ինչպես նաև կենդանիների միգրացիան և մարդկային կյանքի էվոլյուցիան Սահարայում, որը տեղի է ունեցել Ք.ա 6-րդ դարից մինչև մեր օրերի առաջին հազարամյակը: Երկրաբանական կազմա–վորումներն իրենցից ներկայացնում են բացառիկ գեղատեսիլ վայր՝ քայքայված ավազաքարերի հետ կազմելով «ժայռերի անտառ»:

Մշակութային հուշարձանների նկարագրություն

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Պաշտոնական սահմանումը կոնվենցիայում ներկայացված է «Մշակութային ժառանգություն» բաժնում: Ստորև ներկայացվում են ցանկում ընգրկված հուշարձանների մի քանի օրինակներ:

Ազատության արձան *(Միացյալ Նահանգներ)*

© ՅՈՒՆԵՍԿՕ/Գրասիելա Գոնսալես Բրիգաս

Մոնումենտալ քանդակ: Պատրաստված է Փարիզում, ֆրանսիացի քանդակագործ Բարտոլդիի կողմից, Գուստավ Եյֆելի հետ համագործակցությամբ (ով պատասխանատու էր պողպոտե շրջանակի համար): Ազատության այս աշտարակ հուշարձանը 1886 թվականին, Ամերիկային անկախության 100-ամյակի առթիվ, նվեր է Ֆրանսիայի կողմից: Գտնվելով Նյու Յորքի նավահանգստի մուտքի մոտ՝ այն ողջունել է միլիոնավոր ներգաղթյալների, ովքեր մուտք են գործել Նյու Յորք այդ ժամանակից ի վեր:

Թաջ Մահալ *(Հնդկաստան)*

© Է. Դե Գրասիա Կամարա

Ճարտարապետական գործ: Սպիտակ մարմարից պատրաստված հոյակապ դամբարան է, որը կառուցվել է Ագրայում 1631-1648 թթ. մոնղոլ կայսր Շահ Յահանի պատվերով՝ նվիրված իր սիրելի կնոջը: Տաջ Մահալը Հնդկաստանում մուսուլմանական արվեստի մարգարիտն է, ինչպես նաև համաշխարհային ժառանգության բացառիկ և հիասքանչ գլուխգործոցներից մեկը:

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԽՄԲԵՐ

Պաշտոնական սահմանումը Կոնվենցիայում ներկայացված է «Մշակութային ժառանգություն» բաժնում: Գործառնական ուղեցույցը քաղաքային հուշարձանախմբերի սահմանումը ներկայացնում է պատմական քաղաքների և քաղաքային կենտրոնների համատեքստում (հավելված 3): Ստորև ներկայացվում են ցուցակում ընգրկված հուշարձանախմբերի մի քանի օրինակներ:

© ՅՈՒՆԵՍԿՕ /Մարիո Սանտոս

Այաթ-Բեն-Հադդուի քսար *(Մարոկկո)*

Քսարը իրենից ներկայացնում է բարձր պատերով շրջապատված հողային կառույցների խումբ՝ ավանդական բնակատեղի նախասահարային տարածաշրջանում: Տները համախմբված են պաշտպանական պատերի ներսում, որոնք ամրացված են անկյունային աշտարակներով: Օուարզազատ նահանգում գտնվող Այաթ-Բեն-Հադդուն հարավային Մարոկկոյի ճարտարապետական վառ օրինակ է:

© ՅՈՒՆԵՍԿՕ/Մարթիմարիա Գոնսալես

Մալթայի մեգալիթյան տաճարներ *(Մալթա)*

Յոթ մեգալիթյան տաճարները հայտնաբերվել են Մալթա և Գոցո կղզիներում, և յուրաքանչյուրն ունի իր զարգացման պատմությունը: Գոցո կղզու վրա գտնվող Ջգանտիայի երկու տաճարները նշանավոր են բրոնզե դարաշրջանին պատկանող իրենց հսկա կառույցներով: Չնայած այն հանգամանքին, որ կառույցների շինարարներն ունեցել են սահմանափակ ռեսուրսներ՝ Մալթա կղզում գտնվող Հաջարկիմ, Մնայդրա և Տարշիեն տաճարները բացառիկ ճարտարապետական գլուխգործոցներ են: Տա' Հաջրատ և Սկորբա համալիրները վառ ապացույցն են, թե ինչպես է ձևավորվել տաճարաշինության ավանդույթը Մալթայում:

ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐ

Պաշտոնական սահմանումը կոնվենցիայում ներկայացված է «Մշակութային ժառանգություն» բաժնում: Գործառնական ուղեցույցը որոշ հուշարձանների տեսակների վերաբերյալ տրամադրում է նաև ուղղորդում: Ստորև ներկայացվում են տեսարժան վայր հանդիսացող ցանկում ընդգրկված որոշ հուշարձանների օրինակներ (հավելված 3):

© ՅՈՒՆԵՍԿՕ / Է. Դե Գրամոնտ

Տեսարժան վայր Պալմիրա
(Սիրիայի Արաբական Հանրապետություն)

Հնագիտական վայր: Օազիս սիրիական անապատում՝ Դամասկոսից դեպի հյուսիս-արևելք: Պալմիրան ներկայացնում է աշխարհի ամենակարևոր մշակութային կենտրոններից մեկը հանդիսացող մեծ քաղաքի մոնումենտալ ավերակները: 1-2-րդ դարերում լինելով մի շարք քաղաքակրթությունների խաչմերուկում՝ Պալմիրայի արվեստն ու ճարտարապետությունն իր մեջ ներառել է հունահռոմեական տեխնիկաները տեղական ավանդույթների և պարսկական ազդեցության հետ միասին:

Թաքսիլա /հին քաղաք/ *(Պակիստան)*

Հնագիտական հուշարձան: Թաքսիլան արտացոլում է Ինդոսի վրա գտնվող քաղաքի զարգացման տարբեր փուլերը՝ Սարայկալայի հին Նեոլիթի շրջանի դամբարանաբլուրներից մինչև Սիրկապ (Ք.ա II դար) և Սիրսուք (մ.թ. 1-ին դար) քաղաքների պարիսպները: Քաղաքը շարունակաբար գտնվում էր Պարսկաստանի, Հունաստանի և Կենտրոնական Ասիայի ազդեցության տակ, իսկ Ք.ա V դարից մինչև մ. թ. II դարը եղել է բուդդայական կարևոր կրթական կենտրոն:

© ՅՈՒՆԵՍԿՕ / Ֆ.Բանդարին

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐ

Գործառնական ուղեցույցը լանդշաֆտները սահմանում է որպես մշակութային հուշարձաններ, որոնք ներկայացնում են «բնության և մարդու համատեղ գործ», ինչպես որ նշված է կոնվենցիայի 1-ին հոդվածում (պարագրաֆ 47):

Մշակութային լանդշաֆտների համար Համաշխարհային ժառանգության որևէ չափորոշիչներ չկան և ենթադրելի է, որ մշակութային չափորոշիչներից ցանկացածը կարող է կիրառվել՝ հիմնավորելու մշակութային լանդշաֆտի Համաշխարհային բացառիկ արժեքը:

Գոյություն ունեն մշակութային լանդշաֆտի 3 հիմնական տեսակ.

- մարդկանց կողմից միտումնավոր կերպով նախագծված և ստեղծված լանդշաֆտներ,
- օրգանապես ձևավորված լանդշաֆտներ,
- ասոցացվող լանդշաֆտներ (տես Գործառնական ուղեցույց, հավելված 3):

Շատ հուշարձաններ ներկայացնում են այս տեսակների մեկից ավելին և կարող են մասամբ համընկնել:

Սա կոնվենցիայի դինամիկ կողմն է, և գաղափարները, ինչպես նաև կառավարման մոտեցումները մանրակրկտորեն մշակվել են:
ԻԿՕՄՕՍ-ը Համաշխարհային ժառանգության մշակութային լանդշաֆտների վերաբերյալ մշակել է թեմատիկ մատենագրական շարք, որը հասանելի է
http://www.international.icomos.org/centre_documentation/bib/index.html. կայքէջում:

Ստորև ներկայացված են մշակութային լանշաֆտների երեք տեսակների օրինակներ

Նախագծված բնապատկեր. Վատ Ֆու և շրջակա հնագույն բնակավայրեր Տյամպասակ վարչական շրջանի մշակութային լանդշաֆտում *(Լաոսի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն)*

Տյամպասակ մշակութային լանդշաֆտը, որը ներառում է նաև Վատ Ֆու տաճարային համալիրը, ավելի քան 1000 տարվա պատմություն ունեցող, լավ պահպանված, նախագծված լանդշաֆտ է: Այն ձևավորվել է բնության և մարդու համագործակցության վերաբերյալ հինդու տեսլականն արտահայտելու համար: Կառուցվել է լեռան գագաթից մինչև գետեզերքը ձգվող առանցքի շուրջ՝ ստեղծելով մոտ 10 կմ

© ՅՈՒՆԵՍԿՕ / Ռ. Էնգելիսորդտ

երկարությամբ ձգվող տաճարների, սրբավայրերի և հիդրոտեխնիկական մեխանիզմների երկրաչափական մարմին: Մեկոնգ գետի ափին կառուցված երկու քաղաքները, ինչպես նաև Ֆու Կաո լեռը նույնպես տեղանքի մաս են կազմում: Այս ամբողջը ներկայացնում է 5-15-րդ դարերի զարգացումը՝ կապված հիմնականում Կխմերական կայսրության հետ:

Օրգանապես ձևավորված լանդշաֆտ. Բրնձի դաշտեր Ֆիլիպինյան Կորդիլիերում *(Ֆիլիպիններ)*

Լեռների լանջերի ուրվագծերով տեղակայված են ավելի քան 2 հազար տարի առաջ ստեղծված Իսուգաոյի բարձրորակ բրնձի դաշտերը: Փոխանցելով գիտելիքի պտուղը սերնդեսերունդ, արտահայտելով սուրբ ավանդույթներն ու նուրբ սոցիալական հավասարակշռությունը՝ ստեղծվել է մի գեղատեսիլ լանդշաֆտ, որն արտահայտում է մարդկության և միջավայրի ներդաշնակությունը:

© ՅՈՒՆԵՍԿՕ /Ֆեն Ջին

Ասոցացվող լանդշաֆտ. Ուլուրու Կատա Տյուտա ազգային պարկ *(Ավստրալիա)*

Այս պարկը նախկինում կոչվել է Ուլուրու (Այերս Ռոկ-Մաունթ-Օլգա) ազգային պարկ՝ առանձնահատուկ երկրաբանական կազմավորումներով, որոնք գերակշռում են կենտրոնական Ավստրալիայի ընդարձակ կարմիր ավազե հարթավայրում: Ուլուրու հսկայական մոնոլիտը, և դրանից դեպի արևմուտք գտնվող Կատա Տյուտա ժայռերը աշխարհի ամենահին մարդկային հասարակություններից մեկի ավանդական հավատքի համակարգի մաս են կազմում: Ուլուրու Կատա Տյուտայի ավանդական սեփականատերերը անանգու ցեղի բնիկներն են:

© Էմանուել Պիվարդ

Բնության հուշարձանների նկարագրություն

ԲՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԿԱԶՄՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՅԴՊԻՍԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԽՄԲԵՐԻՑ

Կոնվենցիայում պաշտոնական ձևակերպումը տրված է վերոնշյալ «Բնության ժառանգություն» բաժնում: Ստորև ներկայացված են ցանկում ընդգրկված հուշարձանների օրինակներ:

Կարստային նստվածքներ հարավային Չինաստանում *(Չինաստան)*

Հարավային Չինաստանի կարստային շրջանը տարածվում է կես մլն քառ. կմ մակերեսով և զբաղեցնում Հունան, Գուիչժոու և Գուանսի նահանգները: Այն ներկայացնում է խոնավ արևադարձային և մերձարևադարձային կարստային լանդշաֆտի աշխարհի ամենատպավորիչ օրինակներից մեկը: Շիլինի քարե անտառները համարվում են բնության գերազանց երևույթ: Շիլինը առանձնանում է բացա-

© ՅՈՒՆԵՍԿՕ / Ջիմ Թորսել

ռիկ բազմազան ձևերով և գույներով: Այստեղ ներկայացված են սրածայր կազմավորումների ավելի լայն շրջանակ, ինչպես նաև ձևերի և փոփոխվող գույների առավել բազմազանություն, քան աշխարհի այլ կարստային լանդշաֆտներում: Լիբոն ձեռք է բերել համաշխարհային ճանաչում իր յուրահատուկ կոնաձև և աշտարակաձև կարստային կազմավորումների շնորհիվ, որը ստեղծում է գեղեցկության անհամեմատելի բնապատկեր: Վուլոնգի կարստային կազմավորումները ընդգրկվել են ցանկում իրենց հսկա բնական ջրափոսերի, բնական կամուրջների և քարանձավների շնորհիվ:

Կամչատկայի հրաբուխներ
(Ռուսաստանի Դաշնություն)

Սա աշխարհի ամենահայտնի հրաբխային շրջաններից մեկն է, որտեղ կենտրոնացված են մեծ թվով գործող հրաբուխներ, ինչպես նաև բազմաթիվ բնական երևույթներ, որոնք կապված են հրաբուխների հետ: Սերիական հուշարձանը կազմված է վեց տեղանքներից, որոնք միասին արտացոլում են Կամչատկա թերակղզու հրաբխային երևույթները: Սառցադաշտերի և գործող հրաբուխների զուգակցումը ձևավորում է բացառիկ գեղատեսիլ և անընդհատ զարգացող լանդշաֆտ: Տեղանքն առանձնանում է կարևոր կենսաբազմազանությամբ, այդ թվում՝ սաղմոնաձկներով, կալաններով, գորշ արջերով և սպիտակաթև ծովային արծիվներով:

© ՅՈՒՆԵՍԿՕ/Գայ Ռեբոնե

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՍՏԱԿՈՐԵՆ ՈՒՐՎԱԳԾՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՎՏԱՆԳՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Պաշտոնական սահմանումը Կոնվենցիայում ներկայացված է «Մշակութային ժառանգություն» բաժնում: Ստորև բերված են ցանկում ընդգրկված հուշարձանների մի քանի օրինակներ:

Օկապիի արգելոց
(Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն)

Օկապիի արգելոցը գտնվում է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության հյուսիս-արևելքում՝ ընդգրկելով Իտուրի անտառի մոտ մեկ հինգերորդ մասը: Կոնգո գետի ավազանը, որի մաս են կազմում արգելոցն ու անտառը, հանդիսանում է Աֆրիկայի ամենամեծ դրենաժային համակարգերից մեկը: Արգելոցի տարածքում ապրում են պրիմատների և թռչունների վտանգված տեսակներ, ինչպես նաև վայրի բնության մեջ ապրող 30,000 օկապիներից մոտ 5,000-ը: Այստեղ կան նաև բնության հիանալի տեսարաններ, ինչպիսիք են Իտուրի և Էպուլու գետերի ջրվեժները: Արգելոցը բնակեցված է ավանդական քոչվորական Մբութի և Էֆե որսորդների կողմից:

© Էրիկ Լոդրե

Նոր Կալեդոնիայի ծովածոց. խութերի բազմազանություն և կապակցված էկոհամակարգեր
(Ֆրանսիա)

Այս սերիական տեղանքապատկերը ներառում է 6 ծովային կլաստեր, որոնք ներկայացնում են կորալային խութերի, Նոր Կալեդոնիայի՝ Խաղաղ օվկիանոսի Ֆրանսիական արշիպելագի կապակցված էկոհամակարգերի և աշխարհի ամենաընդարձակ 3 խու-



© Էմանուել Լեգրոս

թային համակարգերից մեկի հիմնական բազմազանությունը: Այս ծովածոցերն ունեն բնության բացառիկ գեղեցկություն: Նրանք առանձնանում են կորալի և ձկների տեսակների բացառիկ բազմազանությամբ: Նրանց առանձնահատկություններից է նաև սահուն անցումը մի միջավայրից մյուսը՝ մանգլենիներից մինչև ջրային բուսականություն և աշխարհի խութային կառուցվածքների բազմազանության կոնցենտրացում: Նոր Կալեդոնիայի ծովածոցը իրենից ներկայացնում է անձեռնմխելի էկոհամակարգ, որտեղ առկա է խոշոր գիշատիչների առողջ բնակություն և մեծ ձկների բազմազանություն: Այդ համակարգը միջավայր է ապահովում մի շարք վտանգված ծովային տեսակների համար, ինչպիսի քենկրիաները, կետաձկները կամ դյուգոնները, որոնց բնակչությունն այստեղ կազմում է աշխարհի երրորդ ամենախոշոր բնակչությունը:

ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲՆԱԿԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՑԱՌԻԿ ԱՐԺԵՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՆՔԱՊԱՏԿԵՐՆԵՐ ԿԱՄ ՀՍՏԱԿՈՐԵՆ ՈՒՐՎԱԳԾՎԱԾ ԲՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Պաշտոնական սահմանումը կոնվենցիայում ներկայացված է «Մշակութային ժառանգություն» բաժնում: Ստորև ներկայացված են ցանկում ընդգրկված հուշարձանների մի քանի օրինակներ:

Grand Canyon ազգային պարկ *(Միացյալ Նահանգներ)*

Կոլորադո գետով փորված մեծ կիրճը (մոտ 1,500 մ խորությամբ) աշխարհի ամենատպավորիչ կիրճն է: Տեղավորված լինելով Արիզոնա նահանգում՝ այն կտրում-անցնում է Grand Canyon ազգային պարկը: Նրա հորիզոնական շերտերը արտացոլում են վերջին երկու միլիարդ տարվա երկրաբանական պատմությունը: Կան նաև նախապատմական մարդկային ադապտացիայի հետքեր՝ հատկապես շրջակա միջավայրի ծանր պայմաններին:



© Դեյվիդ Գելրոֆ

Հա Լոնգ ծովախորշ *(Վիետնամ)*

Հա Լոնգ ծովախորշը գտնվում է Տոնկինի ծոցում, ներառում է մոտ 1,600 կղզիներ և կղզյակներ, որոնք կազմում են կրաքարային սյուների տպավորիչ ծովափնյա լանդշաֆտ: Գահավիժող բնույթի պատճառով՝ կղզինե–րից շատերն անմար դաբնակ են և մարդու կողմից չեն վնասվել: Տարածքի բացառիկ գեղեցկությունը համակցված է իր կենսաբանական մեծ արժեքով:

© Բ. Դուցին / L. Լալիտե

Հիմնական հասկացությունների բառարան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՑԱՌԻԿ ԱՐԺԵՔ

Համաշխարհային ժառանգության կոնվենցիան ստեղծվել է «Համաշխարհային բացառիկ արժեք ներկայացնող հուշարձանները» ճանաչելու համար: Դրանք մարդկության ժառանգության մի մաս են, կարևոր են մարդկության համար և արժանի պաշտպանության և հաջորդ սերունդներին փոխանցվելու: Գործառնական ուղեցույցը Համաշխարհային բացառիկ արժեքը սահմանում է

որպես մշակութային և/կամ բնության կարևորություն, որն այնքան բացառիկ է, որ դուրս է գալիս ազգային սահմաններից և ներկայացնում է ընդհանուր կարևորագույն արժեք ամբողջ մարդկության ներկա և ապագա սերունդների համար (պարագրաֆ 49):

Այս սահմանումը մեկնաբանվում է Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների գրանցման չափորոշիչների համաձայն: Այդ չափորոշիչները ներկայացվում են ստորև:

Համաշխարհային բացառիկ արժեք համարվելու համար հուշարձանը պետք է նաև համապատասխանի ամբողջականության և/կամ իսկության պահանջներին և պետք է ունենա պաշտպանության և կառավարման համապատասխան համակարգ՝ ապահովելու դրա պահպանությունը (Գործառնական ուղեցույց, պարագրաֆ 78, տես նաև ամբողջականության և իսկության վերաբերյալ բաժինները II. E բաժնում):

Համաշխարհային բացառիկ արժեքն իրենից ներկայացնում է՝
• անվանակարգի հիմնական թիրախը,
• գնահատման առարկան,
• հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցելու պատճառը, և
• այն, ինչը պետք է կանգուն պահել պաշտպանության, պահպանության և կառավարման միջոցով:

2007 թ. ի վեր Համաշխարհային ժառանգության կոմիտեն Համաշխարհային բացառիկ արժեքի հայտարարությունը ընդունում է Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանը գրանցվելու ժամանակ: Ներկայում այդպիսի հայտարարություններ են ստեղծվում այն հուշարձանների համար, որոնք ցանկում են ընդգրկվել նախքան այս գործընթացի կիրառումը: Այժմ այդ հայտարարությունները հիմնավոր նշանակություն ունեն կոմիտեի աշխատանքի համար և ներառում են տեղեկություն, թե ինչու է յուրաքանչյուր գրանցված հուշարձան դիտարկվում որպես Համաշխարհային բացառիկ արժեք, ինչպես է այն բավարարում չափորոշիչներին և իսկության, ամբողջականության, պաշտպանության և կառավարման պահանջներին:

Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ հայտարարությունը (ՀԲԱՀ) ընդգրկում է հուշարձանի գոյության ամբողջ ժամանակահատվածը:

Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից ընդունվելուց հետո Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ հայտարարությունն ուղենիշ է հետևյալ գործընթացների համար.
• անդամ պետության և հուշարձանի կառավարչի կողմից մոնիթորինգ,
• պարբերական հաշվետվություն,
• արձագանքող մոնիթորինգ և պահպանվածության վիճակի վերաբերյալ հաշվետվություն,
• գրանցում Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում,
• հուշարձանի հնարավոր հեռացումը Համաշխարհային ժառանգության ցանկից:

Համաշխարհային բացառիկ արժեքը հասկանալու համար կարևոր են թեմաներն ու թեմատիկ շրջանակները: (Տես Համաշխարհային ժառանգության գլոբալ ռազմավարության բնության և մշակութային ժառանգության փորձագետների հանդիպման զեկույցը (ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտե/ Նիդերլանդների կառավարություն, 1998 թ.) և Համաշխարհային ժառանգության ցանկը. բացթողումների լրացում. ապագա գործողության ծրագիր (ԻԿՕՄՕՍ, 2005 a):

Ինչպես վերը նշվեց Համաշխարհային բացառիկ արժեքը մշակութային և/կամ բնության նշանակության հատուկ կատեգորիա է: Կան նաև ժառանգության արժեքի այլ մակարդակներ, ինչպիսիք են ժառանգության տեղական կամ ազգային ժառանգության արժեքը: Սույն ձեռնարկում օգտագործված արժեք և նշանակություն եզրույթները պետք է մեկնաբանվեն տրված տեքստին համարժեք, հաճախ այն կարող է լինել Համաշխարհային բացառիկ արժեք, բայց երբեմն կարող են վերաբերել ժառանգության այլ մակարդակների, ինչպիսիք են ազգային և տեղական ժառանգությունը:

ԱՏՐԻԲՈՒՏՆԵՐ ԿԱՄ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատրիբուտները հուշարձանի այն առանձնահատկություններն են, որոնք ասոցացվում են Համաշխարհային բացառիկ արժեքի հետ կամ արտահայտում են այդ արժեքը: Ատրիբուտները կարող են լինել նյութական և ոչ նյութական: Գործառնական ուղեցույցը մատնանշում է ատրիբուտների մի շարք տեսակներ, որոնք կարող են փոխանցել Համաշխարհային բացառիկ արժեքը ներառյալ՝
• ձևը և դիզայնը,
• նյութերն ու սուբստանցիան,

• օգտագործումն ու ֆունկցիան,
• ավանդույթները, տեխնիկան և կառավարման համակարգը,
• գտնվելու վայրն ու միջավայրը,
• ոչ նյութական ժառանգության լեզուն և այլ ձևերը,
• հոգևոր և ֆիզիկական ընկալումը (պարագրաֆ 82):

Այս ցանկը նախատեսված է դրանով առաջնորդվելու համար: Շատ կարևոր է, որ հուշարձանի բացահայտված ատրիբուտները բխեն Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ հայտարարությունից և կիրառելի չափորոշիչների հիմնավորումից:

Ատրիբուտները պետք է բացահայտվեն, քանի որ դրանք կենսական նշանակություն ունեն հուշարձանի իսկությունն ու ամբողջականությունը հասկանալու համար, ինչպես նաև պաշտպանության, պահպանության և կառավարման հիմնակենտրոնն են:

Բնության հուշարձանների դեպքում ընդունված է խոսել «առանձնահատկությունների» մասին, չնայած երբեմն օգտագործվում է ատրիբուտ բառը: Բնության հուշարձանների այդպիսի ատրիբուտների օրինակները կարող են ներառել.
• տեսողական և գեղագիտական նշանակությունը,
• ֆիզիկական հատկությունների կամ բնական կացարանների մասշտաբները,
• ֆիզիկական և բնապահպանական պրոցեսների անձեռնմխելիությունը,
• բնության համակարգերի բնականությունն ու անձեռնմխելիությունը,
• հազվագյուտ տեսակների բնակության կենսունակությունը,
• հազվադեպությունը:

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻ

Պահպանական գոտիները Համաշխարհային ժառանգության հուշարձանից դուրս գտնվող հստակորեն ուրվագծված տարածքներն են և ընդգրկում են նրա սահմանները, որոնք նպաստում են Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանությանը, պահպանությանը, կառավարմանը, իսկությանը, ամբողջականությանը և կայունությանը:

Չնայած, որ պահպանական գոտիները չեն դիտվում որպես գրանցված հուշարձանի մաս, դրանց սահմանները և համապատասխան կառավարման մոտեցումները պետք է գնահատվեն, հաստատվեն և պաշտոնապես փաստաթղթավորվեն անդամ պետության կողմից առաջադրվելու ժամանակ:

Այն դեպքում, երբ պահպանական գոտիները սահմանված են, դրանք պետք է համարվեն որպես Համաշխարհային ժառանգության հուշարձանի պաշտպանության, պահպանության և կառավարման տեսանկյունից անդամ պետության պարտավորությունների անբաժանելի բաղադրիչ: Պահպանական գոտու գործառույթները պետք է արտացոլեն պաշտպանության, պահպանության և կառավարման տարբեր ձևեր և մակարդակներ՝ պաշտպանելու համար այն ատրիբուտները, որոնք ապահովում են Համաշխարհային ժառանգության հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը:

Պահպանական գոտիների որոշ օրինակներ ներկայացված են 82-85 էջերում, որտեղ քննարկվում են նման գոտիների սահմանման պահանջները: Պահպանական գոտիների վերաբերյալ օգտակար հղում՝ Համաշխարհային ժառանգություն և պահպանական գոտի, միջազգային փորձագիտական հանդիպում Համաշխարհային ժառանգության և պահպանական գոտու վերաբերյալ, Դավոս, Շվեյցարիա, 2008 թ. մարտ (Մարտին և Պիատտի, 20):

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համեմատական վերլուծությունը բացատրում է առաջադրվող հուշարձանի կարևորությունը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային համատեքստում: Սա անելու համար հուշարձանը պետք է համեմատվի Համաշխարհային ժառանգության ցանկում ներառված կամ չներառված նմանատիպ հուշարձանների հետ: Համեմատությունը պետք է ընդգծի մյուս հուշարձանների հետ առաջադրվող հուշարձանի նմանությունները և պատճառները, որով առաջադրվող հուշարձանը առանձնանում է մյուսներից:

Համեմատական վերլուծությունը մանրամասնորեն քննարկվում է 67-73 էջերում:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հուշարձանը հողային կամ ծովային տարածք է, որը իրենից ներկայացնում է Համաշխարհային բացառիկ արժեք:

«Հիմնական գոտի» եզրույթը պաշտոնապես օգտագործվել է հուշարձանը նկարագրելու համար: Սակայն այն արդեն հնացած է և չպետք է օգտագործվի: Բոլոր հղումներում պետք է նշվի «հուշարձան» եզրույթը:

ՄԻՋԱՎԱՅՐ

Հուշարձանը հողային կամ ծովային տարածք է, որը իրենից ներկայացնում է Այն դեպքում, երբ միջավայրը Համաշխարհային բացառիկ արժեք հանդիսացող հուշարձանի մաս կամ փոխկապակցված բաղադրիչ է, ապա այն պետք է լինի գրանցված հուշարձանի մասը կամ, որոշ դեպքերում, ինչպիսին են ընդարձակ տեսարանները, պահպանական գոտու մասը: Եթե շրջակայքը կարող է օժանդակել Համաշխարհային բացառիկ արժեքի գնահատմանը, բայց անմիջականորեն չի նպաստում Համաշխարհային բացառիկ արժեքին, ապա ցանկալի է, որ այն ներառվի պահպանական գոտում կամ այլ կերպ պաշտպանված լինի:

ԻԿՕՄՕՍ-ի Ժառանգության կառույցների, հուշարձանների և տարածքների միջավայրի պահպանության մասին Սիանի հռչակագիրը (2005 b) նշում է.

> Ժառանգության կառույցների, հուշարձանի կամ տարածքի միջավայրը սահմանվում է որպես անմիջական և ընդլայնված շրջակա միջավայր, որը դրա մաս է կազմում կամ նպաստում է դրա նշանակությանն ու տարբերակիչ բնույթին: Ֆիզիկական և տեսողական առանձնահատկություններից բացի, միջավայրը ներառում է փոխազդեցությունը բնական միջավայրի հետ: Ներառում է նաև նախկին կամ ներկա սոցիալական կամ հոգեկան պրակտիկան, սովորույթները, ավանդական գիտելիքը, գործածությունն ու գործունեությունը և ոչ նյութական մշակութային ժառանգության առանձնահատկությունների այլ ձևեր, որոնց շնորհիվ ստեղծվել և ձևավորվել է տվյալ տարածքը, ինչպես նաև ներկայիս և զարգացող մշակութային, սոցիալական և տնտեսական համատեքստը:

Միջավայրին վերաբերող հայեցակարգն ու պահանջները քննարկվում են հաջորդիվ՝ 85-86 էջերում:

Բնության, մշակութային և խառը հուշարձանների միջև հարաբերությունները, ինչպես նաև մշակութային լանդշաֆտների հատուկ դեպքեր:

Կարևոր է չշփոթել խառը հուշարձաններն ու մշակութային լանդշաֆտները: Խառը հուշարձանները ցանկում ներառվում են երկու դեպք ում՝ (i)–(vi) չափորոշիչներից առնվազն մեկին և (vii)-(x) չափորոշիչներից առնվազն մեկին համապատասխանելու դեպքում, քանի որ դրանք առանձին-առանձին համապատասխանում են այդ երկու չափանիշներին էլ: Մշակութային լանդշաֆտների Համաշխարհային բացառիկ արժեքը առաջանում է ոչ թե դրանց մշակութային կամ բնության առանձնահատկություններից, որոնք գնահատվում են առանձին-առանձին, այլ մշակույթի և բնության միջև փոխհարաբերություններից: Մշակութային լանդշաֆտները սահմանվում են մշակութային ժառանգության համար նախատեսված չափորոշիչների հիման վրա: Նման հուշարձանները հաճախ ունենում են բնական արժեքներ, բայց սովորաբար ոչ այն մակարդակի, որ բնության հուշարձանների համար նախատեսված չափորոշիչներով հիմնավորվի դրանց գրանցումը ցանկում: Այն դեպքերում, երբ դա հնարավոր է անել, հուշարձանը պետք է գրանցվի որպես խառը հուշարձան և մշակութային լանդշաֆտ: Այս փոխհարաբերությունները տեսականորեն ցուցադրված են ներքոնշյալ դիագրամում:

Որոշ խառը հուշարձանների համար բնության և մշակութային արժեքները ինտեգրված և փոխկապակցված են: Այլ դեպքերում արժեքները կարող են փոխկապակցված չլինել, բայց պարզապես կիսեն միևնույն աշխարհագրական դիրքը:



Համաշխարհային ժառանգության չափորոշիչները

Համաշխարհային ժառանգության գրանցման համար գոյություն ունեն 10 չափորոշիչներ, որոնք սահմանված են Գործառնական ուղեցույցում (պարագրաֆ 77): (i)–(vi) չափորոշիչները վերաբերում են մշակութային հուշարձաններին և այդ իսկ պատճառով գնահատվում են ԻԿՕՄՕՍ-ի կողմից, իսկ մնացած չափորոշիչները՝ (vii)-(x), վերաբերում են բնության հուշարձաններին և գնահատվում IUCN-ի կողմից: Մինչդեռ շատ հուշարձաններ կարող են բավարարել միայն բնության և միայն մշակութային հուշարձանների համար նախատեսված որոշ չափորոշիչներին, խառը հուշարձանները կարող են բավարարել բնության, ինչպես նաև մշակութային հուշարձանների համար նախատեսված որոշ չափորոշիչների: Խառը հուշարձանների անվանակարգերը գնահատվում են երկուստեք IUCN-ի և ԻԿՕՄՕՍ-ի կողմից:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրեք միայն համապատասխան չափորոշիչները, որոնք ցույց են տալիս համաշխարհային բացառիկ արժեքները:

Ստորև ներկայացվում է որոշակի չափորոշիչներին համապատասխանող հուշարձանների օրինակներ (այս օրինակների տեքստն ու նկարագրությունները վերցված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կայքէջից):

Չափորոշիչ (i). մարդկային ստեղծարար հանճարի գլուխգործոց

Այլ կերպ ասած, այս չափորոշիչը վերաբերում է մշակույթի մեջ ձևավորված ոճի մի ակնառու օրինակի (թերևս լավագույն կամ հրաշալի օրինակ), որն ունի.
- բարձր մտավոր կամ խորհրդանշական ունակություններ,
- գեղարվեստական, տեխնիկական կամ հատուկ հմտությունների բարձր մակարդակ

Միայն եզակիությունը բավարար չէ գրանցումը հիմնավորելու համար: Հուշարձանը պետք է դիտարկվի ավելի լայն մշակութային-պատմական համատեքստում և դրա արժեքը գնահատվի այս համատեքստի համաձայն:

Համաշխարհային ժառանգության ցանկը հուշարձանների ցանկ է, այլ ոչ մարդկանց: Ուստի, օրինակ՝ (i) չափորոշչի պահանջը մարդկային ստեղծագործության գլուխգործոց լինելն է: Համաշխարհային ժառանգության ցանկը չի ընդգրկում հանճարներին, այլ ընդգրկում է նրանց գլուխգործոցները: Նույն կերպ այն չի ընդգրկում որևէ հանճարեղ անհատի ստեղծագործական ժառանգությունը, սակայն այն կարող է ընդգրկել Համաշխարհային բացառիկ արժեք հանդիսացող գլուխգործոցը կամ գլուխգործոցների շարքը, որոնք որպես ամբողջություն համարվում են Համաշխարհային բացառիկ արժեք:

Ոչ բոլոր գլուխգործոցներն են ճանաչված ճարտարապետների կամ դիզայներների գործեր: Օրինակ, որոշ նախապատմական կառույցներ դարձել են նմուշներ նախապատմական ժողովուրդների ստեղծագործական և տեխնիկական հմտությունների շնորհիվ. այլ դեպքերում համայնքի համատեղ ստեղծագործությունները կարող են համարվել գլուխգործոց, չնայած, որ դրանք, թերևս, կառուցելիս նախատեսված չեն եղել այլ բանի համար, քան որպես գործառնական տարր: Որոշ արդյունաբերական կառույցներ նույնպես անցել են գործառնական ու օգտավետ լինելու մակարդակը և իրենցից ներկայացնում են ստեղծագործական հանճարի մարմնավորում:

ՕՐԻՆԱԿՆԵՐ

Սիդնեի օպերային թատրոն *(Ավստրալիա)*

© Էմանուել Պիվարդ

1973 թվականին բացվեց Սիդնեի օպերային թատրոնի շենքը: Այն 20-րդ դարի մեծ ճարտարապետական կոթող է՝ միախառնված ճարտարապետական ձևի և կառուցվածքային դիզայնի ստեղծագործական և նորարարական բազմակի տարրերով: Հսկայական քաղաքային կառույցը, որը տեղակայված է ուշագրավ ջրային բնապատկերում՝ թերակղզու ծայրին, և նայում է դեպի Սիդնեյի նավահանգիստ, տևական ազդեցություն է ունեցել ճարտարապետության վրա: Սիդնեյի օպերային թատրոնի շենքը բաղկացած է միահյուսված կամարաձև «խեցիների» երեք խմբերից, որոնք հանդիսանում են երկու հիմնական դահլիճների և ռեստորանի տանիքը: Այս խեցենման կառույցները տեղակայված են ընդարձակ հարթակների վրա և շրջապատված են ծածկապատշգամբներով, որոնք ծառայում են որպես զբոսավայր: 1957թ., երբ Սիդնեյի օպերային թատրոնի շենքի նախագծումը միջազգային ժյուրին հանձնեց դանիացի ճարտարապետ Յուրն Ուդզոնին, այդ որոշումը խորհրդանշեց շինարարության արմատապես նոր մոտեցում:

Չափորոշիչ (ii). ցուցադրում է մարդկային արժեքների փոխանակումը ժամանակի ընթացքում կամ աշխարհի մշակութային ոլորտի շրջանակում, ներկայացնում է ճարտարապետության կամ տեխնոլոգիաների, մոնումենտալ արվեստի, քաղաքային պլանավորման կամ տեղանքապատկերների ձևավորման զարգացումները

Այս չափորոշչի հիմնական արտահայտությունը «մարդկային արժեքների փոխազդեցությունն» է: ԻԿՕՄՈՍ-ը արժևորում է, թե արդյոք հուշարձանի ֆիզիկական հատկությունները ճարտարապետական, տեխնոլոգիական, մոնումենտալ արվեստի, քաղաքային պլանավորման կամ լանդշաֆտային ձևավորման առումով կարելի է ասել, որ վերաբերում են գաղափարների փոխանակմանը և սա կարող է մեկնաբանվել մի քանի տարբեր ձևերով՝

- Հուշարձանը կարող է մարմնավորել այլ տարածաշրջանից կամ տարածքից ներմուծված գաղափարներ կամ հայեցակարգեր, սակայն ընդունել բնիկ տարածաշրջանի կամ այլ վայրի հետագա ստեղծագործական մոտեցումը,
- Բացի այդ, հուշարձանը ինքը կարող է հուշել մարդկային արժեքների փոխհարաբերության մասին՝ այլ շրջանների վրա ազդեցություն թողած ոգեշնչող գաղափարների միջոցով,
- Երրորդ, կարող էր լինել գաղափարների երկկողմանի հոսք, որի ժամանակ հուշարձանը արտահայտում է մշակույթների որոշակի միաձուլում կամ տեղական հարմարեցված տարբերակ, որը կարող էր որևէ առումով դիտվել որպես խորհրդանշական:

Բոլոր դեպքերում մարդկային գաղափարների կամ ազդեցությունների փոխանակումը կարիք ունի հստակ պատասխանի, որը կարելի է ասել ակնհայտ է այդ ժամանակ և/կամ հետագայում մարդկանց կամ հասարակության վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Շատ հուշարձանների համար ազդեցությունները կամ փոխանակումները վերաբերում են գաղափարների նյութական տարածմանը, որոնք կարևոր են արվեստի պատմության, ճարտարապետության, քաղաքաշինության կամ տեխնոլոգիայի պատմության մեջ, որպես հուշարձանի ատրիբուտների միաձուլում:

Քանի որ մարդկային հասարակությունների և մշակույթների ներսում, ինչպես նաև դրանց միջև փոխանակումները սովորական են, այս չափորոշիչը պահանջում է, որ փոխանակումը և արժեքները, իրենց ազդեցության տեսանկյունից լինեն զգալի և կարևոր ստացողի մշակույթի վրա: Փոքր մշակութային ասպեկտների կամ քիչ ազդեցություն ունեցող արժեքի փոխանցումը համարվում է անբավարար:

Բացի դրանից, փոխանակված արժեքները կամ ազդեցությունը պետք է ինչ-որ կերպ դրսևորվեն առաջադրված հուշարձանում՝ ընդգրկված լինելով հուշարձանի ատրիբուտներում: Հուշարձանում դրսևորում չգտած մարդկային արժեքները կամ ազդեցության փոխանակումը չեն կարող լավ փաստարկ հանդիսանալ այն գրանցելու համար:

Հուշարձանի լավ պահպանված որևէ կոնկրետ տեսակը հիմնավորելու նպատակով այս չափորոշչի օգտագործումը ընդհանուր առմամբ տեղին չէ և ցանկալի է օգտագործել այլ չափորոշիչներ:

ՕՐԻՆԱԿ
Սամարղանդ-Մշակույթների խաչմերուկ
(Ուզբեկստան)

© M & G Թերին Վեյս

Սամարղանդ պատմական քաղաքը հանդիսանում է աշխարհի մշակույթների խաչմերուկ և խառնարան: Ք.ա 17-րդ դարում հիմնադրված լինելով որպես հին Աֆրասիաբ՝ Սամարղանդն իր ամենանշանակալի զարգացումն է ունեցել Կարա- Լենկթեմուրի կայսրության ժամանակաշրջանում՝ 14-15-րդ դարերում: Սամարղանդի համալիրները, ինչպիսիք են Բիբի Խանըմ մզկիթը և Ռեգիստան հրապարակը կարևոր դեր են խաղացել ամբողջ տարածաշրջանի իսլամական ճարտարապետության զարգացման գործում՝ միջերկրականից մինչև հնդկական ենթամայրցամաք:
Այն գրանցված է նաև (i) և (iv) չափորոշիչների ներքո:

Չափորոշիչ (iii). հանդիսանում է եզակի կամ առնվազն բացառիկ վկայություն մշակութային ավանդույթների կամ քաղաքակրթության մասին՝ ապրող կամ անհետացած

Ի հակադրություն չափորոշիչ (ii)-ի, սա դիտարկում է գործընթացները՝ մշակութային ավանդույթներ, որոնք, որպես կանոն, ավելի երկար ժամանակահատվածում սահմանել են աշխարհագրական տարածաշրջանում ապրելակերպի կամ քաղաքակրթության ձևը: Նման ավանդույթները կարող են մինչ օրս գոյություն ունենալ և կենսունակ լինել կամ քայքայվել, և այդ դեպքում դրանց մասին վկայությունը հանդիսանում է հուշահամալիրը: Ավանդույթները կարող են իրենցից ներկայացնել շինարարական, տարածական պլանավորման կամ քաղաքաշինության ձևեր: Որպես այլընտրանք, ավանդույթները կարող են լինել ոչ նյութական, սակայն լինեն շոշափելի, ինչպես օր.՝ ժայռապատկերները, որոնք կարող են մշակութային ավանդութների գաղափարներ կամ տեսակետներ արտահայտել:

Հիմնական բառերն են՝ «բացառիկ վկայություն»: Վկայությունը մշակութային ավանդույթի կամ քաղաքակրթության ապացույցն է և պետք է հստակորեն արտահայտված լինի անվանակարգված հուշարձանում:

Մշակութային ավանդույթը կամ քաղաքակրթությունը պետք է ուսումնասիրվի Համաշխարհային բացառիկ արժեքի համատեքստում: Դրանք պետք է արտահայտեն «համընդհանուր բնույթի հարցեր, որոնք ընդհանուր են բոլոր մարդկային մշակույթներին կամ հասցեագրված են դրանց» (Համաշխարհային ժառանգության փորձագետների հանդիպում, Ամստերդամ,1998 թ.): Այսինքն՝ մշակութային ավանդույթը կամ քաղաքակրթությունը չեն կարող վերաբերել սոսկ այն հարցերին, որոնք կարևոր են միայն կոնկրետ մշակույթի համար:

Ընդհանուր առմամբ ակնկալվում է, որ քաղաքակրթությունը գոյություն է ունեցել մի զգալի ժամանակաշրջան, ունեցել է կազմակերպված բնույթ կամ միավորող որակներ, ինչպես նաև ներգրավել է մարդկանց մեծաքանակ խմբեր:
Համեմատաբար կարճատև կյանք ունեցող հասարակությունները, կազմակերպված բնույթ կամ միավորող որակներ չունեցող խմբերը, ինչպես նաև փոքր խմբերը պարտադիր չէ, որ համարվեն քաղաքակրթություն:

ՕՐԻՆԱԿ
Մակաոյի պատմական կենտրոն
(Չինաստան)

© Սերժ Դոս Սանտոս

Մակաոն կրում է Արևմուտքի և Չինաստանի միջև առաջին և երկարատև բախման եզակի վկայությունը: 16-20-րդ դարերում այն հանդիսանում էր առանցքային կենտրոն առևտրականների և միսիոներների համար, ինչպես նաև ուսուցման կենտրոն տարբեր ոլորտներում: Այս բախման ազդեցությունը կարելի է տեսնել տարբեր մշակույթների միաձուլման մեջ, որը բնութագրում է Մակաոյի պատմական էությունը:

Այն գրանցված է նաև (ii), (iv) և (vi) չափորոշիչների ներքո

Չափորոշիչ (iv). հանդիսանում է մարդկության պատմության կարևոր փուլ(եր)ը ներկայացնող շինության որևէ տեսակի, ճարտարապետական կամ տեխնոլոգիական անսամբլի կամ տեղանքապատկերի բացառիկ օրինակ

Այս չափորոշիչը վերաբերում է որոշակի տիպաբանության համատեքստում պատմության մեկ կամ ավելի զգալի փուլերը նկարագրող առաջադրված հուշարձանի տեխնոլոգիայի բացառիկ բնույթին:

Այս չափորոշչի էությունն այն է, որ հուշարձանը պետք է ինչ-որ կերպ ցույց տա իր կապվածությունը մարդկության պատմության որոշակի պահի կամ պահերի, և կամ որևէ նշանակալի փուլի հետ: Միգուցե հուշարձանի ստեղծումը պայմանավորված է այդ պահով կամ արտացոլում է դրա ազդեցությունը: Պատմական պահը պետք է համարվի բացառիկ կարևորություն ունեցող պահ՝ ելնելով դրա հետևանքներից: Փուլերը պետք է վերաբերեն քաղաքական կամ տնտեսական պատմությանը, կամ հավասարապես գեղարվեստական կամ գիտական պատմությանը, որն ունի հեռահար հետևանքներ:

Հուշարձանը բացառիկ կերպով պետք է լուսաբանի մարդկության պատմության նշանակալի փուլը: Նման փուլը պետք է գնահատվի տարածաշրջանային և գլոբալ համատեքստում և այդ համատեքտից ելնելով պետք է լինի կարևոր: Ուղղակի միայն երկրի պատմության մեկ կարևոր փուլը անբավարար է, քանի դեռ չկա էական տարածաշրջանային կամ գլոբալ ազդեցություն: Փուլը չափվում է նաև ժամանակի միավորով: Փուլը պետք է որոշվի մշակութային պատմության և դրա մեջ շարունակականության ու փոփոխության ձևերի առումով: Արհեստականորեն նշանակված ժամանակահատվածները (օր.՝ 18-րդ դարը) իրենք իրենցով, բավարար սահմանում չեն: Համապատասխան ժամանակահատվածը պետք է լինի մշակութային համատեքստում նշանակալի և ճանաչված նշանակություն ունեցող որոշակի ժամանակաշրջան:

Այսպիսով, այս չափորոշիչը պետք է գործածվի նշանակալի «նախատիպերի» կամ հուշարձանի որոշակի տեսակի օրինակների համար:

Այս չափորոշիչը նպատակ չունի խրախուսելու կամ թույլատրելու աշխարհի ցանկացած տեսակի կառույց, համալիր կամ լանդշաֆտ գրանցել ցանկում, եթե նույնիսկ այն բացառիկ օրինակ է:

ԻԿՕՄՕՍ-ը իրականացրել է հուշարձանի տեսակների բազմաթիվ ուսումնասիրություններ, ինչպիսիք են երկաթուղիները, ջրանցքները, ժայռային գեղանկարչությունը /ժայռապատկերը/ և կամուրջները՝ առաջադրված հուշարձանների որոշակի տեսակների օբյեկտիվ գնահատումն իրականացնելու նպատակով (տես http://www.icomos.org/studies/): Կան նաև ԻԿՕՄՕՍ-ի փաստաթղթային կենտրոնի կողմից պատրաստված մի շարք օգտակար թեմատիկ և տարածաշրջանային մատենագրություններ, որոնք հասանելի են առցանց՝
(http://www.international.icomos.org/centre_documentation/bib/index.html):

ՕՐԻՆԱԿ

Ռիդո ջրանցք *(Կանադա)*

© ՅՈՒՆԵՍԿՕ / Դամիեն Հաստոյ

Ռիդո ջրանցքը լայնածավալ, լավ պահպանված ջրանցքի նշանակալի օրինակ է, որն օգտագործվել է ռազմական նպատակներով: Այն կապված է մարդկային պատմության կարևորագույն փուլի հետ, այն է՝ պայքար ամերիկյան մայրցամաքի հյուսիսը հսկելու համար: Առաջադրված հուշարձանը ներառում է բնօրինակ ջրանցքի բոլոր կարևոր տարրերը, ներառյալ ջրատարները, ամբարտակները, կամուրջները, ամրությունները, արգելափակման կայանները և հարակից հնագիտական ռեսուրսները՝ հետագա համապատասխան փոփոխությունների հետ միասին:

Ջրանցքի բնօրինակի նախագիծը, ինչպես նաև ջրանցքների կառուցվածքը, մնացել են անվնաս: Որպես գործող ջրատար Ռեդու ջրանցքն իր կառուցումից մինչ օրս, առանց ընդհատման, իրականացրել է իր դինամիկ ֆունկցիան: Դրա փակ դարպասների ու արգելափականների մեծ մասը դեռևս գործում են ձեռքի ճախարակների միջոցով:

Այն գրանցված է նաև չափորոշիչ (i)-ի ներքո:

Չափորոշիչ (v). հանդիսանում է մարդկության ավանդական բնակավայրերի, հողօգտագործման կամ ծովի օգտագործման բացառիկ օրինակ, որոնք ներկայացնում են մեկ կամ մի քանի մշակույթ, կամ շրջակա միջավայրի հետ մարդկության փոխներգործությունը՝ հատկապես, երբ այն դառնում է խոցելի անշրջելի փոփոխության ազդեցության տակ

Ավանդական բնակավայրերը կարող են լինել քաղաքային կամ գյուղական: Նույն կերպ հողի օգտագործումը չի դիտվում որպես գյուղական զբաղվածություն: Այս չափորոշչի հիմնական առանձնահատկությունն այն է, որ հուշարձանը պետք է ներկայացնի հատուկ մշակույթ կամ մշակույթներ և դրա ներկայացվածությունը պետք է ինչ-որ առումով բացառիկ լինի:

Երբեմն ենթադրվում է, որ այս չափորոշչում շեշտադրվում է անդառնալի փոփոխության ազդեցությունը, այսինքն՝ հուշարձանը, ենթարկվելով անդառնալի փոփոխության, ձեռք է բերում բացառիկ արժեք: Դա այդպես չէ: Այնուամենայնիվ, խոցելիությունը կարող է նշանակել, որ ինչը նախկինում շատ առատ էր՝ դարձել է անբավարար, իսկ այն, ինչ մնացել է, դարձել է հազվագյուտ և հնարավոր է, որ բնակավայրի տեսակի կամ հողի օգտագործման միակ պահպանված օրինակն է:

Հիմնական արտահայտությունն է «հողօգտագործում»: Պետք է որոշակի ժամանակահատվածի ընթացքում կապված լինի բնակավայրի կամ դրա օգտագործման հետ, որպեսզի այն համարվի ավանդական: Բնակավայրը կամ դրա օգտագործումը պետք է նաև լինի մշակույթի կամ մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության բացառիկ օրինակ: Այսինքն, բնակավայրը կամ դրա օգտագործումը պետք է կարևոր լինեն մշակութային կյանքում կամ մարդկային փոխազդեցությունը պետք է ունենա համընդհանուր նշանակություն:

ԻԿՕՄՕՍ-ը իրականացրել է խաղողի այգիների, լանդշաֆտների վերաբերյալ մի շարք գլոբալ թեմատիկ ուսումնասիրություններ, ինչպես նաև տարածաշրջանային թեմատիկ ուսումնասիրություններ՝ ապահովելու անաչառ աջակցություն բնակավայրերի որոշ տեսակների կամ լանդշաֆտների գնահատման համար (տե՛ս http://www.icomos.org/studies/):

ՕՐԻՆԱԿ

Ագավայի լանդշաֆտը և Տեկիլայի արդյունաբերական հնագույն հարմարությունները *(Մեքսիկա)*

Զբաղեցնում է 34,658 հա տարածություն Տեկիլա հրաբխի և Ռիո Գրանդե գետի հովտում, կապույտ ագավայի ընդարձակ լանդշաֆտի մաս է կազմում՝ ձևավորված բույսի մշակույթով, որը 16-րդ դարից ի վեր օգտագործվում է տեկիլայի սպիրտի արտադրության մեջ և առնվազն 2000 տարի՝ խմորիչային խմիչքներ և կտոր ստանալու համար: Լանդշաֆտում աշխատում են օղեգործարաններ, որոնք արտացոլում են տեկիլայի միջազգային օգտագործման աճը 19-րդ և 20-րդ դարերում: Այսօր ագավայի

© Անվանակարգի ֆայլ/ Կարկո Տոմաս

մշակույթը ազգային ինքնության մաս է համարվում: Տարածքը ներառում է կապույտ ագավայի դաշտերի կենդանի, ֆունկցիոնալ լանդշաֆտը և Տեկիլա, Արենալ և Ամատիտան քաղաքային բնակավայրերը՝ խոշոր օղեգործարաններով, որտեղ խմորվում և թորվում է ագավայի «արքայախնձորը»: Հուշարձանը նաև տեուչիտլան մշակույթների վկայությունն է, որոնք ձևավորել են Տեկիլայի տարածքը մ.թ. 200-900 դարերում, մասնավորապես՝ ստեղծելով գյուղատնտեսության համար տերասաներ, բնակարաններ, տաճարներ, արարողակարգային բլուրներ և խաղահրապարակներ:

Դաշտեր, օղեգործարաններ, ագարակներ և քաղաքներ ներառող ողջ լանդշաֆտը մարդկանց ավանդական բնակավայրերի և հողօգտագործման բացառիկ օրինակ է, որը հանդիսանում է Տեկիլայում զարգացած յուրահատուկ մշակույթ:

Այն գրանցված է նաև (ii), (iv) և (vi) չափորոշիչների ներքո:

Չափորոշիչ (vi). ուղղակի կամ էապես կապակցված են իրադարձությունների կամ կենսունակ ավանդույթների, գաղափարների կամ հավատալիքների, գեղարվեստական և գրական աշխատանքների հետ, որոնք ունեն բացառիկ համաշխարհային նշանակություն (կոմիտեն գտնում է, որ սույն չափորոշիչը գերադասելի է օգտագործել մեկ այլ չափորոշիչի հետ միասին)

Մյուս չափորոշիչներից շատերը ներառում են ոչ նյութական միավորումների տարբեր տեսակներ, ինչպես օրինակ պատմական իրադարձությունները, քաղաքական առաջնորդները, պատերազմներն ու հակամարտությունը կամ քաղաքի պլանավորման կամ կառուցվածքային նորամուծությունների գաղափարները, սակայն դրանք վերաբերում են այս միավորումների նյութական ազդեցությանը: Այս չափորոշիչը, ընդհակառակը, վերաբերում է այնպիսի միավորումներին, որոնք կարող են նյութական ազդեցություն չունենալ հուշարձանի վրա, սակայն այնուամենայնիվ կարող են հստակ և ուղղակիորեն դրսևորվել: Օրինակ՝ լեռը կամ լանդշաֆտը կարող են սուրբ կամ ոգեշնչող լինել, հուշարձանը կարող է ներշնչել նկարիչներին, արվեստագետներին, երաժիշտներին կամ հուշարձանը կարող է կապված լինել ինչ-որ իրադարձության հետ, որն ինքնին բացառիկ նշանակություն ունի:

Այս չափորոշիչը հիմնավորելու ելակետը պետք է լինի այն, որ իրադարձությունները, ավանդույթները, գաղափարները, համոզմունքները կամ գեղարվեստական, գրական ստեղծագործություններն ունենան համաշխարհային բացառիկ նշանակություն: Այնուհետև անհրաժեշտ է ձևակերպել, թե ինչպես են այս միջոցառումները, ավանդույթները, գաղափարները, համոզմունքները կամ գեղարվեստական, գրական ստեղծագործություններն ուղղակի կամ զգալիորեն ցուցադրվում հուշարձանում:

Հաշվի առնելով, որ Համաշխարհային ժառանգության կոնվենցիան հուշարձանների մասին է, այս չափորոշիչը կարող է օգտագործվել միայն այն դեպքում, եթե հուշարձանի ֆիզիկական առանձնահատկությունները Համաշխարհային բացառիկ արժեք ունեն, այն գերակշռորեն բավարարում է առնվազն մեկ այլ չափորոշչի, և այն կարող է պաշտպանվել համաձայն այն ատրիբուտների, որոնք փոխանցում են դրա Համաշխարհային բացառիկ արժեքը:

Համաշխարհային ժառանգության ցանկը չի գրանցում միջոցառումները, ավանդույթները, գաղափարները, համոզմունքներն ու գեղարվեստական կամ գրական ստեղծագործությունները, բայց այն կարող է գրանցել հուշարձանները, որոնք ուղղակիորեն և ակնհայտորեն կապված են դրանց հետ: Օրինակ, եթե կրոնը կամ կրոնական շարժումն ունի համաշխարհային բացառիկ նշանակություն և ուղղակիորեն կամ ակնհայտորեն արտահայտված է հուշարձանում, ապա սա կարող է լավ առիթ հանդիսանալ գրանցման համար: Սակայն ցանկում չի կարող ընդգրկվել աշխարհի հիմնական կրոնների ցանկացած տաճար, սրբավայր կամ եկեղեցի: Հուշարձանը պետք է լինի ուղղակի կամ նյութական կապվածության ակնհայտ օրինակ:

Բացի այդ, առավել նախապատվություն է տրվում ծննդավայրերին կամ տվյալ կրոնի համար կարևոր վայրերին, քան համապատասխան համատեքստում այդ հավատքը տարածող այլ վայրերին:

Ուշադրություն դարձրեք, որ թեև գոյություն ունեն մի քանի բացառիկ դեպքեր, Գործառնական ուղեցույցը հստակորեն նշում է, որ այս չափորոշիչը պետք է գործածվի այլ չափոչոշիչների հետ միասին, այլ ոչ թե առանձին:

ՕՐԻՆԱԿ
«Ստրուվե» գեոդեզիական աղեղ *(Բելառուս, Էստոնիա, Ֆինլանդիա, Լատվիա, Լիտվա, Մոլդովայի Հանրապետություն, Նորվեգիա, Ռուսաստանի Դաշնություն, Շվեդիա և Ուկրաինա)*

Աղեղի չափումները և արդյունքները անմիջականորեն առնչվում են աշխարհի ձևի և չափի վերաբերյալ գիտական հետազոտության հետ: Այն կապված է Իսահակ Նյուտոնի այն թեորեմի հետ, ըստ որի երկիրը ճշգրիտ գունդ չէ:

Այն գրանցված է նաև (ii) և (iii) չափորոշիչների ներքո:

© ՅՈՒՆԵՍԿՕ / Վեռնա Վուժիչիչ-Լուգասի

Չափորոշիչ (vii). պարունակում են անգերազանցելի բնական երևույթ կամ բացառիկ բնական գեղեցկության և գեղագիտական կարևորության շրջաններ

Այս չափորոշիչը մարմնավորում է երկու տարբեր գաղափարներ: Առաջինը «գերազանց բնական երևույթներ» հասկացությունն է, որը հաճախ կարելի է օբյեկտիվորեն չափել և գնահատել (օր.՝ ամենախոր կիրճը, ամենաբարձր լեռը, ամենամեծ քարանձավային համակարգը, ամենաբարձր ջրվեժը և այլն):

Երկրորդը «բացառիկ բնական գեղեցկություն և էսթետիկ նշանակություն» հասկացությունն է, որն ավելի բարդ է գնահատել: Այս չափորոշիչը վերաբերում է այն հուշարձաններին, որոնք դիտվում են որպես բացառիկ բնական գեղեցկություն և էսթետիկ նշանակություն ունեցող: Բնության տարածքների գեղեցկություն և գեղագիտություն հասկացությունների վերաբերյալ շատ ինտելեկտուալ մոտեցումներ կան: Քանի որ չկա որևէ առաջարկված մոտեցում, կարևոր է որդեգրել մեկ կամ մի քանի ճանաչված մոտեցումներ: Առանց աջակցության ծանրակշիռ փաստարկի, միայն այս հատկությունները մատնացույց անելը բավարար չէ: Այս չափորոշչի կիրառումը չպետք է շփոթել մշակութային արժեքների և մշակութային լանդշաֆտների գեղագիտության ճանաչման հետ, որը ներկայում արտահայտվում է մշակութային չափորոշիչների կիրառմամբ:

Բացի այդ, այս չափորոշչի բնույթն այն է, որ գրանցման համար առաջադրված հուշարձանների տեսակներն ունենան համեմատելի նախադեպեր ամբողջ աշխարհում, այլ ոչ թե մեկ տարածաշրջանում, հետևաբար ակնկալվում է, որ այս չափորոշչի համաձայն կիրառվող ստանդարտները համապատասխանեն հիմնավորման համաշխարհային ստանդարտներին: Այս փաստը տարբերակում է այս չափորոշիչով պայմանավորված գեղագիտական տարրերի կիրառումն այն գործոններից, որոնք անհրաժեշտ են մշակութային լանդշաֆտների դիտարկման համար: Այս առումով գնահատումը հիմնվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից այս չափորոշիչով նախկինում գրանցված հուշարձանների համեմատության վրա և հնարավորության սահմաններում այն ենթադրում է պատկերային նշանակություն ունեցող տեղանքապատկերի արժեքի չափելի ցուցանիշների համեմատություն: Այս չափորոշչի հիման վրա արդեն իսկ գրանցված հուշարձանների համեմատությունը և դրա կիրառման հետ կապված Համաշխարհային ժառանգության կոմիտեի և IUCN-ի նախկին փորձը նույնպես կարևոր տարր են համարվում՝ կապված դրա կիրառման նպատակահարմարության հետ:

IUCN-ն մտադիր է զարգացնել այս չափորոշչի կիրառման վերաբերյալ հետագա թեմատիկ խորհրդատվությունը և 2012 թ. ներկայացնել Համաշխարհային ժառանգության կոմիտեին: IUCN-ն նաև նշել է, որ (vii) չափորոշչի կիրառումը, որպես կանոն, քննարկվել է առնվազն բնության մեկ այլ չափորոշչի հետ միասին:

ՕՐԻՆԱԿ

Մոնարխ թիթեռի կենսոլորտային արգելոց
(Մեքսիկա)

© Անվանակարգի / Լոռֆ փեմոիոդոՊ Գոտֆրոկ նկիգրոկ

56,259 հա տարածքով կենսոլորտային արգելոցը գտնվում է Մեխիկոյից 100 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ խիտ անտառածածկ լեռներում: Յուրաքանչյուր աշուն Հյուսիսային Ամերիկայի տարածքներից այստեղ են վերադառնում միլիոնավոր, գուցեև միլիարդավոր թիթեռներ, խմբավորվում անտառային արգելոցի փոքրիկ տարածքներում՝ ծառերը ներկելով նարնջագույն և իրենց ծանրությունից ցած կեռելով դրանց ճյուղերը: Գարնանն այս թիթեռները սկսում են իրենց ութամսյա միգրացիան դեպի արևելյան Կանադա և վերադարձ, որի ընթացքում ծնվում և մահանում է չորս սերունդ: Թե ինչպես են նրանք գտնում ձմռանը ետդարձի ճանապարհը՝ շարունակում է մնալ առեղծված:

Criterion (viii). հանդիսանում են երկրի պատմության հիմնական փուլերը ներկայացնող բացառիկ օրինակներ՝ ներառյալ կյանքի գոյության փաստերը, երկրի ռելիեֆի զարգացման ընթացքում կարևոր շարունակական երկրաբանական գործընթացները կամ կարևոր գեոմորֆիկ կամ ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները

Այս չափորոշչի գնահատման շրջանակները գլոբալ են՝ արտացոլելով ինչպես գեոմորֆիկ երևույթների գլոբալ բաշխումը, այնպես էլ գլոբալ մասշտաբով համաշխարհային աշխարհայացքային հեռանկարը, որը պետք է ընդգրկի երկրագնդի պատմության 4,6 միլիարդ տարվա ներկայացչությունը, անդրադառնա երկրագնդի վրա կյանքի զարգացմանն, ինչպես նաև մոլորակի աշխարհագրության փոփոխություններին:

Ավելի շատ դիտարկվում են հուշարձաններ, որտեղ ի հայտ եկած հայտնագործություններն արմատական փոփոխություններ են առաջացրել երկրագնդի պատմության և երկրաբանական գործընթացների մասին մեր ունեցած ընկալումներում, քան նեղ դիապազոն և ավելի բարձր մասնագիտացված հատկանիշներ ունեցող հուշարձանները: Ելնելով որոշ երկրաբանական անվանակարգերի մասնագիտացված բնույթից՝ IUCN-ն խորհուրդ է ընդունում երկրաբանական փորձագետներից: Այս չափորոշիչը ներառում է չորս սերտորեն իրար հարող տարբեր բնական տարրեր, որոնք վերաբերում են երկրաբանական և գեոմորֆոլոգիական գիտությանը հետևյալ կերպ.

• Երկրագնդի պատմություն. երկրաբանական առանձնահատկությունների այս ենթախումբը ներառում է երևույթներ, որոնք արձանագրում են մոլորակի անցյալ զարգացումներում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, ինչպիսիք են ընդերքի դինամիկան, լեռների ծագումն ու զարգացումը, երկրային շերտերի տեղաշարժերը, մայրցամաքային տեղաշարժերը և ռիֆտային հովիտների առաջացումը, երկնաքարային ազդեցությունները և երկրաբանական անցյալում կլիմայի փոփոխությունը: Այս կատեգորիայի հիման վրա Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցվելու համար դիտարկվող հուշարձանները հիմնականում ներառում են խոշոր հայտնագործություններ, որոնց միջոցով մենք ընդհանուր պատկերացում ենք կազմում երկրագնդում տեղի ունեցող պրոցեսների և ձևերի մասին, որոնք բացահայտվել են ժայռերի և դրանց միավորումների առաջացումից, այլ ոչ թե հանածոների (թափոնների) համալիրներից:

• Կյանքի արձանագրություն. այս ենթախումբը ներառում է պալեոնթոլոգիական (հանածո) վայրերը: Նման անվանակարգերի գնահատման համար IUCN- ը մշակել է ստուգաթերթիկ (տես էջ 72):

• Ռելիեֆի ձևերի զարգացման գործընթացում ներկայիս կարևոր երկրաբանական գործընթացներ. գեոմորֆիկ հուշարձանները արձանագրում են ներկայիս երկրաբանական պրոցեսները և դրանց կապը ռելիեֆների ձևերի և լանդշաֆտների հետ (կամ ֆիզիկաաշխարհագրություն /բնագրություն): Չափորոշիչ (viii)-ի հատկանիշների այս ենթախումբը ներկայացնում է ակտիվ գեոմորֆոլոգիական պրոցեսներ, որոնք առնչվում են սառցադաշտերի, լեռների, անապատների, գործող հրաբուխների, գետերի և գետաբերանների, կղզիների և դրանց ափերի հետ:

• Կարևոր գեոմորֆիկ կամ ֆիզիզիկաաշխարհագրական յուրահատկություններ. այս ենթախումբը ներառում է երկրի ռելիեֆի ձևեր, որոնք ակտիվ պրոցեսների արդյունք են և սերտորեն կապված են վերոնշյալ գործընթացների հետ: Այս խումբը նաև ներառում է տարրեր, որոնք ավելի վաղ կամ երկարատև ժամանակահատվածի գործունեության արդյունք են, ինչպիսիք են ռելիկտային սառցե ռելիեֆի ձևերը, հանգած հրաբուխները և կարստային գոյացությունները: Այս հատկանիշները որոշ տպավորիչ ռելիեֆների ձևերի գեղագիտական որակի տեսանկյունից երբեմն կարող են դիտարկվել չափորոշիչ (vii)-ի կիրառման հետ:

Նաև նշել է, որ (vii) չափորոշչի կիրառումը, որպես կանոն, քննարկվել է առնվազն բնության մեկ այլ չափորոշչի հետ միասին:

IUCN- ի բրածո վայրերի գնահատման ստուգաթերթիկ

1. *Արդյոք հուշարձանում կան բրածոներ, որոնք ընդգրկում են երկրաբանական ժամանակի ավելի երկար ժամանակահատված, այսինքն՝ որքա՞ն մեծ է երկրաբանական /տեկտոնիկ/ պատուհանը:*

2. *Հուշարձանում ներկայացված են արդյոք բիոտիկների (կենդանի օրգանիզմների) սահմանափակ թվով տարատեսակների նմուշներ կամ ամբողջական բիոտիկներ, այսինքն՝ որքա՞ն հարուստ է տարատեսակների բազմազանությունը:*

3. *Որքանո՞վ է հուշարձանը յուրահատուկ հանածոների նմուշներ ստանալու տեսանկյունից, որը բնորոշ է տվյալ ժամանակաշրջանի երկրաբանական ժամանակահատվածին, այսինքն՝ կարո՞ղ է ուսումնասիրության համար այն լինել «տիպային տեղանք» կամ կա՞ն արդյոք նմանատիպ տեղանքներ, որոնք կարող են այլընտրանք հանդիսանալ:*

4. *Կա՞ն արդյոք համեմատելի հուշարձաններ այլ վայրերում, որոնք օգնում են հասկանալ ժամանակի /տարածության մեջ տվյալ կետի ողջ «պատմությունը». այսինքն՝ բավարա՞ր է միայն մեկ հուշարձանի առաջադրումը, թե՞ անհրաժեշտ է քննարկել սերիական հուշարձանների առաջադրման հարցը:*

5. *Արդյո՞ք հուշարձանն այն միակ հիմնական տեղանքն է, որտեղ կարևոր գիտական առաջընթացներ են գրանցվել (կամ տեղի են ունենում), որոնք զգալի ներդրում են ունեցել երկրագնդի վրա կյանքի մասին մեր ընկալումներում:*

6. *Որո՞նք են հուշարձանում նոր հայտնագործություններ կատարելու հեռանկարները:*

7. *Արդյո՞ք հուշարձանը միջազգային մակարդակով հետաքրքրություն է ներկայացնում:*

8. *Արդյո՞ք առկա են բնական արժեք ներկայացնող այլ հատկանիշներ (օր.՝ տեսարան, ռելիեֆի ձև, բուսականություն), որոնք առնչվում են հուշարձանի հետ:*

9. *Պահպանման ի՞նչ վիճակում են հուշարձանից ստացված նմուշները:*

10. *Ստացված հանածոները պատկերացում տալի՞ս են ժամանակակից տաքսոնների և/կամ համայնքների պահպանման կարգավիճակի մասին, այսինքն՝ որքանո՞վ է հուշարձանը համապատասխանում հետևանքների փաստագրմանը ժամանակակից բիոտայի ժամանակային փոփոխության ընթացքում:*

IUCN-ն երկրաբանական համաշխարհային ժառանգության մասին ստանձնել է գլոբալ թեմատիկ ուսումնասիրություն (Դինգուլ և այլք, 2005թ.): Ուսումնասիրությունը տրամադրում է այս չափորոշչի վերաբերյալ հետագա ուղեցույց, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում հետագայում դիտարկել Համաշխարհային ժառանգության ցանկի շրջանակը՝ երկրաբանական հուշարձանների 13 տարբեր թեմատիկ խմբերի տեսանկյունից ելնելով:

ՕՐԻՆԱԿ

Վադի Ալ-Հիտան (Կետաձկան հովիտ)
(Եգիպտոս)

© ՅՈՒՆԵՍԿՕ/ Վերոնիկ Դոգե

Եգիպտոսի արևմտյան անապատում Վադի Ալ-Հիտան, Կետաձկան հովիտը պարունակում է կետաձկների ամենավաղ շրջանի և այժմ անհետացած ենթադասի անգնահատելի բրածո մնացորդներ, արխեոցետներ /archaeoceti,հնագույն կետեր: Այս բրածոները ներկայացնում են էվոլյուցիայի հիմնական պատմություններից մեկը՝ Կետաձկան՝ որպես օվկիանոսային կաթնասուն, ի հայտ գալը, որը նախկինում եղել է ցամաքային կենդանի: Սա աշխարհում ամենակարևոր տեղանքներից մեկն է՝ էվոլյուցիայի այս փուլը ներկայացնելու համար: Այն վառ պատկե-

ում է այս կետաձկների ձևն ու կյանքն իրենց կյանքի անցումային շրջանում: Այսպիսի բրածոների քանակը, կենտրոնացումը և որակն այս վայրում բացառիկ է, ինչպես նաև բացառիկ է գրավիչ և պաշտպանված լանդշաֆտում դրանց մատչելիությունն ու միջավայրը: Ալ-Հիտանում հայտնաբերված բրածոները պատկանում են արխեոցետների /archaeocetes/ ամենավաղ ներկայացուցիչներին և ցույց են տալիս դրանց զարգացման այն փուլը, որի ժամանակ նրանք գրեթե ամբողջությամբ կորցրել են իրենց հետին վերջույթները: Հուշարձանում հայտնաբերված բրածոների այլ մնացորդներ հնարավորություն են տալիս վերականգնել տվյալ ժամանակաշրջանի շրջակա միջավայրի և բնապահպանական պայմանները:

Չափորոշիչ (ix). հանդիսանում են բնապահպանական և կենսաբանական շարունակական գործընթացները ներկայացնող բացառիկ օրինակներ ցամաքի, քաղցրահամ ջրերի, ափամերձ և ծովային էկոհամակարգերի, բուսական ու կենդանական համայնքների էվոլյուցիայի և զարգացման գործում

Այս չափորոշչի գնահատումը կախված է երկրագնդի էկոհամակարգերի գիտական գիտելիքի, պատկերացումների և դրանց դինամիկայի հետ կապված բնապահպանական և կենսաբանական գործընթացներից: Այս չափորոշիչը օբյեկտիվորեն գնահատելու համար IUCN-ն և անդամ երկրները մշակել են մի շարք գլոբալ թեմատիկ ուսումնասիրություններ անտառների, խոնավ տարածքների, ծովերի և ափամերձ տարածքների, լեռների, փոքր կղզային էկոհամակարգերի և հյուսիսային անտառների /տայգա/ վերաբերյալ: Այս չափորոշչի գնահատման համար հիմք են հանդիսանում այս ուսումնասիրությունները: Այս ուսումնասիրությունները կարելի է գտնել հետևյալ հղումով՝ http://www.iucn.org/about/work/programmes/wcpa_worldheritage/:

ՕՐԻՆԱԿ

Ատսինանանայի անձրևային անտառներ
(Մադագասկար)

© Դեյվիդ Բրոդսկի / Ռասել Թորսոնի ընկերությունը

Ատսինանանայի անձրևային անտառները բաղկացած են կղզու արևելյան մասի երկայնքով տարածված 6 ազգային պարկերից: Այս ռելիկտային անտառները խիստ կարևոր են պահպանելու համար Մադագասկարի բացառիկ կենսաբազմազանության գոյության համար անհրաժեշտ բնապահպանական ընթացիկ գործընթացները, որն արտացոլում է կղզու երկրաբանական պատմությունը: Ավելի քան 60 միլիոն տարի առաջ, ավարտելով իր բաժանումը մնացած բոլոր հողային զանգվածներից, Մադագասկարի բուսական և կենդանական աշխարհը դարձել է մեկուսացած: Անձրևային անտառները գրանցված են իրենց բնապահպանական և կենսաբանական պրոցեսների կարևորության, ինչպես նաև իրենց կենսաբազմազանության և վտանգված տեսակների առկայության համար: Շատ տեսակներ հազվագյուտ և վտանգված են, հատկապես պրիմատներն ու լեմուրները:

Այն գրանցված է նաև (x) չափորոշչի ներքո:

Չափորոշիչ (x). տեղում պարունակում են կենսաբանական բազմազանության կարևոր և արժեքավոր բնական արեալներ, այդ թվում նաև՝ այն հատվածները, որոնք ներառում են գիտության կամ կոնսերվացման տեսանկյունից համաշխարհային բացառիկ արժեք հանդիսացող վտանգված օրինակներ

Այս չափորոշիչը գնահատելու համար գոյություն ունեն մի շարք միջոցներ, այդ թվում՝ IUCN-ի Կարմիր ցանկը, բույսերի բազմազանության կենտրոնները, աշխարհի էնդեմիկ թռչունների արեալները, կենսաբանական բազմազանության միջազգային պահպանության թեժ կետերը և վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) երկրագնդի վրա կյանքը փրկելու 200 գլոբալ էկոտարածքները: Սույն ձեռնարկում ներկայացված մատենագրությունը պարունակում է այս հարցի շուրջ պարբերաբար անցկացվող խորհրդատվությունների հղումների ցանկ /տեղեկատու նյութեր/:

Այս գլոբալ դասակարգման համակարգերի կիրառման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի հատուկ փորձագիտական հանդիպման նախնական փաստաթղթում. Համաշխարհային բացառիկ արժեքի հայեցակարգը (Կամերոն, 2005թ.):

ՕՐԻՆԱԿ
Սոկոտրա արշիպելագ *(Եմեն)*

© Անվանակարգի ֆայլ / Մարիո Կարոնտա

Սոկոտրա արշիպելագը գտնվում է Հնդկական օվկիանոսի հյուսիս-արևմուքում՝ Ադեն ծոցի մոտ: 250 կմ երկարությամբ արշիպելագը բաղկացած է 4 մեծ կղզիներից և 2 փոքր ժայռոտ կղզյակներից, որոնք կարծես Աֆրիկայի հրվանդանի շարունակությունը լինեն: Հուշարձանը բացառիկ նշանակություն ունի իր կենսաբանական բազմազանությամբ, որտեղ առկա է հարուստ և բազմազան բուսական ու կենդանական աշխարհ (ֆլորա և ֆաունա): Սոկոտրայի բույսերի տեսակներիի 37%-ը, սողունների տեսակների 90%-ը և ցամաքային խխունջների տեսակների 95%-ը աշխարհի որևէ այլ տեղում հնարավոր չէ գտնել: Տեղանքը նաև խթանում է ցամաքային և ծովային թռչունների համաշխարհային մասշտաբով մեծ բնակեցմանը (194 տեսակի թռչնատեսակներ, որոնցից 44-ը բազմանում են կղզու վրա, իսկ 85-ը՝ սովորական չվող թռչուններ են), ներառյալ մի շարք վտանգված տեսակներ: Սոկոտրայի ծովային կյանքը նույնպես բազմազան է. 253 տեսակի կորալային խութեր, 730 տեսակի ափամերձ ձկներ և 300 տեսակի խաչափառ, օմար և ծովախեցգետին:

Սերիական և անդրսահմանային հուշարձաններ

Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցված հուշարձանները, որպես կանոն իրենցից ներկայացնում են առանձին հողատարածքներ, որոնք գտնվում են անդամ պետություններից մեկի տարածքում: Հուշարձանը կարող է լինել մեծ, օրինակ որոշ լանդշաֆտների դեպքում, ինչպիսին է Տյամպասակ վարչական շրջանի մշակութային լանդշաֆտում գտնվող Վատ Ֆու և շրջակա հնագույն բնակավայրերը Լաոսի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունում (39,000 հա): Մյուս կողմից հուշարձանը կարող է լինել չափազանց փոքր, որի օրինակը կարող է լինել Հիրոսիմայի խաղաղության հուշահամալիրը (Գենբակուի գմբեթը) Ճապոնիայում (0,4 հա): Հուշարձանները կարող են նաև լինել բնության, մշակութային և խառը:
Հիմնական հաղորդագրություն

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հստակ հասկացեք առաջադրված հուշարձանի տեսակը

Հստակ հասկացեք առաջադրված հուշարձանի տեսակը:
Բացի այդ, գոյություն ունեն հուշարձանների մի շարք հատուկ տեսակներ.
- անդրսահմանային հուշարձաններ,
- սերիական հուշարձաններ,
- սերիական անդրազգային հուշարձաններ (Գործառնական ուղեցույց, պարագրաֆ 134–39).

Ստորև նկարագրված են հուշարձանների այս հատուկ տեսակները: Բոլոր դեպքերում, պետք է հստակեցվի և բացատրվի առաջադրվող հուշարձանի մեջ ընդգրկվելու համար բաղադրիչների ընտրության տրամաբանությունը (տես էջ 76–79): Սերիական հուշարձանների մասին օգտակար հղումն է՝ Համաշխարհային ժառանգության բնության սերիական հուշարձանների անվանակարգեր և կառավարում. ներկայիս վիճակը, մարտահրավերներն ու հնարավորությունները (Էնգելս և այլք, 2009թ.):

ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Այս հուշարձանները ցամաքային կամ ծովային տարածքների շարունակություններ են, որոնք տարածվում են երկու կամ ավելի հարակից անդամ պետությունների սահմանների վրա:

Անդրսահմանային հուշարձանների առավելությունն է մեկ հուշարձանում ամբողջ տարածքի և ատրիբուտների ընդգրկումը, որը ներկայացնում է Համաշխարհային բացառիկ արժեք՝ անկախ գոյություն ունեցող քաղաքական սահմաններից: Նման հուշարձանները կարող են օգնել արտացոլելու և խրախուսելու միջազգային և խաղաղ համագործակցությունն այդ երկրների ընդհանուր ժառանգության տեսանկյունից: Անվանակարգի պատրաստումը և շարունակական պաշտպանությունն ու կառավարումը կարող են լրացուցիչ ջանքեր պահանջել՝ պայմանավորված տարբեր երկրների կազմակերպչական, կառույցների միջև համակարգման և համագործակցության անհրաժեշտությունից: Յուրաքանչյուր երկրում կարող են լինել պաշտպանության և կառավարման մեխանիզմների տարբերություններ, ինչպես նաև հուշարձանի կառավարման, պաշտպանության և պահպանության ռեսուրսների մատչելիության տարբերություններ: Նման հարցերը լուծելու համար Գործառնական ուղեցույցը առաջարկում

է ստեղծել համատեղ կառավարման կոմիտե կամ նմանատիպ մի մարմին՝ հուշարձանի կառավարման վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար:

Բացի դրանից, սահմանի յուրաքանչյուր մասում գտնվող բաղադրիչների պահպանվածության վիճակը կարող է տարբերվել՝ ստեղծելով նոր մարտահրավեր ամբողջական հուշարձանի հետագա կառավարման համար:

ՕՐԻՆԱԿ

Մուսկաու պարկ /Մուզակովսկի պարկ
(Գերմանիա և Լեհաստան)

© Յուրգեն Հոլոսամ

559,9 հա տարածքով լանդշաֆտային պարկը գտնվում է Լեհաստանի և Գերմանիայի սահմանին՝ Նիսա գետի երկու կողմերում: Այն ստեղծվել է 1815-1844 թթ. Պյուկլեր Մուսկաու Հերման ֆոնի կողմից: Ներդաշնակորեն խառնվելով գյուղատնտեսական լանդշաֆտին՝ պարկը հանդիսացավ առաջիններից մեկը լանդշաֆտային նոր դիզայնի ստեղծման հարցում և իր ազդեցությունն ունեցավ Եվրոպայում և Ամերիկայում լանդշաֆտային ճարտարապետության զարգացման վրա: Նախագծված լինելով որպես «բույսերով նկարչություն»՝ այն նախատեսված չի եղել դասական լանդշաֆտի, դրախտի կամ որոշակի կորած կատարելության տպավորություն ստեղծելու համար, փոխարենը օգտագործվել են տեղական բույսերի տեսակները ընդգծելու համար առկա լանդշաֆտի առանձնահատկությունները: Այս միաձուլված լանդշաֆտը տարածվում է Մուսկաու քաղաքի վրա կանաչ հատվածներով, որոնք ստեղծել են քաղաքային զբոսայգիներ՝ ձևավորելով նոր զարգացող տարածքներ: Այսպիսով քաղաքը դարձավ այս ուտոպիական լանդշաֆտի կառուցվածքային բաղադրիչ: Այս հուշարձանն ընդգրկում է նաև վերակառուցված ամրոց, կամուրջներ և բուսաբանական այգի:



Աղբյուրը՝ անվանակարգի ֆայլ

Մոսի-օա-թունյա /Վիկտորյա ջրվեժ
(Զամբիա և Զիմբաբվե)

Սրանք աշխարհի ամենատպավորիչ ջրվեժներն են: Զամբեզի գետը, որն այս պահին ավելի քան 2 կմ լայնություն ունի, շառաչյունով թափվում և հարվածում է բազալտե կիրճերին՝ առաջացնելով շիթեր և ծիածանափայլ մառախուղ, որը նկատելի է ավելի քան 20 կմ հեռավորությունից:

© ՅՈՒՆԵՍԿՕ/Նամա Թիամ

ՍԵՐԻԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Սերիական հուշարձաններն իրենցից ներկայացնում են անհատական կամ դիսկրետ բաղադրիչների շարքեր /տարածքներ, որոնք ընդգրկված չեն մեկ սահմանում: Բաղադրիչները կարող են լինել շատ մոտ կամ աշխարհագրորեն հեռու, սակայն բոլոր բաղադրիչներն էլ միևնույն երկրի ներսում են: Ստորև նկարագրված են անդրազգային սերիական հուշարձանները:

Սերիական հուշարձանները ներառում են երկու կամ ավելի բաղկացուցիչ մասեր, որոնք ունեն հստակ որոշակի կապեր:

ա) բաղադրիչ մասերը պետք է արտհայտեն ժամանակի ընթացքում պահպանված մշակութային, սոցիալական կամ ֆունկցիոնալ կապեր, որոնք անհրաժեշտության դեպքում ապահովում են լանդշաֆտային, բնապահպանական, էվոլյուցիոն կամ բնակավայրերի /արիալների կապը/ փոխկապակցումը:

բ) յուրաքանչյուր բաղադրիչ մաս էական, գիտական, հեշտությամբ սահմանված և ակնհայտ ձևով պետք է իր նպաստն ունենա հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի՝ որպես ամբողջություն ձևավորման գործում, ինչպես նաև, այլ բաների հետ մեկտեղ, կարող է ներառել ոչ նյութական բաղադրիչներ: Դրա արդյունքում Համաշխարհային բացառիկ արժեքը պետք է հեշտությամբ հասկանալի լինի և փոխանցվի:

գ) հետևաբար, բաղադրիչ մասերի ավելցուկային հատվածից խուսափելու համար հուշարձանի անվանակարգման պրոցեսում, ներառյալ բաղադրիչ մասերի ընտրությունը, պետք է լիովին հաշվի առնել ընդհանուր հուշարձանի կառավարելիությունն ու համահունչությունը՝ պայմանով, որ

Համաշխարհային բացառիկ արժեք ներկայացնի հենց շարքը որպես ամբողջություն, այլ ոչ թե դրա առանձին մասերը, (Գործառնական ուղեցույց, պարագրաֆ 137):

Որոշ դեպքերում թաքնված բաղադրիչները /տարածքները կարող են լինել մեկ պահպանական գոտում:

Սերիական հուշարձանը կարող է հաղթահարել փորձությունը և փորձել ստեղծել մեկ սահման բոլոր բաղադրիչներով հանդերձ, այդպիսով ներառելով ընդարձակ տարածքներ, որոնք չունեն Համաշխարհային բացառիկ արժեք ներկայացնող բաղադրիչներ:

Նման մոտեցումը կարող է անվանակարգը դարձնել ավելի բարդ՝ նրանում թաքնված տարածքների ընդգրկման պատճառով, քանի որ դրանցից յուրաքանչյուրը պետք է ներկայացվի անվանակարգման փաստաթղթում: Բացի դրանից պաշտպանությունը, պահպանությունը և կառավարումը կարող են ավելի բարդանալ, քանի որ տարբեր թաքնված բաղադրիչների մասով կարող են կիրառվել տարբեր մեխանիզմներ, նույիսկ եթե դրանք նույն երկրի ներսում են: Նման խնդիրների լուծման համար Գործառնական ուղեցույցը նշում է, որ կարևոր է առանձնացված բաղադրիչների համակարգված կառավարումը:

Որոշ դեպքերում հուշարձանների նկատմամբ սերիական մոտեցումը կարող է սխալ ընդունվել՝ անհիմն ընդլայնելով բաղկացուցիչ մասերի չափազանց սեղմ սահմանները: Ինչպես նախկինում նշվել է, հուշարձանի հստակ սահմանները և սերիական մոտեցման կիրառումը պետք է որոշեն արժեքները, ամբողջականությունն ու իսկությունը:

ՕՐԻՆԱԿ

Ֆիլիպինների Բարոկկո ոճի եկեղեցիները
(Ֆիլիպիններ)

Այս 4 եկեղեցիները (հուշարձաններ), որոնցից առաջինը կառուցվել է 16-րդ դարավերջին՝ իսպանացիների կողմից, գտնվում են Մանիլայում և Սբ. Մարիա, Պաոայ և Միագաո քաղաքներում: Դրանց բացառիկ ճարտարապետական ոճը եվրոպական բարոկկո ոճի մեկնաբանությունն է չինացի և ֆիլիպինցի արհեստավորների կողմից:

© OUR PLACE Համաշխարհային ժառանգության հավաքածու

Աղբյուրը՝ ԱրևՊոստԱսիա Պրե ՍՊԸ © 2005, քարտեզ հրապարակություններից. Կենդանի լանդշաֆտներ և մշակութային արվարձաններ Համաշխարհային ժառանգության հուշարձան Ֆիլիպիններում

Ավստրալական կաթնասունների բրածոների տեղանքապատկերներ
(Ավստրալիա)

© ՅՈՒՆԵՍԿՕ

Ռիվերսլեյը և Նարակորտը գտնվում են արևելյան Ավստրալիայի հյուսիսում և հարավում և հանդիսանում են աշխարհի բրածոների 10 ամենամեծ տարածքներից մեկը: Դրանք բացառիկ օրինակներ են, որոնք ներկայացնում են երկրագնդի պատմության հիմնական փուլերը, ներառյալ հնագույն կյանքի հետքերը, մասնավորապես՝ Ավստրալիայում կաթնասունների երրորդային էվոլյուցիայի միջին և ուշ շրջանը (Ռիվերսլեյ), ինչպես նաև ցամաքային ողնաշարավորների կյանքի բացառիկ վկայությունը, որն ընդգրկում է վերջին 170,000 տարիները (Նարակորտ) և նշանակալի երկրաբանական շարունակական պրոցեսները:

Աղբյուրը՝ շրջակա միջավայրի դեպարտամենտ, Ջուր, ժառանգություն և Արվեստ: Ավստրալիայի կառավարություն

ՍԵՐԻԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Սերիական /անդրազգային/ հուշարձանն այլ տիպի սերիական հուշարձանի ձև է, սակայն այս պարագայում դրա բաղադրիչները տեղակայված են մեկից ավել երկրներում:

Նման հուշարձանի առավելություններն ու բարդությունը նման են անդրսահմանային և սերիական հուշարձաններին, որոնք վերը նկարագրվել են:

ՕՐԻՆԱԿ

Սենեգամբիայի քարե շրջանակները
(Գամբիա և Սենեգալ)

Հուշարձանը բաղկացած է քարե շրջանակների 4 մեծ խմբերից, որոնք ներկայացնում են Գամբիա գետի երկայնքով մոտ 350 կմ երկարությամբ և 100 կմ լայնությամբ սփռված ավելի քան 1000 հուշարձանների կենտրոնացում: Չորս խմբերը՝ Սինե Նգայենեն, Վաննարը, Վասսուն և Կերբատչը, ներառում են 93 քարե շրջանակներ և բազմաթիվ գերեզմանաթմբեր, որոնցից որոշները պեղվել են, որպեսզի հայտնաբերեն

նյութեր, որոնք ներկայացնում են Ք.ա. 3-րդ դարից մինչև մ.թ. 16-րդ դարն ընկած ժամանակահատվածը: Քարե շրջանակները իրենց փոխկապակցված գերեզմանաթմբերի հետ միասին ներկայացնում են ավելի քան 1500 տարվա ընթացքում ստեղծված մի ընդարձակ սրբազան լանդշաֆտ: Այն արտացոլում է բարգավաճ, լավ կազմակերպված և երկարատև գոյություն ունեցող մի հասարակություն:

© OUR PLACE –Համաշխարհային ժառանգության հավաքածու



Աղբյուրը՝ անվանակարգի ֆայլ

Ուբսու Նուր ջրավազան *(Մոնղոլիա և Ռուսաստանի Դաշնություն)*

Ուբսու Նուր ջրավազանը (1,063,853 հա) կենտրոնական Ասիայի ամենափակ ջրավազանն է: Անունը ծագել է մակերեսային և շատ աղի համանուն լճի անունից, որը կարևոր է չվող թռչունների, ջրահավերի և ծովային թռչունների համար: Տեղանքապատկերը կազմված է տասներկու պաշտպանված տարածքներից, որոնք ներկայացնում են արևելյան Եվրասիայի հիմնական կենսաբազմազանությունը: Տափաստանային էկոհամակարգը կերակրում է թռչունների հարուստ բազմազանությանը, իսկ անապատը բնակատեղի է հանդիսանում մի շարք հազվագյուտ կաթնասունների՝ ավազամկան, ճագարամկան և խայտաքիսի համար: Լեռները կարևոր ապաստան են վտանգված ձյունե հովազների, վայրի ոչխարների և ասիական քարայծների համար:

© Մ.Խուլան



Աղբյուրը՝ անվանակարգի ֆայլ

Ստորև ներկայացված նկարը պատկերում է այս տարբեր տեսակի հուշարձանների տեսական տարբերությունները:

	Ազգային հուշարձաններ՝ մեկ երկիր (A)	Անդրսահմանային / անդրազգային/ հուշարձաններ՝ երկու և ավելի երկրներ (A, B and C)
Մեկ տարածք	**Ազգային Հուշարձաններ**  	**Անդրսահմանային հուշարձաններ**
Մեկից ավելի տարածքներ. սերիական հուշարձաններ	**Սերիական ազգային հուշարձան**  	**Սերիական անդրազգային հուշարձան (որոշ հնարավոր ձևակերպություններ)** Փոխկապակցված բաղադրիչների շարքեր, որոնցից յուրաքանչյուրն ամբողջությամբ գտնվում է մեկ երկրի տարածքում:  Փոխկապակցված բաղադրիչների շարքեր, որոնցից ոմանք գտնվում են մեկից ավելի երկրների տարածքում: Սերիական հուշարձանները կարող են ներառել բաղադրիչներ, որոնք գտնվում են ընդհանուր սահման չունեցող երկրներում, չնայած այդպիսի օրինակները սովորական չեն և ներկայումս դրանք կարելի է գտնել միայն մշակութային հուշարձաններում (օր.՝ Ստրուվե գեոդեզիական աղեղ և Հռոմեական կայսրության սահմաններ Համաշխարհային ժառանգության հուշարձանները): Վերոնշյալ օրինակների շարքերն ունեն բաղկացուցիչ մասեր B և C երկրներում, սակայն չունեն A երկրում:

2 Նախապատրաստում

Համաշխարհային ժառանգության հաջող անվանակարգը պահանջում է մանրազնին նախապատրաստում.

- հուշարձանի վերաբերյալ առկա տեղեկություն, որը կնպաստի անվանակարգի պատրաստմանը, ինչպես նաև հետագա հետազոտություններին, որոնք անհրաժեշտ է իրականացնել,
- անվանակարգի պատրաստման խմբի ձևավորում և ապահովում ռեսուրսներով,
- անվանակարգի պատրաստման գործընթացի փուլավորում և դրանց հիմնական փուլերը:

Ինչպես նշվել է այս ձեռնարկի նախաբանում, գոյություն ունեն անվանակարգի նախապատրաստման տարբեր ձևեր և նպատակահարմար չէ տալ «բաղադրատոմսեր» կամ առաջարկել նախընտրելի աշխատանքային մեթոդը: Գոյություն ունեն անվանակարգի նախապատրաստման տարբեր շատ լավ ձևեր: Այնուամենայնիվ, խուրհուրդը, որ տրվում է այստեղ, նպատակ ունի առաջարկել հիմնական սկզբունքներ և ուղեցույց, որոնք կօգնեն անդամ երկրներին աշխատանքային մեթոդ ընտրելիս:

2.1 Հուշարձանի վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկատվություն

Կարևոր է հաշվի առնել հուշարձանի վերաբերյալ արդեն իսկ գոյություն ունեցող տեղեկությունը, որը կօգնի անվանակարգի պատրաստման գործում:

Գրեթե բոլոր հուշարձանների պարագայում աշխատանքը պահանջում է ի մի բերել ամբողջ նյութը, որը հաճախ ցրված է լինում տարբեր տեղերում. մշակութային հուշարձանների դեպքում այն կարող է պարունակել բանավոր պատմություն, հրատարակված հնէաբանական վկայություն, պահպանման պատմություն, տուրիստական տեղեկություն, պլանավորման կանոններ և այլն: Որոշ հուշարձանների համար սովորաբար կարիք է լինում անցկացնել որոշակի հետազոտություններ այն պատճառով, որ դրանք բացակայում են, կամ լրացնելու և թարմացնելու այն ամենը, ինչն արդեն ձեռք են բերել:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հավաքեք և ուսումնասիրեք հուշարձանի վերաբերյալ գոյություն ունեցող համապատասխան տեղեկությունը և տեղեկացեք բացթողումների մասին:

Որպես առաջադրման նախնական էտապ օգտակար է հավաքել այն, ինչ հայտնի է և ճշտել, թե արդյոք կա լրացուցիչ աշխատանքի կարիք.

- հետազոտություն. արդյո՞ք անվանակարգի առկա համապատասխան հետազոտությունը համարժեք է, թե՞ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություն՝ արժեքը որոշելու, ինչպես նաև հուշարձանի պատմության և ատրիբուտների գլոբալ և մշակութային համատեքստերը հասկանալու համար:
- ցուցակներ. հուշարձանի վերաբերյալ ինչպիսի՞ տվյալների բազա գոյություն ունի և արդյո՞ք դրանք լրացնելու կամ թարմացնելու անհրաժեշտություն կա:
- փաստաթղթավորում. անդրադառնալով անվանակարգի ձևաչափով պահանջվող տեղեկատվության բազմաթիվ կատեգորիաներին՝ ի՞նչ տեղեկատվություն է արդեն իսկ առկա անվանակարգը ավարտին հասցնելու համար և ինչի՞ անհրաժեշտություն կարող է ծագել:
- շահագրգիռ կողմերի վերլուծություն. ովքե՞ր պետք է ներգրավվեն առաջադրման գործընթացում, այդ թվում նրանք, ովքեր ապրում են հուշարձանի տարածքում կամ ուղղակի կապ ունեն հուշարձանի հետ: Ինչպիսի՞ն է հուշարձանի սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավիճակը:

Կան դեպքեր, երբ Համաշխարհային ժառանգության կոմիտեն առաջադրումը հետաձգել կամ հետ է ուղարկել լրամշակման՝ հուշարձանի աջակցության համար անհրաժեշտ հետազոտական տվյալների անբավարար լինելու պատճառով:

2.2 Խմբի ձևավորում

Անվանակարգի նախապատրաստման խումբ

Համաշխարհային ժառանգության անվանակարգը սովորաբար պահանջում է թիմային մոտեցում՝ հաշվի առնելով խնդրի բարդությունը, հիմնական շահագրգիռ կողմերի լայն շրջանակը և անհրաժեշտ գիտելիքների և փորձի շրջանակը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիմում ընդգրկեք շահագրգիռ կողմերին և փորձագետներին:

Առաջադրվող հուշարձանի հետ առնչվող շահագրգիռ կողմերը կարող են տրամադրել կարևոր տեղեկություն և խորհուրդ: Որպես խմբի ստեղծման առաջին քայլ սովորաբար օգտակար է կազմել հիմնական շահառուների ցանկ: Այդտեղ կարող են ընդգրկվել կամ ներկայացվել հուշարձանի սեփականատերը /կառավարիչը, անդամ երկիրը, ժառանգության հարցերով զբաղվող ազգային գործակալությունները, տեղական կառավարման մարմինները, այլ կառավարական գործակալություններ, տեղական համայնքները, տեղի բնիկները, համալսարանները, հետազոտողներն ու ակադեմիկները, տեղական ձեռնարկությունները, զբոսաշրջային օպերատորները, ՀԿ-ները և դրանից օգտվողների խմբերը (օր.՝ ձկնորսները, անտառից օգտվողները, հանգստացողները, հետազոտողները): ԻԿՕՄՕՍ-ի ազգային կոմիտեները նույնպես կարող են օգտակար ռեսուրս հանդիսանալ մշակութային անվանակարգման համար: Խմբում ընդգրկված մասնակիցները պետք է ներկայացնեն առաջադրված հուշարձանի արժեքների շրջանակը, իսկ խումբը պետք է ներառի այնպիսի մասնագետներ, ովքեր միջազգային մակարդակով պատկերացում ունեն հուշարձանի մասին: Այս մասնակիցներն ու փորձագետները պետք է անվանակարգը նախապատրաստող թիմի մաս կազմեն կամ ներկայացված լինեն դրանում կամ թիմում աշխատելու թույլտվություն ունենան և մասնակցեն դրա աշխատանքներին: Թիմի կազմը պետք է ունենա որոշակի ճկունություն՝ հաշվի առնելով զարգացող շահերը:
Անվանակարգման նախապատրաստման գործընթացում տեղացի մարդկանց մասնակցությունը նույնպես կարևոր է, որը հնարավորություն է ընձեռում անդամ պետության հետ միասին կիսել հուշարձանի պահպանության պատասխանատվությունը, ապահովել տեղական գիտելիքների պատշաճ օգտագործումը, ինչպես նաև ապահովել ռեսուրսների իմացության և օգտագործման խնդիրների վերաբերյալ տեղում տիրող իրավիճակի ընկալումը:

Որպես կանոն կարևոր է գտնել ծրագրի մեկ ղեկավար, ով պատասխանատվություն կկրի անվանակարգման ամբողջ գործընթացը կառավարելու և վերջնական փաստաթուղթը ներկայացնելու համար:

Թիմը կարող է կարևոր լինել տարբեր միջոցներով՝ ներառյալ տեղական, ազգային և միջազգային մակարդակներով անվանակարգին աջակցություն տրամադրելով, ինչպես նաև հուշարձանի երկարատև պաշտպանություն, պահպանություն և կառավարում ապահովելով:

Որոշ դեպքերում օգտակար է ունենալ մի փոքրիկ հիմնական խումբ, որն անմիջական աշխատանք կծավալի առաջադրման հարցում, ինչպես նաև ավելի մեծ խումբ՝ աշխատանքներին օժանդակելու համար: Թիմը սովորաբար լավ է աշխատում, եթե լավ ղեկավարվում է, ունենում է ճիշտ կազմ, կենտրոնացած է լինում իր առջև դրված խնդիրների վրա և ունենում է հստակ և իրատեսական աշխատանքային ծրագիր՝ առանցքային կետերով: Թիմի առանձին անդամները կարող են հստակ դերեր ունենալ, որոնք պետք է հստակ հասկանալ (օր.՝ որոշակի ոլորտի փորձագետ, համայնքի ներկայացուցիչ, խմբագիր և այլն):

Օգտակար է ստեղծել նաև տեխնիկական և գիտական մասնագետներից կազմված խումբ, որը անվանակարգման խմբի ներսում կօգնի մշակել հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը: 69-70 էջերում ներկայացված է նման խնբի օրինակ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Իր նպատակի վրա կենտրոնացած և անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված լավ թիմը մեծապես կարող է նպաստել անվանակարգի նախապատրաստմանը:

Շատ հուշարձանների դեպքում անվանակարգման գործընթացը հանդիսանում է այն առաջին հնարավորությունը, որի ժամանակ այդ մարդիկ համագործակցում են որպես խումբ: Այս սկզբունքը գործում է նաև մի շարք բնության և մշակութային հուշարձանների պարագայում, որոնց թվում են ազգային պարկերը, քաղաքային տարածքները, մշակութային լանդշաֆտները, ճարտարապետական ժառանգությունը կամ արձանները: Անվանակարգման գործընթացը պահանջում է, որ հուշարձանը ուսումնասիրվի տարբեր տեսանկյուններից, այդ թվում՝ գիտական, պատմական, հնագիտական, լանդշաֆտային, պահպանական, կառավարման, սոցիալական կառուցվածքի, զբոսաշրջության, պլանավորման, բիզնեսային, զարգացման և կանոնակարգման: Եթե այս ուղղությունները լավ ներկայացվեն անվանակարգում, այնուհետև նաև հուշարձանի պաշտպանության, պահպանության և կառավարման գործընթացում, ապա այն կօգնի երկխոսություն կառուցել տարբեր կողմերի միջև, որոնք կարող են ներկայացնել այդ ուղղությունները:

Հաջողված անվանակարգ նախապատրաստելու համար ոչ մի կատարյալ թիմային կառույց կամ մեթոդ գոյություն չունի: Այնուամենայնիվ, կան շատ լավ օրինակներ, որոնք կարելի է ուսումնասիրել: Ամփոփելով՝ ներկայացնում ենք թիմ ձևավորելու հետևյալ հիմնական տիպերը:

- կազմել հիմնական աջակիցների կամ շահագրգիռ կողմերի ցանկ (օր.՝ հուշարձանի սեփականատեր /կառավարիչ, անդամ երկիր, ազգային ժառանգությամբ զբաղվող գործակալություններ, տեղական կառավարման մարմիններ, տեղական համայնքներ, տեղի բնակիչներ, զբոսաշրջային օպերա–տորներ, համալսարաններ և փորձագետներ),

- համոզվել, որ թիմի մասնակիցների կազմն ու նրանց գիտելիքների ու փորձի շրջանակը համապատասխանում է հուշարձանի արժեքների շրջանակին, ովքեր միջազգային համատեքստում հստակ պատկերացում ունեն հուշարձանի մասին և ավելի լայնածավալ խորհրդատվություն ստանալու համար ունեն օգտակար տեղեկատվական շրջանակներ,
- հաշվի առնելով նոր շահեր առաջանալու հնարավորությունը՝ թիմի անդամակցության հարցում լինել ճկուն, սակայն ցանկալի է որպես խմբագիր պահել նույն մարդուն,
- քննարկել մի փոքրիկ հիմնական խումբ ստեղծելու հնարավորությունը, որն անմիջական աշխատանք կծավալի առաջադրման հարցում, ինչպես նաև ձևավորել ավելի մեծ խումբ՝ աշխատանքներին օժանդակելու համար,
- ապահովել, որ թիմը ճիշտ ղեկավարվի, ունենա հմուտ կազմ, հստակ առաջադրանք, ինչպես նաև հստակ և իրատեսական աշխատանքային ծրագիր՝ առանցքային կետերով:

Կարևոր է ընդգծել իրատեսական աշխատանքային ծրագրի անհրաժեշտությունը. հապճեպ արված առաջադրումը դժվար թե բավարար լինի և առավել հավանական է, որ գնահատման ընթացքում խնդիրներ առաջանան:

Ստուգացանկ. որոշ կարևոր հմտություններ անվանակարգը պատրաստող թիմի համար

• Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի և Գործառնական ուղեցույցի իմացություն, ինչպես նաև դրանցում տեղ գտած տեղեկության մեկնաբանման ունակություն:
• Համաշխարհային ժառանգության ցանկում տեղ գտած և համադրելի արժեքներ ունեցող այլ հուշարձանների մասին տեղեկությունը վերլուծելու և հասկանալու ունակություն, ինչպես նաև հասկանալ և գնահատել Համաշխարհային ժառանգության կոմիտեի և դրա խորհրդատվական մարմինների կողմից արված նախկին հաշվետվություններն ու որոշումները:
• Կարողանալ
– ի մի բերել և հասկանալ առաջադրվող հուշարձանի և դրա արժեքների մասին տեղեկատվությունը՝ ներառյալ գիտական տեղեկատվությունը,
– ղեկավարել գիտնականներից, փորձագետներից և տեղական շահագրգիռ կողմերից ստացված մի շարք միջոցները /ներդրումները/,
– հետազոտել, հասկանալ և գնահատել համադրելի արժեքներ ունեցող այլ հուշարձանների արժեքները գլոբալ մակարդակով,
– տարբերել հուշարձանի արժեքներին առնչվող նշանակալի և աննշան փաստերը՝ ամենանշանակալի արժեքները որոշելիս,
– հակիրճ և ճշգրիտ հայտարարություններով փաստաթղթավորել ստացված բացահայտումները՝ հստակ օժանդակող տեղեկությունով հանդերձ,
և
– ստուգել հուշարձանին վերագրված մեկնաբանություններն ու արժեքները՝ հայտարարությունների ճշգրիտ և լավ հիմնավորման մեջ համոզված լինելու համար:
• Ելնելով կոնվենցիայի աշխատանքային լեզուներից՝ հնարավոր է, որ տեխնիկապես լավ թարգմանչի անհրաժեշտության կարիք լինի, ով կթարգմանի անվանակարգը և կապահովի տեղեկատվության և փաստարկների որակն ու ճշգրտությունը:
• Կառավարման պլանավորման, իրականացման ու հանրահռչակման հմտություններ ունեցող անձինք պետք է ընդգրկված լինեն հիմնական թիմում, որպեսզի անվանակարգի նախապատրաստումը կապեն հուշարձանի կառավարման հետ, ինչպես նաև ներկայացնեն կառավարման պլանը կամ կառավարման համակարգը, որը կհանդիսանա անվանակարգի մաս:

Ռեսուրսներ

Անվանակարգը նախապատրաստող թիմի և բուն նախապատրաստման գործընթացի համար, որպես աջակցություն, անհրաժեշտ կլինեն համապատասխան ռեսուրսներ և ֆինանսավորում: Գործընթացն սկսելուց պետք է գնահատվի ռեսուրսների և ֆինանսավորման մակարդակը, ինչպես նաև պետք է հայտնաբերվեն այդ աղբյուրները և հաստատվի դրանցից ակնկալվող աջակցության ապահովումը:

Ֆինանսավորման ամենակարևոր աղբյուրները, ամենայն հավանականությամբ կտրամադրվեն անդամ պետության տարածքում, սակայն ընտրված հուշարձանների և իրավասու պետությունների համար կարող է Համաշխարհային ժառանգության հիմնադրամից ֆինանսավորում ստանալու հնարավորություն լինել (տե՛ս whc.unesco.org/en/funding or whc.unesco.org/fr/fonds): Կա նաև տարա-

ծաշրջանային կազմակերպությունների մեծ բանակ, որոնք կարող են աջակցություն ցուցաբերել, ինչպես օրինակ Համաշխարհային ժառանգության աֆրիկական հիմնադրամը (www.awhf.net) և Համաշխարհային ժառանգության խաղաղօվկիանոսյան հիմնադրամը (ձևավորման գործընթացում է): Համաշխարհային ժառանգության աֆրիկական հիմնադրամը կարող է ֆինանսական օգնություն տրամադրել անվանակարգը նախապատրաստելու համար, ինչպես նաև տրամադրել տեղեկատվական և տեխնիկական աջակցություն: Օգնության համար կարելի է դիմել նաև կոնկրետ շահագրգիռ կողմերի և նույնիսկ հովանավորչությունների:

Որոշ անվանակարգերի համար կարող է կարևոր լինել նաև ՀԿ-ների դերը թե՛ ֆինանսավորման, թե՛ համապատասխան ունակությունների առումով:

Մյուս կարևոր խնդիրը, որը պետք է լուծվի անվանակարգը շարադրելու ընթացքում, ռեսուրսների շարունակական հոսքն է, որը միտված է հուշարձանի կայուն պաշտպանությանը, պահպանությանն ու կառավարմանը:

Գրանցումից հետո խմբի հավանական դերը

Անվանակարգը ներկայացնելը և ցանկում դրա հետագա գրանցումը դեռ ընթացակարգի ավարտը չէ: Չնայած այս ձեռնարկը կենտրոնանում է հուշարձանների առաջադրման վրա, հարկ է հաշվի առնել այն հնարավոր դերը, որը անվանակարգը նախապատրաստող թիմը կարող է իրականացնել՝ կապված հուշարձանի երկարաժամկետ պաշտպանության, պահպանության, կառավարման և մոնիթորինգի հետ: Անվանակարգը նախապատրաստող խումբը, որոշ վերապահումներով, կարող է կարևոր և շարունակական դերակատարություն ունենալ նաև հուշարձանը ցանկում ընդգրկվելուց հետո:

Համաշխարհային ժառանգության հուշարձանները երկարաժամկետ հեռանկարում հաջողության են հասնում, եթե իրականանում է դրանց արդյունավետ աջակցությունը և ինտեգրումն առավել լայն սոցիալական և պետական կառույցներում: Առաջադրման գործընթացն այն ժամանակահատվածն է, երբ հայտնաբերվում և իրականացվում են աջակցության այնպիսի մեխանիզմներ, եթե դրանք դեռևս գոյություն չունեն: Պաշտպանության, պահպանության և կառավարման նպատակով շարունակական թիմային մոտեցումը կարող է այդպիսի մեխանիզմներից մեկը լինել:

2.3 Տեղի բնակչության և այլ շահագրգիռ կողմերի մասնակցություն

Գործառնական ուղեցույցը մի շարք կետերում կարևորում է Համաշխարհային ժառանգության վերաբերյալ տեղի բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությունը խթանելու անհրաժեշտությունը, իսկ անվանակարգի նախապատրաստման հարցում այսպիսի մասնակցության վերաբերյալ կան հատուկ հղումներ: Այստեղ կարող են ներառվել հուշարձանի սեփականատերեր, հուշարձանի կառավարիչներ, տեղական և տարածաշրջանային կառավարություններ, տեղական համայնքներ, ՀԿ-ներ և այլ շահագրգիռ կողմեր:

Այսպիսի մոտեցման պատճառները շատ են, այդ թվում՝ առաջադրված հուշարձանի ընդհանուր ընկալումը և դրա հետագա պատասխանատվությունը կիսելու անհրաժեշտությունը: Հնարավոր չէ ապահովել հաջող համապարփակ կառավարում առանց շահագրգիռ կողմերի ներգրավման և մասնակցության:

Այդպիսի մասնակցությունը պետք է առաջնահերթ լինի գործընթացի հենց սկզբից և շարունակվի անվանակարգը նախապատրաստելու ամբողջ ընթացքում: Այս մասնակցությունը պետք է շարունակվի նաև առաջադրվելուց հետո՝ որպես հուշարձանի շարունակական կառավարման մաս:

2.4 Նախապատրաստման գործընթացի փուլային պլանավորում և առաջարկվող հիմնական փուլերը

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քննարկեք առաջադրման գործընթացը փուլերի բաժանելու հարցը:

Շատ հուշարձանների համար օգտակար կլինի առաջադրումը դիտարկել որպես առնվազն երկու փուլից բաղկացած գործընթաց, որը սկսվում է նախնական ցանկը պատրաստելուց որոշ ժամանակ անց: Առաջին փուլը հետևյալն է.

- հայտնաբերել հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը,
- ապահովել դրա հիմնավորումը համեմատական վերլուծության միջոցով,
- համոզվել, որ ապահովված է բավարար պաշտպանություն, պահպանություն և կառավարում:

Այս առաջին փուլում պետք է ձևավորվի անվանակարգը պատրաստող թիմ և պետք է իրականացվի սույն ձեռնարկի 3-րդ բաժնում ներկայացված ամբողջ աշխատանքը:

Այս փուլն ավարտելուց հետո, որպես երկրորդ էտապ, կարելի է արդեն սկսել անվանակարգային փաթեթի պատրաստումը: Երկրորդ էտապում իրականացվում են 4-րդ բաժնում նկարագրված աշխատանքները:

Նույնիսկ եթե աշախատանքը իրականացվում է որպես մեկ նախագիծ, հաճախ նախընտրելի է ուսումնասիրել այն երկու փուլով: Եթե փորձեք շարադրել անվանակարգը նախքան հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք հանդիսանալու մասին որոշում կայացնելը, ապա դա կարող է հանգեցնել նրան, որ ուշադրության մեծ մասը կկենտրոնանա նկարագրության ու պատմության մասի վրա և անբավար ուշադրության կարժանանա անվանակարգի հիմնական մասը, այսինքն, թե ինչու հուշարձանը հանդիսանում պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք և ինչպես պետք է այն պահպանվի:

Առաջադրման գործընթացի փուլային տարբերակը առավելություն կարող է ունենալ հնարավոր ֆինանսավորումը երկու փուլերի բաշխելու առումով:

3 Հուշարձանների առանձնահատկությունների սահմանումը և ընկալումը

Հուշարձանի համապարփակ ընկալումը հիմնարար նշանակություն ունի հաջող անվանակարգ մշակելու համար: Երրորդ բաժնում ներկայացված են հուշարձանի վերաբերյալ լավ ընկալում ձևավորելու համար խորհուրդներ, հատկապես այն հիմնական ասպեկտների վերաբերյալ, որոնք կարևոր են անվանակարգի համար:

3.1 Պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք, ատրիբուտները և սահմանները

Տեղեկություն հուշարձանի մասին

Ինչպես նշված է 2.1 բաժնում, որպես անվանակարգի մշակման նախնական գործընթաց օգտակար է համախմբել հուշարձանի վերաբերյալ առկա տեղեկատվությունն ու փաստաթղթավորումը և որոշել՝ արդյոք անհրաժեշտ է հետագա աշխատանք՝ կապված հետևյալի հետ.

- հետազոտություն. արդյոք անվանակարգի վերաբերյալ առկա հետազոտությունը համարժեք է, թե՞ անհրաժեշտ է լրացուցիչ հետազուտության:
- ցուցակներ. հուշարձանի վերաբերյալ ինչպիսի՞ տվյալների բազա գոյություն ունի և արդյոք դրանք լրացնելու կամ թարմացնելու անհրաժեշտություն կա:
- փաստաթղթավորում. անդրադառնալով անվանակարգի ձևաչափով պահանջվող տեղեկատվության բազմաթիվ կատեգորիաներին՝ ինչ տեղեկատվություն է արդեն իսկ առկա անվանակարգը ավարտին հասցնելու համար և ինչի՞ անհրաժեշտություն կարող է ծագել:
- շահագրգիռ կողմերի վերլուծություն. ովքե՞ր պետք է ներգրավվեն առաջադրման գործընթացում՝ ներառյալ նրանց, ովքեր ապրում են հուշարձանի տարածքում կամ ուղղակի կապ ունեն հուշարձանի հետ: Ինչպիսի՞ն է հուշարձանի սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավիճակը:

Պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի հայտնաբերում և սահմանում

Անվանակարգային փաթեթի հիմնական մասը ցույց է տալիս, թե ինչու հուշարձանը պետք է դիտարկվի որպես պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք: Հնարավոր լավագույն տարբերակն այն է, որ դա սահմանվում է, երբ հուշարձանը ներառվում է նախնական ցանկում (տես Գործառնական ուղեցույց, II.C) Այնուամենայնիվ, որպես անվանակարգի մշակման սկզբնական առաջադրանք, հաճախ ավելի մանրամասն աշխատանք է իրականացվում: Այս մանրամասն աշխատանքը կարող է ամփոփվել հետևյալ կերպ:



Համաշխարհային բացառիկ արժեքն այն հիմքն է, որով հուշարձանը համարվում է այնքան նշանակալից, որպեսզի հիմնավորվի դրա ընդգրկումը Համաշխարհային ժառանգության ցանկում: Համաշխարհային բացառիկ արժեքն ընկած է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի հիմքում:

Համաշխարհային բացառիկ արժեքը Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից համաձայնեցված որոշման հիման վրա ձևակերպված այն արժեքն է, որն արտացոլում է. թե ինչու է հուշարձանը դիտարկվում որպես միջազգային նշանակության օբյեկտ: Այստեղ խոսքը չի վերաբերվում ազգային կամ տեղական արժեք լինելուն:

Հուշարձանի և դրա վիճակի վերաբերյալ լավ գիտելիքն ու իմացությունը կարևոր են՝ որոշելու համար դրա պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը, ինչպես նաև այն ատրիբուտները, որոնք փոխանցում են այդ արժեքը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կարևոր է հստակ իմանալ հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը:

Փաստորեն, քանի դեռ չի սահմանվել և հիմնավորվել հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը, հնարավոր չէ պատրաստել անվանակարգի մյուս ասպեկտները, ինչպիսիք են՝
• սահմանների հստակեցում, որոնք պետք է ընդգրկեն այն ատրիբուտների շրջանակը, որոնք կարող են հաղորդել հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեք լինելու պոտենցիալ հնարավորությունը, և
• հստակ պատկերացում պաշտպանության, պահպանության, կառավարման և ներկայացման /խթանման այն ատրիբուտների մասին, որոնք փոխանցում են հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը:

Արժեքների բացահայտումն ու սահմանումը գիտելիքների և մեթոդաբանության խառնուրդ է: Սովորաբար օգտակար է այս գործընթացը կառուցել նախապես, որպեսզի հնարավորինս հայտնաբերել հուշարձանի բոլոր արժեքները՝ նպատակ ունենալով հաստատելու, թե դրանցից որոնք կարող են հիմք հանդիսանալ որպես Համաշխարհային ժառանգություն առաջադրելու համար:

Արժեքների այս սահմանումը, ի վերջո, պետք է ձևակերպվի համեմատաբար հակիրճ տեքստում, որը անվանակարգի համար Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության մաս կկազմի (հայտարարությունը առանձին քննարկվում է ստորև): Նման տեքստը պետք է կարճ ամփոփում լինի, և պարտադիր չէ, որ ներկայացված լինի առանձին բաժիններում: Այն պետք է սահմանի հետևյալը՝
• հուշարձանի ընդհանուր գաղափարը և թե ինչից է այն բաղկացած. նկարագրություն նրանց համար, ովքեր ծանոթ չեն դրան, դրա բնույթը, հատկապես մշակութային արժեքները, դրա նշանակությունը և դրա հետ կապված «պատմությունները»,
• ինչու՞ է հուշարձանը համարվում պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք,

• այն ատրիբուտների ամփոփագիրը, որոնք փոխանցում են հուշարձանի պոտենցիալ Համաշ–խարհային բացառիկ արժեքը:

Այսպիսով, այն ընդգրկում է անվանակարգի առաջադրման և գրանցման համար ամբողջ հիմնավորումը:

Անվանակարգի պատրաստման գործընթացի ավարտին այս կարճ հատվածը կարող է օգտագործվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից՝ որպես նկարագիր Համաշխարհային ժառանգության կենտրոնի կայքում տեղադրելու համար (եթե հուշարձանը գրանցված է), որը կայքի այցելուներին հնարավորություն կընձեռի իմանալու, թե ինչ է իրենից ներկայացնում հուշարձանը, ինչպես նաև, թե ինչու է այն նշանակալի:

Տարբեր հետազոտական շրջանակների կողմից մշակված արդյունքները կարող են օգնել հուշարձանի արժեքները հասկանալու համար: Մշակութային ժառանգության բնագավառում հնարավոր օգտակար հետազոտությունները ներառում են թեմատիկ, ժամանակագրական-տարածաշրջանային և տիպաբանական շրջանակներ, որոնց արդյունքները գտնվում են հետևյալ փաստաթղթում՝ Համաշխարհային ժառանգության ցանկ. լրացնելով բացթողումները՝ ապագայի համար գործողությունների ծրագիր (ԻԿՕՄՕՍ, 2005 a): Բնության հուշարձանների դեպքում, տես Համաշխարհային ժառանգության ցանկ. ուղեցույց և ապագա առաջնահերթություններ՝ պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք ներկայացնող բնության ժառանգությունը բացահայտելու համար (IUCN, 2006) փաստաթուղթը: Օրինակ, եթե կոնկրետ թեմայով հետազոտության արդյունքում որոշվել է, որ այն ունի համաշխարհային նշանակություն և հուշարձանն ուղղակիորեն կապված է տվյալ թեմայի հետ, ապա նման հետազոտությունը օգտակար կլինի հուշարձանի արժեքները բացահայտելու համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փաստերը չեն կարող փոխարինել լավ փաստարկներին

Մշակութային հուշարձանի նշանակության ու հարաբերական արժեքի սահմանումը պետք է սկսվի համապատասխան թեմաների բացահայտումով, ապա պետք է անցնել ժամանակագրական-տարածաշրջանային գնահատմանը և վերջում սահմանել առաջարկվելիք տիպաբանությունը՝ անկախ նրանից, թե ինչ է՝ հուշարձան, շինությունների խումբ կամ տեսարժան վայր:

Մշակութային արժեքների գնահատման հետ մեկտեղ Համաշխարհային բացառիկ արժեքը ներառում է նաև ամբողջականության և իսկության, պաշտպանության և կառավարման հետ կապված թեստեր: Այդ մյուս գործոնները առանձին քննարկվում են ստորև:
Համոզիչ կերպով Համաշխարհային բացառիկ արժեքի ներկայացման ձախողումը անվանակարգի հետագա ձախողման հիմնական պատճառներից մեկն է: Որոշ ընդհանուր խնդիրները ներառում են.
• նշանակության սահմանման մեջ խելամիտ հավասարակշռության բացակայությունը (կամ մշակութային հուշարձանների դեպքում դրա «պատմության» կամ «փաստերի շարադրման»), այսինքն

ոչ չափազանց ընդարձակ, որպեսզի կարողանան հստակորեն սահմանել (օր.՝ ազատության կամ հիշողության պատմությունը), ոչ էլ չափազանց սեղմ (օր.՝ հիվանդանոցի կամ ամրոցի կոնկրետ տեսակը, երկրաբանական երևույթի որոշակի տեսակ կամ տեսակներից կոնկրետ մեկի արժեք),

• Համաշխարհային բացառիկ արժեքը որպես որակների ցանկ ներկայացնելու միտումը, այսինքն՝ հուշարձանում հավաքված որակների ցանկ՝ առանց որևէ ընդհանուր նշանակություն ունեցող սահմանումի,

• Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի գրանցման հիմնավորում միայն ազգային կամ տարածաշրջանային հետաքրքրության առումով (օր.՝ դրա հետ կապված նշանակությունն ու սիմվոլիզմը),

• հուշարձանի աջակցության համար բերվող ընդհանուր պահանջներ, օր.՝ որպես «մշակութային խաչմերուկ», «եզակի հուշարձան», առանց մանրամասն հիմնավորում տրամադրելու այն մասին, թե ինչու է հուշարձանը համապատասխանում Համաշխարհային ժառանգության մեկ կամ ավելի չափորոշիչների: Եզակիությունը ինքնաբերաբար չի հավասարվում Համաշխարհային բացառիկ արժեքին,

• այն գաղափարը, որ ներկայացնում է բոլոր դարերի վկայությունը՝ քարե դարից մինչև մեր օրերը, անպայմանորեն ավելացնում է մշակութային ժառանգության հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի դրսևորումը,

• համապատասխան գլոբալ/գեոմշակութային շրջանակի հետ կապված համեմատական վերլուծության բացակայությունը:



Թեև անվանակարգը պետք է կենտրոնանա պոտենցյալ Համաշխարհային բացառիկ արժեքի վրա՝ հուշարձաններն ամեն դեպքում իրենցից ներկայացնում են նաև տեղական և ազգային արժեքներ: Արժեքի այս մյուս մակարդակները ևս պետք է հասկանալ: Այս մյուս արժեքները հուշարձանի բնական և մշակութային հարստության մաս են հանդիսանում և բոլոր արժեքների ներդաշնակ պաշտպանությունը, պահպանությունն ու կառավարումը պահպանության լավ պրակտիկայի նպատակն է: Տեղական արժեքները հասկանալը նշանակում է խորհրդակցել տեղացիների հետ, հատկապես բնիկների, եթե այդպիսիք կան: Տեղի բնակչությունը տեղական արժեքների մասին ինֆորմացիայի հիմնական աղբյուրն է հանդիսանում: Օգտակար հղում՝ Համաշխարհային և տեղական արժեքների համակցում. Համաշխարհային ժառանգության կայուն զարգացման կառավարում ապագայում (դե Մերոդ և այլք, 2004 թ.):

Նախադեպ

Մշակութային արժեքների շերտերը

Ռոբեն կղզի *(Հարավային Աֆրիկա)*

Ռոբեն կղզին ներառվել է Համաշխարհային ժառանգության ցանկում հետևյալ պատճառներով:

Չափորոշիչ (iii): Ռոբեն կղզու շինությունները կրում են իր մռայլ պատմության վառ ապացույցը:

Չափորոշիչ (vi): Ռոբեն կղզին և իր բանտային կառույցները խորհրդանշում են մարդկային ոգու, ազատության և ժողովրդավարության հաղթանակն ընդդեմ ճնշման:

© ՅՈՒՆԵՍԿՕ

Կղզու կառավարումը մարտահրավեր է նետում ժամանակի ընթացքում դրա օգտագործման փոփոխությունից բխող արժեքների համալիր շերտավորմանը: Հուշարձանը ծառայել է որպես.
- *հանգստի վայր հոլանդացի նավաստիների համար,*
- *առողջարան /մեկուսացված հիվանդանոց բորոտների և խրոնիկ հիվանդների համար 19-րդ դարում ,*
- *բանտ սահմանամերձ պատերազմների ընթացքում նախագաղութատիրական շրջանի որոշ առաջնորդների համար /նվաճողական պատերազմներ,*
- *ռազմական բազա Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, և*
- *ապարտեիդի բանտ 1960-ական թվականներից:*

Ատրիբուտների և առանձնահատկությունների բացահայտում

Համաշխարհային ժառանգության հուշարձանները վայրեր են, որոնք փոխանցում են իրենց Համաշխարհային բացառիկ արժեքը:

Մշակութային արժեքը կարող է վերաբերել ոչ նյութական հատկանիշներին, ինչպիսիք են սոցիալական կառուցվածքը, տնտեսական կարիքները և քաղաքական համատեքստը ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ: Այն կարող է կապված լինել հայտնի միջոցառումների, մարդկանց կամ արվեստի գործերի, գրականության, գիտության կամ երաժշտության հետ: Այնուամենայնիվ, Համաշխարհային ժառանգության կոնվենցիան հիմնված է հուշարձանների վրա, հենց հուշարձաններն են գրանցվում ցանկում, այլ ոչ թե գաղափարները կամ մարդիկ որպես այդպիսին՝ անկախ նրանց ունեցած գլոբալ ազդեցությունից (որքան էլ որ մեծ լինի նրանց ազդեցությունը): Ցանկում ընդգրկված հուշարձանները պետք է Համաշխարհային բացառիկ արժեքը ներկայացնեն իրենց ատրիբուտներով:

Պատկերացնելով, թե ինչը կարող է արտահայտել բնության և մշակութային հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը՝ կարևոր է հաշվի առնել դրա ատրիբուտները (հաճախ կոչվում են առանձնահատկություններ բնության հուշարձանների մասով), որոնք փոխանցում են դրա Համաշխարհային բացառիկ արժեքը և թույլ են տալիս ընկալել այդ արժեքը:

Այս ատրիբուտները պետք է լինեն պաշտպանության և կառավարման գործողությունների կենտրոնում, իսկ ինստիտուցիոնալ միջացառումներն ու տեղակայման վայրը կտեղեկացնեն հուշարձանի սահմանների մասին:

Ատրիբուտները կարող են լինել ֆիզիկական կամ նյութական, բայց կարող են նաև լինել հուշարձանի հետ առնչվող գործընթացներ, որոնք ազդում են ֆիզիկական որակի վրա, ինչպիսիք են՝ բնական և գյուղատնտեսական գործընթացները, սոցիալական նախաձեռնությունները կամ մշակութային պրակտիկան, որոնք ձևավորել են տարբեր լանդշաֆտներ: Բնության հուշարձանների պարագայում կարող են լինել սպեցիֆիկ լանդշաֆտային հատկանիշներ, բնակավայրեր, ասպեկտներ՝ կապված շրջակա միջավայրի որակի հետ (ինչպես օր.՝ անձեռնմխելիությունը, շրջակա միջավայրի բարձր / սկզբնական որակները), բնակավայրերի մասշտաբն ու բնության որակը, ինչպես նաև վայրի կենդանական աշխարհի չափերն ու կենսունակությունը:

Հուշարձանախմբերի կամ հուշարձանների՝ մասնավորապես բարդ բազմաշերտ կառուցվածք ունեցող մշակութային հուշարձանների համար օգտակար մեթոդ է հանդիսանում դրանց կարևոր ատրիբուտների և արժեքների քարտեզագրումը: Նման քարտեզագրումը կարող է օգնել հասկանալ ատրիբուտների միջև փոխհարաբերությունը, սակայն կարող է նաև մատնանշել հակամարտություններ կամ կառավարման խնդիրներ, այն կարևոր է սահմանների ուրվագծման համար:

Հուշարձանների սահմանների ընդլայնման դեպքում ստուգվում են բնօրինակ անվանակարգի մեջ նշված ատրիբուտները և քննարկվում հնարավորությունները, թե ինչպես կարելի է դրանք ներկայացնել, ընդլայնել, լրացնել կամ ուժեղացել առաջարկվող ընդլայնման ատրիբուտների միջոցով՝ պահպանելով նույն Համաշխարհային բացառիկ արժեքը:

Համաշխարհային ժառանգության չափորոշիչներից ելնելով՝ ստուգել հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը և որոշել համապատասխան չափորոշիչները:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օգտագործե՛ք միայն այն չափորոշիչները, որոնք ունեն լավ հիմնավորում:

Հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը ներկայացնող գործընթացի անքակտելի մաս է հանդիսանում Համաշխարհային ժառանգության մեկ կամ ավելի չափորոշիչների համապատասխանության հիմնավորումը (նշված է սույն ձեռնարկի 1.3 բաժնում):

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության և չափորոշիչների ընտրության միջև պետք է լինի հստակ և տրամաբանական կապ: Եթե այդ կապը հստակ չէ, ապա դա կարող է ցույց տալ, որ չափորոշիչների ընտրությունը չի համապատասխանում հուշարձանին և վերանայման անհրաժեշտություն կա: Չափորոշիչների ոչ պատշաճ կիրառումը կարող է խոչընդոտ հանդիսանալ հուշարձանի գնահատման և հաջող գրանցման համար:

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար անհրաժեշտ է բավարարել միայն մեկ չափորոշիչ (չնայած չափորոշիչ vi-ի պարագայում Կոմիտեն նախընտրելի է համարում այն կիրառել այլ չափորոշիչների հետ միասին): Անհրաժեշտություն կամ որոշակի օգուտ չկա փորձել հուշարձանն առաջադրել հնարավորինս շատ չափորոշիչներով, եթե դրանցում բացակայում է հետազոտությունների կամ փաստաթղթավորման հիման վրա արված հատուկ արժեքի և ատրիբուտների լավ հիմնավորվորումը: Թույլ հիմնավորված չափորոշիչներ ներառելը չի օգնում անվանակարգմանը: Բացի այդ, շատ չափորոշիչների օգտագործումը հուշարձանի առաջադրման նպատակով համեմատական վերլուծության, սահմանների և անվանակարգի այլ ասպեկտների համար կատարվող հետազոտությունների ծավալի համար կարող է դժվարություններ առաջացնել:

Տեքստը պետք է լինի ավելին, քան ուղղակի ընտրված չափորոշիչներին բավարարելու փաստը հաստատելը: Այստեղ պետք է բացատրվի յուրաքանչյուր չափորոշիչով հուշարձանի հիմնավորումը: Այն պետք է նաև բացահայտի այն ատրիբուտներն ու հատկանիշները, որոնք փոխանցում են պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը:

Օրինակ՝ չափորոշիչ (ii)-ի դեպքում խուսափեք նշել, որ հուշարձանը արտահայտում է մարդկային արժեքների կարևոր փոխանակում, առանց բացատրելու թե ինչ փոխանակում է և ինչպես կարելի է դա ընկալել ատրիբուտների միջոցով:

Նույնը վերաբերում է չափորոշիչ (iii)-ին. պետք է նշվեն պատճառները, թե ինչու է հուշարձանը եզակի կամ բացառիկ վկայություն, ինչպես նաև ներկայացնել այն ատրիբուտները, որոնք արտահայտում են այդ վկայությունը:

Այս չափորոշիչների ցանկացած հիմնավորման համար անհրաժեշտ է պարզաբանել ոչ միայն այդ գաղափարների կարևորությունը (ինչպիսիք են արժեքների փոխանակումը կամ բացառիկ վկայությունը), այլև այն փաստը, թե արդյո՞ք հուշարձանն ունի նման գաղափարներ արտացոլող ատրիբուտներ, ինչպես կարող են այդ գաղափարները որևէ կերպ գնահատվել և փորձարկվել:

Չափորոշիչ (vii)-ի դեպքում բնական բացառիկ գեղեցկությունը և գեղագիտական նշանակությունը կարող են հիմնավորվել հստակ ապացույցով և խստապահանջ մտավոր վերլուծությամբ: Պարզապես պնդելը, որ հուշարձանն ունի բնական եզակի գեղեցկություն՝ տրամադրելով գրավիչ լուսանկարներ, անբավարար է:

Չափորոշիչ (ix)-ը ենթադրում է «բնապահպանական և կենսաբանական կարևոր և ընթացիկ պրոցեսների բացառիկ նմուշներ...» և դա պետք է ներկայացվի գլոբալ գիտական /թեմատիկ համատեքստում: Համատեքստը պետք է լինի հստակ և դրանում մանրամասն պատճառաբանվի, թե ինչու է հուշարձանը բացառիկ օրինակ:

Սահմանների ընդլայնման դեպքում չափորոշիչների գնահատումը իրականացվում է հուշարձանի՝ սկզբնական անվանակարգում գրանցված չափորոշիչների համաձայն և ելնելով այն հանգամանքից, թե ինչպես կարող են դրանք օգտագործվել առաջարկվող ընդլայնման համար: Նույն չափորոշիչները պետք է հիմնավորվեն սկզբնական անվանակարգի և առաջարկվող ընդլայնման համար: Սահմանների քիչ ընդլայնման դեպքում առաջարկվող տարածքը կարող է ուժեղացնել սկզբնական անվանակարգի որոշ, բայց ոչ բոլոր ատրիբուտները, չնայած կարելի է եզրակացնել, որ սկզբնական չափորոշիչները դեռևս վավեր են, քանի որ ատրիբուտների ընդհանուր տարածումը դեռևս բավարար է հիմնավորելու համար: Ընդլայնման համար առաջարկվող տարածքում կարող են տարբեր կամ նոր ատրիբուտներ հայտնվել, սակայն դրանք պետք է կրեն նույն արժեքները, որոնք արդեն ճանաչված են որպես բացառիկ: Ընդլայնումը որպես կանոն սկզբնական անվանակարգում չպետք է ավելացնի նոր արժեքներ: Այնուամենայնիվ, անդամ պետությունը կարող է օգտվել հնարավորությունից և առաջադրել նոր սահմաններ՝ առաջ քաշելով նոր գնահատման չափորոշիչ սկզբնական հուշարձանի և դրա ընդլայնման համար: Այս դեպքում անվանակարգային փաթեթը պետք է ներառի ամբողջ հուշարձանը և հիմնավորում տրամադրի որևէ նոր չափորոշչի համար:

Իսկության գնահատում

Գործառնական ուղեցույցում նշված երկու այլ պահանջները վերաբերում են առաջադրված հուշարձանի իսկությանը և ամբողջականությանը: Իսկությունը վերաբերում է միայն մշակութային հուշարձաններին, ինչպես նաև խառը հուշարձանների մշակութային ասպեկտներին:

Իսկությունը ենթադրում է ատրիբուտների և պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի միջև եղած կապը: Այդ կապը պետք է արտացոլվի արժանահավատորեն, այնպես, որ ատրիբուտները լիովին արտահայտեն հուշարձանի արժեքը:

1994 թ. Նարա քաղաքում կայացած հանդիպումը հստակորեն սահմանեց ճանապարհը՝ «Այս արժեքները հասկանալու ունակությունը որոշակիորեն կախված է այն բանից, թե որքանով են այդ արժեքների վերաբերյալ տեղեկատվական աղբյուրներն ընկալվում որպես վստահելի կամ արժանահավատ»: (UNESCO ՅԻՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն, 1994, էջ. 94).

Գործառնական ուղեցույցը նշում է, որ «Հուշարձանները կարող են համարվել իսկության պայմաններին բավարարող, եթե դրանց մշակութային արժեքները (ինչպես ներկայացված է անվանակարգային չափորոշիչներում) վստահաբար և արժանահավատորեն արտահայտված են տարբեր չափորոշիչներով» (պարագրաֆ 82)

Գործառնական ուղեցույցը ենթադրում է, որ ատրիբուտի հետևյալ տեսակները կարող են համարվել որպես Համաշխարհային բացառիկ արժեքի փոխանցում կամ արտացոլում:

- ձևը և դիզայնը,
- նյութերն ու նյութակազմը,
- կիրառումն ու ֆունկցիան,
- ավանդույթները, մեթոդներն ու կառավարման համակարգը,
- գտնվելու վայրը և միջավայրը,
- լեզուն և ոչ նյութական ժառանգության այլ ձևերը,
- ոգին, հոգևոր և ֆիզիկական ընկալումը:

Լրացուցիչ

Կասուբիում** (Ուգանդա) **Բուգանդայի արքաների դամբարանի վերաբերյալ այս ատրիբուտների կիրառման օրինակը հետևյալն է՝ Ռոբեն կղզի

Ձևը և դիզայնը

Կասուբի դամբարան հուշարձանի տարածական կազմակերպումն իրենից ներկայացնում է Բուգանդա պալատի լավագույնս պահպանված օրինակը՝ Բուգանդայի ճարտարապետական համալիրը:

• • •

© ՅՈՒՆԵՍԿՕ / Լաուրեն Էլիոտ

Նախադեպ

Նյութերն ու նյութակազմը

Մուզիբու Ազաալա Մպանգայում գտնվող չորս արքայական գերեզմանները, հիմնական կառույցը և օգտագործված նյութերը՝ փայտ, ծղոտ, եղեգ, փայտածողեր (ճյուղ), ծեփանյութ:

Կիրառումն ու ֆունկցիան

Կրոնական կիրառությունը. հանդիսանում է Բուգանդայի խոշոր հոգևոր կենտրոն ը և թագավորության ամենաակտիվ կրոնական հուշարձանը՝ ներառյալ մշակութային /կրոնական/ արարողություններն ու ծեսերը:

Ավանդույթները, մեթոդներն ու կառավարման համակարգը

Ավանդական կառավարումը. հուշարձանի կառավարումը շարունակվում է ավանդական ձևով՝ պարտավորությունների բարդ համակարգի միջոցով: Ավանդույթներ, մշակութային /կրոնական արարողություններ ու ծեսեր:

Գտնվելու վայրը և միջավայրը

Սկզբնական տեղակայումը և պահպանված գյուղական միջավայրը. ներառյալ հուշարձանի գյուղատնտեսական մասը, որը շարունակվում է մշակվել ավանդական ձևով:

Լեզուն և ոչ նյութական ժառանգության այլ ձևերը

Կրոնական կիրառությունը. հանդիսանում է Բուգանդայի խոշոր հոգևոր կենտրոնը և թագավորության ամենաակտիվ կրոնական հուշարձանը՝ ներառյալ պալատը, որտեղ Կաբական (թագավորի տիտղոս) և նրա ներկայացուցիչները իրականացնում էին Բուգանդայի մշակույթին առնչվող կարևոր ծեսեր: Այդպիսի կիրառությունը ներառում է մշակութային /կրոնական արարողություններն ու ծեսերը:

Ոգին, հոգևոր և ֆիզիկական ընկալումը

Կասուբի դամբարաններ հուշարձանի կառուցվածքն ու բնական տարրերը կրում են պատմական, ավանդական և հոգևոր արժեքներ:

Սրանք ֆիզիկական ատրիբուտների համակցություն են, ինչպիսիք են կառուցվածքն ու պլանը, ինչպես նաև ոչ նյութական ատրիբուտների, ինչպիսիք են մշակութային գործընթացները: 2010 թ. հրդեհի հետևանքով վնասվել է 26 հա տարածքով Կասուբի դամբարաններ հուշարձանի ամենակարևոր ճարտարապետական կառույցը: Վնասված շենքը վերականգնելու պարտավորություններ են ստանձնվել:

Յուրաքանչյուր հուշարձանի համար որպես պոտենցյալ Համաշխարհային բացառիկ արժեք սահմանված ատրիբուտները պետք է դիտարկվեն այն տեսանկյունից, որ դրանք «արժանահավատորեն» փոխանցում կամ արտահայտում են այդ արժեքը: Օրինակ՝ որևէ քաղաքային տարածքի համար ճիշտ կլինի դիտարկել կառույցները, տարածական պլանավորումը, ինչպես նաև այն համայնքների ավանդույթներն ու սոցիալ-տնտեսական, բնապահպանական կառուցվածքները, որոնք ապրում են հուշարձանի տարածքում և թույլ են տալիս արտահայտելու դրա արժեքը:

Ոստի իսկությունն այն չափանիշն է, թե որքան լավ են ատրիբուտները փոխանցում հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը: Իսկությունը կարող է վտանգվել, եթե ատրիբուտները թույլ են, անարտահայտիչ՝ համայնքները դադարում են զարգանալ, շենքերը փլուզվում են, ավանդույթները անհետանում և այլն:

Հնագիտական հուշարձանների դեպքում իսկությունը գնահատվում է հնագիտական մնացորդների՝ իրենց նշանակությունն արժանահավատորեն փոխանցելու հիման վրա: Շատ դեպքերում առաջարկվող վերակառուցումը կարող է խանգարել այս գործընթացը և վտանգել իսկությունը: Նույն կերպ, չնայած որոշ հանգամանքներում կիսակառույց շենքերի և շինությունների վերակառուցումը կարող է հիմնավորված լինել, այն նույնպես կարող է ազդել դրանց իմաստը փոխանցելու իրենց կարողության վրա:

Իսկության մասին հայտարարությունը պետք է սահմանի հուշարձանի ունակությունը՝ փոխանցելու դրա պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքն այնպես, ինչպես դրա ատրիբուտները փոխանցում են իրենց արժեքները արժանահավատորեն (Գործառնական ուղեցույց, պարագրաֆ 79-86):

Գնահատման համար օգտագործվող որոշ հարցերի օրինակներ ներկայացված են հետևյալ աղյուսակում: Այս ատրիբուտները և հարցերը չպետք է օգտագործվեն առանց առաջադրվող հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի և ատրիբուտների քննադատական վերլուծության, և այդ գնահատականը պետք է կազմված լինի վերջինիս հիման վրա: Ստորև բերված աղյուսակը ոչ քննադատաբար և որպես ստանդարտ բաղադրատոմս ընդունելը կարող է խնդիրներ առաջացնել անվանակարգի համար:

Ատրիբուտներ	*Գնահատման հարցերի օրինակներ*
Բոլոր ատրիբուտների համար	• Հաշվի առնելով, որ իսկությունը պետք է հիմնավորվի այն մշակութային համա–տեքստում, որին հուշարձանը պատկանում է, ապա ո՞րն է այդ մշակութային համատեքստը: • Արդյո՞ք ատրիբուտը վստահաբար և ածանահավատորեն արտահայտում է հուշար–ձանի պոտենցյալ Համաշխարհային բացառիկ արժեքը: • Հնարավո՞ր է հասկանալ հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը՝ հիմնված այն բանի վրա, որ ատրիբուտները հավաստիորեն և օբյեկտիվորեն արտացոլում են այդ արժեքը: • Որքանո՞վ է արժեքը ներկայացված կամ արտահայտված ատրիբուտների միջոցով: • Որո՞նք էին հուշարձանի մշակութային ժառանգության սկզբնական առանձնահատ–կությունները և ինչպե՞ս են դրանք փոփոխվել ժամանակի ընթացքում: • Ատրիբուտների փոփոխությունը նվազեցրե՞լ է հուշարձանի արժեքը հասկանալու ընկալումը: • Արդյո՞ք հուշարձանը որևէ կերպ վերակառուցվել է: Եթե՝ այո, ապա դա ամբողջական և մանրամասն փաստաթղթավորմամբ հիմնավորվե՞լ է: Վերականգնման ընթացքում օգտագործվե՞լ է որևէ կարծիք կամ հիմնավորում: Կարևոր է նշել, որ վերակառուցումը երբեմն կարող է արժեքի մաս լինել:
Ձևը և դիզայնը	• Արդյո՞ք փոխվել է ձևը և դիզայնը, և եթե՝ այո, ապա՝ որքանով: Կարևոր է նշել, որ երբեմն փոփոխությունն արժեքի մի մասն է: • Արդյո՞ք ձևը և դիզայնը ճշգրիտ են բոլոր առումներով:
Նյութերն ու նյութակազմը	• Արդյո՞ք նյութերը, գործվածքները կամ նյութակազմը փոխվել կամ փոխարինվել են: Եթե՝ այո, ապա՝ որքանով: • Արդյո՞ք կատարվել են վերանորոգումներ՝ օգտագործելով տվյալ մշակույթի ավանդական նյութերը:
Կիրառումն ու գործառույթը	• Ո՞վ է պատասխանատու հուշարձանի օգտագործման ու գործառույթի համար: • Շարունակվու՞մ է արդյոք նման օգտագործումն ու գործառույթը կամ դրանք փոխվե՞լ են և ինչու: • Փոխվե՞լ է արդյոք օգտագործման ու գործառույթի ինտենսիվությունը: • Որքանո՞վ են վստահելի հասարակական մեխանիզմները, որոնք նպաստում են օգտագործմանը կամ գործառույթին:
Ավանդույթները, մեթոդներն ու կառավարման համակարգը	• Ո՞վ է պատասխանատու ավանդույթների, մեթոդների կամ կառավարման համակարգերի համար: • Որքանո՞վ են վստահելի հասարակական մեխանիզմները, որոնք նպաստում են ավանդույթներին, մեթոդներին կամ կառավարման համակարգերին: • Փոխվե՞լ են կամ փոխվու՞մ են ավանդույթները, մեթոդները կամ կառավարման համակարգերը և ինչու: • Փոխվե՞լ է արդյոք ավանդույթների, տեխնիկայի կամ կառավարման համակարգերի ուժը և ինչու: • Արդյո՞ք կատարվել են վերանորոգումներ՝ օգտագործելով տվյալ մշակույթի ավանդական նյութերը:

Ատրիբուտներ	Գնահատման հարցերի օրինակներ
Գտնվելու վայրը և միջավայրը	• Փոխվել են արդյոք գտնվելու վայրը և միջավայրը և եթե՝ այո, ապա՝ ինչու և որքանով: Նշում. այս ատրիբուտների գնահատումը պահանջում է հուշարձանի սահմանների և դրա համապատասխան միջավայրի վերաբերյալ հստակ պատկերացում կամ ուղղակի ազդեցություն կունենա սահմանների որոշման համար:
Լեզուն և ոչ նյութական ժառանգության այլ ձևերը	• Ովքեր են այն մարդիկ, ովքեր գործածում են տվյալ լեզուն կամ համարվում ոչ նյութական ժառանգության կրողները: • Արդյոք շարունակվում են կամ փոխվել են լեզուն կամ ոչ նյութական ժառանգության այլ ձևերը և ինչու: • Արդյոք նվազել է լեզվի կամ ոչ նյութական ժառանգության այլ ձևերի օգտագործման աստիճանը և ինչու: • Որքանով են վստահելի հասարակական մեխանիզմները, որոնք նպաստում են լեզվին կամ ոչ նյութական ժառանգության այլ ձևերին: • Որքան կենսունակ է բնակչությունը, որն օգտագործում է տվյալ լեզուն կամ ոչ նյութական ժառանգության այլ ձևերը: Ո՞ր գործոններն են սպառնում իրենց կենսունակությանը:
Հոգևոր և ֆիզիկական ընկալումը	• Ու՞մ է այդ հոգևոր կամ ֆիզիկական ընկալումը բնորոշ: • Արդյոք շարունակվում կամ փոխվել է հոգևոր և ֆիզիկական ընկալումը և ինչու: • Արդյոք նվազել է հոգևոր և ֆիզիկական ընկալման արժևորման աստիճանը: • Որքանով են վստահելի հասարակական մեխանիզմները, որոնք նպաստում են հոգևոր և ֆիզիկական ընկալման արժևորմանը: • Որքան կենսունակ է բնակչությունը, որն արժևորում է հոգևոր և ֆիզիկական ընկալումը:

Առաջադրման ընթացքում անհրաժեշտություն չկա դիտարկել հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքին չհամապատասխանող ատրիբուտները:

Նախադեպ

Օմանի Աֆլաջ ոռոգման համակարգերը *(Օման)*

Աֆլաջ ոռոգման համակարգերի հավաքածուն ներկայացնում է Օմանում դեռևս գործող 3,000 համակարգեր: Հնագույն ինժեներական տեխնոլոգիաները ցույց են տալիս ջրային ռեսուրսների երկարատև, կայուն օգտագործումը՝ ամայի անապատի ծայրահեղ պայմաններում արմավենիների և այլ բուսական կուլտուրաների մշակման համար: Նման համակարգերը արտացոլում են համայնքների պատմական կախվածությունը տվյալ ոռոգումից, ինչպես նաև վկայում են ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու արդար բաշխման մասին, որի հիմքում ընկած են փոխկախվածությունն ու ընդհանուր արժեքները:

Սկզբում առաջադրվել է յուրաքանչյուր աֆլաջ համակարգից միայն մեկ հատված՝ գլխավոր ջրամբարից մինչև այսպես կոչված Շարիա: Այնուհետև անվանակարգին ավելացվեցին բնակավայրերում գտնվող համակարգի այդ հատվածները, որոնք ծառայում էին համայնքի կարիքներին՝ տրամադրելով եփելու, լվանալու և գյուղատնտեսության համար անհրաժեշտ ջուրը, և հուշարձանն այժմ արտահայտում է ողջ աֆլաջ համակարգի ամբողջականությունը:

© ՅՈՒՆԵՍԿՕ/Հերմիկի Դոգի

Նախադեպ

Նարա քաղաքի հին պատմական հուշարձանը
(Ճապոնիա)

Հուշարձանում ներառված տարբեր հուշարձանների իսկության մակարդակը բարձր է: Ճապոնական պահպանման սկզբունքների կիրառումը ապահովել է, որպեսզի վնասված կամ քայքայված ճարտարապետական տարրերի փոխարինման ժամանակ հաշվի առնվեն բնօրինակը կերտող շինարարների կողմից օգտագործված նյութերն ու մեթոդները:

Նարայի պալատ հուշարձանում կատարվել են որոշ փոփոխություններ: Ճապոնիայում ավանդական ճարտարապետության շարունակականությունը և հնագիտական պեղումների արդյունքում ստացված զգալի քանակի տվյալները թույլ են տվել պահպանել վերակառուցված շինությունների իսկության բարձր մակարդակը դիզայնի և նյութերի առումով:

Նույն գնահատականը վերաբերում է այգու վերակառուցմանը: Միակ վերակառուցումը, որը կարելի է ասել, ներառում է վարկածների նշանակալի տարր՝ Սուզակուն է (հարավային դարպաս): Կառուցվածքային և դեկորատիվ մանրամասներից շատերը կախված են հնագիտական ապացույցների և նույն ժամանակաշրջանի կառույցների առկայությունից, որոնք պահպանված են այլ վայրերում:

© ՅՈՒՆԵՍԿՕ /Ջ. Բոկկարդի

Ամբողջականության գնահատում

Ամբողջականությունը վերաբերում է երկուստեք բնության և մշակութային հուշարձաններին:

Ամբողջականությունը Համաշխարհային բացառիկ արժեքը արտահայտող ատրիբուտների ամբողջականության կամ անձեռնմխելիության չափանիշն է: Հետևաբար, մինչև հուշարձանի ամբողջականության ուսումնասիրությունը, պահանջվում է հստակ պատկերացում պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին:
Գործառնական ուղեցույցի պարագրաֆ 88-ը վերաբերում է գնահատման անհրաժեշտությանը, որտեղ նշվում է, թե որքանով է հուշարձանը.

- ներառում բոլոր այն տարրերը [բաղադրիչները], որոնք անհրաժեշտ են դրա Համաշխարհային բացառիկ արժեքը արտահայտելու համար,
- ունի բավարար չափ՝ հուշարձանի կարևորությունը հաղորդող առանձնահատկությունների և գործընթացների մասին ամբողջական պատկերացում ապահովելու համար,
- տուժում է զարգացման բացասական և /կամ անտեսման հետևանքներից:

Հիմնական բառերն են՝ «ամբողջություն», «անձեռնմխելիություն» և «սպառնալիքների բացակայություն»: Դրանք կարելի է հասկանալ հետևյալ կերպ.
• Ամբողջություն. հուշարձանը ներառում է բոլոր անհրաժեշտ ատրիբուտները:
• Անձեռնմխելիություն. բոլոր անհրաժեշտ ատրիբուտները դեռևս առկա են՝ նրանցից ոչ մեկը չի անհետացել, զգալիորեն վնասվել կամ քայքայվել,
• Սպառնալիքների բացակայություն. զարգացման, վատթարացման կամ անտեսման հետևանքով ատրիբուտներից որևէ մեկը վտանգված չէ:

Գործառնական ուղեցույցում Համաշխարհային ժառանգության տարբեր չափորոշիչների վերաբերյալ ներկայացված են հստակ ուղղորդումներ, որոնք կարևոր է հասկանալ (պարագրաֆ 89-95):

3 Հուշարձանների առանձնահատկությունների սահմանումը և ընկալումը

Ամբողջականության հայտարարության մեջ անհրաժեշտ է նկարագրել, թե պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը փոխանցող առանձնահատկությունների, գործընթացների և/կամ ատրիբուտների համադրությունը ինչպես է ներառված հուշարձանի սահմաններում, նշել, թե որ հուշարձանը չունի էական մասեր, որոնք կորցրել են իրենց արժեքները կամ թե որտեղ առկա չեն համապատասխան առանձնահատկություններից կամ ատրիբուտներից և ոչ մեկը, ինչպես նաև նշել, որ հուշարձանն ունի պահպանվածության բավարար մակարդակ և դրա արժեքները վտանգված չեն: Անվանակարգի վայրն ընտրելիս միշտ անհրաժեշտ է ունենալ տրամաբանական կամ գիտական հիմնավորում:

Համաշխարհային ժառանգության անվանակարգում հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի հետ կապ չունեցող տարրերի պահպանվածության վիճակի գնահատումը պարտադիր պայման չէ: Նմանապես, պետք է խուսափել ամբողջականությանը վերաբերող այլ հասկացությունների նկարագրությունից, որոնք չեն վերաբերվում Համաշխարհային ժառանգությանը կամ քննարկման ենթակա արժեքներին:

Ամբողջականության գնահատման համար օգտակար հարցերի օրինակներն են.

• Արդյո՞ք հուշարձանի հիմնական առանձնահատկություններն ու ատրիբուտները, որոնք փոխանցում են դրա պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը, միասնական կամ անփոփոխ են:

• Արդյո՞ք հուշարձանը ներառում է բոլոր տարրերը, որոնք անհրաժեշտ են դրա պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքն արտահայտելու համար:

• Հուշարձանն ունի՞ բավարար չափեր՝ հուշարձանի կարևորությունը հաղորդող առանձնահատ–կությունների և գործընթացների մասին ամբողջական պատկերացացում ապահովելու համար:

• Ինչպիսի՞ն է հուշարձանի հիմնական առանձնահատկությունների և ատրիբուտների վիճակը, արդյո՞ք դրանք լավ պահպանված են:

• Մշակութային լանդշաֆտների, պատմական քաղաքների կամ այլ բնակեցված վայրերի դեպքում արդյո՞ք գործընթացները, փոխհարաբերությունները և դինամիկ գործառույթները, որոնք կարևոր են իրենց առանձնահատուկ բնույթով, պահպանված և կայուն վիճակում են:

• Բնության հուշարձանների դեպքում արդյո՞ք գործընթացները, փոխհարաբերությունները և դինամիկ գործառույթները, որոնք կարևոր են հուշարձանի ֆիզիկական առանձնահատկությունների համար (օր.՝ ռելիեֆը, բնակատեղին), պահպանված են, կայուն վիճակում են և ճանաչվել են այն մասշտաբով, որը համապատասխանում է դրանց գործունեությանը:

• Արդյո՞ք հուշարձանը տուժում է զարգացման, անտեսման կամ որևէ այլ քայքայման պրոցեսների բացասական հետևանքներից:

• Արդյո՞ք կան վատթարացման որևէ գործընթացներ, որոնք վերահսկվում են:

Այս հարցերից ոմանք վերաբերվում են հուշարձանի սահմաններին: Եթե անհրաժեշտ տարրերը ներառված չեն հուշարձանի տարածքում կամ հուշարձանը համապատասխան չափեր չունի, ապա սահմանները պետք է վերանայվեն այս հարցերը լուծելու համար: Թեև կարող է հարմար լինել սահմանները որոշել վարչական գործընթացների կամ սեփականության իրավունքի հիման վրա, ապա միշտ չէ, որ դա համապատասխան կլինի հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքին: Վարչական հարմարավետությունը չպետք է դառնա առաջնային քննարկում հուշարձանի սահմանները հաստատելիս:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամբողջականությունն ու իսկությունը հանդիսանում են Հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի տարբեր ասպեկտները:

Կարելի է վիճել, որ հուշարձանի ամբողջականության պայմանը բավարարվում է այնպիսի հուշարձանի կողմից, որը ներկայացնում է ավելի ընդարձակ լանդշաֆտ, բնակավայր, երկրաբանական համակարգ կամ մշակութային համակարգ: Այնուամենայնիվ, կարևոր կլինի ցույց տալ, որ սահմանները տրամաբանական հիմքեր ունեն առաջադրվող հուշարձանն ավելի լայն տարածքով բնորոշելու համար, և որ հուշարձանն ակնհայտորեն ունի Համաշխարհային բացառիկ արժեք, երբ այն դիտարկվում է ավելի ընդարձակ տարածքի համատեքստում:

Բարդ լանշաֆտ, արժեքներ կամ գործընթացներ ունեցող որոշ հուշարձանների դեպքում կարելի է քարտեզագրել պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք արտահայտող ատրիբուտները՝ ցույց տալու համար, թե որտեղ կարող է լինել տրամաբանական սահմանը: Սա ամբողջականությունը ներկայացնելու իմաստալից ձև է՝ ցուցադրելու, որ հուշարձանի սահմանները պատշաճ կերպով ներառում են դրա բոլոր արժեքները:

Բնության և մշակութային հուշարձանների դեպքում մարդու գործունեությունը թույլատրելի է և համահունչ Համաշխարհային ժառանգության ցանկում ցուցակագրելու համար, եթե այն կայուն և համատեղելի է հուշարձանի արժեքների հետ: Կարևոր է քննադատաբար գնահատել հուշարձանի

վիճակը անվանակարգային փաստաթղթում և անաչառորեն, բաց ու անկեղծորեն նշել այն տարածքները, որտեղ կան մարդկային կամ այլ ազդեցություններ հուշարձանի վիճակի վրա:

Որոշ դեպքերում տարրերը կարող են աշխարհագրականորեն անջատվել և մեկը մյուսից հեռացվել, և մեկ ընդարձակ սահման ստեղծելը նպատակահարմար չէ: Սա այն իրավիճակն է, երբ սերիական անվանակարգի կիրառումն ավելի տեղին կլինի:

Համեմատական վերլուծություն

Համեմատական վերլուծության նպատակն է նախ պարզել, թե արդյո՞ք Համաշխարհային ժառանգության ցանկում կա համապատասխան տեղ առաջադրվող հուշարձանի ընդգրկման համար և երկրորդ՝ ցույց տալ, որ միևնույն գեոմշակութային տարածքում (մշակութային հուշարձաններ) կամ նույնիսկ համաշխարհային մակարդակով (բնության հուշարձաններ) չկան համադրելի հուշարձաններ, որոնք կունենան նույն արժեքները և կարող են առաջադրվել ապագայում: Գեոմշակութային տարածքը տարբերվում է՝ համաձայն հուշարձանի արտահայտած արժեքների և կարող է սահմանվել տարածաշրջանային կան համաշխարհային մակարդակով:

Վերլուծության մեկնարկային կետն է սահմանել, թե պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի, հարակից հատկությունների և ատրիբուտների ո՞ր համակցությունն է ենթակա համեմատության: Այսինքն, ո՞րն է հուշարձանի առանձնահատուկ նշանակությունը և ինչպե՞ս է դա դրսևորվում:

Համեմատությունները պետք է կատարվեն այն հուշարձանների հետ, որոնք արտահայտում են նույն արժեքները, ինչ որ առաջադրված հուշարձանը, ինչպես նաև գտնվում են գեոմշակութային (մշակութային հուշարձաններ) կամ գլոբալ (բնության հուշարձաններ) տարածքում: Հետևաբար արժեքները պետք է հստակ որոշվեն, և մշակութային հուշարձանների դեպքում գեոմշակութային շրջանակը պետք է որոշվի այս արժեքների հիման վրա: Որոշ դեպքերում գեոմշակութային շրջանակը կարող է լինել գլոբալ:

Բնության հուշարձանների դեպքում համեմատական վերլուծությունը պետք է լինի համաշխարհային մակարդակով, այսպիսով՝ ենթադրվում է հուշարձանը համեմատել աշխարհի այլ տարածաշրջանում գոյություն ունեցող նմանատիպ հուշարձանի հետ և ոչ թե միայն դիտարկվող տվյալ տարածաշրջանի հուշարձանների հետ: Օրինակ՝ Աֆրիկայի անապատային միջավայրը պետք է համեմատվի ոչ միայն աֆրիկայի այլ անապատների հետ, այլ աշխարհի բոլոր մյուս անապատների հետ:

Սերիական անվանակարգերի համար ամբողջ հուշարձանի համեմատական վերլուծությունը հիմնված է նույն սկզբունքների վրա, ինչ որ մեկ բաղադրիչ ունեցող հուշարձանի վերլուծությունը:

Պոտենցյալ Համաշխարհային բացառիկ արժեքը և ամբողջ հուշարձանի հետ կապված առանձնահատկություններն ու ատրիբուտները, որոնք իրենցից շարք են ներկայացնում, պետք է համեմատվեն այլ հուշարձանների հետ՝ նախ ցույց տալու համար, որ Համաշխարհային ժառանգության ցանկում առաջադրվող հուշարձանի համար կա տեղ և երկրորդ, որ չկան այլ նման սերիական հուշարձաններ, որոնք կարող են առաջադրվել: Սերիական հուշարձանների համեմատական վերլուծության համար, այնուամենայնիվ, գոյություն ունի երկրորդ մաս և այն վերաբերում է բաղադրիչների ընտրությանը: Անվանակարգի մեջ պետք է սահմանել բաղադրիչների ընտրության հիմնավորումը՝ դրանք համեմատելով այլ նմանատիպ բաղադրիչների հետ, ինչպես նաև հիմնավորել կատարված ընտրությունը:

Առաջին խնդիրն այն է, թե արդյո՞ք արդեն ներկայացված է արժեքների և ատրիբուտների այս համադրությունը Համաշխարհային ժառանգության ցանկում: Սա արվում է՝ համեմատելով առաջադրվող հուշարձանն արդեն գրանցված այլ նմանատիպ հուշարձանների հետ: Այս խնդրի վերջում պետք է կազմվի եզրակացություն:

Հնարավոր է, որ Համաշխարհային ժառանգության ցանկում արդեն ընդգրկված հուշարձաններ չկան, որ կարող են համեմատվել առաջադրված հուշարձանի հետ: Այնուամենայնիվ, վերլուծական համեմատության նպատակն է ցույց տալ ոչ թե հուշարձանի եզակիությունը, այլ որ այն ունի բացառիկ ուժեղ փաստարկ որոշակի համատեքստում Համաշխարհային բացառիկ արժեք լինելու համար:

Ժամանակի ընթացքում համաշխարհային ժառանգության չափորոշիչների փոփոխությունը

Համաշխարհային ժառանգության առկա հուշարձանների հետ համեմատելիս կարևոր է հաշվի առնել, որ ժամանակի ընթացքում Համաշխարհային ժառանգության չափորոշիչներում փոփոխություններ են տեղի ունեցել: Մինչև 2005 թ. չափորոշիչները երկու առանձին ցանկեր էին՝ մշակութային (i–vi) և բնության (vii–x): 2005 թ. վերանայված Գործառնական ուղեցույցի ընդունումից ի վեր ներկայում գոյություն ունի 10 չափորոշիչներից բաղկացած մեկ փաթեթ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է համակարգի հին և նոր համարակալումների հարաբերությունը:

	Մշակութային չափորոշիչներ						Բնության չափորոշիչներ			
Գործառնական ուղեցույց մինչև 2005 թ.	(i)	(ii)	(iii)	(iv)	(v)	(vi)	(i)	(ii)	(iii)	(iv)
Գործառնական ուղեցույց 2005 թ. հետո							(viii)	(ix)	(vii)	(x)

Ուշադրություն դարձրեք, որ բնության հին չորս չափորոշիչների հերթականությունը նոր ցանկում փոխվել է և բնության նախկին (iii) չափորոշիչը ներկայիս Գործառնական ուղեցույցում գտնվում է նախկին բնության (i, ii and iv) չափորոշիչներից առաջ: Բացի այդ, չափորոշիչների ճշգրիտ ձևակերպումը ժամանակի ընթացքում փոխվել է, իսկ ամենակարևոր փոփոխությունները կատարվել են 1992 թ.: Կարևոր է սա հաշվի առնել Համաշխարհային ժառանգության ցանկում այս ժամանակից առաջ և հետո գրանցված հուշարձանները համեմատելիս:

Հաջորդ խնդիրն է՝ ի նկատի ունենալ, որ ապագայում նման այլ հուշարձաններ կարող են առաջադրվել տվյալ գեոմշակութային տարածքից կամ, ինչպես դա կարող է լինել, աշխարհի այլ մասերից: Առաջադրված հուշարձանն անհրաժեշտ է համեմատել մեկ այլ ճանաչված օրինակի հետ՝ հիմք ընդունելով ընտրված արժեքներն ու ատրիբուտները: Կրկին պետք է եզրակացություններ անել՝ կապված այն բանից, թե ինչպես է հուշարձանը համեմատվում այլ հուշարձանների հետ, և նմանատիպ հուշարձանների առկայության դեպքում, ինչու առաջադրված հուշարձանը պետք է դիտարկվի որպես ամենալավ օրինակ կամ ներկայացուցիչ, կամ թե ինչու հետագայում այլ հուշարձաններ կարող են կցվել դրան որպես սերիական անվանակարգ:

Տիպաբանական համեմատությունը կամ միայն հուշարձանի տարրերի համեմատությունն այլ հուշարձանների տարրերի հետ համարվում են ոչ համապատասխան, եթե դրանք ուղղակիորեն չեն վերաբերում պահանջվող արժեքներին:

Իսկությունն ու ամբողջականությունը հանդիսանում են համեմատական վերլուծության կարևոր մասը: Համեմատվող հուշարձաններից ոմանք կարող են ունենալ ավելի կամ պակաս իսկություն և ամբողջականություն, որը կազդի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի վրա:

Համեմատական վերլուծության ավարտին արդեն պետք է հնարավոր լինի դիտարկել առաջադրված հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում արդեն գրանցված հուշարձանների տեսանկյունից, ինչպես նաև սահմանված գեոմշակութային տարածքում (մշակութային արժեք) կամ համաշխարհային մակարդակով (բնության հուշարձան) նմանատիպ հուշարձանների տեսանկյունից: Վերլուծությունը պետք է ցույց տա, որ առաջադրվող հուշարձանի համար ցանկում տեղ կա և չկան նմանատիպ այլ հուշարձաններ, որոնք կարող են առաջադրվել:

Համադրելի հուշարձանների վերաբերյալ տեղեկատվական աղբյուրներ.

- Համաշխարհային ժառանգության ցանկ,
- անվանակարգային փաթեթ, խորհրդատվական մարմինների գնահատականներ և Համաշխարհային ժառանգության ցանկում արդեն իսկ ընդգրկված համադրելի հուշարձանների վերաբերյալ Համաշխարհային ժառանգության կոմիտեի վերջին որոշումներ,
- տեղեկատվություն այն հուշարձանների մասին, որոնք գրանցման համար չեն առաջադրվել, քանի որ դա օգնում է բացահայտել շեմը և կարևորության մակարդակը, որն անհրաժեշտ է Համաշխարհային բացառիկ արժեքի պահանջը բավարարելու համար,
- նույն երկրի և այլ երկրների նախնական ցանկեր,
- Համաշխարհային ժառանգության ցանկ. բացթողումների լրացում - ապագայի գործողությունների ծրագիր (ICOMOS, 2005a) մշակութային արժեքների համար
- IUCN-ի և ԻԿՕՄՕՍ-ի թեմատիկ ուսումնասիրություններ,
- պահպանվող տարածքների համաշխարհային բազա (www.wdpa.org), բնության հուշարձանների համար,
- այլ փորձագիտական կազմակերպությունների կողմից պատրաստված գույքացուցակ (օրինակ՝ Docomomo - International Committee for documentation and conservation of buildings, sites and neighbourhoods of the modern movement /ժամանակակից քաղաքաշինության շենքերի, հուշարձանների և հարակից տարածքների փաստաթղթավորման և պահպանման միջազգային կոմիտե/ կամ TICCIH -The International

Committee for the Conservation of the Industrial Heritage /արդյունաբերական ժառանգության պահպանման միջազգային կոմիտե/),
• այլ հետազոտական զեկուցներ և տեղեկատու գրականություն կամ համապատասխան միջազգային փորձագետների կողմից տրամադրված տվյալներ:

Այս աղբյուրներից շատերի առցանց հղումները նշված են սույն ձեռնարկի 1.1 բաժնում:

Տեղեկատվության մեկ այլ օգտակար աղբյուր են ազգային և միջազգային փորձագետները, ովքեր աշխատում են հուշարձանին առնչվող ոլորտներում: Համեմատական վերլուծությունը պատրաստելու և վերանայելու համար ազգային ամենալավ փորձագետներից զատ միջազգային փորձագետների ներգրավումը կարող է արժեքավոր լինել անվանակարգը մշակելիս: Գործընթացում նման վերլուծությունը որքան շուտ կատարվի, այնքան լավ և սկզբունքորեն կարող է օգտակար լինել կոնվենցիայի անդամ պետության նախնական ցանկում տեղ գտած հուշարձանների համար՝ ապագա անվանակարգերի առաջնահերթությունների սահմանմանը նպաստելու համար:

Համեմատական վերլուծության համար փորձագիտական խումբ ներգրավելու օրինակ

Որոշ դեպքերում, հատկապես բնության հուշարձանների պարագայում, համեմատական վերլուծության մշակման համար փորձագետների խումբ ներգրավելը նախընտրելի մեթոդ է, ինչպես նկարագրված է ստորև:

1. Նոր անվանակարգի համար ներկայացվող հուշարձանը պետք է հստակ դասակարգվի հետևյալ առումով.

• Թեման, գեոմշակութային համատեքստը և հուշարձանը ներկայացնող կենսաաշխարհագրական տարածքները: Այս դասակարգումը պետք է հիմնված լինի Համաշխարհային ժառանգության ցանկի և IUCN-ի և ԻԿՕՄՈՍ-ի կողմից պատրաստված նախնական ցանկերի վերլուծության մեջ ներկայացված տեղեկատվության վրա, օրինակ՝ ցամաքային խոնավ տարածքներ, անապատներ, ծովային և ափամերձ տարածքներ, ժայռային գեղանկարչություն, կամուրջներ, մշակութային լանդշաֆտներ և այլ,
և
• Համաշխարհային ժառանգության կոնկրետ չափորոշիչները, որոնք պետք է օգտագործվեն գեոմշակութային տարածքի (մշակութային հուշարձան) կամ համաշխարհային մակարդակով (բնության հուշարձան)՝ հետագա համեմատական վերլուծության հիմքը ապահովելու համար:

2. Հիմնվելով առաջադրվող հուշարձանի դասակարգման վրա՝ անդամ պետությունը պետք է ձևավորի առաջադրված հուշարձանի կողմից ներկայացված թեմաներով, գեոմշակութային համատեքստով և կենսաաշխարհագրական շրջաններով զբաղվող մասնագետներից կազմված փորձագետների խումբ: Այդպիսի խումբը պետք է կազմվի ազգային փորձագետներից, իսկ խմբի լավագույն տարբերակը պետք է ներառի միջազգային փորձագետներ, ովքեր կարող են օժանդակել գլոբալ տեսլականի պահպանմանը վերլուծության ողջ ընթացքում: Անդամ պետության պահանջով խորհրդատվական մարմինները կարող են ներկայացնել առաջարկություններ միջազգային փորձագետների վերաբերյալ: Նման խումբը պետք է ներառի հուշարձանի արժեքների նախնական ինդենտիֆիկացման և համաձայնեցման հարցերով զբաղվող փորձագետներ, սակայն խմբի լավագույն տարբերակը պետք է ներառի փորձագետներ, ովքեր կարող են ներկայացնել համապատասխան երկրի կամ տարածաշրջանի սահմաններից դուրս ձևավորված միջազգային տեսլականը: Նման կարծիքը կարելի է ձեռք բերել էլ.փոստով և նամակագրության միջոցով՝ որպես խմբի հանդիպումներին մասնակցելու այլընտրանք:

3. Փորձագետների խումբը պետք է բացահայտի հուշարձանների ամբողջ ցանկը, որը հիմք կհանդիսանա համեմատական վերլուծության համար: Վերը նշված են այս ցանկը ընտրելու համար տեղեկատվական կարևոր աղբյուրները:

4. Այնուհետև, փորձագետների խումբը, ինչպես քանակական, այնպես էլ որակական տեսանկյունից, պետք է առաջադրվող հուշարձանի, ինչպես նաև համադրելի նմանատիպ հուշարձանների մասին հնարավորինս շատ տեղեկատվություն ձեռք բերի՝ համեմատության մեջ հուշարձանի վարկանիշը գնահատելու նպատակով: Տեղեկատվություն հավաքելու և համեմատական վերլուծության համար որպես մեկնարկային կետ պետք է լինեն այն չափորոշիչները, որոնց հիման վրա հուշարձանը առաջադրվելու է: Պարտադիր չէ, որ համեմատական վերլուծությունը լինի երկարաշունչ նկարագրական փաստաթուղթ, եթե հստակ նշված են այն տեղեկատվական աղբյուրները, որոնց

վրա հիմնված է վերլուծությունը: Վերլուծությունը կարելի է ներկայացնել ամփոփ աղյուսակի տեսքով: Գործառնական ուղեցույցում հստակ նշված է, որ համեմատական վերլուծության ընթացքում անհրաժեշտ է քննարկել տարբեր հուշարձանների պահպանվածության հարաբերական վիճակը: Համադրելի հանդիսացող, սակայն վատ վիճակում գտնվող կամ արդյունավետ պաշտպանություն և կառավարում չունեցող հուշարձանները կարող են լավ վիճակում և բարձր պաշտպանության ու կառավարման չափանիշ ունեցող հուշարձանների համեմատ համարվել որպես պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք ունենալու թույլ փաստարկներ ունեցող:

5. Փորձագետների խումբը պետք է պատրաստի վերջնական համեմատական վերլուծությունը՝ հիմնված իր հետազոտության և քննարկումների վրա՝ ներառյալ առաջադրված հուշարձանի վերաբերյալ եզրակացությունները (տես նաև ստորև ներկայացված եզրակացությունների վերաբերյալ քննարկումը):

Ինչպես նշված էր վերևում, տարբեր հետազոտական շրջանակներ կարող են օգնել ընկալել հուշարձանի արժեքը. դրանք են՝ թեմատիկ, ժամանակագրական-տարածաշրջանային և տիպաբանական: Համեմատելի հուշարձանները կազմում են այդ հետազոտական շրջանակների մի մասը:

Որոշ դեպքերում կարող է չլինել որևէ տեղեկատվություն կամ ուսումնասիրություն, որի հիման վրա կարելի է իրականացնել համեմատական վերլուծություն, կամ տեղեկատվությունը լինի շատ սահմանափակ: Տարբերակներից մեկն է կատարել հետազոտություն՝ այդ տեղեկատվությունը ստանալու նպատակով, կամ խրախուսել այլ հեղինակավոր և համապատասխան փորձագետներին կամ կազմակերպություններին կատարել այդ աշխատանքը: Հաճախ ավելի լավ է, երբ նման փորձագետները կամ կազմակերպությունները գործում են անկախ, կապված չեն անվանակարգի հետ և ունեն միջազգային հեղինակություն: Դա կարող է առաջացնել հավելյալ ծախսեր:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Իրականացրեք վերլուծության վերանայում միջազգային փորձագետների կողմից:

Չնայած տարբեր լեզուների օգտագործումը կարող է խնդիրներ առաջացնել այլ երկրներում համեմատական վերլուծության համար տեղեկատվության գնահատում իրականացնելիս, սակայն դա պետք է հաղթահարվի: Ինտելեկտուալ կերպով կամ գործնականորեն ընդունելի չէ, որ համեմատական վերլուծության համար խիստ անհրաժեշտ տեղեկատվությունը անտեսվի միայն այդ պատճառով:

Համեմատական վերլուծությունը հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի ընկալման կարևորագույն մասն է և օժանդակում է այդ արժեքի բացահայտման գործընթացին:

Համեմատական վերլուծությունը պետք է եզրակացություններ առաջ քաշի: Մանրակրկիտ և օբյեկտիվ համեմատական վերլուծությունները մեծապես նպաստում են հաջող անվանակարգի պատրաստմանը: Համեմատական վերլուծության արդյունքում կարելի է գալ երեք տարբեր եզրահանգման՝
.ը այլ հուշարձաններին սերիական կամ անդրազգային անվանակարգերում:

Ընդլայնման դեպքերում հատուկ ուշադրություն է դարձվում անվանակարգային փաթեթի մեջ ներառված համեմատական վերլուծությանը, այսինքն՝ թե որքանով է ներկայացված ընդլայնումը համատեղելի սկզբնական անվանակարգի հետ, և ինչպես են սզբնական անվանակարգի արժեքները արտացոլվում առաջարկված ընդլայնված տարածքում:

Վերջում նշենք համեմատական վերլուծություն պատրաստելու մի քանի հիմնական սկզբունքներ՝
• Վերլուծությունը պետք է լինի հնարավորինս խիստ և օբյեկտիվ, պետք է ունենա լայն շրջանակ՝ տեղ չտալով ազգային հպարտությանը, որը կարող է աղավաղել վերլուծության օբյեկտիվությունը (օրինակ՝ «սա լավագույն ժառանգության հուշարձանն է երկրում»),
• Այն պետք է համալրվի ազգային և միջազգային մակարդակներում առկա լավագույն գիտական տեղեկատվությամբ: Կարելի է օգտագործել ոչ հայտնի գրականություն, ինչպիսիք են չտպագրված

զեկույցները և կառավարման փաստաթղթերն այն դեպքում, եթե այդ հոդվածների և հրապարակումների պատճենները կցվեն անվանակարգային փաթեթին:

Պետք է հղում կատարել թեմատիկ ուսումնասիրությունների վրա գրեթե բոլոր դեպքերում, սակայն ոչ որպես ամբողջական վերլուծության պատրաստման համար նախատեսված հիմքային համատեքստ: Չի կարելի անտեսել համապատասխան թեմատիկ ուսումնասիրությունները,

• Բնության հուշարձանների համար պահպանման առաջնահերթությունների վերաբերյալ գլոբալ գնահատականները շատ օգտակար են և կարող են արժեքավոր տեղեկություններ տրամադրել հուշարձանի կարևորության մասին (բնության հուշարձանների համար՝ «Միջազգային կենսաբազմազանության օջախների պահպանումը» կամ «200 համաշխարհային էկոտարածաշրջաններ»): Այդուհանդերձ, դրանք հատուկ պատրաստված չեն եղել պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հարցին պատասխանելու համար: Համեմատական վերլուծություն պատրաստելու նպատակով խորհուրդ է տրվում նախապատվությունը տալ գլոբալ գնահատումների օգտագործմանը, որոնք կօգնեն պարզել հուշարձանի եզակիությունը համաշխարհային մակարդակով, և

• Համեմատական վերլուծության նախագիծն ավարտելուց հետո խորհուրդ է տրվում ցույց տալ այն այլ առաջատար ազգային և միջազգային փորձագետներին՝ հավելյալ տեղեկատվություն և կարծիք ստանալու և արդյունքները ստուգելու նպատակով: Անդամ պետությունների խնդրանքով խորհրդատվական մարմինները կարող են խորհուրդ տալ հիմնական առաջատար փորձագետների, ովքեր կարող են օգնել համապատասխան խորհրդով կամ գնահատականով: Առաջին նախագծի պատրաստումը համարվում է անվանակարգի պատրաստման ամբողջ գործընթացի կարևորագույն փուլը:

Երբեմն համեմատական վերլուծությունը լինում է անվանակարգի ամենաթույլ մասը և վտանգի տակ է դնում ամբողջ անվանակարգի հաջողությունը: Հիմնական խնդիրներն են՝

• վերլուծության օբյեկտիվության բացակայությունը,

• չեն իրականացվում հստակ ջանքեր միևնույն աշխարհաքաղաքական տարածքի սահմաններից դուրս (մշակութային հուշարձան) կամ համաշխարհային մասշտաբով (բնության հուշարձան) համեմատելի հուշարձաններ փնտրելու համար,

• որպես համեմատելի հուշարձանների մասին տեղեկատվություն օգտագործվում է միայն Համաշխարհային ժառանգության ցանկը և նախնական ցանկերը,

• առաջադրված հուշարձանը համեմատվում է ակնհայտորեն ավելի քիչ կարևորություն ունեցող հուշարձանների հետ՝ առաջադրված հուշարձանի ակնհայտ կարևորությունը բարձրացնելու նպատակով,

• առաջադրված հուշարձանը համեմատվում է ցանկում ընդգրկված բոլորովին տարբեր հուշարձանների հետ,

• վերլուծությունը կազմվում է՝ հիմնվելով հուշարձանի ավելի քիչ կարևոր ասպեկտների վրա, քան Համաշխարհային բացառիկ արժեքն է և հատուկ համապատասխան ատրիբուտները:

Եթե համեմատական վերլուծության արդյունքներն ուժեղ և համոզիչ չեն, ապա հուշարձանի առաջադրման հարցը պետք է վերանայվի:

Նախադեպ

Անդամ պետության կողմից մանրամասն թեմատիկ վերլուծության պատրաստումը

Թեմատիկ հետազոտությունները կարող են կարևոր ներդրում ունենալ համեմատական վերլուծության գործում: Թեմատիկ ուսումնասիրությունների հղումները ներկայացված են սույն ձեռնարկի 1.1 բաժինում:

Մինչդեռ թեմատիկ հետազոտությունները իրականացվում են ԻԿՕՄՈՍ-ի կողմից, Անդամ պետությունը կարող է պատրաստել սովորականից ավելի մանրակրկիտ թեմատիկ վերլուծություն՝ հատուկ առանձին հուշարձանի առաջադրմանն աջակցելու համար:

Օրինակ՝

• Ֆրանսիայի կողմից պատրաստվել էր միջերկրածովյան շրջանի անասնաբուծության մասին թեմատիկ ուսումնասիրություն՝ հիմնվելով այլ երկրների մասնակցությամբ կազմակերպված սեմինարների փորձի վրա,

• Պիեդմոնտի և Լոմբարդիի սուրբ լեռները (Իտալիա) համապարփակ թեմատիկ ուսումնասիրությունը պատրաստվել է հուշարձանի առաջադրման ժամանակ,

• «Լիվերպուլ՝ Ծովային առևտրական քաղաք» (Միացյալ թագավորություն) հուշարձանի անվանակարգը ներառում էր համեմատական ուսումնասիրություն, որն իրականում թեմատիկ ուսումնասիրություն էր (տես ստորև),

• • •

Նախադեպ

• Լը Մորն մշակութային լանդշաֆտ (Մավրիկիոս) հուշարձանի անվանակարգը նույնպես ներառում էր ստրկության հանդեպ դիմադրությանը վերաբերող թեմատիկ վերլուծություն, և

• Սան Միգել քաղաք արգելոցը և Ատոտոնիլկոյում Նազարեթցի Հիսուսի սրբավայրի (Մեքսիկա) անվանակարգերը ներառել են համեմատական վերլուծություն, որն իր հերթին հանդիսանում էր Լատինական Ամերիկայում և Կարիբյան երկրներում գաղութ քաղաքների մասին թեմատիկ ուսումնասիրություն և առաջարկում էր տարածաշրջանային համապատասխան շրջանակ:

© ՅՈՒՆԵՍԿՕ /Ժասմին Սարվա

Նախադեպ

Անդամ պետության կողմից

Լիվերպուլ՝ ծովային առևտրական քաղաք *(Միացյալ Թագավորություն)*

Այս հուշարձանի համեմատական վերլուծությունը լավ օրինակ է, քանի որ այն՝

- *նկարագրում է այն կարևոր թեման, որի շրջանակներում պետք է իրականացնել հուշարձանի գնահատումը, այսինքն՝ այն դիտարկվում է որպես Բրիտանական կայսրության նավահանգիստ, ինչպես նաև եվրոպական արտագաղթի նավահանգիստ,*
- *սկսվում է Միացյալ Թագավորության այլ նավահանգիստների հետ համեմատությամբ և դիտարկում է Համաշխարհային բացառիկ արժեք ներկայացնող ատրիբուտները, ինչպիսիք են՝ չափը, տոննաժը, առաքման գործողությունների և ենթակառուցվածքների բնույթն ու ժամկետը, ինչպես նաև ընդունող քաղաքի հետ տնտեսական հարաբերությունները: Իսկության և ամբողջականության հարցերն այս համեմատությունների կարևոր մասն են կազմում,*
- *ուսումնասիրում է համադրելի նավահանգիստները Եվրոպայում և այլ օրինակելի նավահանգիստներ՝ հօգուտ Լիվերպուլի անվանակարգի: Կրկին այս նավահանգիստները դիտարկվում են համապատասխան Համաշխարհային բացառիկ արժեքի, ինչպես նաև ամբողջականության և իսկության տեսանկյունից,*
- *ուսումնասիրում է Համաշխարհային ժառանգության առկա հուշարձանները՝ ներառյալ նրանք, որոնք նշված են որպես նավահանգիստ, ինչպես նաև նրանք, որոնք ներառում են նավահանգիստ՝ ևս մեկ անգամ դիտարկելով Համաշխարհային բացառիկ արժեքը:*

© OUR PLACE-Համաշխարհային ժառանգության հավաքածու

Անվանակարգային փաթեթի եզրակացությունը հետևյալն է՝

«Միջազգայնորեն, ոչ մի այլ խոշոր նավահանգիստ այդքան կենտրոնացած չի եղել բացառապես առևտրի և առքուվաճառքի վրա, ոչ մի այլ նավահանգիստ չի արտահայտել Բրիտանական կայսրության կամ այլ կայսրության հարստությունը, ձգտումը և զորությունը, ինչպես դա անում է Լիվերպուլը: Համաշխարհային ժառանգության ցանկի նավահանգիստները ավելի հին կամ երկարակյաց են, քան Լիվերպուլը, սակայն ներկայումս ոչ մեկը չի արտացոլում այն արժեքները և պատմական նշանակությունը, որոնք փոխանցում է Լիվերպուլի քաղաքային լանդշաֆտը: Ինչպես և 18-րդ, 19-րդ և վաղ 20-րդ դարերում, այժմ էլ Լիվերպուլը առանձնանում է այլ համեմատելի նավահանգիստներից, մասնավորապես՝ նավահանգստի ենթակառուցվածքի և պատմական քաղաքային լանդշաֆտի գոյատևման տեսանկյունից»:

Միգուաշա ազգային պարկ *(Կանադա)*

Երկրաբանական նշանակություն ունեցող բնության հուշարձանների վերաբերյալ առավել համապարփակ համեմատական վերլուծությունը մինչ այժմ համարվում է դևոնյան շրջանի հանքավայր՝ Կանադայի Միգուաշա ազգային պարկի համար արված վերլուծությունը: Վերլուծության մեջ օգտագործված նորարար, գիտահեն մեթոդաբանությունը IUCN-ի կողմից դիտարկվել է որպես բնության հուշարձանների գնահատման գործընթացում օգտագործվող լայն ընդունման և կիրառման արժանի մոտեցում: Եռափուլ մեթոդը կիրառվել է հետևյալ կերպ.

Նախադեպ

• *Սահմանել գնահատման չափորոշիչները. չափորոշիչների սահմանման հիմք էր հանդիսանում փասը հարցից բաղկացած հարցաթերթիկը, որը մշակվել էր IUCN-ի կողմից հանածոների պալեոնթոլոգիական նշանակության գնահատման համար, ինչպես նաև Ուելլսի ինը առաջարկվող չափորոշիչները (1996)՝ հանքավայրի՝ Համաշխարհային ժառանգության կարգավիճակը սահմանելու համար:*

• *Ընտրել գնահատման ենթակա հիմնական հուշարձանները. մատենագիտական հետազոտության և այլ փորձագետների հետ խորհրդակցության արդյունքում համաշխարհային մակարդակով ընտրվեց դևոնյան շրջանի ողնաշարավորների բրածո մնացորդներ պարունակող վաթսունմեկ տեղանքից բաղկացած խումբ: Այնուհետև այս թիվը նվազեց մինչև տասնհինգ՝ դուրս մղելով այն տեղանքները, որոնք չհամապատասխանեցին հինգ որակավորման չափորոշիչներից առնվազն մեկին՝ ելնելով դրանց պալեոնթոլոգիական համատեքստից:*

• *Կատարել միավորների վրա հիմնված գնահատում. ընտրված 15 հուշարձաններից յուրաքանչյուրը գնահատվեց չափորոշիչների համաձայն՝ օգտագործելով միավորների վրա հիմնված համակարգ, որի շրջանակներում հուշարձանին շնորհվում էր պայմանական կամ անվերապահ գնահատական՝ հիմնվելով հանածո տարրերի իրական թվի վրա:*

© Նյումայեր

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության պատրաստումը

Մեծապես խրախուսվում է պատրաստել Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ հստակ և ճշգրիտ հայտարարությունը՝ նախքան անվանակարգային փաթեթի շարադրանքին անցնելը: Հաջող անվանակարգերի համար անհրաժեշտ է նման հայտարարություն: Եթե հնարավոր չի լինում պատրաստել հստակ և գրավիչ հայտարարություն, ապա հուշարձանը կարող է համարվել կասկածելի թեկնածու Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու համար, և առաջարկված անվանակարգը կվերանայվի:

Վերևում նկարագրված անվանակարգի պատրաստման գործընթացի տարբեր բաժինների նպատակն է օգնել հասնել մի փուլի, երբ հնարավոր կլինի հաստատել Համաշխարհային ժառանգության չափորոշիչների համապատասխանությունը և պատրաստել Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարություն: Ամփոփելով՝

• հարկավոր է սահմանել պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը և հայտնաբերել այն արտահայտող առանձնահատկություններն ու ատրիբուտները,

• պետք է ընտրել Համաշխարհային ժառանգության համապատասխան չափորոշիչներ՝ հիմնվելով պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի ընկալման վրա,

• անհրաժեշտության դեպքում պետք է պատասխանել այն հարցին, թե արդյոք հուշարձանը համարվում է սերիական անվանակարգ, ինչպես նաև պետք է հիմնավորել բաղադրիչների ընտրությունը՝ ելնելով Համաշխարհային բացառիկ արժեքի տեսանկյունից,

• անհրաժեշտ է գնահատել և նկարագրել հուշարձանի իսկությունն ու ամբողջականությունը,

• անհրաժեշտ է կատարել ամբողջական և օբյեկտիվ համեմատական վերլուծություն:

Օգտագործելով ստացված տեղեկատվությունը՝ հարկավոր է ստուգել, թե արդյոք առաջարկված չափորոշիչները համապատասխան են տվյալ հուշարձանին: Կրկին համոզվեք, որ ընտրված չափորոշիչները ուղեկցվում են հստակ ապացույցներով և համոզիչ փաստարկներով:

Այս տեղեկատվությունը պետք է նաև օգտագործել Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը շարադրելիս:

Հայտարարության շարադրանքը կարող է հանգեցնել օգտագործվող չափորոշիչների վերանայմանը: Դա պետք է համարվի որպես անվանակարգի պատրաստման ընթացքում իրականացվող բնականոն զտման գործընթաց:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ է հստակեցնել Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը նախքան անվանակարգի աշխատանքները սկսելը:

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը պետք է ներկայացվի հետևյալ ձևաչափով (առավելագույնը երկու A4 չափի էջ, տես Գործառնական ուղեցույցի 10-րդ հավելվածը)՝

• Համառոտ նկարագրություն
– փաստացի տեղեկատվության ամփոփում (ինչից է բաղկացած հուշարձանը, աշխարհագրական և պատմական համատեքստը, առավելագույնը 150 բառ),
– Որակների ամփոփում (արժեքներ, ատրիբուտներ, առավելագույնը 150 բառ),
• Չափորոշիչների հիմնավորում (դրանք դրսևորող արժեքներն ու հատկանիշները, և թե ինչու է հուշարձանը բավարարում առաջարկված յուրաքանչյուր չափորոշչին, առավելագույնը 200 բառ յուրաքանչյուր չափորոշչի համար),
• Ամբողջականության մասին հայտ (բոլոր հուշարձանների համար) նախապատրաստման / գրանցման փուլում (համաձայն որի հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեք արտահայտող առանձնահատկու-թյունները կամ ատրիբուտները համարվում են իրենց տեղում և հուշարձանի սահմաններում, առավելագույնը 200 բառ),
• Իսկության մասին հայտ (հայտը անհրաժեշտ է միայն i-vi չափորոշիչների ներքո առաջադրված հուշարձանների համար) նախապատրաստման /գրանցման փուլում (երբ Համաշխարհային բացառիկ արժեք կրող ատրիբուտները իրոք արտացոլում են արժեքը, առավելագույնը 200 բառ),
• Պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանման համար անհրաժեշտ պաշտպանության և կառավարման պահանջները (արդյո՞ք պաշտպանական և կառավարման միջոցառումները, համակարգերն ու ծրագրերը բավականաչափ կայուն են, որպեսզի հնարավոր լինի հուշարձանի հետագա պաշտպանությունն ու կառավարումը իրականացնել այնպես, որ պահպանվի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը) (պաշտպանությունն ու կառավարումը քննարկվում են 82-91 էջերում):
– Ընդհանուր շրջանակ (առավելագույնը 200 բառ),
– Երկարաժամկետ հստակ ակնկալիքներ՝ երկարաժամկետ ուշադրություն պահանջող առանցքային հարցերը (օրինակ՝ պաշտպանություն հիմնական սպառնալիքներից, կարողությունների և ֆինանսավորման պահպանում, համայնքային օժանդակության ապահովում, առավելագույնը 150 բառ):

Մինչև 2007 թվականը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների հետհիմնավորմամբ պատրաստած հայտարարությունների համար գործում է մեկ այլ ուղեցույց: Ամբողջականության և իսկության բաղադրիչները պետք է արտացոլեն գրանցման պահի իրավիճակը, եթե նման տվյալներ առկա են:

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը համարվում է որակյալ անվանակարգի շարադրման ամենադժվար և ամենակարևոր խնդիրներից մեկը և պահանջում է չափազանց ուշադրություն: Ձևակերպումը պետք է լինի՝

• Համաշխարհային բացառիկ արժեքի հզոր նկարագրություն՝ հետագա պաշտպանությունը, պահպանությունը, կառավարումն ու մոնիթորինգը ապահովելու նպատակով: Հայտարարությունը որոշումներ կայացնողներին, քաղաքական գործիչներին և հասարակությանը պետք է հստակ բացատրի հուշարձանի արժեքը և ատրիբուտները,
• Հուշարձանի համար արվող արժեքի մասին հայտարարություն և այդ արժեքը փոխանցող ատրիբուտների նկարագրություն,
• Ընտրված չափորոշիչների հստակ հիմնավորում,
• Հակիրճ, սակայն հուշարձանի ամենակարևոր հատկանիշների մասին տեղեկատվություն փոխան–ցելու համար բավարար,
• Շարադրված՝ մարդկանց լայն շրջանակ ներգրավվելու համար և, հնարավորության դեպքում, զերծ ժարգոնային և մասնագիտացված լեզվի օգտագործումից:

ՀԻՇԵՑՈՒՄ, ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մշտապես վերանայեք ՀԲԱ-ի ձևակերպումը գործընթացի ժամանակ:

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության մշակումը կարող է նաև ընդհանուր ըմբռնում ձևավորել անվանակարգի մշակման գործընթացում ներգրավված բոլոր մասնակիցների միջև հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ: Բացի այդ, այս հայտարարությունը համախմբում է անվանակարգային փաթեթի բոլոր բաժինները՝ նկարագրություն, հիմնավորում, պահպանություն, պաշտպանություն, կառավարում և մոնիթորինգ:

Հայտարարության նախնական շարադրումից հետո անհրաժեշտ է խորհրդատվություններ անցկացնել համապատասխան փորձագետների և շահագրգիռ կողմերի հետ և ստանալ իրենց նկատառումները ձևակերպման վերաբերյալ: Դրա նպատակն է գալ հնարավորինս լայն համաձայնության հայտարարության վերաբերյալ: Հնարավոր է անհրաժեշտություն առաջանա անցկացնել խորհրդատվությունների մի շրջան նման համաձայնության հասնելու նպատակով:

Չնայած այն բանին, որ հայտարարությունը կարելի է վերջնական համարել այս փուլում, բացի պաշտպանության և կառավարման բաժիններից, այնուամենայնիվ, հետագա աշխատանքները և խորհրդատվությունները կարող են բերել օգտակար և խելամիտ փոփոխությունների: Սա նորմալ է և պետք է ընկալվի որպես հիմնավորված հայտարարության մշակման գործընթացի մի մաս:

Սերիական անվանակարգերի դեպքում հայտարարությունը պետք է համապատասխանի վերևում նշված ընդհանրապես հուշարձանի համար անհրաժեշտ ստանդարտ պահանջներին: Անհրաժեշտ է տրամադրել ամփոփ տեղեկատվություն ամբողջ հուշարձանի վերաբերյալ, այլ ոչ թե նմանատիպ տեղեկատվություն սերիական հուշարձանի յուրաքանչյուր բաղադրիչի համար: Այդուհանդերձ, կարող են լինել բացառություններ կամ հատուկ տեղեկատվություն, որը կվերաբերի միայն մեկ կամ մի քանի բաղադրիչների:

Այն դեպքում, երբ բաղադրիչը հանդիսանում է որպես ցանկում ներգրավված սերիական հուշարձանի լրացուցիչ մաս, Համաշխարհային բացառիկ արժեքի հայտարարությունը կարող է բավարար լինել լրացուցիչ մասն առանց փոփոխության ընդգրկելու, կամ լրացուցիչ բաղադրիչը արտացոլելու նպատակով փոքր փոփոխություն կատարելու համար: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կատարել փոքր փոփոխություն կամ այն դեպքում, երբ առկա չէ հայտարարություն, անհրաժեշտ է վերանայել կամ պատրաստել հայտարարությունը Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի պահանջների համաձայն: Գործընթացին աջակցելու նպատակով Համաշխարհային ժառանգության կենտրոնի և խորհրդատվական մարմինների կողմից պատրաստվել է Համաշխարհային բացառիկ արժեքի հետհիմնավորում մշակելու ուղեցույց: Բոլոր դեպքերում, ձևակերպումը պետք է արտացոլի նշանակալի նոր հատկանիշներ, բայց ոչ նոր արժեքներ: Արժեքները պետք է նախապես համաձայնեցված լինեն Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի հետ: Լրացուցիչ կամ տարբեր արժեքների առկայության դեպքում անհրաժեշտ է պատրաստել նոր անվանակարգ (Գործառնական ուղեցույցի կետ 166):

Առկա հուշարձանի ընդլայնման դեպքում անհրաժեշտ է վերանայել հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի մասին առկա հայտարարությունը՝ նոր ատրիբուտներ, սակայն ոչ նոր արժեքներ արտացոլելու նպատակով, կամ մշակել նոր հայտարարություն ողջ հուշարձանի համար:

Դասարան

Համաշխարհային բացառիկ արժեքի հայտարարություն

Առաջնորդ Ռոի Մատայի փիրույթ *(Վանուատու)*

© Վանուատուի ազգային մշակութային խորհուրդ / Քրիս Բալլարդ

Վանուատուի առաջնորդ Ռոի Մատայի շարունակական մշակութային լանդշաֆտն ունի Համաշխարհային բացառիկ արժեք որպես խաղաղ-օվկիանոսյան առաջնորդների ավանդական համակարգեր ներկայացնող լանդշաֆտի վառ օրինակ: Սա արտացոլվում է ժամանակի ընթացքում մարդկանց և շրջակա միջավայրի փոխազդեցությամբ, Ռոի Մատայի հետ կապված նյութական մասունքների նկատմամբ հարգանքով և նրա կողմից իրականացվող սոցիալական բարեփոխումների հոգևոր և բարոյական ժառանգության նկատմամբ հավատարմությամբ: Լանդշաֆտը արտացոլում է խաղաղօվկիանոսյան առաջնորդների ավանդական համակարգերը և հարգանքը դեպի այդ իշխանությունը, որն արտահայտվում է Ռոի Մատայի նստավայրի և գերեզմանի օգտագործման տաբուի՝ արգելքի միջոցով, ինչը պահպանվում է ավելի քան 400 տարի, և ձևավորել է տեղական լանդշաֆտը և հասարակական պրակտիկան: Լանդշաֆտը պահպանում է Ռոի Մատայի նվաճումների հիշատակը, ով դեռևս ողջ է ժամանակակից Վանուատուում շատերի համար որպես ուժի և ոգեշնչման աղբյուր:

Չափորոշիչ (iii). առաջնորդ Ռոի Մատայի փիրույթը զարգացող մշակութային լանդշաֆտ է, որն արտացոլում է, թե ինչպես էին առաջնորդները ստացել իրենց իշխանությունը նախկին ղեկավարներից, և, մասնավորապես, թե ինչպես են Ռոի Մատայի նստավայրի և գերեզմանի օգտագործման տաբու արգելքները պահպանվել ավելի քան 400 տարի և ձևավորել տեղական լանդշաֆտը և հասարակական պրակտիկան:

Չափորոշիչ(v). առաջնորդ Ռոի Մատայի փիրույթը խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի առաջնորդների ավանդական համակարգեր ներկայացնող լանդշաֆտի բացառիկ օրինակ է: Ժամանակի ընթացքում պահպանվել է տարածաշրջանի բնակչության և շրջակա միջավայրի միջև կապը, որն արտահայտվում է երեք հիմնական կղզիների վրա գտնվող Ռոի Մատայի նյութական մասունքների հարգանքով, ինչպես նաև իր կողմից իրականացված սոցիալական բարեփոխումների հոգևոր և բարոյական ժառանգության պահպանմամբ:

Չափորոշիչ (vi). առաջնորդ Ռոի Մատան ժամանակակից Վանուատուում ապրող շատ մարդկանց համար մնում է ողջ, որպես լանդշաֆտը մարմնավորող ուժի և կյանքի դժվարությունները հաղթահարող մարդկանց համար ոգեշնչման աղբյուր:

Առաջնորդ Ռոի Մատայի փիրույթի իսկությունը կայանում է լանդշաֆտի և Ռոի Մատայի բանավոր ավանդույթների կապի մեջ, ղեկավարների առաջնորդական համակարգերի զարգացման և իր կյանքի հետ կապված նյութական մասունքների նկատմամբ ավանդական հարգանքի զարգացման մեջ, որն արտահայտվում է այդ վայրերի օգտագործման վրա տաբու արգելքի պահպանմամբ: • • •

Նախադեպ

Առաջադրված տարածքների և դրանց պահպանական գոտիների օրենսդրական պաշտպանությունը կազմակերպված է բավարար մակարդակով: Հուշարձանի ընդհանուր կառավարման համակարգը բավարար է, որը ներառում է առաջնորդական համակարգերի ավանդական կառավարում և տաբու արգելքներ, ինչպես նաև հուշարձանի պաշտպանության համար նախատեսված պետական օրենսդրությունը: Կառավարման համակարգը ներառում է տեղական համայնքը
և պետական կառավարման մարմինները: Այսպիսով պահպանվում է հուշարձանի ամբողջականությունը:

Ջեջու հրաբխային կղզին և լավայի թունելները *(Կորեայի Հանրապետություն)*

© UCN/Փոլ Դինգուոլ

Ջեջու հրաբխային կղզին և լավայի թունելները փոխկապակցված սերիական հուշարձան է, որը բաղկացած է երեք բաղադրիչից: Հավասարը չունեցող Գեոմունորեում լավայի թունելային համակարգը և հրաբխային ծագում ունեցող տարբեր կառուցվածքները, որոնք հասանելի են երկու այլ բաղադրիչներում, տարբերվող և կարևոր նշանակություն ունեն համընդանուր հրաբխային բնույթի ընկալման մեջ:

Չափորոշիչ (vii): Գեոմունորեում լավայի թունելային համակարգը, որը համարվում է աշխարհում ամենագեղեցիկ քարանձավային համակարգը, աննկարագրելի վիզուալ ազդեցություն ունի նույնիսկ նրանց վրա, ովքեր արդեն ծանոթ են նման երևույթի հետ: Այն իրենից ներկայացնում է մի յուրահատուկ տեսարան՝ ձևավորված բազմագույն կարբոնատե զարդանախշերով պատված առաստաղներից և հատակներից, լավայից առաջացած մուգ պատերից, որոնք մասամբ ծածկված են կարբոնատե նստվածքներով: Սեոնգսան Իլչուլբոնգի ամրոց հիշեցնող կոնաձև տուֆից գոյացություն՝ օվկիանոսից դուրս եկող պատերով, դրամատիկ տպավորություն թողնող հատկությամբ: Իսկ Հալլա սարը՝ իր տարբեր եղանակներին փոփոխվող նյութակազմի բազմագույն երանգներով, ջրվեժներով, բազմաձև ապարային գոյացություններով և սյունաձև ժայռերով, լճային կրատերով բարձրացող գագաթով լրացնում են հուշարձանի գեղատեսիլ և էսթետիկ գրավչությունը:

Չափորոշիչ (viii): Ջեջուն հատուկ արժեք ունի՝ որպես աշխարհի մի քանի լայն վահան ունեցող հրաբուխներից մեկը, որը ձևավորվել է տաք կետում մայրցամաքային երկրակեղևի անշարժ մակերեսի վրա: Այն առանձնանում է Գեոմունորեում լավայի թունելային համակարգով, որը համարվում է աշխարհում ամենատպավորիչ և նշանակալի պաշտպանված լավայի թունելային քարանձավների շարքը և ներառում է մի շարք երկրորդական կարբոնատային սպելեոտեմներ (ստալակտիտներ և այլ գոյացություններ), որոնք ստեղծում են մի անմոռանալի տեսարան և ներկայացնում են լավային քարանձավում նախադեպը չունեցող բացառիկ առատություն և բազմազանություն:
Սեոնգսան Իլչուլբոնգի կոնաձև տուֆից գոյացությունը կառուցվածքային և սեդիմենտելեգիական բնութագրերի հիանալի օրինակ է, որն այդ հուշարձանին տալիս է համաշխարհային նշանակություն՝ սուրտսեյան տիպի հրաբխային ժայթքումների ուսումնասիրության տեսանկյունից:

Հուշարձանը լավ կառավարվում է, ունի նաև 2006-2010 թվականների համար նախատեսված կառավարման պլան և իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ: Հիմնական կառավարման խնդիրների մեջ ներառված են՝ խուսափել պոտենցիալ գյուղատնտեսական ազդեցությունից ստորգետնյա միջավայրի վրա և գրավել մեծ քանակությամբ այցելուներ: Հնարավորություն կա հետագայում ընդլայնել հուշարձանի տարածքը՝ ներառելով Ջեջուի լավայի այլ կարևոր թունելային համակարգեր և հրաբխային կառուցվածքներ:

Սերիական անվանակարգեր

Սերիական անվանակարգերը ներառում են երկու կամ ավելի առանձին բաղադրիչ մասեր, որոնք միասին ներկայացնում են Համաշխարհային բացառիկ արժեք (տես սույն ձեռնարկի 1.3 բաժնի սահմանումները):

Սերիական անվանակարգերի դեպքում բաղադրիչների շարքի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը շատ կարևոր է և պետք է հիմնավորվի: Բացի այդ, պետք է ներկայացվի հստակ հիմնավորում բաղադրիչների ընտրության վերաբերյալ, և այն պետք է հիմնված լինի բաղադրիչների արտահայտած պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքների, ինչպես նաև ատրիբուտների և առանձնահատկությունների վրա:

Համեմատական վերլուծությունը պետք է հիմնավորի բաղադրիչների ընտրությունը, ինչպես նաև ապացուցի, որ բաղադրիչների ամբողջությունն ունի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք:

Այն բաղադրիչները, որոնց կապը առաջադրված հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի հետ հստակ և պարզ չէ, չպետք է ընդգրկվեն ցանկում:

Սկզբունքորեն, պոտենցիալ սերիական անվանակարգի բոլոր բաղադրիչները պետք է նշված լինեն անվանակարգային փաթեթում, նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ պահին առաջադրվում է միայն առաջին բաղադրիչը/ները: Գործառնական ուղեցույցը թույլ է տալիս առաջադրել բաղադրիչների շարքի մի մասը, այնուհետ ավելացնել մյուս բաղադրիչները (պարագրաֆ 137–39). այլ հնարավոր բաղադրիչ մասերը պետք է լինեն հստակ նշված և նկարագրված:

Հարկավոր է տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք հուշարձանի առանձին բաղադրիչ մասերը գործառնական մակարդակով կապված են, թե ոչ, և արդյո±ք բոլոր բաղադրիչների համար գործում է համընդանուր կառավարման սկզբունքը:

Սերիական անվանակարգերի համար կարևոր սկզբունքներից է, որպեսզի նրանք գնահատվեն՝ ելնելով նույն չափորոշիչներից, ամբողջականության, իսկության և կառավարման պահանջներից, ինչ այլ հուշարձանների դեպքում: Այդ անվանակարգերի նկատմամբ պահանջները նույնն են նաև աշխարհագրական-մշակութային /համընդհանուր համեմատական վերլուծության համար՝ ցանկում ընդգրկվելու համար հիմքեր ստեղծելու նպատակով:

Հաջորդ կարևոր սկզբունքն այն է, որ ցանկացած սերիական անվանակարգ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու համար ներկայանում է որպես մեկ անվանակարգ: Այդպիսով, սերիական հուշարձանները գրանցվում են որպես միասնական հուշարձան և քննարկվում են համապատասխանաբար: Եթե սերիական հուշարձանի մի մասի արժեքները վտանգվում են այնքան, որ այն առաջարկվում է ներառել Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում, ապա ամբողջ հուշարձանը նույնպես ներառվում է Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում: Սա վերաբերում է բոլոր սերիական հուշարձաններին, ներառյալ նրանք, որոնք գտնվում են մեկ երկրում, ինչպես նաև անդրազգային հուշարձանները:

Սերիական հուշարձանների վերաբերյալ օգտակար հղում՝ Բնության Համաշխարհային ժառանգության սերիական հուշարձանների անվանակարգումն ու կառավարումը. ներկա վիճակը, մարտահրավերներն ու հնարավորությունները (Էնգելս և այլք, 2009):

Նախադեպ

Սերիական հուշարձան՝ Մելակա և Ջորջթաուն, Մալաքքայի նեղուցի պատմական քաղաքները *(Մալայզիա)*

© OUR PLACE – Համաշխարհային ժառանգության կառավարում

Մելակա և Ջորջթաուն, Մալաքքայի նեղուցի պատմական քաղաքները զարգացել են Մալաքքայի նեղուցի Արևելքի և Արևմուտքի միջև առևտրի և մշակութային փոխանակման 500 տարիների ընթացքում: Ասիայի և Եվրոպայի ազդեցության հետևանքով քաղաքներն օժտվել են հատուկ բազմամշակութային ժառանգությամբ՝ նյութական և ոչ նյութական: Մելակայի կառավարական շենքերը, եկեղեցիները, հրապարակներն ու ամրություններն արտացոլում են իր պատմության վաղ փուլերը, որոնք սկսվում են 15-րդ դարում մալայական սուլթանի, իսկ 16-րդ դարի սկզբում պորտուգալական և հոլանդական իշխանությամբ: Ջորջթաունի բնակելի և առևտրային շենքերը ներկայացնում են 18-րդ դարի վերջի բրիտանական դարաշրջանը: Երկու քաղաքները կազմում են յուրօրինակ ճարտարապետական և մշակութային քաղաքային լանդշաֆտ, որն այլևս չի կրկնվում արևելյան և հարավարևելյան Ասիայում: Հուշարձանը ցանկում ներառված է (ii), (iii) և (iv) չափորոշիչների ներքո:

• • •

Նախադեպ

Մալաքքայի պատմական քաղաքները



Մալաքքայի պատմական քաղաքները

Աղբյուրը՝ անվանակարգի ֆայլ

Նախադեպ

Սերիական հուշարձան՝ մոդեռնիզմի ոճի բնակելի տարածքներ Բեռլինում *(Գերմանիա)*

© ՅՈՒՆԵՍԿՕ

Հուշարձանը բաղկացած է վեց բնակելի տարածքներից, որոնք վկայում են 1910--1933 թվականներին իրականացվող նորարարական բնակարանային քաղաքականության մասին, մասնավորապես, Վեյմարի Հանրապետության ժամանակահատվածը, երբ Բեռլին քաղաքը հատկապես առաջադեմ էր սոցիալական, քաղաքական և մշակութային ոլորտներում: Հուշարձանը հանդիսանում է շինարարական բարեփոխման շարժման հրաշալի օրինակ, որը նպաստել է ցածր եկամուտ ունեցող մարդկանց բնակարանային և կենսապայմանների բարելավմանը՝ քաղաքաշինության, ճարտարապետության և պարկերի նախագծման նոր մոտեցումների միջոցով: Տարածքները ապահովում են նաև նոր քաղաքային և ճարտարապետական տիպաբանությունների բացառիկ օրինակներ, որոնք հատկանշական են թարմ դիզայներական լուծումներով և տեխնիկական ու գեղագիտական նորամուծություններով: Բրունո Թաուտը, Մարտին Վագները և Վալթեր Գրոպիուսը այդ նախագծերի առաջատար ճարտարապետներից էին: Նախագծերը զգալի ազդեցություն են թողել ամբողջ աշխարհում բնակարանաշինության զարգացման վրա: Հուշարձանը ցանկում ներառված է (ii) և (iv) չափորոշիչների ներքո:

Դասարան

Աղբյուրը՝ անվանակարգի ֆայլ

Դասարան

Սերիական հուշարձան՝ կարստային գոյացություն հարավային Չինաստանում
(Չինաստան)

Հարավային Չինաստանի կարստային շրջանը տարածվում է կես միլիոն քառակուսի կիլոմետր մակերեսով, որն անցնում է հիմնականում Յուննան, Գույչժոու և Գուանքսի նահանգներով: Այն ներկայացնում է խոնավ, արևադարձայինից մերձարևադարձային կարստային լանդշաֆտի աշխարհում ամենափայլուն օրինակներից մեկը: Շիլինի քարե անտառները համարվում են բնության յուրօրինակ երևույթներ. նրանք ունեն տարատեսակ սրածայր ուրվապատկերներ, ավելի սուր, քան այլ կարստային սրածայր լանդշաֆտները, ինչպես նաև բազմապիսի ուրվագծեր և փոփոխվող գույներ: Լիբոյի կոնաձև և աշտարակաձև կարստային ձևավորումները, որոնք նույնպես համարվում են համաշխարհային հուշարձաններ, ձևավորում են շատ բնորոշ և գեղեցիկ լանդշաֆտ: Վուլոնգի կարստը ցանկում է ներառվել իր հսկայական ջրափոսերի, բնական կամուրջների և քարանձավների համար: Հուշարձանը ցանկում ներառված է (vii) և (viii) չափորոշիչների ներքո:

© ՅՈՒՆԵՍԿՕ ? Ջիմ Տառսել



Աղբյուրը՝ անվանակարգի ֆայլ

ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքն ընդգրկող ամուր սահմանի ստեղծումը

Հուշարձանի համար նախատեսված սահմանը պետք է ներառի բոլոր ատրիբուտներն ու հատկությունները, որոնք կրում են պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք: Սահմանը, որը ներառում է Համաշխարհային բացառիկ արժեքի հետ առնչություն չունեցող տարածքներ, չի կարող բավարար համարվել: Մյուս կողմից, պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք կրող ատրիբուտներ ու հատկություններ ունեցող տարածքների բացառումը նույնպես խնդիրներ է առաջացնում:

Կարևոր է հիշել, որ առաջադրված հուշարձանները պետք է մի շարք ստուգումներ անցնեն: Հուշարձանը պետք է՝

- ունենա Համաշխարհային բացառիկ արժեք,
- պետք է համապատասխանի իսկության և ամբողջականության պահանջներին, և
- լինի պաշտպանված և լավ կառավարելի

Բոլոր այս գործոնները ազդում են հուշարձանի սահմանների հաստատման վրա:

Հիմնական հաղորդագրություն

Սահմանը պետք է ներառի Համաշխարհային բացառիկ արժեքի բոլոր տարրերը,

59–60 էջերում առաջարկված ատրիբուտների և հատկությունների քարտեզագրումը համապատասխան սահմանները մշակելու արդյունավետ սկիզբ է:

Մշակութային հուշարձանների դեպքում, երբ անվանակարգը ներառում է մի շարք կարևոր տարրեր, ինչպես օրինակ՝ պատմական քաղաքի շենքերը, գրանցման համար երբեմն ավելի հարմար է առաջադրել մեկ տարածք կամ հատված, որը կներառի բոլոր այդ բաղադրիչները, քան ունենալ մի քանի առանձին բաղադրիչներ: Ինչպես միշտ, ընտրված սահմանի հիմնավորումը շատ կարևոր է, և նման դեպքերում որպես մեկ ամբողջություն առաջադրված տարածքը կարող է արդարացված լինել:

Երբեմն պահպանման կարևորություն ունեցող տարածքներն ու տարրերը կարող են աշխարհագրորեն բավական հեռու գտնվել միմյանցից և այդ դեպքում մի մեծ սահման ստեղծելը հարմար չէ: Այս դեպքում ավելի հարմար է սերիական առաջադրումը:

Որոշ դեպքերում հուշարձանի մի մասը լավ պահպանված կամ կառավարված չի լինում: Եթե հուշարձանի այդ մասը հանդիսանում է հուշարձանի կարևոր կամ անհրաժեշտ տարր, ապա պետք է ապահովել համապատասխան պաշտպանություն և կառավարում՝ հաջող անվանակարգ ունենալու համար: Այդ պատճառով կարող է կասեցվել առաջադրման գործընթացը, մինչև չսահմանվի անհրաժեշտ պաշտպանությունն ու կառավարումը:

Սահմանի ապահովումը հակամարտությունների կառավարման և կանխարգելման մի մաս է և պահանջում է շահագրգիռ կողմերի ներգրավվածություն: Սա հուշարձանի պաշտպանության, պահպանության և կառավարման վերաբերյալ շատ կարևոր հողօգտագործման որոշում է և շատ կարևոր է ներգրավել և հաղորդակցվել շահագրգիռ կողմերի հետ:

Ընտրված սահմանի համար պետք է առկա լինի ակնհայտ հիմք կամ բացատրություն, և դա պետք է ներառվի անվանակարգային փաթեթի ամբողջականություն բաժնում:

Ամփոփ՝

- հուշարձանի սահմանները պետք է ներառեն ամբողջականության պայմանի համար անհրաժեշտ ատրիբուտները, այսինքն՝ ամբողջական և ամփոփ ատրիբուտների հավաքածու, որոնք փոխանցում են պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը,
- սահմանները պետք է լինեն տրամաբանական և պաշտպանված հուշարձանի արժեքը փոխանցող ատրիբուտների բացահայտման տեսանկյունից,
- սահմանները պետք է հստակ նշված լինեն իրավական հուշարձանի պաշտպանության և կառավարման տեսանկյունից,
- սահմանները պետք է լինեն հեշտությամբ ճանաչելի, որպեսզի կառավարման համար օգտակար լինեն: Դրանք հաճախ հիմնված են ֆիզիկական առանձնահատկությունների վրա, իսկ երբեմն էլ՝ բնական առանձնահատկությունների վրա: Արդյունավետ սահմանները կարող են հիմնված լինել նաև մարդու կողմից ստեղծված առանձնահատկությունների

վրա, ինչպես օրինակ ճանապարհները, որոնք հաճախ կարևոր դեր են խաղում կառավարման տեսանկյունից: Այնուամենայնիվ, այդ առանձնահատկություններն օգտագործելիս, առավել ուշադիր պետք է լինել, որպեսզի հարակից տարածքը համապատասխանի ամբողջականության պայմանին,

• չափազանց կարևոր է սահմանների որակյալ քարտեզագրումը,

• չափազանց կարևոր է, որպեսզի առաջադրվող հուշարձանի սահմանների հաստատումն (ներառյալ գոտիավորման սխեմաները) իրականացվի հուշարձանի կառավարման առաջնահերթությունների և պահանջների հետ համահունչ, ինչպես նաև շահագրգիռ կողմերի արդյունավետ ներգրավվածությամբ:

Նախադեպ

Սահմաններ

«Վերածնունդ» հուշարձանային համալիրներ Ուբեդայում և Բաեզայում *(Իսպանիա)*

Հուշարձանն առաջադրվել է որպես երկու պատմական քաղաքների բաղադրիչ մաս: Արդյունքում հուշարձանը սահմանափակվեց միայն Վերածննդի պալատներով: Հիմնավորումը փոխվեց, որը փաստում էր, որ դրանք ներկայացնում են Վերածննդի քաղաքացիական ճարտարապետության և գաղափարների մուտքն Իսպանիա, որտեղից էլ դրանք, ճարտարապետական տրակտատների միջոցով, ներթափանցել են Լատինական Ամերիկա:

© Սերժ Դոս Սանտոս

Մակաոյի պատմական կենտրոն *(Չինաստան)*

Նախնական անվանակարգը սահմանափակվում էր տասներկու շենքերով՝ դուրս թողնելով մի քանի կարևոր օրինակներ՝ ելնելով այն համոզմունքից, որ ավելի լավ է չներառել չափից շատ օրինակներ: Բարեբախտաբար, հիմնական փողոցը բավականաչափ պահպանել է իր ամբողջականությունը, այնպես, որ հնարավոր է եղել վերանայել հուշարձանը՝ ներառելով փողոցը և հիմնական քաղաքային պուրակները՝ համապատասխան շենքերով:

© ՅՈՒՆԵՍԿՕ Ալիան Բրուն

Բամը և իր մշակութային լանդշաֆտը
(Իրանի Իսլամական Հանրապետություն)

Նախնական սերիական անվանակարգը նախապես առաջարկված է եղել միջնաբերդի և որոշ քանդված շինությունների համար: Որոշ խորհրդակցությունների արդյունքում անվանակարգի բնույթը փոխվեց և վերածվեց մշակութային լանդշաֆտի: Սա արվեց այն պատճառով, երբ պարզ դարձավ, որ ջրակառավարման համակարգը և օազիսային ապրելակերպը մեծ կարևորություն են ներկայացնում:

«Հարյուրամյա սրահ» Վրոցլավում *(Լեհաստան)*

Նախնական անվանակարգը ներառում էր միայն Հարյուրամյակի սրահի շենքը: Սակայն ԻԿՕՄՈՍ-ի առաքելության աշխատանքների արդյունքում համաձայնության եկան ներառել նաև ցուցահանդեսի տարածքը, որը նախագծվել էր նույն ժամանակահատվածում, ինչ Հարյուրամյակի սրահը: Պահպանական գոտին նույնպես ընդլայնվեց՝ տարածքին ավելի լավ պաշտպանություն ապահովելու նպատակով:

Սոլթանիե *(Իրանի Իսլամական Հանրապետություն)*

Նախնական անվանակարգը ներառում էր դամբարանը, հարակից տեղական գյուղը և մի քանի փոքր կրոնական կամ հուղարկավորության հուշարձաններ: Վերագնահատման արդյունքում սահմանները վերանայվեցին և ներառեցին դամբարանը և փոքր միջնաբերդի հնագիտական մնացորդները: Գյուղի մնացած մասը՝ հուշարձաններով հանդերձ, ներառվեց պահպանական գոտու մեջ: Սրա շուրջ կա նաև պահպանվող լանդշաֆտային խոտածածկ տարածք, ինչի պատճառով նաև Իլխան մոնղոլներն իրենց մայրաքաղաքը կառուցել են հենց այս վայրում:

Ռեունյոն կղզու լեռնագագաթներ, խառնարաններ և պատվարներ
(Ֆրանսիա)

Նախնական անվանակարգը ներառում էր մի շարք բնակելի տարածքներ, սակայն չէր ներառում այս կղզու էնդեմիկ բուսականության բոլոր կարևոր տարածքները: Անվանակարգը վերանայելուց հետո սահմանը ավելի հիմնավոր դարձավ և միացվեց նորաստեղծ Ազգային պարկին, ինչպես նաև սահմանվեց արդյունավետ պահպանական գոտի, որը ներառեց հարակից բնակավայրերը: Արդյունքում ստեղծվեց մի հուշարձան, որը ներառում է կղզու բնական լանդշաֆտի ամենակարևոր մասերը և կապված է պաշտպանության և կառավարման հաստատված համակարգին, որն ապահովում է հուշարձանի արդյունավետ պահպանությունը:



© Հերվե Դուրիս

• • •

Նախադեպ

Սոլթանիե *(Իտալիա)*

Դոլոմիտների նախնական անվանակարգը, որը ներառում էր քսանյոթ հիմնական բաղադրիչ մասեր, հետաձգվել էր, ինչի փոխարեն անդամ պետությանը առաջարկվել էր վերանայել անվակարգը և նվազեցնել բաղադրիչների քանակը, այնպես, որ դրանք լանդշաֆտային մասշտաբով փոխանցեն տարածքի գեղագիտական արժեքը: Ինը բաղադրիչ ներառող վերանայված հուշարձանի անվանակարգը պատրաստվել էր համեմատական վերլուծության հիման վրա և 2009թ. ներառվել Համաշխարհային ժառանգության ցանկում:

© Դել Ագնոլա – Բելունոյի Դրոմիցիա

Պահպանական գոտիներ

Համաշխարհային ժառանգության յուրաքանչյուր հուշարձան ունի պահպանության և կառավարման կարիք հուշարձանից դուրս իրականացվող գործունեության համար, ինչը ներառում է նաև հուշարձանին անմիջականորեն հարող սահմանները: Այդուհանդերձ, պահպանական գոտին միշտ չէ, որ անհրաժեշտ է, եթե, ինչպես նշված է Գործառնական ուղեցույցում, գոյություն ունեն նաև հուշարձանն ավելի լայն սպառնալիքներից պաշտպանելու իրավական, կարգավորիչ և այլ մեթոդներ (կետ 104): Դրանք կարող են լինել հողօգտագործման ծրագրերի կամ զարգացման կանոնակարգերի ընդունում կամ պաշտպանվող տարածքների միջև լանդշաֆտի մակարդակների փոխկապակցության ապահովում: Այս խնդրի կապակցությամբ երկրները կարող են ունենալ տարբեր մեխանիզմներ:

Պետք է հստակ գիտակցել, որ պահպանական գոտին չի հանդիսանում Համաշխարհային ժառանգության հուշարձանի մի մասը, բայց անհրաժեշտ է դրա պաշտպանության, պահպանության և կառավարման համար: Պաշտպանելով հուշարձանի անմիջական հարևանությամբ գտնվող տարածքները՝ պահպանական գոտիները կարող են նպաստել հուշարձանի իսկությունն ու ամբողջականությունը պահպանելուն: Օրինակ, եթե տաճարը սարից բաժանում է որոշակի հեռավորություն և այդ տարածությունը կազմում է պահպանական գոտու մի մաս:

Մինչդեռ պահպանական գոտիները չեն համարվում Համաշխարհային բացառիկ արժեք, նրանք սերտորեն կապված են առաջադրված հուշարձանի պաշտպանության, պահպանության և կառավարման հետ: Համաշխարհային բացառիկ արժեք համարվելու համար անհրաժեշտ ատրիբուտներն ու առանձնահատկությունները պետք է ներառվեն առաջադրված հուշարձանի սահմանների մեջ, այլ ոչ թե առաջարկվեն որպես պահպանական գոտու մի մաս:

Չնայած պահպանական գոտին չի համարվում Համաշխարհային ժառանգության հուշարձանի մաս, պահպանական գոտու սահմանները պաշտոնապես նշվում են հուշարձանի գրանցման կամ Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի կողմից փոփոխությունները հաստատելու ժամանակ: Պահպանական գոտին հանդիսանում է անդամ պետության պարտավորությունների անբաժան մասը հուշարձանի պաշտպանության, պահպանության և կառավարման տեսանկյունից: Որպես այդպիսին պահպանական գոտին պետք է հանդիսանա հուշարձանի ընդհանուր կառավարման համակարգի մաս և պետք է հստակեցվի, թե ինչպես են հուշարձանների կառավարման համար պատասխանատու անձինք մասնակցելու կամ ներազդելու որևէ պահպանական գոտում իրականացվող գործունեության կառավարմանը:

Պահպանական գոտու սահմանման գործընթացը հնարավորություն է տալիս շահագրգիռ կողմերին ներգրավել հուշարձանի ընկալման ձևավորման մեջ և համատեղ աշխատել դրա երկարաժամկետ պաշտպանության, պահպանության և կառավարման ուղղությամբ:

Պահպանական գոտիները կարող են լինել չեզոք տարածքներ, որոնք չունեն որևէ որակական կապ առաջադրված հուշարձանի հետ: Մյուս կողմից, դրանք կարող են լինել ֆիզիկական կամ այլ առանձնահատկություններ (օրինակ՝ տնտեսական, իրավական, գործառնական, տեսողական կամ բնապահպանական) ունեցող տարածքներ, որոնք կապ ունեն առաջադրված հուշարձանի հետ: Նրանք կարող են ֆիզիկապես մոտիկ գտնվել հուշարձանին և նշանակալի դեր խաղալ առաջադրված տարածքի ներսում և դրսում գտնվող կարևոր բնապատկերների սահմանման համար: Նրանց գործառույթները կարող են ներառել հուշարձանի հիմք հանդիսացող ավելի լայն բնական համակարգի պաշտպանությունը (օրինակ՝ գետի ջրհավաք) կամ այցելուների հոսքի կառավարումն ու արդյունաբերական օգտագործումը (օրինակ՝ դեպի հուշարձան տանող մոտակա ճանապարհների և պարկերի ներգրավումը):

Այսպիսով, պահպանական գոտու առանձնահատկություններն ու արժեքները չեն ներառվում Համաշխարհային բացառիկ արժեքի գնահատման մեջ, սակայն կարող են հաշվի առնվել առաջադրված հուշարձանի՝ ամբողջականության, իսկության, պաշտպանության և կառավարման պահանջներին համապատասխանության գնահատման ժամանակ:

Պետք է հաշվի առնել, թե արդյո՞ք հուշարձանի հարակից տարածքները ընկալելի և հեշտ բացատրելի են, թե՞ անհրաժեշտ է հավելյալ աշխատանք կատարել դրանք սահմանելու համար:

Պահպանական գոտու սահմանների վրա ազդող գործոնները հետևյալն են՝
- պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի առանձնահատկությունները,
- հուշարձանի կառավարման պահանջները,
- հայտնի կամ նախատեսվող վտանգների կամ ազդեցությունների բնույթը,
- դեպի հուշարձան կամ հուշարձանի կողմից բացվող կարևոր տեսարանները,
- պոտենցիալ պահպանական գոտու առկա առանձնահատկությունները,
- պոտենցիալ պահպանական գոտու սեփականությունը, ռեսուրսների օգտագործումը, կառավարումը և պաշտպանությունը (ներառյալ օրենսդրությունը):

Պահպանական գոտիների համար կարող են նախատեսված լինել մի շարք գործառույթներ, օգտագործման կամ գործունեության եղանակներ, որոնք տարբերվում են հուշարձանի ներսում գործող տարբերակներից:

Մինչդեռ մշակութային հուշարձանների պահպանական գոտիները հաճախ սահմանվում են տեսողական ազդեցության հիման վրա, գոյություն ունեն պահպանական գոտի ընտրելու նաև այլ հիմքեր կամ ազդեցության լծակներ:

Ինչպես հուշարձանի սահմանների ընտրության դեպքում, այնպես էլ պահպանական գոտու սահմանի ընտրության դեպքում պետք է ներկայացվի բացահայտ հիմք կամ բացատրություն՝ հուշարձանի արժեքի պաշտպանության, պահպանության և կառավարման տեսանկյունից: Այդ հիմնավորումը պետք է ներկայացվի անվանակարգային փաթեթի պաշտպանման ենթակա հուշարձանների բաժնում: Պետք է հստակեցվի պահպանական գոտու և հուշարձանի միջև գործառույթի, ծավալի, պաշտպանության, պահպանության և կառավարման հարաբերությունները: Պահպանական գոտու և հուշարձանի պաշտպանությունը, պահպանությունն ու կառավարումը պետք է ամբողջական լինեն: Երբ պահպանական գոտու և հուշարձանի պաշտպանությունը, պահպանությունն ու կառավարումը բաժանված են տարբեր գործակալությունների միջև, պետք է նշվի այդ գործակալությունների պարտականություններն ու դրանց միջև համագործակցության համակարգումը:

Չնայած պահպանական գոտու գաղափարը առաջ է եկել որպես Համաշխարհային ժառանգության հուշարձանի պաշտպանության միջոց, որը ներառում է նաև սահմանափակումներ. լավ կազմակերպված պահպանական գոտիները կարող են կարևոր դեր ունենալ՝ նպաստելով տեղական համայնքներին կամ այլոց՝ կապված արժեքների պաշտպանության, պահպանության ու կառավարման հետ, ինչպես նաև խրախուսելով կայուն օգտագործումը: Պահպանական գոտիները կարող են ներառել ֆերմային տարածքներ կամ հանդիսանալ տուրիստական գործունեության վայր, օրինակ՝ սննդի օբյեկտ կամ կացարան, որը կղեկավարվի տեղական համայնքի կողմից: Այս փաստը պետք է նշվի անվանակարում:

Բացի այդ, պահպանական գոտիները կարող են կարևոր դեր խաղալ սոցիալական, մշակութային կամ տնտեսական փոխանակման հարցում, որը շատ կարևոր է հուշարձանի և դրա արժեքի գոյատևման համար: Պաշտպանությունը, պահպանությունն ու կառավարումը պետք է լինեն լավ կազմակերպված՝ աջակից գործընթացներն ապահովելու համար: Միևնույն ժամանակ, պահպանական գոտիները չպետք է անհիմն կերպով մեկուսացնեն հուշարձանը դրա սոցիալական, մշակութային և տնտեսական համատեքստից՝ վերածելով պահպանական գոտին «թանգարանի» կամ տուրիստական գոտու:

Պահպանական գոտիներ սահմանելիս պետք է հաշվի առնել հետևյալ քայլերը: Դրանց հերթականությունը կարող է տարբերվել:
- վերլուծել հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը, ամբողջականությունն ու բնույթը՝ արտաքին գործոնները և հարաբերությունները հայտնաբերելու նպատակով,
- վերլուծել պոտենցիալ դրական հնարավորությունները՝ պահպանական գոտում առավել արդյունավետ պաշտպանություն, պահպանություն ու կառավարում սահմանելու և դրա օգտագործումից օգուտ ստանալու նպատակով,

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առանց պաշտպանության կամ պաշտոնական ճանաչման պահպանական գոտին անարդյունավետ է:

• հաշվի առնել պահպանական գոտու կիրարկման հետ կապված իրավական դրույթները, ինչպիսիք են ազգային իրավունքը և տեղական օրենսդրությունը /կանոնակարգերը,
• ապահովել պահպանական գոտու գործառույթների արդյունավետ իրականացում և մեխանիզմներ,
• սահմանագծել պահպանական գոտին՝ հիմնվելով այս վերլուծությունների և նկատառումնե–րի վրա՝ մասնավորապես հենվելով արտաքին վտանգներից հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանության վրա (սերիական հուշարձանների համար կարիք կլինի սահմանել տարբեր պահպանական գոտիներ հուշարձանի տարբեր բաղադրիչ մասերի համար):

Եթե պահպանական գոտու պաշտպանության միջոցները դեռևս չեն նախաձեռնվել համապատասխան մակարդակի պաշտպանություն ապահովելու համար՝ անհրաժեշտ ժամանակը կարող է ազդել անվանակարգման գործընթացի և ներկայացման ժա–մանակացույցի վրա:

Պահպանական գոտիներն արդյունավետ են, եթե հայեցակարգն արդեն ներառված է հուշարձանի տարածքը կարգավորող օրենսդրության մեջ: Հետևաբար, ցանկալի է, որ անդամ պետությունները քայլեր ձեռնարկեն, որպեսզի իրենց իրավական համակարգերում ներդնեն պահպանական գոտիների հայեցակարգը, եթե այն դեռ գոյություն չունի:

Մինչդեռ, պահպանական գոտիները հանդիսանում են առաջադրված հուշարձանի հարակից տարածքի հավելյալ պաշտպանություն ապահովելու կարևոր հանգամանք, ավելի լայն տարածքների պաշտպանության համար անհրաժեշտ են այլ մեխանիզմներ: Կա նաև պահպանման այլ գործիքների հետ համաձուլման հնարավորություն, ինչպես օրինակ՝ կոնվենցիաներ, ժառանգության հավելյալ պաշտպանությունն ապահովող ծրագրեր և նախաձեռնություններ:

Երբ հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը ստորգետնյա է, այդ հուշարձանների պահպանական գոտիները ենթարկվում են այլ կարգավորման: Նման դեպքերում հնարավոր է չլինի պահպանական գոտու անհրաժեշտությունը:

Նախադեպ

Պահպանական գոտիներ

Մեխիկոյի ազգային ինքնավար համալսարանի կամպուս *(համալսարանական քաղաք) (Մեքսիկա)*

Մեխիկոյի ազգային ինքնավար համալսարանի կամպուսի շենքային համալիրը, սպորտային երթակառուցվածքները և բացօթյա տարածքները կառուցվել են 1949-1952 թվականների ընթացքում նախագծում ներգրավված ավելի քան 60 ճարտարապետների, ինժեներների և արվեստագետների կողմից: Արդյունքում, հանրակացարանային շինությունը ուր–բանիզացիան արտացոլող 20-րդ դարի մոդեռնիզմի, ճար–տարապետության, ինժեներիայի, լանդշաֆտային դիզայնի և կերպարվեստի վառ օրինակ է, որը փոխանցում է տեղական ավանդույթները, մասնավորապես՝ մինչև իսպանական գաղութացումը: Շենքային համալիրը ներառում է հա–մաշխարհային նշանակություն ունեցող սոցիալական և մշա–կութային արժեքներ և համարվում է Լատինական Ամերիկայի արդիականության ամենակարևոր օրինակներից մեկը:

Այս դեպքում պահպանական գոտին վերանայվել է՝ շրջապատող տարածքին ավելի արդյունավետ պաշտպանություն ապահովելու նպատակով:



©ՅՈՒՆԵՍԿՕ / Ա.Սամսոնյան

Աղբյուրը՝ անվանակարգի ֆայլ

Նախադեպ

Համբերսթոնի և Սանտա Լաուրայի սելիփրայի արտադրությունը *(Չիլի)*

Պահպանական գոտու նախնական սահմանները համարվել էին չափազանց սխեմատիկ և պահանջ էր ներկայացվել վերանայել սահմանները՝ հաշվի առնելով հուշարձանի լաղշաֆտը:



© ՅՈՒՆԵՍԿՕ/Ջիովաննի Բոկիարդի

Հուանգշան լեռ *(Չինաստան)*

Հուանգշան լեռան պահպանական գոտին պաշտպանում է հուշարձանը և կանխարգելում կամ մեղմում է արտաքին ազդեցությունը մի շարք գործոնների շնորհիվ՝ միգրացիոն միջանցք է ապահովում վայրի կենդանիների համար, սահմանափակում է վտանգ ներկայացնող որոշակի հողատարածքներ, ապահովում է տուրիստական ենթակառուցվածքներ, և աջակցում է Համաշխարհային ժառանգության հուշարձանից դուրս գտնվող այլ տեսարժան վայրերի կառավարումը՝ նվազեցնելով ազդեցությունը հուշարձանի վրա:

Կրակ դե Շեվալյե և Քալաաթ Սալահ էլ-Դին *(Սիրիայի Արաբական Հանրապետություն)*

Սալադինի ամրոցի դեպքում պահպանական գոտին ընդլայնվել է հովտի ողջ երկայնքով՝ հաշվի առնելով տարածքի պոտենցիալ հնագիտական նշանակությունն ու ճոպան կառուցելու որոշումը:

Սանտ Կիլդա *(Միացյալ Թագավորություն)*

Կղզիների ֆիզիկական մշակութային ժառանգության համար հենց ծովն է հանդիսանում պաշտպանիչ տարածք, այդ իսկ պատճառով պաշտոնապես հաստատված հավելյալ պահպանական գոտու անհրաժեշտություն չի առաջանում:

Կուկի վաղ գյուղատնտեսական բնակավայր
(Պապուա Նոր Գվինեա)

Պահպանական գոտին գտնվում է հուշարձանի միայն երկու կողմերում: Այն նախատեսված է պաշտպանելու հուշարձանի հոսանքի վերին մասի հիդրոլոգիան և դրա հնագիտական մասունքները:



Աղբյուրը՝ անվանակարգի ֆայլ

Ընդարձակ միջավայր

Բացի հուշարձանից և պահպանական գոտուց կարևոր է դիտարկել նաև ավելի լայն տարածություն՝ հուշարձանի ընդարձակ միջավայրը: Որոշ հուշարձանների համար ընդարձակ միջավայրն այն տարածքն է, որը կարող է կարևոր լինել հուշարձանի վիզուալ առանձնահատկությունների կամ ատրիբուտների համար:

Ինչպես նշված է, ընդարձակ միջավայրը կարող է նաև կարևոր դեր ունենալ հուշարձանի իսկությունն ու ամբողջականությունը պահպանելու հարցում:

Հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի վրա բացասաբար ազդող ընդարձակ միջավայրում առկա զարգացման կամ փոփոխման օրինակներից են վիզուալ երևացող այնպիսի տարրեր, ինչպիսիք են բարձր շենքերը և քամու էլեկտրակայանները: Դրանք կարող

են բավական հեռու գտնվել հուշարձանից, սակայն բացասաբար ազդել հուշարձանի ընկալման վրա դրա միջավայրի հետ առնչության պատճառով:

Որոշ դեպքերում ընդարձակ միջավայրն ու պահպանական գոտին կարող են համընկնել, այլ դեպքերում ընդարձակ միջավայրն ավելի ընդգրկուն է: Անհրաժեշտ է տրամադրել ընդարձակ միջավայրի ընդգրկուն ծածկույթի հիմնավորում, չնայած, որ դա պաշտոնապես չի պահանջվում Գործառնական ուղեցույցով:

Այս թեմայի վերաբերյալ օգտակար հղումների ցանկը ներառում է ժառանգության կառույցների, տեսարժան վայրերի և տարածքների շրջակա միջավայրի պահպանության մասին Սիանի հռչակագիրը (ԻԿՕՄՈՍ, 2005b).

Ընդարձակ միջավայրի ընդգրկուն ծածկույթը պետք է նշված լինի քարտեզի կամ քարտեզների վրա՝ որպես անվանակարգային փաթեթի մի մաս և պետք է ներկայացվի անվակարգման նկարագրություն բաժնում:

Նախադեպ

Հուշարձանի միջավայրի հետ կապված խնդիրներ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԻԿՕՄՈՍ-ի մոնիթորինգի առաքելությունը Էդինբուրգի հին և նոր քաղաքներում
(Միացյալ Թագավորություն)

Համաշխարհային ժառանգության կենտրոնի փորձագետները և ԻԿՕՄՈՍ-ը 2008 թվականին նախաձեռնել են արագ մոնիթորինգի առաքելություն՝ 1995 թվականին Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Էդինբուրգի հին և նոր քաղաքների վրա ազդող զարգացման ծրագրերն ուսումնասիրելու նպատակով:

Առաքելությունը, որի նախաձեռնողը Համաշխարհային ժառանգության հանձնաժողովն էր, կենտրոնացել էր մասնավորապես Կալթոնգեյթ ծրագրի մշակման վրա:

Փորձագետները վերանայել են Էդինբուրգի հին և նոր քաղաքների ընդհանուր իրավիճակը՝ հաշվի առնելով դրանց պահպանման վիճակը լայն քաղաքային համատեքստում, ինչպես նաև ամբողջականությունն ու իսկությունը: Նրանք ուսումնասիրել են նաև, թե ինչպես են առկա շինարարական ծրագրերը՝ ներառյալ բարձրահարկ կառույցներն ազդում Համաշխարհային բացառիկ արժեքի վրա, այն բացառիկ հատկությունների, ինչի շնորհիվ հուշարձանը հայտնվել է Համաշխարհային ժառանգության ցանկում:

Ազգային և տեղական իշխանությունների, հասարակությունների, կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ միասին փորձագետները վերանայել են պատմական քաղաքային տարածքի լանդշաֆտը պաշտպանելու միջոցները: Բացի Կալթոնգեյթից փորձագետները վերանայել են նաև Լեյթ Դոկսի, Սանթ Ջեյմս կենտրոնի, Հայմարկեթի և այլ ուրվագծային նախագծերի ազդեցությունը հուշարձանի վրա: Առաքելությունը քննարկել է նաև պահպանման և կառավարման հնարավորությունները:

Համաշխարհային ժառանգության այս հուշարձանը նշանավորվեց 15-րդ դարում Էդինբուրգի՝ Շոտլանդիայի մայրաքաղաք դառնալու շնորհիվ: Համաշխարհային ժառանգության հանձնաժողովը առանձնացրեց երկու տարբեր տարածքներ՝ Հին քաղաքը՝ միջնադարյան բերդի գերիշխանությամբ, և նեոդասական ոճի Նոր քաղաքը, որի զարգացումը 18-րդ դարից ի վեր մեծ ազդեցություն է ունեցել եվրոպական քաղաքային պլանավորման վրա: Բազմաթիվ կարևոր շինություններ ունեցող այս երկու հակապատկեր պատմական տարածքների ներդաշնակ համադրությունը հաղորդում է քաղաքին իր առանձնահատուկ բնույթն ու Համաշխարհային բացառիկ արժեքը:

© ՅՈՒՆԵՍԿՕ / Ֆ. Բանդարին

Պահպանվածության առկա վիճակը. վտանգներ կամ ազդեցություններ

Առաջադրված հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի համար առկա վտանգները կամ ազդեցությունները պետք է առանձնակի հաշվի առնվեն գնահատման գործընթացի ժամանակ: Գործառնական ուղեցույցում նշված են չորս նման գործոններ՝ զարգացում, բնապահպանություն, բնական աղետներ և այցելուներ /տուրիզմ: Համապատասխանաբար, առաջադրված հուշարձանի պահպանվածության վիճակի մասին տեղեկատվությունը պետք է լինի իրատեսական, հիմնավորված, առանց չափազանցության կամ թերագնահատման: Օրինակ՝ հուշարձանի լավ վիճակի մասին պնդումները պետք է արտացոլեն իրականությունը, և էական վտանգները չպետք է անտեսված կամ նվազեցված լինեն: Բացի այդ, իրավիճակը հասկանալու համար անհրաժեշտ է տեսնել միտումները. լավ և բարելավվող վիճակը էապես տարբերվում է լավ և վատթարացող վիճակից: Առաջադրված հուշարձանն այցելող-գնահատող առաքելության հիմնական խնդիրն է ստուգել և հայտնել վտանգների մասին, ինչպես նաև հայտնաբերել չնշված վտանգների ապացույցներ:

Վտանգների մասին տեղեկատվությունը պետք է ներառի միայն այն վտանգները, որոնք տվյալ հուշարձանի դեպքում կարելի է կանխատեսել կամ սպասել, կամ նրանք, որոնք արդեն հանդիպել են: Անհավանական վտանգներն, օրինակ, հարկավոր չէ նշել:

Այդուհանդերձ, վտանգների մասին անհրաժեշտ է տրամադրել հստակ և ազնիվ տեղեկատվություն: Խնդիր են հանդիսանում գրանցված այն հուշարձանները, որոնք առաջադրման պահին չեն գրանցում որևէ վտանգ, սակայն քիչ ժամանակ անց արձանագրվում են որոշակի վտանգներ: Այդ պատճառով Համաշխարհային ժառանգության կենտրոնին հարկավոր է տեղեկացնել գնահատման գործընթացի ժամանակ ի հայտ եկող ցանկացած նոր զարգացման նախագծերի կամ այլ փոփոխությունների մասին:

Պաշտպանություն

Առաջադրված հուշարձանները պետք է ունենան լավ իրավական և/կամ ավանդական պաշտպանություն: Լավ կլիներ, եթե հուշարձանն ունենար հնարավոր լավագույն պաշտպանությունը տրված իրավասության մեջ կամ համատեքստում, իսկ երբեմն էլ ներառեր օրենսդրական կամ այլ պաշտպանության շերտեր:

Իրավական կամ ավանդական պաշտպանությունն իրար բացառող մեխանիզմներ չեն և հաճախ հաջող կերպով աշխատում են միասին՝ բազմաշերտ պաշտպանություն ապահովելու նպատակով: Շատ դեպքերում անհրաժեշտ է իրականացնել իրավական պաշտպանություն՝ ավանդական պաշտպանության համար համապատասխան և հիմնավոր համատեքստ ապահովելու նպատակով, մասնավորապես, երբ առկա են վտանգներ:

Բավարար պաշտպանություն չունեցող առաջադրված հուշարձանը չի կարողանա ներառվել Համաշխարհային ժառանգության ցանկում:

Հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքն արտահայտող շոշափելի և ոչ նյութական հատկանիշների սահմանումը հիմնարար նշանակություն ունի հուշարձանի պատշաճ պաշտպանության, պահպանության և կառավարման ապահովման համար, քանի որ այդ հատկանիշներն են, որ պետք է պաշտպանված լինեն՝ հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը պահպանելու նպատակով:

Օգտակար հարցերն են՝
- Արդյո՞ք հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը կպահպանվի, թե՞ կամրապնդվի պաշտպանության միջոցով:
- Արդյո՞ք պաշտպանությունը երկարաժամկետ է:
- Ավանդական պաշտպանության դեպքում, արդյո՞ք պաշտպանության համայնքային մեխանիզմներն ապահով են:
- Արդյո՞ք պաշտպանությունն ապահովված է բոլոր անհրաժեշտ մակարդակներով (օր.՝ ավանդական, տեղական, տարածաշրջանային, ազգային):
- Արդյո՞ք հուշարձանը պաշտպանված է զարգացումներից կամ փոփոխություններից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ արժեքների, ամբողջականության կամ իսկության վրա:
- Արդյո՞ք պաշտպանական միջոցառումներն արդյունավետ են իրականացվում:
- Արդյո՞ք պաշտպանությունը պարբերաբար ստուգվում /վերահսկվում է՝ դրա արդյունավետությունը գնահատելու նպատակով:
- Արդյո՞ք պաշտպանության կազմակերպումը լիովին ինտեգրված է պահպանման և կառավարման ընդհանուր կառուցվածքում:

ՀԻՇԵԼԻ ԿԱՄՈՒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանությունը պետք է արդյունավետ լինի:

3 Հուշարձանների առանձնահատկությունների սահմանումը և ընկալումը

Պաշտպանությունը պետք է կիրառվի ինչպես հուշարձանի, այնպես էլ պահպանական գոտու նկատմամբ, թեև տարբեր տարածքներում կարող են օգտագործվել տարբեր մոտեցումներ: Հուշարձանի արժեքի պաշտպանությունը չպետք է իրականացվի պահպանական գոտում գտնվող ցանկացած ժառանգության հուշարձանի հաշվին:

Անհրաժեշտ է նաև պաշտպանել և կառավարել ընդարձակ միջավայրի կարևոր վիզուալ հատկանիշները:

Անհրաժեշտ է վերլուծել անհրաժեշտ պաշտպանության բավարար մակարդակի առկայությունն անվանակարգի նախապատրաստման գործընթացի վաղ փուլերում: Սա պայմանավորված է նրանով, որ անհրաժեշտ պաշտպանության կազմակերպումը կարող է զգալի ժամանակ պահանջել (օրինակ՝ նոր օրենսդրության մշակում), և դա կարող է ազդել առաջադրման նախապատրաստման ժամկետների վրա:

Նախադեպ

Ավանդական պաշտպանություն – մշակութային հուշարձան – Ասկիայի դամբարան *(Մալի)*



© Մալիի մշակութային ժառանգության ազգային տեսչություն / Թիերրի Ֆրոյ

17 մետրանոց Ասկիայի դամբարանի բրգաձև շինությունը կառուցվել է 1495 թվականին Սոնգհայի կայսր Մոհամմեդ Ա Ասկիայի կողմից մայրաքաղաք Գաոյում: Այս հուշարձանը 15-րդ և 16-րդ դարերում ծաղկունք ապրած կայսրության ուժի, զորության և հարստության վկայություն է, որը ծաղկել է տրանսսահարյան առևտրի՝ հիմնականում աղի և ոսկու առևտրի վերահսկողության շնորհիվ: Դա հանդիսանում է նաև արևմտյան աֆրիկյան Սահելի կավաշեն ավանդական հուշահամալիրի հիանալի օրինակ:

Համալիրը, որը ներառում է բրգաձև դամբարան, հարթ տանիքով երկու մզկիթի շենք, մզկիթի գերեզմանոց և բացօթյա հավաքատեղի, կառուցվել է այն ժամանակ, երբ Գաոն դարձավ Սոնգհայի կայսրության մայրաքաղաքը և երբ Մուհամմեդ Ասկիան վերադարձավ Մեքքայից և իսլամը հռչակեց կայսրության պաշտոնական կրոն:

Հուշարձանն ապահովված է արդյունավետ ավանդական պաշտպանությամբ: 2002 թվականից ի վեր հուշարձանի կառավարումը գտնվում է Գաոյի պրեֆեկտի կողմից ստեղծված ասոցիացիայի հսկողության ներքո: Այդ ասոցիացիան բաղկացած է հիմնական շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից, որոնք են իմամները, մուեզզինները (նամազի կանչող հոգևորականները), Գաոյի Արվեստի և մշակույթի տարածաշրջանային գործակալության ներկայացուցիչները և մշակութային ժառանգության պաշտպանության տարածաշրջանային և տեղական հանձնաժողովները:

Նախադեպ

Ավանդական պաշտպանություն – բնության հուշարձան – Արևելյան Ռեննելլ *(Սողոմոնյան կղզիներ)*



© ՅՈՒՆԵՍԿՕ/Ս.Ս. Տաքեասում

1Արևելյան Ռեննելլը Սողոմոնյան կղզիների խմբի ամենահարավային կղզին է, որը գտնվում է Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում: Այն աշխարհում խոշորագույն բուսակղզին է, որի չափերը կազմում են 86 կմ երկարություն և 15 կմ լայնություն: Հուշարձանն ունի մոտ 37 հազար հա տարածք և երեք ծովային մղոնի շառավղով հարակից ջրի տարածք: Կղզու հիմնական առանձնահատկությունը Տեգանո լիճն է, որը նախկինում եղել է բուսակղզու ծովածոց: Լիճը ամենախոշոր ջրային տարածքն է ամբողջ Օվկիանիայում (15,500 հեկտար), ունի աղի ջուր, շատ ժայռային կրաքարային կղզիներ և էնդեմիկ տեսակներ: Ռեննելլը հիմնականում ծածկված է խիտ անտառներով, որոնք կազմում են 20 մետր բարձրությամբ հովանոց: Հաճախակի ցիկլոնների ազդեցությանը ենթարկված հուշարձանը գերազանց բնական գիտական լաբորատորիա է: Այն գտնվում է սովորական հողօգտագործման և կառավարման տակ:

Կառավարում

Համաշխարհային ժառանգության հուշարձանի կառավարման հիմնական թիրախն են այն առանձնահատկություններն ու ատրիբուտները, որոնք կապված են կամ ներկայացնում են հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը: Կառավարման նպատակն է ապահովել, որ հուշարձանի արժեքը, իսկությունն ու ամբողջականությունը ապագայում պահպանված լինեն ատրիբուտների կառավարման միջոցով: Համապատասխանաբար, Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը կառավարման առանցքային կետն է:

Հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի կառավարումը պետք է իրականացվի համապարփակ ձևով, որը նույնպես կարևոր է ողջ հուշարձանի պահպանման համար և կապված է դրա բոլոր արժեքների հետ:

Առաջադրված հուշարձանները պետք է ապացուցեն, որ ունեն համապատասխան կառավարման պլան կամ փաստաթղթավորված կառավարման համակարգ, որը որոշում է իրենց կառավարման կազմակերպումը: Եթե նշվածներից ոչ մեկը առկա չէ, կարևոր է ստեղծել իրատեսական ժամանակացույց նրանց զարգացման համար, որը կարող է ազդել առաջադրման ժամանակացույցի վրա: Պահպանական գոտու և հուշարձանի միջավայրի համար պետք է նախաձեռնվեն համապատասխան կառավարման միջոցառումներ:

Առաջադրման պահին բավարար կառավարում չունեցող հուշարձանի ներկայացումը կարող է խնդիրներ առաջացնել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելիս:

Գործառնական ուղեցույցը պարունակում է այնպիսի դրույթ, որտեղ նշվում է, որ անվանակարգը կարող է ընդունվել առանց կառավարման պլանի կամ փաստաթղթավորված համակարգի լիարժեք շահագործման (կետ 115): Այդուհանդերձ, դա ցանկալի չէ: Կառավարման պլանի կամ փաստաթղթավորված համակարգի առկայությունը բարձրացնում է անվանակարգի հաջողության հնարավորությունը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կառավարման պլանը /համակարգը պետք է արդյունավետ լինի:

Գոյություն չունի հստակ նախապատվություն կառավարման պլանի կամ կառավարման համակարգի համար, և որոշ դեպքերում երկուսն էլ հնարավոր տարբերակ են: Հիմնական խնդիրը կառավարման պլանի կամ համակարգի արդյունավետությունն ու հասանելիությունն է: Որոշ մշակույթներում, օրինակ, կառավարման պլանները, մեծ մասամբ կիրառելի չեն, և դրանց արդյունավետությունը հիմնականում անորոշ կլինի: Այնուամենայնիվ, համապատասխան կառավարման համակարգը կարող է հաջողությամբ գոյություն ունենալ և լիովին հարմար լինել հուշարձանի կառավարման համար:

Այլ մշակույթներում կառավարման պլանները լայն տարածում գտած մեխանիզմներ են և պետք է իրականացվեն:

Հուշարձանի կառավարումը պետք է ունենա միջին և երկարաժամկետ հեռանկարում հուշարձանի կառավարման իրատեսական տեսլականը՝ ներառյալ այն փոփոխություններն ու խնդիրները, որոնք կարող են առաջանալ հուշարձանի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելուց: Նման փոփոխություններն ու խնդիրները կարող են նշանակալի լինել:

Կառավարման պլանները և փաստաթղթավորված կառավարման համակարգերը պետք է ներկայացվեն որպես փորձարկված և ստուգված միջոցներ, այլ ոչ թե մնան թղթի վրա՝ հետագայում իրականացվելու ակնկալիքով: Անվանակարգի հիմնական բաժինների (ինչպես, օրինակ, պահպանվածության վիճակը և մոնիթորինգը) և հուշարձանի կառավարման պլանում նշված տեղեկատվության ու ծրագրերի միջև սերտ կապ պետք է լինի:

Առանցքային նշանակություն ունի առաջարկվող փոփոխությունների ազդեցությունը գնահատելու, տնտեսական զարգացման և միջամտության մեխանիզմի ստեղծումը որպես կառավարման պլանի կամ համակարգի մաս:

Երբեմն հուշարձանի կառավարումը հիմնված է մի քանի կառավարման պլանների կամ փաստաթղթավորված կառավարման համակարգերի վրա: Կարևոր է ցույց տալ, որ այս տարբեր ծրագրերը կամ համակարգերը ապահովում են համապարփակ կամ լրացուցիչ ու արդյունավետ կառավարման արդյունքներ, որոնք վերաբերում են պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքին: Այս իրավիճակը հաճախ ծագում է այն ժամանակ, երբ հուշարձանի, դրա պահպանական գոտու և ընդլայնված միջավայրի կառավարումն իրականացվում է տարբեր կազմակերպությունների կողմից կամ, երբ մի քանի տեղական իշխանություններ են մասնակցում կառավարման գործընթացին:

Զբոսաշրջության կառավարումը հաճախ Համաշխարհային ժառանգության հուշարձանների հիմնական խնդիրն է՝ հաշվի առնելով նման վայրեր այցելելու մարդկանց հետաքրքրվածությունը, հաճախելիության բարձր մակարդակը և հուշարձանի և այլ տուրիստական վայրերի մասին

տեղեկատվություն տրամադրելու անհրաժեշտությունը: Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի գրանցման ազդեցությունը այցելուների թվաքանակի վրա կարող է տարբեր լինել և յուրաքանչյուր դեպքում պետք է կանխատեսել առանձին:

Զբոսաշրջության կառավարումը պետք է համահունչ լինի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանությանը, պահպանմանն ու կառավարմանը և պետք է համարվի անվանակարգի մի մաս: Շատ դեպքերում հուշարձանների համար մշակվում է առանձին տուրիստական կառավարման պլան՝ ինտեգրված ընդհանուր հուշարձանի կառավարման պլանի կամ համակարգի հետ: Նման տուրիստական կառավարման պլանները պետք է իրականացվեն և լինեն արդյունավետ:

Բնության հուշարձանների համար IUCN-ը մշակել է առանձին ձեռնարկ Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման պլանի ձևավորման վերաբերյալ (IUCN, 2008a): ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնը և Խորհրդատվական մարմինները Համաշխարհային ժառանգության տեղեկատվական ուղեցույցների շարքի շրջանակներում նախատեսում են հրատարակել մշակութային հուշարձանների համար ուղեցույց:

Անհրաժեշտ է որոշակի ժամանակ համապատասխան պլանները կամ փաստաթղթերը իրագործելու, ինչպես նաև այդ աշխատանքը նախքան առաջադրումը ներկայացնելու համար: Այս նպատակին հասնելու գործընթացը կարող է զգալի ազդեցություն ունենալ առաջադրման նախապատրաստման ժամանակացույցի վրա: Նախքան առաջադրման ներկայացումը կառավարման միջոցառումների ներդրումը մեծ նշանակություն ունի ինչպես հուշարձանի պաշտպանության, այնպես էլ բոլոր սեփականատերերի և շահագրգիռ կողմերի համար:

Օգտակար հարցեր՝
• Արդյո՞ք կառավարման պլանը /համակարգը հստակեցնում է, թե ինչպես է պահպանվելու հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը պաշտպանության ու պահպանության միջոցառումների շնորհիվ:
• Արդյո՞ք կառավարման պլանը /համակարգը գործնականում արդյունավետ է պահպանման ոլորտում համապատասխան արդյունքի հասնելու առումով:
• Մի քանի պլանների կամ համակարգերի առկայության դեպքում, արդյո՞ք դրանք ամբողջական են, թե՞ օժանդակ՝ դրական արդյունքների հասնելու առումով:
• Արդյո՞ք կառավարման պլանը կամ համակարգն առավելություն ունի պլանների կամ համա–կարգերի այլ տեսակների նկատմամբ (օրինակ՝ տուրիստական, զարգացման կամ տարա–ծաշրջանային տնտեսական պլաններ):
• Արդյո՞ք շահագրգիռ կողմերն ունեն հուշարձանի ընկալման ընդհանուր գաղափարներ:
• Արդյո՞ք կառավարման պլանը /համակարգը ներառում է պլանավորման, իրականացման, մո–նիթորինգի, գնահատման և հետադարձ կապի փուլեր:
• Արդյո՞ք դիտարկվում և գնահատվում են միտումների, փոփոխությունների և առաջարկվող միջամտությունների ազդեցությունները:
• Արդյո՞ք կայուն զարգացման սկզբունքներն ինտեգրված են կառավարման գաղափարում:
• Արդյո՞ք կառավարման պլանը /համակարգը ներառում է շահագրգիռ կողմերին, մասնա–վորապես՝ հուշարձանի սեփականատերերին և կառավարիչներին և արդյո՞ք այդ պլանին / համակարգին աջակցում են:
• Արդյո՞ք կառավարման պլանը /համակարգը պատշաճ կերպով ապահովված է ռեսուրսներով՝ ինչպես տվյալ պահին, այնպես էլ հետագայում:
• Արդյո՞ք առկա է պատշաճ ֆինանսավորում և բիզնես պլանավորում առաջադրված հուշարձանի ներկա և ապագա կարիքները բավարարելու համար:
• Արդյո՞ք պլանը /համակարգն ունի կարողությունների զարգացման համապատասխան հիմք:
• Արդյո՞ք պլանը /համակարգը տրամադրում է համակարգի իրական գործառույթների մասին թափանցիկ նկարագրություն:
• Արդյո՞ք կառավարման պլանն ապահովում է ռիսկերի պատրաստվածության պատշաճ մակարդակ:
• Արդյո՞ք կառավարման համակարգը լիովին ինտեգրված է հուշարձանի պահպանության հետ:

Այս համատեքստում շահագրգիռ կողմերը կարող են ներգրավել տեղացիներին, բնիկներին, հուշարձանի սեփականատերերին և կառավարիչներին, բոլոր մակարդակներում պետական կառույցներին, առևտրային կառույցներին՝ ներառյալ զբոսաշրջային ընկերություններն ու հասարակական կազմակերպությունները:

Սերիական կամ անդրսահմանային /անդրազգային անվանակարգի դեպքում, առաջին հերթին պետք է ապահովել յուրաքանչյուր բաղադրիչի համապատասխան պաշտպանության և կառավարման միջոցներն ու արդյունավետ աշխատանքը: Բացի այդ, հուշարձանի մակարդակով պետք է ստեղծվի կառավարման համակարգ՝ բոլոր բաղադրիչ մասերի միջև տեղեկատվության փոխանակումն ու համակարգումն ապահովելու նպատակով: Մասնավորապես դա ներառում է՝
• բոլոր բաղադրիչ մասերի կառավարման ներդաշնակեցումը՝ Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանման միասնական նպատակներին հասնելու համար,
• սպառնալիքների հայտնաբերումը և դրանց հակազդեցությունը,

• մոնիթորինգի և հաշվետվությունների համակարգումը՝ հատկապես, երբ վերաբերում է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի պահանջներին:
Սերիական կամ անդրսահմանային /անդրազգային կառույցների կառավարման համակարգը պետք է պարբերաբար վերանայվի և, հնարավորության դեպքում, ամրապնդվեն համակարգման մեխանիզմները՝ Համաշխարհային ժառանգության հուշարձանի կառավարման համահունչությունն ու արդյունավետությունը բարձրացնելու և դրա բաղադրիչ մասերի վրա ազդող փոփոխություններին արձագանքելու նպատակով:

Պետք է հստակեցվի, թե ինչպես հասնել առանձին բաղադրիչների համակարգված կառավարմանը՝ հատկապես, երբ ներգրավված են տարբեր կառավարիչներ և կառավարման համակարգեր: Համակարգված կառավարումը պետք է լինի արդյունավետ:

Հարկավոր չէ ստեղծել հուշարձանի կառավարման հատուկ մարմին, եթե առկա կառավարման պլանները կամ համակարգերը պատշաճ կերպով գործում են:
Այնուամենայնիվ, եթե գոյություն ունեցող մեխանիզմներն անբավարար են, ապա կպահանջվեն նոր հատուկ մեխանիզմներ, որոնք պետք է արդյունավետ լինեն:

Նախադեպ

Սյուլի -սյուլ-Լուարի և Շալոնի միջև ընկած Լուար հովիտը *(Ֆրանսիա)*

© ՅՈՒՆԵՍԿՕ / Սերգեյ Ն. Վորոնցով

Լուարի հովիտը բացառիկ և գեղեցիկ մշակութային լանդշաֆտ է, որը ներառում է պատմական քաղաքներ և գյուղեր, հոյակապ ճարտարապետական հուշարձաններ՝ ամրոցներ, մշակված հողեր, որոնք դարեր շարունակ ձևավորվել են տեղի բնակչության և ֆիզիկական միջավայրի փոխազդեցության գործընթացում, մասնավորապես՝ հենց Լուարա գետի ազդեցությամբ:

1994թ. Ֆրանսիայի կառավարությունը որոշեց իրականացնել Լուարի հովտի համակարգված պլանավորման և կառավարման 10-ամյա ծրագիրը (Plan LoireGrandeur Nature): Այս ծրագիրը նախատեսում է շրջակա միջավայրի պաշտպանությունը և այդ տարածքի տնտեսական զարգացումը: Այն իրականացվում է համապատասխան կառույցների և հաստատությունների հետ սերտ համագործակցությամբ, օրինակ՝ տարածքային համայնքների, տնտեսական գործակալությունների և ասոցիացիաների հետ: Բացի այդ, հուշարձանի գնահատման ընթացքում ստացված առաջարկություններին ի պատասխան ստեղծվել է Վերահսկիչ կոմիտե՝ տեղանքի կառավարումը վերահսկելու նպատակով, որը ներառում է բոլոր պետական մարմինների և հաստատությունների ներկայացուցիչներին:

Անվանակարգային փաթեթ՝ որպես հուշարձանի կառավարման ներդրում Կառավարում

Բացի հուշարձանի՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու ժամանակ անհրաժեշտ փաստաթղթային հաստատման գործառույթից, անվանակարգը կարող է նաև նպաստել առաջադրված հուշարձանի ընթացիկ ղեկավարմանը:
Դրա համար գոյություն ունեն հետևյալ պատճառները՝
• Առաջադրումը ներառում է տեղեկություններ հուշարձանի վիճակի մասին, ինչպես նաև հետագա պաշտպանության, կառավարման և մոնիթորինգի մի շարք պարտավորություններ,
• Համաշխարհային ժառանգության կարգավիճակը կարող է փոխել կամ որոշակի առավելություններ ապահովել հուշարձանի համար, այնպես որ նման կարգավիճակի ստացման հետևանքները պետք է հստակ նշվեն առաջադրման ժամանակ, օրինակ՝ կապված այցելությունների հաճախակիության կամ զբոսաշրջիկների աճի հետ,
• առաջադրումը և առաջարկվող կառավարման միջոցները կքննարկվեն գնահատման գործընթացում: Հնարավոր է, որ առաջարկվեն որոշակի փոփոխություններ հուշարձանի կամ դրա կառավարման համակարգում, որը պետք է քննարկել և համաձայնեցնել անդամ պետության և տարբեր շահագրգիռ կողմերի հետ,
• Համաշխարհային ժառանգության հուշարձանի կարգավիճակի ձեռքբերման հնարավորությունը կարող է լինել շահագրգիռ կողմերին հուշարձանի կառավարման և պաշտպանության մեջ ներգրավելու հզոր միջոց՝ հատկապես, եթե նրանք կարողանան հնարավոր օգուտ քաղել նման մասնակցությունից: Նմանապես, որոշ շահագրգիռ կողմեր կարող են ընկալել Համաշխարհային ժառանգության կարգավիճակի ստացումը որպես սպառնալիք, և նրանց տեսակետերն ու կասկածները պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն առաջադրման մշակման ժամանակ, և
• առաջադրման ժամանակ կներկայացվեն հիմնական բազային տվյալներ, որոնց հիման վրա ապագայում կարող է գնահատվել հուշարձանի պահպանվածության վիճակը:

Մոնիթորինգ

Լավ կառավարման անբաժանելի մաս է հանդիսանում մի շարք առանցքային գործոնների մոնիթորինգը, որոնք թույլ կտան գնահատել հուշարձանի ներկա իրավիճակը, պահպանվածության վիճակն ու ակնկալվող ապագան:

Մոնիթորինգը արժեքավոր տեղեկություններ է տալիս հուշարձանի կառավարչին. այն ցույց է տալիս, որ հուշարձանի պաշտպանությունը, պահպանումը և կառավարումը հասնում է իր նպատակներին կամ պետք է կատարվեն փոփոխություններ: Համաշխարհային ժառանգության հուշարձանի մոնիթորինգը պետք է կենտրոնացած լինի Համաշխարհային բացառիկ արժեքի վրա՝ ներառյալ ամբողջականությունը, պաշտպանությունն ու կառավարումը, ինչպես նաև մշակութային հուշարձանների իսկությունը:

Կրկին նշենք, որ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը շատ կարևոր է մոնիթորինգի համար:

Առաջադրումների ժամանակ հաճախ անբավարար ուշադրություն է դարձվում մոնիթորինգին:

Համաշխարհային ժառանգության համակարգը ներառում է նաև պաշտոնական պարբերական հաշվետվություն, որի պահանջների համաձայն յուրաքանչյուր վեց տարին մեկ գրանցված հուշարձանների համար կազմակերպվում է մոնիթորինգ (տես՝ Գործառնական ուղեցույց, մաս V): Հուշարձանի համար լավ մշակված մոնիթորինգի համակարգը կօգնի պարբերական հաշվետվության հարցում:

Անվանակարգման փաթեթը պետք է ներառի հիմնական ցուցանիշներ, որոնք կօգտագործվեն մի շարք գործոնների չափման և գնահատման համար՝ ներառյալ հուշարձանի պահպանվածության վիճակը: Այս ցուցանիշները պետք է կապված լինեն հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը փոխանցող ատրիբուտների հետ, որպեսզի ապահովեն այդ ատրիբուտների պաշտպանությունը, պահպանումը և կառավարումը՝ հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքն ապահովելու նպատակով:

Մոնիթորինգը պետք է իրականացվի կանոնավոր հիմունքներով՝ հուշարձանի բնույթին համապատասխանող ժամանակացույցի համաձայն: Մոնիթորինգի կանոնավորությունը կախ–ված է ատրիբուտների կայունությունից կամ փխրունությունից և դրանց՝ փոփոխությունների ենթարկվելու ճկունությունից:

Կարևոր է, թե ով է իրականացնում մոնիթորինգը, քանի որ դա կարող է ազդել մոնիթորինգի արդյունքների իրական կամ ակնհայտ հավաստիության վրա: Ընդհանուր առմամբ, մոնիթորինգը ավելի հավաստի կլինի, եթե իրականացվի թափանցիկ, անկախ փորձագետների կողմից:

Օգտակար հղում՝ Համաշխարհային ժառանգության մոնիթորինգ, Համաշխարհային ժառան–գության փաստաթղթեր 10 (ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն / ԻԿԿՌՕՄ, 2004):

Բնության հուշարձանների համար մշակվել են արդյունավետ կառավարման մի շարք փաստաթղթեր, որոնք կարող են օգտակար լինել մոնիթորինգ անցկացնելիս: Դրանցից են՝ Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը, Գնահատելով կառավարման արդյու–նավետությունը Համաշխարհային բնության ժառանգության հուշարձանների համար, (Հոքինգզ և այլք, 2008): Գոյություն ունեն նաև ավելի մատչելի փաստաթղթեր, որոնք նույնպես կիրառելի են: Անհրաժեշտության դեպքում IUCN-ը կարող է խորհրդատվություն տրամադրել այս հարցով:

3.2 Լրացուցիչ խորհուրդներ

Հաջողված անվանակարգային փաթեթների և գործընթացների ուսումնասիրություն

Առաջադրման գործընթացն սկսելուց առաջ օգտակար կլիներ ուսումնասիրել հաջողված հուշարձանների անվանակարգային փաթեթների օրինակներ: Ցանկալի է ուսումնասիրել վերջին շրջանի փաթեթներ, քանի որ չափանիշներն ու սպասելիքները ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվել: Միևնույն ժամանակ, օգտակար կլինի ուսումնասիրել նաև նմանատիպ հուշարձանների օրինակներ:

Ուղղակիորեն համեմատելի հուշարձանների փաթեթները պետք է ուշադիր ուսումնասիրվեն՝ որպես համեմատական վերլուծության մի մաս (տես 67–73 էջերը):

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անվանակարգային այլ փաթեթների և գործընթացների օրինակները կարող են օգտակար լինել:

1998 թվականից ի վեր գրանցված հուշարձանների փաթեթները հասանելի են հետևյալ հղումներով՝
• http://whc.unesco.org/en/list / (անգլերեն կայքէջ)
• http://whc.unesco.org/fr/list / (ֆրանսերեն կայքէջ)

Բացի փաթեթի ուսումնասիրությունից, ուսումնասիրեք նաև խորհրդատու մարմնի եզրակացությունը՝ փաթեթի որակի, դրա ուժեղ և հնարավոր թույլ կողմերի մասին կարծիք կազմելու նպատակով: Այդ եզրակացությունները նույնպես հասանելի են վերոնշյալ հղումներում:

Բացի նշված փաստաթղթերից, առաջադրման գործընթացը կազմակերպելու վերաբերյալ արդյունավետ տեղեկատվություն հնարավոր է ստանալ նաև այլ անդամ պետություններից: Կարող են շահավետ լինել նաև վերջերս հաջող անվանակարգեր պարտաստած անդամ պետությունների ներկայացուցիչների հետ քննարկումները:

Հարկ է նշել, որ պետք չէ հաջողված անվանակարգերի կամ առաջադրման գործընթացների օրինակները միանշանակ ընդունել որպես առաջարկվող անվանակարգի նմուշ: Յուրաքանչյուր առաջադրում կամ անդամ պետություն ունի իր հատուկ պայմանները կամ հանգամանքները, որոնց արդյունքում ձևավորվում է հատուկ անվանակարգ կամ գործընթաց, ինչը հնարավոր չէ վերցնել որևէ այլ տեղից:

4 Անվանակարգային փաթեթի շարադրումն ու նախապատրաստումը

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության մշակումից, հուշարձանի ամուր և պաշտպանված սահմանների հաստատումից, պաշտպանությունը, պահպանությունն ու կառավարումն ապահովելուց և շահագրգիռ կողմերից անվանակարգի պատրաստման համաձայնությունը ստանալուց հետո սկսում է երկրորդ փուլը՝ անվանակարգային փաթեթի պատրաստումը:

4.1 Հիմնական խորհուրդներ

Ո՞վ պետք է շարադրի անվանակարգը

Շատ կարևոր է, որ անվանակարգը լինի պարզ և հստակ՝ նպատակի, տեղեկատվության, փաստարկների և եզրակացությունների տեսանկյունից: Անվանակարգը գրելու նպատակով փորձագետի ներգրավումը կարող է դիտարկվել որպես Համաշխարհային ժառանգության ցանկի մեջ ընդգրկվելու ամենաարագ և ամենահեշտ միջոց: Նման մոտեցումը կաշխատի այն դեպքում, եթե փորձագետը տեղեկացված է հուշարձանի և Համաշխարհային ժառանգության թեմաներից, սակայն դա չի հանդիսանում լավ անվանակարգի պատրաստման պարտադիր պահանջ:

Այն դեպքում, եթե հուշարձանները մի քանիսն են, անվանակարգի վրա համատեղ աշխատող տեղական անձնակազմի փորձը՝ դրսի մասնագետների հսկողության ներքո, կարող է տալ երկարաժամկետ և զգալի արդյունքներ: Այդ արդյունքները ներառում են հուշարձանի արժեքը, կարիքները, խոչընդոտներն ու հնարավորությունները հասկանալու կարողություն, ինչպես նաև հուշարձանի պաշտպանության, պահպանության և կառավարման ապահովություն՝ դրա՝ Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցման ներկայացնելու պահից ի վեր: Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցված հուշարձանների համար կան ակնհայտ առավելություններ, որոնք ի հայտ են գալիս տեղի աշխատանքային խմբի ձևավորման արդյունքում, որի անդամները քաջատեղյակ են հուշարձանի արժեքներից, պաշտպանության, պահպանման և կառավարման պահանջներից:

Անվանակարգը պետք է գրվի հստակ և սահուն՝ անգլերենով կամ ֆրանսերենով: Եթե անվանակարգը շարադրող անձը կամ թիմը լավ չեն տիրապետում այդ երկու լեզուներից ոչ մեկին, ապա խելացի կլինի շարադրել անվանակարգը մայրենի լեզվով և այնուհետև վերջնական աշխատանքը թարգմանել անգլերեն կամ ֆրանսերեն: Վատ թարգմանված անվանակարգերը կարող են խնդիրներ առաջացնել գնահատման ժամանակ:

Օգտակար կլինի ստեղծել մայրենի լեզվով եզրույթների բառարան՝ թյուրըմբռնումներից խուսափելու նպատակով:

Անվանակարգի նպատակը

Համաշխարհային ժառանգության անվանակարգն, ըստ էության, հանդիսանում է Համաշ–խարհային ժառանգության կարգավիճակ ստանալու պաշտոնական դիմումի ձև: Դա պաշտո–նական փաստաթուղթ է, որը համապատասխան անդամ պետության կամ անդրազգային անվանակարգի դեպքում՝ երկուսից ավելի անդամ պետությունների կողմից ներկայացվում է ՅՈՒՆԵՍԿՕ:

Անվանակարգային փաթեթի նպատակն է հնարավորինս հստակ սահմանել՝

- հուշարձանի բաղկացուցիչ մասերն ու դրա փաստաթղթավորման ձևը,
- դրա պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի հիմնավորումը,
- պահպանվածության վիճակը և հուշարձանի վրա ազդող գործոնները,
- հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի հետ կապված՝ դրա պաշտպանության, պահպանության, կառավարման, ներկայացման և մոնիթորինգի միջոցները:

Անվանակարգը հանդիսանում է հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ներառելու համար գնահատման և Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի կողմից Համաշխարհային ժառանգության ցանկում դրա ընգրկման հիմքը:

Անվանակարգի պատրաստման գործողությունների հերթականությունը

Անվանակարգի պատրաստման գործողությունների հերթականությունը կամ հաջորդականությունը շատ կարևոր է: Շատ կարևոր է պահպանել այդ հերթականությունը, քանի որ այն ինտերակտիվ գործընթաց է, որը ներառում է շարունակական հաղորդակցություն և շահագրգիռ կողմերի մասնակցություն՝

- իրականացնել համապատասխան հետազոտություն,
- կատարել համեմատական վերլուծություն,
- պատրաստել Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը՝ ներառյալ չափորոշիչները, իսկությունն ու ամբողջականությունը,
- սահմանել համապատասխան ատրիբուտները,
- որոշել համապատասխան սահմանները,
- պատրաստել նկարագրությունը,
- պատրաստել հուշարձանի պատմությունը,
- լրացնել անվանակարգային ձևաչափի մնացյալ մասերը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անվանակարգի բոլոր բաժինները պետք է կապ ունենան Համաշխարհային բացառիկ արժեքի հետ:

Գործառնական ուղեցույցի կողմից անվանակարգային փաթեթների համար պահանջվող ձևաչափի հերթականությունը միշտ չէ, որ անվանակարգի նախապատրաստման առավել տրամաբանական ձևն է և կարող է հանգեցնել չափազանց երկար փաթեթների մշակմանը, որտեղ պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի հիմնավորումն ու չափորոշիչների ներկայացումը կլինեն ամենաանբավարար մասերը:

Անվանակարգային փաթեթի որոշ մասեր ավելի հեշտ է լրացնել, քան մյուսները, և հաճախ դրանք ստանում են առավել ուշադրություն: Օրինակ՝ նկարագրության և պատմության մասերը սովորաբար երկար են, քանի որ բավականին հեշտ է գտնել և պատրաստել համապատասխան տեղեկատվություն:

Անվանակարգի պատրաստման հիմնական կառուցվածքի առաջարկվող հաջորդականությունը:



Այդուհանդերձ, երբեմն այս բաժինները ոչ բավարար չափով են անդրադառնում պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքին, միգուցե նաև այն պատճառով, որ լրացվում են նախքան այդ արժեքների սահմանումը: Ինտերակտիվ մոտեցումը չափազանց կարևոր է: Օրինակ՝ պատմական հետազոտությունը հնարավոր է իրականացնել նախքան արժեքների սահմանումը, սակայն այնուհետև հնարավոր է կարիք առաջանա վերանայել պատմության նկարագրությունը՝ արժեքների հետ կապը համապատասխանեցնելու նպատակով:

Ինչպես նշված էր վերևում, խորհուրդ է տրվում նախ սահմանել պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը, այնուհետև լրացնել արժեքներին վերաբերող մնացյալ բաժինները: Նկարագրության մասը պետք է ներկայացնի Համաշխարհային բացառիկ արժեք փոխանցող ֆիզիկական ատրիբուտները, իսկ պատմության բաժինը բացատրի, թե ինչպես է հուշարձանը ձեռք բերել այդ ատրիբուտները և արժեքը:

Ամփոփ նկարագիր

Յուրաքանչյուր անվանակարգային փաթեթի առաջին մասն ամփոփ նկարագիրն է: Սա փաթեթի կարևոր բաղադրիչներից է, որը շարադրում է անվանակարգի հիմնական միտքը:

Սույն ձեռնարկի Մաս 3-ում նշված խնդիրներն իրականացնելուց հետո՝ առնվազն նախնական մակարդակով, այդ ինֆորմացիան օգտագործեք ամփոփ նկարագրի նախագիծ գրելու համար: Խորհուրդ է տրվում ամփոփ նկարագրի մասը պատրաստել նախապես՝ անվանակարգային փաթեթը գրելու ընթացքում, որպեսզի այն հիմնական գաղափարները, որոնք նպատակ ունի փոխանցել անվանակարգը, հստակ շարադրվեն: Սա կօգնի, որպեսզի փաթեթի մեջ թիրախավորված լինեն կարևոր խնդիրները:

Անվանակարգի պատրաստման ընթացքում ամփոփ նկարագրի մասը կարող է փոփոխու–թյունների ենթարկվել նոր տեղեկատվության կամ եզրակացությունների հիման վրա: Եվ կրկին, սա կօգնի թիրախավորել գործընթացը:

Ամփոփ նկարագրում ներկայացված տեղեկատվությունը պետք է համապատասխանի անվանակարգի հիմնական տեքստում ներկայացված տեղեկատվությանը:

Անվանակարգային փաթեթի ներկայացում

Անվանակարգը պետք է՝
- հստակորեն սահմանի հուշարձանի առաջարկվող սահմանները,
- նկարագրի հուշարձանը,
- ներկայացնի հուշարձանի պատմությունը,
- ցուցադրի կարևորությունը և ներկայացնի, թե ինչու է հուշարձանը համարվում Համաշխար–հային բացառիկ արժեք,
- ցուցադրի, թե ինչպես հուշարձանը կարող է բավարարել մեկ կամ մի քանի չափորոշիչների,
- բացատրի հուշարձանի պահպանվածության վիճակը և դրա փաստաթղթավորման և մոնիթորինգի գործընթացը,
- հստակեցնի, թե ինչպես է դրա պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը պահպան–վելու երկարաժամկետ հեռանկարում օրենսդրական պաշտպանության և դրա արժեքը փոխանցող ատրիբուտների կառավարման միջոցով, ինչպես նաև՝ ով է ներգրավված լինելու այդ գործընթացում,
- ինչպես է հուշարձանի արժեքը ներկայացվելու և մեկնաբանվելու այցելուների և այլ անձանց համար:

Անվանակարգային փաթեթի երկարությունն ու բարդությունը դեռ չեն ապացուցում դրա որակն ու նպատակաուղղվածությունը: Անվանակարգային փաթեթը ճիշտ նպատակին ծառայելու համար պետք է լինի թիրախավորված, սակայն ոչ շատ երկար: Երկար անվանակարգերը հաճախ կարող են լինել անարդյունավետ և բավարար չափով չկենտրոնանալ հուշարձանի ներկայացման վրա: Պետք չէ նաև չարաշահել դիզայնի, նկարների և տպագրության հարցում: Կարիք չկա մշակել հատուկ փաթեթավորում:

Անվանակարգային փաթեթի թիրախը պետք է լինի դրա բովանդակությունը, ոչ թե արժեքավոր և վառ ներկայացումը: Այդուհանդերձ, փաթեթի հատուկ դիզայնը կօգնի ընթերցողին ավելի արագ հասկանալ այն և արագ կողմնորոշվել բաժինների մեջ:
Փաթեթը հնարավորինս հասանելի դարձնելու համար խորհուրդ է տրվում մանրամասն նյութը

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օգտակար կարող է լինել այլ անվանակարգային փաթեթերի և գործընթացների օրինակների ուսումնասիրությունը:

ներկայացնել կից հավելվածներում, իսկ հիմնական գաղափարները ներկայացնել հիմնական տեքստում՝ առանց դրանք ավելորդ մանրամասներով ծանրաբեռնելու: Հիմնական տեքստում կարելի է հղում կատարել հավելվածի մանրամասն տեղեկության վրա: Այնուամենայնիվ, անվանակարգային փաթեթի հիմնական տեքստում պետք է տրամադրվեն հակիրճ և բովանդակային պատասխաններ, այլ ոչ թե միանշանակ հղումներ տալ հավելվածներին: Հավելվածները նույնպես պետք է ընտրել այնպես, որ դրանք պարունակեն անվանակարգին վերաբերող տեղեկատվություն: Հարկավոր չէ հավելվածներում զետեղել շատ ոչ պետքական տեղեկատվություն, ուղղակի պետք է ընտրել այն հիմնական նյութը, որն անհրաժեշտ է անվանակարգում նշված տեղեկատվությունը լրացնելու համար: Մեծ քանակությամբ ոչ անհրաժեշտ հավելվածները ավելի դժվարացնում են գնահատման գործընթացը և խոչընդոտում են պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ հստակ փաստարկների ներկայացմանը:

Անվանակարգային փաթեթ պատրաստողները պետք է հստակ կենտրոնանան հիմնական գաղափարների վրա՝ ինչ է իրենից ներկայացնում հուշարձանը, ինչու այն ունի Համաշխարհային բացառիկ արժեք և ինչպես այդ արժեքը պետք է պաշտպանվի, պահպանվի, կառավարվի և ներկայացվի: Այդ հիմնական գաղափարները չպետք է կորչեն չափազանց մանրամասն տեղեկատվության պատճառով:

Համաձայն Գործառնական ուղեցույցի պետք է ներկայացնել անվանակարգի մի քանի պատճեններ՝ կախված հուշարձանի տեսակից (տես պարագրաֆ 132.10). Ամեն դեպքում, էլեկտրոնային և թղթային տարբերակները պետք է լինեն նույնական, նույնիսկ եթե դրանցից մեկը համարվում է բնօրինակ: Պատճենի մեկ տարբերակ ուղարկվում է Համաշխարհային ժառանգության կենտրոն, մյուս տարբերակները բաժանվում են խորհրդատվական մարմիններին գնահատման համար, և շատ կարևոր է, որպեսզի դրանց մեջ զետեղված տեղեկատվությունը լինի նույնական: Գործառնական ուղեցույցում հստակ ցուցումներ են տրված նաև փաթեթի ձևաչափի մասին (տես պարագրաֆ 132):

Անվանակարգի ավարտն ու պաշտոնական ստորագրումը պետք է հրապարակայնորեն նշել և չվերաբերվել դրան որպես սովորական տեխնիկական աշխատանքի:

Ստորև ներկայացված են հավելյալ առաջարկներ:

Տպագրված փաստաթղթեր

• Փաստաթղթերը պետք է լինեն տպագրված, դասավորված ստանդարտ ձևաչափով: Եթե ունեք որևէ կասկածներ, ցանկալի է նախապատվությունը տալ հասարակ և հստակ դասավորությանը և օգտագործել տառատեսակների սահմանափակ քանակություն:
• Հնարավորության դեպքում օգտագործեք նկարներ և դիագրամներ՝ հուշարձանը և դրա խնդիրները ներկայացնելու նպատակով: Ընտրեք այնպիսի պատկերներ, որոնք հստակ են ներկայացնում հուշարձանը, դրա արժեքները, ամբողջականությունն ու կառավարման խնդիրները:
• Ընտրեք պատկերների մի խումբ, որը ցույց է տալիս հուշարձանի բոլոր ասպեկտներն ու, հնարավորության դեպքում, խուսափեք կրկնությունից:
• Փաստաթղթերը պետք է ներկայացվեն անգլերենով կամ ֆրանսերենով: Լավ կլինի, եթե վերջնական փաստաթուղթը ստուգվի լեզուների լավ իմացությամբ մեկի կողմից՝ դրա դյուրըմբռնելիության և հստակության մեջ վստահ լինելու համար:
• Համաշխարհային ժառանգության անվանակարգի ձևաչափը նախատեսված չէ հրապարակային կամ հանրային օգտագործման համար, քանի որ այն տեխնիկական բնույթ ունի: Այդ պատճառով խորհուրդ է տրվում, որպեսզի գրանցումից հետո անվանակարգի փաստաթղթերը համալրվեն նաև ավելի հանրային նյութերով:
• Հիշե՛ք, որ առաջնահերթ են համարվում անվանակարգում ներկայացված պատճառների և փաստարկների որակը, այլ ոչ թե դրա ներկայացումը: Գեղեցիկ կազմով ներկայացված թույլ փաստարկները միևնույն է համարվում են թույլ:
• Որոշ անվանակարգեր ներկայացվում են հատուկ մշակված արկղերով: Չնայած փաթեթավորումը պրակտիկորեն հարմար է, սակայն կարևոր է ոչ թե փաթեթավորման, այլ պարունակության որակը:
• Տպագրեք բավականաչափ անվանակարգային փաստաթղթեր, որպեսզի դրանք բավարարեն բոլոր շահագրգիռ կողմերին:

• Անվանակարգային փաստաթղթերը պետք է հնարավորինս տարածվեն տեղական շահագրգիռ կողմերի շրջանակում և պետք է լինեն հասանելի: Ցանկալի է շահագրգիռ կողմերին պատճենները տրամադրել անվճար, սակայն նույնիսկ գին սահմանելու դեպքում, այն պետք է լինի մատչելի և հասանելի համապատասխան շահագրգիռ կողմերի համար:
• Անվանակարգային փաստաթղթի անվճար տարբերակ տրամադրելը փաթեթի մշակման մեջ իրենց ներդրումն ունեցած անձանց շնորհակալություն հայտնելու լավ միջոց է:
• Անվանակարգի տպաքանակը սովորաբար սկսում է մինչև հարյուր օրինակից և հասնում մինչև մի քանի հազար օրինակ: Կախված շահագրգիռ կողմերի և այլ հետաքրքրված կողմերի պահանջներից՝ ճիշտ կլինի սպասել մինչև Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի որոշումը, այնուհետև նոր ձեռնարկել լայնածավալ տպագրություն: Այդուհանդերձ, անվանակարգի աշխատանքներն ավարտելուց հետո անհրաժեշտ կլինի առնվազն մի քանի օրինակ:

Էլեկտրոնային փաստաթղթեր

• Յուրաքանչյուր անվանակարգի համար պահանջվում է դրա էլեկտրոնային տարբերակը՝ հավելվածները ներառյալ:
• Էլեկտրոնային տարբերակը պետք է ստեղծվի թղթային տարբերակի հիման վրա, և ձևաչափն ու էջակալումը պետք է լինեն նույնական: Էլեկտրոնային և թղթային տարբերակների տեղեկատվությունները պետք է լինեն նույնական:
• Խորհուրդ է տրվում ներկայացնել Microsoft Word կամ Adobe PDF ձևաչափով տարբերակներ:
• Անվանակարգային փաթեթը սովորաբար վերանայվում է բազմաթիվ փորձագետների կողմից Խորհրդատվական մարմինների կողմից իրականացվող գործողությունների շրջանակում: Սա նշանակում է, որ այդ փորձագետներին պետք է տրամադրել օրինակներ, հաճախ՝ էլեկտրոնային տարբերակով: Այդ պատճառով՝ էլեկտրոնային փաստաթղթերի որակը պետք է բավարար լինի, որպեսզի փորձագետները կարողանան ուսումնասիրել նկարների կամ քարտեզների մանրամասները: Վատ որակի պատկերները անիմաստ են: Կասկածի դեպքում կցեք ամենաբարձր որակի պատկերները, մասնավորապես՝ քարտեզների կամ պատմական պատկերների դեպքում:
• Մյուս կողմից, հաշվի առեք ֆայլի չափը և խուսափեք անիմաստ մեծ չափերի նկարներ օգտագործելուց: Համապատասխանեցրեք պատկերը փաստաթղթի չափերին /շատ մեծ, բարձր որակ ունեցող նկարներ սովորաբար չեն տեղադրվում A4 ֆորմատի փաստաթղթերում/: Փոքրացրեք նաև փաստաթղթի ծավալը՝ PDF ֆորմատում հասանելի հնարավորության միջոցով: Եթե կան նկարներ, որոնք պետք է ներկայացվեն բարձր որակով և մեծ ծավալով, կցեք դրանք առանձին՝ որպես հավելվածներ: Եթե ֆայլը շատ մեծ և ծանր է ստացվում, խորհուրդ է տրվում պատրաստել երկու տարբերակ՝ առաջին տարբերակ՝ առանց նկարների և ևս մեկը՝ նկարներով: Եթե ներկայացնում եք միայն տեքստային տարբերակը, ապա պատկերները (քարտեզները ներառյալ) կցեք որպես առանձին ֆայլեր:
• Խուսափեք արտասովոր տառատեսակից, եթե հնարավոր չէ դրանք ներառել փաստաթղթում: Այդ տառատեսակները կարող են որոշ համակարգիչներով չերևալ:
• Ցանկալի է ստեղծել ինտերնետային կայքէջ Համաշխարհային ժառանգության անվանակարգի էլեկտրոնային տարբերակ ունենալու նպատակով:
• Ցանկացած հավելյալ տեղեկատվություն պետք է ձայնագրվի սկավառակի վրա:

Հավելվածներ

• Առաջադրման հիմնական փաստաթուղթը պետք է կարողանա հստակ ներկայացնել գրանցման փաստարկները, ինչպես նաև հուշարձանի ամբողջականության, իսկության, պաշտպանության և կառավարման վերաբերյալ բոլոր հիմնական պահանջները: Օգտակար կլինի նաև հավելյալ տեղեկատության ներառումը հավելվածներում: Սակայն հավելվածներ օգտագործելիս պետք է ուշադիր լինել և հիմնական տեղեկությունները զետեղել առաջադրման հիմնական փաստաթղթում՝ հստակ և որակյալ շարադրանքով: Հիմնական տեղեկությունները պետք է ներառված լինեն հիմնական փաստաթղթում, ոչ թե հավելվածներում:
• Պետք է խուսափել հավելյալ տեղեկատվություն պարունակող շատ մեծ հավելվածներից: Խորհուրդ է տրվում հավելվածներում ներառել միայն այն տեղեկատվությունը, որն իրոք լրացնում է անվանակարգում գրված նյութը: Մի՛ ավելացրեք փաստաթղթեր ուղղակի անվանակարգն ամբողջական դարձնելու նպատակով:
• Անվանակարգում պետք է հատուկ նշվի հավելվածներում ընդգրկված նյութի համապատասխանությունը: Խորհրդատվական մարմիններին հիմնականում հարմար չէ մեծ քանա–

կությամբ նյութեր փոխանցել գնահատողներին և վերանայողներին: Այդ պատճառով հիմ–նական տեղեկատվությունը պետք է հստակ նշվի հենց առաջադրման փաստաթղթի մեջ: Խորհրդատվական մարմինները չեն կարող գտնել այդ տեղեկությունները, եթե դրանք թաքնված են հավելվածներում:
• Հավելվածները նույնպես պետք է ներկայացվեն էլեկտրոնային տարբերակով:

Քարտեզներ

• Անվանակարգի մեջ տրամադրվող քարտեզների որակն ու պարզությունը շատ կարևոր է հուշարձանի մասին պատկերացում կազմելու համար: Քարտեզի վերաբերյալ պահանջները ներկայացված են 4.2 բաժնում:
• Բացի այդ, քարտեզների հետևյալ երկու օրինակներն օգնում են ցուցադրել, թե ինչ է անհրաժեշտ մշակութային և բնության հուշարձանների համար:

Անվանակարգերի ոչ լիարժեք և ոչ ամբողջական լինելու հիմնական պատճառը հուշարձանի իդենտիֆիկացման հետ կապված խնդիրներն են, մասնավորապես՝ կապված ներկայացված քարտեզների հետ, և շատ կարևոր է առանձնացնել պատշաճ քարտեզ ներկայացնելու վեց հիմնական պահանջներ՝
• Ընտրեք քարտեզի ճիշտ տեսակը՝ կախված ներկայացվող հուշարձանի կարգից, մեծ հուշարձանների համար ընտրեք տեղագրական քարտեզներ, իսկ փոքր հուշարձանների համար՝ փոքր:
• Սահմանային գծերը պետք է հնարավորինս բարակ լինեն, սակայն տեսանելի: Գույները չպետք է ծածկեն տեղագրական մասնիկները, իսկ սահմանները ցանկալի է հստակ ուրվագծել բարակ տեսանելի գծերով: Հիմնական քարտեզում պետք է ուրվագծված լինեն միայն ներկայացված հուշարձանի և պահպանական գոտու սահմանները (եթե այդպիսիք առկա են):
• Քարտեզը պետք է ունենա կոորդինատային ցանց կամ պետք է նշված լինեն որոշակի կետերի կոորդինատները:
• Կարևոր է ընտրել համապատասխան մասշտաբը: Բնության հուշարձանները և մշակութային լանդշաֆտները ցանկալի է ներկայացնել 1:50,000 մասշտաբով տեղագրական քարտեզով և կարևոր չէ, եթե ամբողջական հուշարձանի ներկայացման համար անհրաժեշտ է կցել մեկից ավելի քարտեզներ: Այլ մշակութային հուշարձանների համար լավագույն տարբերակը կադաստրային պլանն է: Առանձին հուշարձանների համար մասշտաբը չպետք է լինի ավելի պակաս, քան 1:2,000: Բացի այդ, յուրաքանչյուր քարտեզի վրա պետք է առկա լինի գծային և թվային սանդղակ:
• Քարտեզը պետք է ունենա հստակ նշումներ ներկայացված, առաջադրված հուշարձանի և դրա պահպանական գոտու (եթե առկա է) սահմանների վերաբերյալ (տես՝ երկրորդ կետը): Շփոթմունքից խուսափելու համար հիմնական քարտեզը չպետք է պարունակի այլ պահպանվող տարածքների մասին տեղեկություններ: Վերնագրի համար պետք է օգտագործել Գործառնական ուղեցույցում նշված տերմինաբանությունը: Մի՛ օգտագործեք «պաշտպանվող գոտի», «պահպանվող տարածք», «պատմական շրջան» և այլ եզրույթները:
• Ներկայացված քարտեզները և պլանները՝ ներառյալ վերնագրերը, պետք է լինեն անգլերենով կամ ֆրանսերենով:

ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Մշակութային հուշարձանի քարտեզ

Այս մտացածին օրինակի վրա կներկայացնենք մշակութային հուշարձանի ամենահասարակ տեսակը, որի սահմաններն անցնում են քաղաքային տարածքով: Քարտեզում հստակ նշված են առաջադրված հուշարձանը և դրա պահպանական գոտին: Չկան այլ պաշտպանվող գոտի նշող որևէ գծեր, ինչը կարող էր շփոթություն առաջացնել: Քարտեզի մասշտաբը (կադաստրային) սահմանները ցույց տվող բավականաչափ հաստ (չափազանց հաստ գիծը կորցնում է իր հստակությունը) գծերի հետ մեկտեղ բավականին հստակ է՝ հասկանալու, թե տրված կետը (շենքը, թաղամասը, փողոցը և այլն) ներկայացված սահմաններից ներս է, թե դուրս: Բացի այդ, առկա մասշտաբն ու համապատասխան սահմանմամբ («առաջադրված հուշարձան» և «պահպանական գոտի») լեզվով (քարտեզում օգտագործված լեզուն պետք է նույնական լինի անվանակարգում օգտագործված լեզվի հետ) հստակ վերնագիրը ապահովում են ներկայացված սահմանների պարզությունը: Եվ վերջապես, մինչդեռ կադաստրային

քարտեզներում անհրաժեշտ չէ կոորդինատային ուղու առկայությունը, մնացած բոլոր տեղագրական քարտեզներում այն անհրաժեշտ է:



Աղբյուրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ Համաշխարհային ժառանգության կենտրոն

Բնության հուշարձանի քարտեզ

Այս օրինակը վերաբերում է Ջեջու հրաբխային կղզուն և լավայի թունելներին (Կորեայի Հանրապետություն) և ներկայացնում է սերիական բնության հուշարձանի օրինակ: Տեղագրական քարտեզի վրա առկա են կոորդինատային ուղին, մասշտաբը, հստակ վերնագիրը, և սահմանները նշող գիծը շատ հաստ չէ, սակայն տեսանելի է: Շատ կարևոր է, որ տեղագրական տարրերը (օրինակ՝ ճանապարհները, գետերը, սարերը, գյուղերը և այլն) տեսանելի և ճանաչելի լինեն քարտեզի վրա: Սահմանները միշտ պետք է նշվեն գծերով, իսկ ներկայացված տարածքները չպետք է ներկված լինեն միագույն ներկով, որը կծածկի քարտեզի վրա նշված տեղագրական տարրերը:

Գեոմունորեում լավային թունելների համակարգը և դրա պահպանական գոտին

Աղբյուրը՝ Մշակութային ժառանգության ադմինիստրացիա, Կորեայի Հանրապետություն

Նշում. այս օրինակների չափը փոքրացվել է հատուկ այս ձեռնարկի համար: Անվանակարգային փաթեթում քարտեզները պետք է ներկայացվեն այնպիսի չափսերով, որ հնարավոր լինի հասկանալ մանրամասները:

Անվանակարգի պատրաստման և ներկայացման ժամանակացույց

Անվանակարգի շարադրումը սպասվածից ավելի երկար է տևում: Չնայած հասկանալի է, որ անվանակարգ ներկայացնելու որոշում ընդունելու պահից ի վեր բոլոր ներգրավվածները ցանկանում են այն հնարավորինս շուտ պատրաստել, սակայն անհրաժեշտ է ունենալ իրատեսական ժամանակացույց: Ինչպես նշվել էր վերևում, հարկավոր է անհրաժեշտ ժամանակ տրամադրել նախապատրաստական գործընթացներին՝ մինչև անվանակարգի շարադրանքը սկսելը: Շարադրելու ընթացքում համապատասխան ժամանակ պետք է հատկացնել խորհրդատվությունների, տեղեկատվության ստուգման, համապատասխան պատկերների և քարտեզների հավաքագրման համար:

Ի նկատի ունեցեք, որ համապատասխան պաշտպանություն, պահպանություն և կառավարում ապահովելու համար հավելյալ ժամանակ է անհրաժեշտ: Նույնը վերաբերում է նաև համեմատական վերլուծությանը. դրա համար չկա պատրաստի տեղեկատվություն, մասնավորապես՝ այլ երկրներում համադրելի հուշարձանների հետ կապված: Այս տեղեկատվության հավաքումը հավելյալ ժամանակ է պահանջում:

Պայմանական ժամանակ պետք է հատկացնել նաև մի շարք խնդիրներին, որոնք անսպասելի կարող են ծագել ընթացքում:

Խորհրդատվական մարմինները երբեմն նկատում են, որ անվանակարգերը հաճախ ներկայացվում են հապշտապ կերպով՝ առանց բոլոր տարրերը լիարժեք մշակելու: Սա է հիմնական պատճառը, որ ԻԿՕՄՕՍ-ը կամ IUCN-ը հետաձգում կամ հետ են ուղարկում անվանակարգը անդամ պետությանը՝ աշխատանքը համալրելու նպատակով: Նման դեպքերում անվանակարգը ներկայացնելու շտապողականությունը կարող է իրականում հետաձգել ցանկում գրանցման դրա հնարավորությունը:

Հիմնական նպատակն է ամեն ինչ ուղարկել միասին, այլ ոչ թե փուլերով: Չնայած հավելյալ նյութերը կարելի է նաև ուղարկել հիմնական նյութի ընդունումից հետո, սակայն դա պետք է անել խորհրդատվական մարմինների կողմից ստացված որևէ հարցմանն ի պատասխան կամ որևէ չնախատեսված իրավիճակում:

Ցանկալի է նաև անվանակարգերն ուղարկել մինչև վերջնաժամկետի լրանալու պահը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը անփոփոխ է: Անվանակարգերը կարող են ներկայացվել վերջնաժամկետից առաջ ցանկացած ժամանակ:

Գործառնական ուղեցույցում նշվում է, որ անդամ պետությունները կարող են կամավոր ներկայացնել անվանակարգերի նախնական տարբերակը Համաշխարհային ժառանգության կենտրոն՝ դրա ամբողջականության վերաբերյալ դիտողություններ ստանալու համար մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 30-ը (պարագրաֆ 127): Սա շատ լավ հնարավորություն է անդամ պետությունների համար ստուգել անվանակարգի ասպեկտները վերջնական ներկայացումից առաջ: Լավ պլանավորված առաջադրման գործընթացը պետք է ներառի այս քայլը: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի գնահատականը կրում է խորհրդատվական բնույթ և վերաբերում է անվանակարգի ամբողջականությանը: Դա չի վերաբերում հուշարձանի հնարավոր Համաշխարհային բացառիկ արժեքի կարգավիճակ ստանալու հնարավորությանը, որը գնահատվում է միայն IUCN և/կամ ԻԿՕՄՕՍ-ի կողմից վերջնական անվանակարգի ընդունումից հետո:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անվանակարգի պատրաստման համար նախատեսված անհրաժեշտ ժամանակը պետք է իրատեսական լինի:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մի՛ շտապեք ուղարկել անվանակարգը մինչև այն պատրաստ չլինի:

4.2 Անվանակարգի ձևաչափը

Համաշխարհային ժառանգության հանձնաժողովը հաստատել է Համաշխարհային ժառանգության անվանակարգի պաշտոնական ձևաչափը և անվանակարգը ներկայացնելիս պետք է հետևել այդ տեղեկատվության վերջին տարբերակին (տես Գործառնական ուղեցույցի 5-րդ հավելվածը): Ձևաչափը նախագծված է այնպես, որ հնարավորինս հետևողական տեղեկություններ տրամադրի Համաշխարհային ժառանգության հանձնաժողովին առաջադրված հուշարձանների մասին՝ համապատասխան չափորոշիչների շրջանակում: Պաշտոնական ձևաչափը ներառում է յուրաքանչյուր բաժնում անհրաժեշտ տեղեկատվության մասին մեկնաբանություններ:

Կարևոր է նշել, որ Համաշխարհային ժառանգության հանձնաժողովը կուսումնասիրի միայն այն անվանակարգերը, որոնք փաթեթի ներկայացման վերջնաժամկետին կհամարվեն ամբողջական: Այդ իսկ պատճառով IUCN-ի և/կամ ԻԿՕՄՕՍ-ի գնահատման համար ուղարկվում են միայն ամբողջական փաթեթները: Ոչ ամբողջական անվանակարգերը հետ են ուղարկվում անդամ պետություններին առանց հետագա քննարկման. դրանք պետք է ամբողջականացվեն

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուշադիր կարդացեք բացատրական մեկնաբանություններն ու լրացուցիչ առաջարկությունները:

և կրկին ներկայացվեն, որից առնվազն մեկ տարի հետո կրկին կվերանայվեն: Գործառնական ուղեցույցի 132-րդ մասի 5-րդ հավելվածը փաստում է, թե ինչ պետք է ներառի ամբողջական անվանակարգը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շատ կարևոր է, որպեսզի անվանակարգի բոլոր բաժինները լինեն ամբողջական:

Ձեռնարկի այս բաժինը ներկայացնում է Համաշխարհային ժառանգության անվանակարգի առկա ձևաչափի պատճենը, ինչպես նաև հիմնական բաժինները լրացնելու համար լրացուցիչ խորհուրդներ և հուշումներ
Անվանակարգի պաշտոնական ձևաչափի վերջին տարբերակը կարող եք գտնել Համաշխարհային ժառանգության կայքէջում (whc.unesco.or) կամ կարող եք կապվել Համաշխարհային ժառանգության կենտրոնի հետ:

Ամփոփ նկարագիր

Անդամ պետության ներկայացրած տեղեկատվությունը Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի կայացրած որոշումից հետո կթարմացվի քարտուղարության կողմից: Այնուհետև այն կվերադարձվի անդամ պետությանը՝ հաստատելով այն հիմքը, ինչի հիման վրա հուշարձանը գրանցվելու է Համաշխարհային ժառանգության ցանկում:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
		• Ամփոփագրում ներկայացված տեղեկատվությունը պետք է նույնական լինի անվանակարգի հիմնական մասում ներկայացված տեղեկատվության հետ: • Ամփոփագիրը պետք է ներկայացնի առաջադրված հուշարձանի և առաջադրման պատճառների մասին հստակ և հակիրճ նկարագրություն: • Այն պետք է լինի հստակ և հակիրճ՝ մեկից երեք էջի սահմաններում, և չպետք է ներառի երկար բացատրական տեքստեր: • Ամփոփագրի համար հարկավոր չէ գրել նոր տեքստ: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը պետք է նույնական լինի անվանակարգի 3b բաժնի հետ: Օրինակ, եթե այդ բաժինները հստակ շարադրված են անվանակարգում, կարիք չկա դրանք կրճատել Ամփոփագրի համար:
Անդամ պետություն		
Նահանգ, շրջան կամ մարզ		
Հուշարձանի անվանումը		
Աշխարհագրական կոորդինատները վայրկյանի ճշտությամբ		
Առաջադրված հուշարձանի սահման(ներ)ի տեքստային նկարագրություն		Անվանակարգի և տեքստային նկարագրության հետ ներկայացված քարտեզները պետք է միանշանակորեն ցույց տան հուշարձանի սահմանները և ցանկացած նշված պահպանական գոտի: Միշտ չէ, որ անհրաժեշտ է նկարագրել սահմանները ողջ երկայնքով, բայց պետք է տալ դրանց տեղակայման ընդհանուր նկարագիրը: Օրինակ՝ • Առաջադրված հուշարձանի սահմաններն են Ազգային պարկի /մշակութային տեղան–

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
		քապատկերի սահմանները «հուշարձանի անվանում»: 1-5 կմ երկարությամբ պահպանական գոտին շրջապատում է առաջադրված հուշարձանը լանդշաֆտի բնական հատկանիշների ուղղությամբ՝ գետ «անվանում» հարավ և հարավ-արևելքում, անտառային արգելոցի սահմանները հյուսիսում, և ջրափնյա գիծը մինչև ջրի ցածր մակարդակի նիշը արևմուտքում և հարավում: • Սերիական անդրազգային անվանակարգային հուշարձանի սահմաններն են՝ Ազգային պարկ (երկիր A), Պահպանման տարածք «անվանում» (երկիր A) և Բնության արգելոց «անվանում» երկիր B): • Առաջադրված հուշարձանը ներառում է չորս կղզիախումբ և դրանց շրջապատող ջրերը՝ յուրաքանչյուր կղզու ջրի ցածր մակարդակի նիշից 12 ծովային մղոն հեռավորության վրա:
Առաջադրված հուշարձանի A4 չափերի քարտեզ, որտեղ նշված կլինեն սահմաններն ու պահպանական գոտին (եթե առկա է)	Կցեք A4 (կամ նամակի) չափերի քարտեզ	Սա այն քարտեզն է, որն օգտագործվելու է Խորհրդատվական մարմնի գնահատման զեկույցում Համաշխարհային ժառանգության կոմիտեին ներկայացնելիս: Հետևաբար, այն պետք է լինի ճշգրիտ և հեշտ ընթեռնելի: Պետք է հիշել հետևյալ հիմնական կետերը: Քարտեզը պետք է լինի՝ • A4 չափերի, որպեսզի այն օգտագործվի վերոնշյալ կերպ, • լինի քաղվածք տեղագրական քարտեզից, • պարզորեն ցուցադրի առաջադրված հուշարձանն ու դրա պահպանական գոտին ամբողջությամբ՝ օգտագործելով առաջադրված հուշարձանի և պահպանական գոտու(ներ ի) համար տարբեր գունավոր, պարզ երևացող գծեր, • ունենալ անգլերենով կամ ֆրանսերենով պարզ վերնագիր (կախված, թե որ լեզվով է ներկայացվում անվանակարգը), որը վերաբերում է հենց «առաջադրված հուշարձանին», իսկ սերիական հուշարձանների դեպքում, անվանվում են հուշարձանի բաղադրիչ մասերը, • ունենալ չափսերն ու տարածությունը ցույց տվող հստակ մասշտաբ: Խորհուրդ է տրվում հիմնական քարտեզի անկյունում տեղադրել մի փոքրիկ քառակուսի (ընդհանուր դիրքային քարտեզ), որը ցույց կտա հուշարձանների գտնվելու ընդհանուր վայրը համապատասխան երկրի(ների) տարածքում: Սերիական հուշարձանների դեպքում դա չի տեղավորվի մեկ A4 չափի էջի վրա, այնպես որ պետք է A4 չափի էջերի վրա ավելացնել մի քանի քարտեզներ ներառելով՝ • քարտեզ, որը կներկայացնի ամբողջ հուշարձանը, յուրաքանչյուր բաղադրիչի միջև առկա տարածությունն ու գտնվելու վայրը, և • մեկ կամ մի քանի քարտեզներ, որոնք կներկայացնեն յուրաքանչյուր բաղադրիչն ու դրա պահպանական գոտին: Քարտեզները պետք է ներառվեն Ամփոփագրում և ոչ թե կցվեն որպես հավելված կամ ներկայացվեն հղումով:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
		• ավելի մանրամասն տեղագրական կամ այլ քարտեզներ պետք է ներառվեն անվանակարգային փաստաթղթի այլ բաժիններում:
Չափորոշիչներ, որոնց հիման վրա առաջադրվում է հուշարձանը (թվարկել չափորոշիչները) (տես Գործառնական ուղեցույցի մաս 77)		• Հուշարձանի առաջադրման չափորոշիչները պետք է հակիրճ թվարկվեն ոչ ավել, քան 100 բառ մեկ չափորոշչի համար:
Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության նախագիծը (տեքստը պետք է պարզաբանի, թե որ հատկանիշներն են հուշարձանին տալիս Համաշխարհային բացառիկ արժեք, մոտավորապես 1-2 էջի չափով):	155-րդ պարագրաֆի համաձայն՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության նախագիծը պետք է բաղկացած լինի հետևյալից՝ a. Հակիրճ ներկայացում b. Չափորոշիչների հիմնավորում c. Ամբողջականության մասին հավաստագիր (բոլոր հուշարձանների համար) d. Իսկության հավաստագիր. սա վերաբերում է (i) ից (vi) չափորոշիչներին համապատասխանող հուշարձաններին e. Պաշտպանության և կառավարման համար պահանջները Տես՝ հավելված 10-ի ձևաչափը	• Հայտարարությունը պետք է լինի նույնը, ինչ գրվել է անվանակարգային փաթեթի 3.3 կետի ներքո: • Այն պետք է լինի հակիրճ, բայց բավարար և պետք է պարունակի հուշարձանի ամենակարևոր առանձնահատկությունների մասին տեղեկատվություն: Ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է տրամադրել 3.1.a-3.1.e բաժիններում:
Պաշտոնական տեղական հաստատության /գործակալության/ անվանում և կոնտակտային տվյալներ	Կազմակերպություն Հասցե Հեռախոսահամար Ֆաքս Էլեկտրոնային հասցե Ինտերնետային հասցե	• Առնվազն պետք է ներկայացվեն անդամ պետությունում անվանակարգի համար պատասխանատու գործակալության կոնտակտային տվյալների մանրամասներ: • Կարելի է տրամադրել նաև անդամ պետությունում տարբեր մակարդակներում գործող այլ առաջատար գործակալությունների կոնտակտային տվյալները (օրինակ՝ մարզային կամ տեղական կառավարման մարմինները): • Սերիական ազգային հուշարձանի համար պետք է նշել մեկ գործակալության տվյալներ: Անդրազգային հուշարձանների համար պետք է նշել յուրաքանչյուր ղեկավար ազգային գործակալությունը:

Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցվող հուշարձանները

Նշում. անվանակարգերը պատրաստելիս անդամ պետությունները պետք է օգտագործեն այս ձևաչափը, սակայն առանց բացատրական ակնարկների

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
1. Հուշարձանի հայտնաբերում	Ինչպես բաժին 2-ը, այնպես էլ այս բաժինը հանդիսանում են անվանակարգի կարևորագույն մասերից մեկը: Այն պետք է Կոմիտեին պարզաբանի, թե որտեղ է տեղակայված հուշարձանը և ինչպես է այն աշխարհագրորեն սահմանվում: Սերիական անվանակարգերի դեպքում տեղադրեք աղյուսակ, որտեղ նշված կլինեն բաղադրիչ մասի, տարածաշրջանի (եթե տարբեր բաղադրիչների համար տարբեր է), կոորդինատներ, տարածքի և պահպանական գոտու մասին տվյալներ: Կարելի է ավելացնել նաև մի քանի բաղադրիչներ տարբերակող սյունակներ (հողում էջին, կամ քարտեզի համար և այլն):	• Անվանակարգի այս բաժինը տրամադրում է փաստացի տվյալներ առաջադրված հուշարձանի տեղակայման և չափերի մասին: Այն պետք է լինի հակիրճ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կցված քարտեզներին:
1.a Երկիր (և անդամ պետություն, եթե տարբեր են)		• Ուղղակի պետք է նշել հուշարձանն առաջադրող երկրի (կամ անդրսահմանային և անդրազգային հուշարձանների դեպքում՝ երկրների) անունը: Ոչ մի այլ տվյալներ երկրի մասին անհրաժեշտ չեն:
1.b Նահանգ, շրջան կամ մարզ		• Պետք է նշել այն նահանգը(ները), շրջանը(ները) կամ մարզը(երը), որտեղ գտնվում է առաջադրված հուշարձանը: Անդրսահմանային կամ անդրազգային հուշարձանների դեպքում յուրաքանչյուր նահանգի, շրջանի կամ մարզի դիմաց նշեք երկիրը:
1.c Հուշարձանի անվանումը	Սա հուշարձանի պաշտոնական անունն է, որը տպագրվելու է Համաշխարհային ժառանգության նյութերում: Պետք է հակիրճ լինի: Չպետք է գերազանցի 200 նիշը՝ ներառյալ կետադրական նշանները և բացատները: Սերիական անվանակարգերի դեպքում (տես Գործառնական ուղեցույցի պարագրաֆ 137–140) նշեք համալիրի անունը (օրինակ՝ Ֆիլիպինների Բարոկկո ոճի եկեղեցիներ): Պետք չէ ներառել սերիական անվանակարգի բաղադրիչների անունները, որոնք պետք է ներառվեն աղյուսակի 1.d և 1.f. մասերում:	• Հուշարձանի անվանումը պետք է տրամաբանական լինի դրա՝ գոյություն ունեցող տեղական կամ ազգային անվանման, ինչպես նաև բնույթի /արժեքների տեսանկյունից: Ցանկալի է օգտագործել արդեն հայտնի անվանումը, քան հորինել ուրիշը: • Հիշեք, որ անվանումը հետագայում օգտագործվելու է հուշարձանի ներկայացման և լուսաբանման նպատակով: • Հուշարձանի անվանումը պետք է լինի կարճ և չգերազանցի 200 նիշը՝ ներառյալ կետադրական նշանները և բացատները: • Անհրաժեշտ կլինի խորհրդակցել ազգային և տեղական մակարդակով՝ համոզվելու համար, որ տեղական լեզուն, մշակույթն ու ավանդույթները հաշվի են առնվել: • Որոշ դեպքերում ընտրվում է երկու անվանում (օրինակ՝ Տե Վահիպոունամու Հարավարևմտյան Նոր Զելանդիա և ուխահլամբա /Դրակենսբերգի պարկ): • Սերիական հուշարձանների համար պետք է ընտրել մեկ ընդհանուր անվանում (օրինակ՝ «Երեք զուգահեռ գետեր» պաշտպանված տարածքները, Սումատրայի ժառանգություն Անձրևային անտառները, կանադական ժայռոտ լեռների պարկը): • Անդրսահմանային կամ անդրազգային հուշարձանների դեպքում անվանումը պետք

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
		է համաձայնեցվի երկու ներգրավված երկրների կողմից, օրինակ՝ Uvs Nuur ավազանը (Մոնղոլիա և Ռուսաստանի Դաշնություն), և «Բարձր ափ» Կվարկեն կղզիախումբը (Ֆինլանդիա և Շվեդիա): • Ցանկալի չէ օգտագործել առանձին բաղադրիչների անվանումներ, այլև մեկ անուն, որն արտահայտում է ամբողջ հուշարձանի արժեքը:
1.d Աշխարհագրական կոորդինատներ վայրկյանի ճշտությամբ	Այս մասում ներկայացրեք տվյալ առաջադրված հուշարձանի մոտավոր կենտրոնի կետի երկարության և լայնության կոորդինատները (վայրկյանի ճշտությամբ) կամ UTM կոորդինատները (10 մետրի ճշտությամբ): Մի՛ օգտագործեք այլ կոորդինատային համակարգ: Կասկածների դեպքում խորհրդակցեք քարտուղարության հետ: Սերիական անվանակարգերի դեպքում աղյուսակով ներկայացրեք յուրաքանչյուր բաղադրիչ մասի անվանումը, շրջանը (կամ մոտակա քաղաքը), և կենտրոնական կետի կոորդինատները: Կոորդինատային ձևաչափի օրինակներն են՝ N 45° 06’ 05" W 15° 37’ 56" կամ UTM Գոտի 18 արևելյան՝ 545670 հյուսիսային՝ 4586750	

ID No.	Բաղադրիչ մասի անվանումը	Տարածաշրջան (ներ) / թաղամաս(եր)/	Կենտրոնական կետի կոորդինատներ	Հուշարձանի առաջադրված բաղադրիչի տարածքը (հա)	Պահպանական գոտու տարածքը (հա)	Քարտեզի N°
001						
002						
003						
և այլն.						
			Ընդհանուր տարածքը (հեկտարով)	հա	հա	

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
1.e Առաջադրված հուշարձանի և դրա պահպանական գոտու սահմանները ցույց տվող քարտեզներ և պլաններ	Անվանակարգի հավելված, ինչպես նաև ստորև նշված կետերը՝ մասշտաբով և ամսաթվով. (i) հնարավորինս մեծ մասշտաբով տեղագրական քարտեզի բնօրինակը, որի վրա երևում է առաջադրված հուշարձանը գրեթե ամբողջությամբ: Առաջադրված հուշարձանի սահմաններն ու պահպանական գոտին պետք է հստակ նշված լինեն: Այս կամ մեկ այլ քարտեզի վրա պետք է նշված լինեն հատուկ իրավական պաշտպանություն ունեցող գոտիների սահմանները, որոնք որևէ կերպ նպաստում են հուշարձանի սահմաններին: Սերիական անվանակարգերի համար անհրաժեշտ են մի քանի քարտեզներ (տես աղյուսակ 1.d): Ներկայացված քարտեզները պետք է լինեն հնարավորինս մեծ մասշտաբով, որպեսզի հնարավոր լինի տեսնել տեղագրական տարրերը, ինչպիսիք են հարևան բնակավայրերը, շենքերն ու ճանապարհները՝ սահմանագծում, դրանից ներս կամ դրա շուրջ որևէ այլ առաջարկվող գործունեության զարգացումը հնարավորինս ճիշտ գնահատելու նպատակով: Ուշադիր պետք է լինել քարտեզների վրա սահմանագծի հաստությունն ընտրելիս, քանի որ շատ հաստ սահմանագծերը կարող են անորոշ դարձնել հուշարձանի իրական սահմանները: Քարտեզները կարող եք ձեռք բերել հետևյալ ինտերնետային էջում նշված հասցեներից՝ http://whc.unesco.org/en/mapagencies Եթե տեղագրական քարտեզներն առկա չեն համապատասխան մասշտաբում, դրանք կարող են փոխարինվել այլ քարտեզներով: Բոլոր քարտեզները պետք է ունենան աշխարհագրական հղումներ և առնվազն երեք կետ քարտեզի հակառակ կողմում՝ կոորդինատային ամբողջական համակարգով: Քարտեզներն ամբողջական վիճակում պետք է ցույց տան մասշտաբը, կողմնորոշումը, պրոյեկցիան, կողմնորոշիչ կետը, հուշարձանի անունը և ամսաթիվը: Հնարավորության դեպքում, քարտոզները պետք է ուղարկվեն գլանված, ոչ թե ծալված: Թվայնացված աշխարհագրական տվյալները ցանկալի է ուղարկել այնպիսի ձևաչափով, որ այն հնարավոր լինի մուտքագրել ԱԻՀ-ում (Աշխարհագրական ինֆորմացիոն համակարգ): Այս դեպքում սահմանների ուրվագծումը (առաջադրված հուշարձանը և պահպանական գոտին) պետք է ներկայացվի վեկտորային տեսքով՝ հնարավորինս մեծ մասշտաբով:	• Մշակութային ժառանգության հուշարձանների համար նախատեսված քարտեզների և պլանների (նկարների) ցանկը կախված է հուշարձանի տեսակից և դրա պատմությունից: Դրանք պետք է որևէ կերպ արտացոլեն պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի ասպեկտները: • Քարտեզների և պլանների մասշտաբը, մանրամասներն ու լուծելիությունը պետք է բավարար լինեն, որպեսզի սահմանները հարաբերակցվեն որոշ հատկանիշների հետ, իսկ հուշարձանի համատեքստը դյուրըմբռնելի լինի: • Մինիմալ սխեմատիկ տվյալներով ոճային քարտեզները չեն համապատասխանում պահանջներին: Մեծ տեղագրական քարտեզները կամ կադաստրային պլանները (մշակութային հուշարձանների համար) գերազանց տարբերակ են, նույնիսկ, եթե դրանք օգտագործվում են որպես հավելյալ տեղեկատվության հիմք: • Երբ հուշարձանի առանձնահատկությունները նշված են քարտեզներում /պլաններում կամ տեքստում, անհրաժեշտ է օգտագործել միասնական անվանական կամ կոդավորման համակարգ՝ քարտեզների /պլանների կամ տեքստի միջև ճիշտ փոխադարձ հղումներ ապահովելու համար: Այսինքն՝ քարտեզում նշված առանձնահատկության անվանումը պետք է նույնական լինի տեքստում նշված անվանման հետ: Քարտեզներում կամ պլաններում օգտագործվող լեզուն պետք է լինի կամ անգլերեն կամ ֆրանսերեն: • Խորհուրդ է տրվում քարտեզի վրա նշել տվյալ երկրի գտնվելու վայրը: (մաքսիմում A4 չափսի). • Խորհուրդ է տրվում, որ տվյալ երկրում հուշարձանի գտնվելու վայրը ցույց տվող քարտեզը լինի մաքսիմում A4 չափի: • Բացի այդ, խորհուրդ է տրվում ներկայացնել առաջադրված հուշարձանը, սահմանները և պահպանական գոտին ամբողջությամբ (մաքսիմում A4 չափի) պատկերող տեղագրական քարտեզ կամ կադաստրային պլան (մշակութային հուշարձանների համար): Նույն քարտեզը պետք է օգտագործվի նաև ամփոփ ագրում: • Շատ կարևոր է, որ առաջադրված հուշարձանը, սահմանները և պահպանական գոտին պատկերող տեղագրական քարտեզը կամ կադաստրային պլանը (մշակութային հուշարձանների համար) ներկայացված լինի հնարավոր ամենամեծ մասշտաբով: • Տեքստում նշված կարևոր առանձնահատկությունները պետք է նշվեն քարտեզների և պլանների վրա համապատասխան մասշտաբում, սակայն ոչ սահմանները ցույց տվող հիմնական քարտեզի վրա: • Եթե հիմնական բնօրինակ քարտեզները /պլանները գունավոր են, հարկավոր է տրամադրել նաև գունավոր տարբերակները: • Շատ կարևոր է ունենալ լավ անվանում սահմանները ցույց տվող քարտեզի համար: Անվանման մեջ պետք է նշված լինի առա-

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	Անդամ պետությունը կարող է կապվել քարտուղարության հետ այս խնդրի հետ կապված հետագա հարցերի դեպքում: (ii) Անդամ պետությունում հուշարձանի գտնվելու վայրը ցույց տվող քարտեզ, (iii) Կից կարող եք ներկայացնել նաև տարածքի պլանները և հուշարձանի առանձնահատկությունները նկարագրող հատուկ քարտեզները: Խորհրդատվական մարմիններին և Համաշխարհային ժառանգության հանձնաժողովին առաջադրված անվանակարգի ներկայացման և պատճենների տրամադրման գործընթացը հեշտացնելու նպատակով առաջադրման տեքստում պետք է ներառել հիմնական քարտեզների ինչպես A4 ձևաչափի, այնպես էլ էլեկտրոնային տարբերակները: Այն դեպքերում, երբ անվանակարգում չի նշվում պահպանական գոտի, պետք է կցել մի փաստաթուղթ, որտեղ բացատրվում է, թե հուշարձանի արդյունավետ պաշտպանության համար ինչու չի առաջանում պահպանական գոտու անհրաժեշտությունը:	ջադրված հուշարձանը և դրա պահպանական գոտին (եթե առկա է)՝ Գործառնական ուղեցույցի տերմինաբանությամբ: Այդ սահմանները պետք է լինեն հստակ, որպեսզի հնարավոր չլինի շփոթել դրանք քարտեզի վրա առկա այլ գծերի հետ: • Սերիական անվանակարգերի դեպքում անհրաժեշտ է տրամադրել հուշարձանի բոլոր բաղադրիչները պարունակող քարտեզ, ինչպես նաև յուրաքանչյուր բաղադրիչի համար առանձին տեղային պլան՝ տարածաշրջանում այդ բաղադրիչների՝ իրենց շրջակա միջավայրի հետ կապը ցույց տալու համար: Սերիական հուշարձանների դեպքում դա չի կարող տեղավորվել մեկ A4 ֆորմատի էջի վրա: Անհրաժեշտ է ներառել մի քանի A4 ֆորմատի թուղթ, որպեսզի ներկայացնել հետևյալը՝ (i) հուշարձանն ամբողջությամբ, յուրաքանչյուր բաղադրիչի միջև տարածությունն ու տեղը ցույց տվող մեկ քարտեզ և (ii) առանձին յուրաքանչյուր բաղադրիչը և դրա պահպանական գոտին պատկերող մեկ կամ մի քանի քարտեզներ: • Սերիական ազգային և անդրազգային հուշարձանների յուրաքանչյուր բաղադրիչի համար պետք է ներկայացնել սահմանները հստակ նշող բնօրինակ տեղագրական քարտեզ: • Այն դեպքում, երբ նախատեսվում է հուշարձանի սահմանների ընդլայնում, ցանկալի է կցել քարտեզ, որը կցուցադրի ինչպես նախկին, այնպես էլ առաջարկվող ընդլայնող սահմանագծերը: • Այլ բաժիններում, բացի նկարագրության բաժնից, կարելի է ներկայացնել հուշարձանի հատուկ արժեքը, առանձնահատկությունները կամ խնդիրները պատկերող հավելյալ քարտեզներ, որոնք են՝ - Երկրաբանական քարտեզ՝ (viii) չափորոշչի ներքո առաջադրված հուշարձանները, - Վեգետացիոն քարտեզ՝ (ix) և (x) չափորոշիչների ներքո առաջադրված հուշարձանները, - Տեսակների բաշխման քարտեզ՝ (ix) և (x) չափորոշիչների ներքո առաջադրված հուշարձանները, - Ենթակառուցվածքի կամ ենթակառուցվածքային առաջարկների քարտեզ (օրինակ՝ ճանապարհներ և ճանապարհաշինություն, ամբարտակներ, հետագա զարգացում և այլն), - Հասանելիության քարտեզ՝ ցույց տալու հուշարձանին հասնելու հիմնական ճանապարհները: • Հիմնական փաստաթղթում պետք է ընդգրկվեն հիմնական քարտեզներ A4 չափով, որտեղ պետք է նշվի հուշարձանի գտնվելու վայրը և սահմանները: Հավելյալ քարտեզները սովորաբար պետք է կցվեն հավելվածներում, հստակ նշվեն և հղում ունենան հիմնական տեքստում: Քարտեզների ցանկը և դրանց տեղը պետք է նշվեն 1.e բաժնում: • Քարտեզները ներկայացնելու լավ ֆորմատ է A3 ֆորմատը, որը պետք է ծալվի A4 փաստաթղթի չափով:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
		•Քարտեզները պետք է կցվեն նաև էլեկտրոնային տարբերակով՝ խտասկավառակների վրա: • Տեղագրական քարտեզները հիմնարար նշանակություն ունեն ոչ քաղաքային հուշարձանների առաջադրման ամբողջականության համար: Նմանապես, կադաստրային ծրագրերը չափազանց կարևոր են քաղաքային հուշարձանների համար: Այն անվանակարգերը, որոնք պարունակում են միայն գծագրեր, ներառյալ համակարգչով կառուցված քարտեզները, համարվում են անավարտ: • Համապատասխան քարտեզներում պետք է նշվեն հուշարձանի ցանկացած միջավայր (պահպանական գոտուց դուրս): Տես սույն ձեռնարկի 85–86 էջերը:
1.f Առաջադրված հուշարձանի (հա) և առաջարկվող պահպանական գոտու (հա) տարածքը: **Առաջադրված հուշարձանի տարածքը՝ _____ հա** **Պահպանական գոտի՝___ հա** **Ընդամենը՝ _____ հա**	Սերիական հուշարձանների դեպքում (տես Գործառնական ուղեցույցի մաս 137–140) տեղադրեք աղյուսակ, որտեղ նշված է բաղադրիչ մասի անվանումը, տարածաշրջանը (եթե տարբեր է տարբեր բաղադրիչների համար), կոորդինատները, տարածքը և պահպանական գոտին: Սերիական անվանակարգի աղյուսակը պետք է նաև ներկայացնի առանձին առաջադրված տարածքների և պահպանական գոտու(ների) չափը:	
2. Նկարագրություն		• Խորհուրդ է տրվում անվանակարգի այս բաժինը լրացնել Բաժին 3-ը՝ «Գրանցման հիմնավորումը» լրացնելուց հետո: Նկարագրությունը պետք է ավելի համապարփակ տվյալներ ներկայացնի, քան ներկայացված է «Գրանցման հիմնավորումը» բաժնում, պետք է ներառի տեղեկություններ և ապացույցներ՝ հիմնվելով «Գրանցման հիմնավորում» մասում արված եզրահանգումների վրա: Պետք է կցվեն նաև այլ տվյալներ, որոնք տալիս են առաջադրված հուշարձանի ամբողջական պատկերը:
2.a Հուշարձանի նկարագրություն	Այս բաժինը պետք է սկսի առաջադրվող հուշարձանի նկարագրությունից՝ առաջադրման ամսաթվի դրությամբ: Այն պետք է ներառի հուշարձանի բոլոր հիմնական առանձնահատկությունները: Մշակութային հուշարձանների դեպքում այս բաժինը ներառում է հուշարձանը մշակութային առումով նշանակալի դարձնող ցանկացած տարրի նկարագրություն: Այն կարող է ներառել ցանկացած շենքի կամ շենքերի և դրանց ճարտարապետական ոճի, կառուցման տարեթվի, նյութերի և այլնի նկարագրություն: Այս բաժինը պետք է նկարագրի նաև շրջակա միջավայրի կարևոր ասպեկտները, օրինակ՝ պարկերը, պուրակները և այլն: Ժայռային գեղանկարչության համար, օրինակ՝ նկարագրությունը պետք է վարաբերի ոչ միայն	• Նկարագրությունը պետք է թիրախավորի հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքին վերաբերող մասերը, ինչպես նաև ընդհանուր տեղեկություններ տրամադրի հուշարձանի մասին: • Նկարագրությունը պետք է լինի բավարար՝ հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը և դրա կարևոր առանձնահատկությունները հասկանալու համար: • Անհրաժեշտություն չկա գրել համապարփակ, երկար նկարագրություն հուշարձանի յուրաքանչյուր մասնիկի մասին: • Եթե նկարագրությունը բարդ է և երկար, ցանկալի կլինի ներկայացնել համառոտ նկարագրություն՝ հավելվածում կցելով ավելի մանրամասն նկարագրությունը: • Նկարագրությունը պետք է թիրախավորի առաջադրված հուշարձանը, որի սահմանները նշվել էին նախորդ բաժնում:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	ժայռային գեղանկարչությանը, այլ նաև շրջապատող միջավայրին: Պատմական քաղաք կամ թաղամաս հուշարձանի դեպքում անհրաժեշտ չէ նկարագրել յուրաքանչյուր շենքը առանձին, այլ կարևոր հանրային շենքերը պետք է անհատապես նկարագրվեն և ուշադրություն պետք է դարձվի տարածքի պլանավորմանը և դիզայնին, փողոցների դասավորվածությանը և այլն: Բնության հուշարձանի դեպքում ուշադրություն պետք է դարձնել կարևոր ֆիզիկական ատրիբուտներին, երկրաբանությանը, բնական միջավայրին, տեսակներին և բնակչության չափին, ինչպես նաև այլ կարևոր էկոլոգիական առանձնահատկություններին և գործընթացներին: Անհրաժեշտության դեպքում պետք է ներկայացնել տեսակների ցանկ և ընդգծել հազվադեպ և էնդեմիկ տաքսոնների առկայությունը: Պետք է նկարագրել նաև բնական ռեսուրսների շահագործման մեթոդներն ու քանակը: Բնության լանդշաֆտների դեպքում նկարագրությունը պետք է ներառի բոլոր վերոնշյալ գործողությունները: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել մարդու և բնության փոխազդեցությանը: Բաժին 1-ում (հուշարձանի հայտնաբերում) նշված առաջադրված հուշարձանն ամբողջությամբ պետք է նկարագրվի: Սերիական անվանակարգերի դեպքում (տես Գործառնական ուղեցույցի մաս 137–140) յուրաքանչյուր բաղադրիչ մաս պետք է առանձին նկարագրվի:	Կարելի է ներկայացնել նաև հուշարձանի սահմաններից դուրս գտնվող մասնիկների նկարագրությունը, եթե դրա կարիքը կա, սակայն դա ավելի լավ է ներկայացնել առանձին (օրինակ՝ դնելով ենթավերնագիր, ինչպիսին է «Հուշարձանի սահմաններից դուրս գտնվող համապատասխան մասնիկների նկարագրություն»:<br• Այս բաժնում պետք է նկարագրել հուշարձանին շրջապատող ցանկացած մասնիկ (պահպանական գոտուց դուրս): Տես ձեռնարկի 85–86 էջերը:
2.b Պատմություն և զարգացում	Նկարագրեք, թե ինչպես է հուշարձանը հասել իր ներկա վիճակին և ինչ էական փոփոխությունների է ենթարկվել, ներառյալ՝ պահպանության մասին պատմությունը: Հուշարձանների, տեսարժան վայրերի, շինությունների և շենքային համալիրների դեպքում այն պետք է ներառի շինարարության փուլերի նկարագրությունը: Պետք է նկարագրվեն նաև բոլոր այն հիմնական փոփոխությունները, ապամոնտաժումներն ու վերակառուցումները, որոնք տեղի են ունեցել հուշարձանի կառուցումից հետո:	• Ինչպես նկարագրության դեպքում, պատմությունը պետք է կենտրոնանա հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի նկարագրության վրա, ինչպես նաև պետք է ներկայացնի հուշարձանի ընդհանուր պատմական համատեքստը: • Անհրաժեշտություն չկա գրել համապարփակ, երկար նկարագրություն հուշարձանի մասին. անհրաժեշտության դեպքում, այդ տեղեկատվությունը կարելի է ներկայացնել հավելվածում կամ ուղղակի հղում կատարել դրան: • Կարևոր է նաև հուշարձանի պատմությունը զետեղել համաշխարհային պատմության համատեքստում, ինչի դեպքում պետք է տրամադրել որոշակի տվյալներ: Սա ցանկալի է ներկայացնել համառոտ, այլ ոչ թե երկար և մանրամասն: • Պատմությանը հղում կատարելը սովորաբար շատ կարևոր է, քանի որ պնդումները կարող են հիմնված լինել տեղեկատվական այլ աղբյուրների վրա, որոնց վրա պետք է հղում կատարել և որոնք պետք է հուսալի լինեն: • Հուշարձանի պատմության զարգացման մասին գրելիս շատ օգտակար կլինի ներ-

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	Բնության հուշարձանի դեպքում հաշվետվության մեջ պետք է նշել հուշարձանի զարգացման վրա ազդեցություն թողած պատմության և նախապատմության կարևոր իրադարձությունները և նկարագրել մարդկության հետ դրա փոխազդեցությունը: Սա ներառում է փոփոխությունները, որոնք կատարվել են հուշարձանի և դրա բնական ռեսուրսների օգտագործման հարցում, որոնք ծառայել են որսորդության, ձկնորսության կամ գյուղատնտեսության համար, կամ այն փոփոխությունները, որոնք ի հայտ են եկել կլիմայական փոփոխության, ջրհեղեղների, երկրաշարժերի կամ այլ բնական աղետների հետևանքով: Նույն տեղեկատվությունը անհրաժեշտ կլինի նաև մշակութային լանդշաֆտների դեպքում, որտեղ պետք է ներկայացնել հուշարձանի տարածքում մարդկային գործունեության պատմության բոլոր ասպեկտները:	կայացնել հուշարձանի զարգացման փուլերը: Օրինակ՝ տարբեր ժամանակաշրջանների շինություններ ունեցող քաղաքի դեպքում օգտակար է ունենալ պատկերներ, որոնք կներկայացնեն, թե որ շինությունը տեքստում նշված որ պատմական ժամանակահատվածին է պատկանում: • Տեքստում կարող են օգտագործվել այլ պատկերներ, ինչպիսիք են քարտեզներ, փորագրություններ կամ պատմական նկարներ: Նման նկարազարդումները պետք է օգնեն բացատրել հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքին վերաբերող պատմության որոշ ասպեկտներ:
3. Գրանցման հիմնավորում[1]	Հիմնավորումը պետք է նշվի սույն բաժնի հետևյալ պարբերություններում: Սույն բաժնում պետք է հստակ ներկայացվի, թե ինչու հուշարձանը կարող է համարվել Համաշխարհային բացառիկ արժեք: Այս բաժինն ամբողջությամբ պետք է շարադրվի Գործառնական ուղեցույցի պահանջներին համապատասխան: Այն չպետք է ներառի հուշարձանի կամ դրա կառավարման մասին մանրամասն նկարագրություն, որն արդեն նշված է այլ բաժիններում, այլ պետք է ներառի հուշարձանի՝ Համաշխարհային բացառիկ արժեք հանդիսանալու հիմնական ասպեկտները:	3.1.a-ից 3.1.e բաժինների տեքստը պետք է պարունակի ավելի շատ տվյալներ՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին նախնական հայտարարության մեջ ներկայացված տեքստը հիմնավորելու նպատակով:
3.1.a Համառոտ նկարագրություն	Համառոտ նկարագրությունը պետք է ներառի (i) փաստացի տվյալների մասին ամփոփագիր և (ii) որակների մասին ամփոփագիր: Փաստացի տվյալների մասին ամփոփագիր սահմանում է աշխարհագրական և պատմական համատեքստն ու հիմնական առանձնահատկությունները: Որակների մասին ամփոփագիրը որոշում կայացնողներին և հանրությանը ներկայացնում է պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը, որը պետք է պահպանել, ինչպես նաև պետք է ներառի Համաշխարհային բացառիկ արժեք ներկայացնող ատրիբուտների, դրանց պաշտպանության, կառավարման և վերահսկողության մասին համառոտ շարադրանք: Այս ամփոփագիրը պետք է համակցված լինի բոլոր չափորոշիչների հետ՝ առաջադրումը հիմնավորելու նպատակով: Այսպիսով, համառոտ նկարագրությունն ընդգրկում է Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի առաջադրման և գրանցման համար անհրաժեշտ ամբողջական փաստարկը:	Այս բաժինը պետք է ավելի մանրամասն տեղեկատվություն տրամադրի՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին նախնական հայտարարության մեջ ներկայացված տեքստը հիմնավորելու նպատակով:
3.1.b Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցվելու համար անհրաժեշտ չափորոշիչներ (և այդ չափորոշիչներին համապատասխանելու համար հիմնավորումներ)	Տես Գործառնական ուղեցույցի պարագրաֆ 77: Յուրաքանչյուր չափորոշչի համար անհրաժեշտ է առանձին հիմնավորում:	• Տես՝ Ձեռնարկի 60–61 էջերը: • Յուրաքանչյուր չափորոշչի համար նախատեսված հիմնավորումը պետք է օգտակար լինի ստորև նշված Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության պատրաստման համար:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	Համառոտ ներկայացրեք, թե ինչպես է հուշարձանը համապատասխանում այն չափորոշիչներին, որոնց համաձայն առաջադրվել է (անհրաժեշտության դեպքում հղում կատարեք «նկարագրություն» և «համեմատական վերլուծություն» բաժիններին, բայց մի կրկնօրինակեք այդ բաժինների տեքստը) և յուրաքանչյուր չափորոշչի դիմաց նկարագրեք համապատասխան ատրիբուտները:	• Հիմնավորումը հենց այն փաստարկն է, թե ինչու է հուշարձանը համապատասխանում չափորոշչին: • Այս տեքստը պետք է պարունակի ավելի մանրամասն տեղեկատվություն՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին նախնական հայտարարության մեջ ներկայացված տեքստը հիմնավորելու նպատակով:
3.1.c Ամբողջականության մասին հավաստում	Ամբողջականության մասին հավաստումը պետք է փաստի, որ հուշարձանը համապատասխանում է Գործառնական ուղեցույցի II.D մասում նշված ամբողջականության պայմաններին, որոնք ավելի մանրամասն են նկարագրված: Գործառնական ուղեցույցի համաձայն պետք է գնահատել այն մակարդակը, համաձայն որի հուշարձանը՝ • ներառում է Համաշխարհային բացառիկ արժեք արտահայտող բոլոր տարրերը, • ունի բավարար չափեր, որոնք անհրաժեշտ են հուշարձանի կարևորությունն արտահայտող առանձնահատկությունների և գործընթացների ամբողջական ներկայացման համար, • ենթարկվում է զարգացման և /կամ անտեսման արդյունքում առաջացած բացասական ազդեցության (պարագրաֆ 88). Գործառնական ուղեցույցում ներկայացվում է հստակ ուղեցույց Համաշխարհային ժառանգության տարբեր չափորոշիչների վերաբերյալ, ինչը շատ կարևոր է հասկանալ (պարագրաֆ 89–95):	• Տես սույն ձեռնարկի 61–67 էջեր: • Այս բաժնում պետք է ներկայացվի հուշարձանի սահմանների հիմնավորում: • Այս բաժինը պետք է ավելի մանրամասն տեղեկատվություն տրամադրի՝ Համաշխարհային բացառիկ արժեքի նախնական ձևակերպման մեջ ներկայացված տեքստը հիմնավորելու նպատակով:
3.1.d Իսկության հայտարարությունը ((i) -ից (vi)) չափորոշիչներին համապատասխանող անվանակարգերի համար)	Իսկության մասին հայտարարությունը պետք է փաստի, որ հուշարձանը համապատասխանում է Գործառնական ուղեցույցի II.D մասում նշված ամբողջականության պայմաններին, որոնք ավելի մանրամասն են նկարագրված: Այս բաժնում պետք է ամփոփվի տեղեկատվությունը, որն ավելի մանրամասն ներկայացվում է անվանակարգի 4-րդ բաժնում (հնարավոր է նաև այլ բաժիններում), սակայն չպետք է այդ աստիճան մանրամասնեցվի: Իսկության գաղափարը վերաբերում է միայն մշակութային հուշարձաններին և «խառը» հուշարձանների մշակութային մասին: Գործառնական ուղեցույցը փաստում է, որ «հուշարձանները կարելի է համարել իսկության պահանջներին բավարարող, եթե դրանց մշակութային արժեքը (առաջադրման չափորոշիչներին համապատասխան) ճշգրիտ և հավաստիորեն արտահայտվում է մի շարք ատրիբուտներով (պարագրաֆ 82): Գործառնական ուղեցույցի համաձայն հետևյալ ատրիբուտները կարող են համարվել	• Տես սույն ձեռնարկի 61–67 էջերը: • Այս տեքստը պետք է ավելի մանրամասն տեղեկատվություն տրամադրի՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին նախնական հայտարարության մեջ ներկայացված տեքստը հիմնավորելու նպատակով:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	Համաշխարհային բացառիկ արժեք արտահայտող կամ փոխանցող՝ • ձևը և դիզայնը, • նյութերն ու նյութակազմը, • կիրառումն ու գործառույթները, • ավանդույթները, մեթոդները և կառավարման համակարգերը, • գտնվելու վայրը և միջավայրը, • լեզուն և ոչ նյութական ժառանգության այլ տեսակները, • հոգևոր և ֆիզիկական ընկալումը, • այլ ներքին /արտաքին գործոններ:	
3.1.e Պաշտպանության և կառավարման պահանջներ	Այս բաժինը սահմանում է պաշտպանության և կառավարման պահանջները՝ ժամանակի ընթացքում հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանման նպատակով: Այն պետք է ներառի ինչպես պաշտպանության և կառավարման ընդհանուր շրջանակի մանրամասները, այնպես էլ հուշարձանի պաշտպանության համար նախատեսված հատուկ երկարաժամկետ սպասելիքների հստակեցումը: Այս բաժնում պետք է ամփոփվի տեղեկատվությունը, որն ավելի մանրամասն ներկայացվում է անվանակարգի 5-րդ բաժնում (հնարավոր է նաև այլ 4-րդ և 6-րդ բաժիններում), սակայն չպետք է այդ աստիճան մանրամասնեցվի: Այս բաժնի տեքստը նախ պետք է ուրվագծի պաշտպանության և կառավարման շրջանակը: Այն պետք է ներառի անհրաժեշտ պաշտպանության մեխանիզմներ, կառավարման համակարգեր և/կամ կառավարման պլաններ (առկա կամ սահմանվող), որոնք կպաշտպանեն և կպահպանեն Համաշխարհային բացառիկ արժեք ներկայացնող ատրիբուտները և կդիմակայեն հուշարձանին սպառնացող վտանգներին և կկանխեն խոցելիությունը: Դա կարող է լինել ամուր և արդյունավետ իրավական պաշտպանության առկայություն, հստակ փաստաթղթավորված կառավարման համակարգ, ներառյալ՝ հիմնական շահագրգիռ կողմերի կամ օգտվող խմբերի հետ հարաբերությունները, համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսները, ներկայացման հիմնական պահանջները (որտեղ անհրաժեշտ է), և արդյունավետ ու արձագանքող մոնիթորինգ: Երկրորդ, այս բաժնում անհրաժեշտ է բացահայտել հաստատված երկարաժամկետ մարտահրավերները հուշարձանի պաշտպանության և կառավարման վերաբերյալ և ներկայացնել նման խնդիրների լուծման երկարաժամկետ ռազմավարություն: Հարկ է նշել հուշարձանին սպառնացող կարևորագույն բացասական գործոնները, ինչպես նաև հուշարձանի իսկության և/ կամ ամբողջականության վրա ազդող խոցելի կողմերն ու բացասական փոփոխությունները և սահմանել,	• Այս տեքստը պետք է ավելի մանրամասն տեղեկատվություն տրամադրի՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին նախնական հայտարարության մեջ ներկայացված տեքստը հիմնավորելու նպատակով:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	թե ինչպես պաշտպանությունն ու կառավարումը կօգնեն վերացնել այդ խոցելի կողմերը և սպառնալիքները, մեղմել ցանկացած անբարենպաստ փոփոխություն: Որպես Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից հաստատված պաշտոնական հայտարարություն՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության այս բաժինը պետք է արտացոլի այն կարևորագույն պարտականությունները, որ անդամ պետությունը պարտավոր է կատարել հուշարձանի երկարաժամկետ պաշտպանության և կառավարման համար:	
3.2 Համեմատական վերլուծություն	Հուշարձանը պետք է համեմատել նմանատիպ հուշարձանների հետ՝ անկախ նրանից, թե դրանք ներառված են Համաշխարհային ժառանգության ցանկում, թե՝ ոչ: Համեմատության մեջ պետք է ընդգծվեն այն նմանությունները, որ առաջադրված հուշարձանն ունի այլ հուշարձանների հետ, ինչպես նաև առաջադրված հուշարձանի յուրահատուկ լինելու պատճառները: Համեմատական վերլուծությունը նպատակ ունի բացահայտել առաջադրված հուշարձանի կարևորությունը թե ազգային, թե միջազգային համատեքստում (տես Գործառնական ուղեցույցի պարագրաֆ 132): Համեմատական վերլուծության նպատակն է ապացուցել, որ օգտագործելով առկա թեմատիկ ուսումնասիրությունները՝ հնարավոր է տեղ գտնել Համաշխարհային ժառանգության ցանկում, իսկ սերիական հուշարձանների դեպքում՝ հիմնավորել բաղադրիչների ընտրությունը:	• Տես սույն ձեռնարկի 67–73 էջերը:
3.3 Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարություն	Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից հաստատված պաշտոնական հայտարարություն է, երբ հուշարձանն ընդգրկվում է Համաշխարհային ժառանգության ցանկում: Երբ Համաշխարհային ժառանգության կոմիտեն համաձայնում է ներառել հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում, այն ընդունում է նաև Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը, որը փաստում է, թե ինչու է հուշարձանը համարվում Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող, ինչպես է այն բավարարում համապատասխան չափորոշիչներին, ամբողջականության և (մշակութային հուշարձանների համար) իսկության պայմաններին, և թե ինչպես է այն համապատասխանում պաշտպանության և կառավարման պահանջներին Համաշխարհային բացառիկ արժեքի երկարատև պահպանման առումով: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունները պետք է լինեն հակիրճ և ներկայացվեն ստանդարտ ձևաչափով: Դրանք պետք է օգնեն բարձրացնել իրազեկվացությունը հուշարձանի արժեքի մասին, ծառայեն որպես հուշարձանի պահպանվածության վիճակի մասին ուղեցույց և տեղեկացնեն հուշարձանի պաշտպանության և կառավարման մասին: Հանձնաժողովի կողմից ընդունվելուց անմիջապես հետո Հա-	• Տես սույն ձեռնարկի 73–76 էջերը

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	մաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը տեղադրվում է հուշարձանի վրա և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի ինտերնետային էջում: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության հիմնական բաժինները հետևյալն են՝ a. Համառոտ նկարագրություն b. Չափորոշիչների հիմնավորում c. Ամբողջականության մասին հայտարարություն (բոլոր հուշարձանների համար) d. Իսկության մասին հայտարարություն (i և vi չափորոշիչներով անվանագրված հուշարձանների համար) e. Պաշտպանության և կառավարման համար պահանջներ:	
4. Պահպանվածության վիճակը և հուշարձանի վրա ազդող գործոնները		
4.a Պահպանվածության առկա վիճակը	Այս բաժնում ներկայացված տեղեկատվությունն այն հիմնական տվյալներն են, որոնք անհրաժեշտ են առաջադրված հուշարձանի պահպանվածության վիճակը ապագայում վերահսկելու համար: Այս բաժնում պետք է տեղեկատվություն տրամադրվի հուշարձանի ֆիզիկական վիճակի մասին, Համաշխարհային բացառիկ արժեքին սպառնացող վտանգների և հուշարձանի պահպանման միջոցների մասին (տես Գործառնական ուղեցույցի պարագրաֆ 132): Օրինակ՝ պատմական տարածքի կամ քաղաքի դեպքում հարկավոր է նշել շենքեր, հուշարձաններ և խոշոր կամ փոքր վերանորոգման կարիք ունեցող այլ կառույցներ, պետք է նշել նաև վերջին շրջանում իրականացված կամ հետագայում իրականացվելիք ցանկացած խոշոր վերակառուցման նախաձեռնությունների ծավալը և տևողությունը: Բնության հուշարձանների դեպքում պետք է տվյալներ տրամադրել տեսակների զարգացման և էկոհամակարգերի ամբողջականության վերաբերյալ: Հուշարձանի պահպանվածության վիճակը վերահսկող ցուցանիշներին և վիճակագրական հենանիշերին կարող եք ծանոթանալ ստորև ներկայացված Բաժին 6-ում:	• Հուշարձանի պահպանվածության վիճակի մասին տեղեկատվությունը պետք է լինի հուսալի՝ ոչ գերագնահատված, ոչ էլ թերագնահատված: Հիշեք, որ գնահատող հանձնաժողովը այցելելու է հուշարձան և ստուգումներ է իրականացնելու: • Հուշարձանի վիճակը պաշտպանելու միջոցները պետք է վերաբերվեն ոչ միայն առանձնահատկություններին, այլև զարգացող գործընթացներին, որոնք նպաստում են հուշարձանի էվոլյուցիային՝ բոլոր համապատասխան ատրիբուտների ամբողջականությունը պահպանելու նպատակով: • Այն դեպքերում, երբ հուշարձանի պահպանվածության վիճակը բաղադրյալ է, օգտակար կլինի օգտագործել դիագրամներ կամ բացատրվող քարտեզներ /պլաններ: Օրինակ՝ քաղաքում շենքերի վիճակը կարող է շատ տարբեր լինել: Նմանապես, սպառնալիքների և պահպանման միջոցների աստիճանը լավագույնս կարելի է ներկայացնել բացատրվող քարտեզների / պլանների միջոցով: • Այս բաժնում պետք է նկարագրվի հուշարձանի ներկա վիճակը: Հնարավոր կամ հետագա սպառնալիքներին պետք է անդրադառնալ 4.b բաժնում:
4.b Հուշարձանի վրա ազդող գործոնները	Այս բաժնում պետք է ներկայացվեն բոլոր այն գործոնները, որոնք հնարավոր է ազդեն կամ սպառնալիք հանդիսանան հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի համար: Այստեղ պետք է նկարագրվի նաև ցանկացած դժվարություն, որին կարելի է հանդիպել այդ խնդրին առնչվելիս: Այս բաժնում առաջարկված ոչ բոլոր գործոններն են համապատասանում յուրաքանչյուր հուշարձանին: Դրանք ցուցադրական են և նպատակ	• Հարկավոր է հաշվի առնել այն պարզաբանումը, որը նշում է, որ ոչ բոլոր գործոններն են վերաբերում բոլոր հուշարձաններին: Այն դեպքերում, երբ գործոններն անհամապատասխան են, ուղղակի պետք է բացատրել՝ առանց գործոնը մանրամասնելու: • Այս բաժնում պետք է ներկայացվեն հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի վրա ազդող հնարավոր կամ ապագա

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	ունեն օգնել անդամ պետությանը՝ բացահայտել յուրաքանչյուր հուշարձանին հատուկ առանձին գործոնները:	սպառնալիքները: Ներկա վտանգները պետք է նշվեն 4.a բաժնում: • Ներկայացված վտանգները պետք է լինեն կանխատեսելի կամ սպասելի տրված հուշարձանի համար, կամ նշվեն նրանք, որոնք արդեն ի հայտ են եկել: • Այդուհանդերձ, անհրաժեշտ է տրամադրել հստակ տեղեկատվություն այդ վտանգների մասին:
(i) Զարգացման ճնշումներ (օրինակ՝ ոտնձգություն, ադապտացում, գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն)	Ցուցակագրեք հուշարձանի վրա ազդող զարգացման ճնշումները, օրինակ՝ ապամոնտաժում, վերակառուցում կամ նոր շինարարություն, նոր կարիքների համար առկա շենքերի ադապտացումը, ինչը կվնասեր դրանց իսկությանն ու ամբողջականությանը: Գյուղատնտեսական զարգացման արդյունքում բնակավայրերի վերափոխում կամ ոչնչացում, անտառային տնտեսության զարգացում կամ արոտավայրերի ստեղծում: Վատ կառավարվող տուրիզմ, անպատշաճ կամ անկայուն բնական ռեսուրսների շահագործում, հանքարդյունաբերության հետևանքով պատճառած վնաս, էկզոտիկ տեսակների ներմուծում, որոնք խախտում են բնական էկոլոգիական գործընթացները, մոտակա հուշարձանների տարածքում բնակչության նոր կենտրոնների ստեղծում, որը կարող է վնասել հուշարձանին կամ դրա միջավայրին:	
(ii) Բնապահպանական ճնշումներ (օրինակ՝ աղտոտում, կլիմայական փոփոխություն, անապատացում)	Թվարկեք և ամփոփեք շրջակա միջավայրի վատթարացման հիմնական աղբյուրները, որոնք ազդում են շենքերի, բուսական և կենդանական աշխարհի վրա:	• Վատթարացման աղբյուրները պետք է թվարկվեն միայն այն դեպքում, եթե այդպիսիք առկա են և ունեն մեծ ազդեցություն:
(iii) Բնական աղետներ և դրանց դիմակայում (երկրաշարժեր, ջրհեղեղներ, հրդեհներ, և այլն)	Ցուցակագրեք այն աղետները, որոնք կանխատեսելի վտանգ են ներկայացնում հուշարձանի համար և այն քայլերը, որոնք ձեռնարկվել են արտակարգ իրավիճակների պլաններ մշակելու համար՝ ֆիզիկական պաշտպանության միջոցառումների կամ անձնակազմի վերապատրաստման միջոցով:	• Պետք է նշել նման աղետների գնահատված հաճախականությունը և ազդեցության հնարավոր մասշտաբը: • Անհրաժեշտ է մշակել ռիսկերին դիմակայելու ծրագիր՝ հաշվի առնելով ազդեցության հաճախականությունն ու մասշտաբը: • Ռիսկերին դիմակայելու նպատակով պետք է իրականացնել նախաաղետային պատրաստություններ, ինչպես նաև ձեռք առնել պատասխան միջոցներ աղետի ժամանակ և հետո: • Անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է ամփոփվի և լրացվի այլ փաստաթղթերին համապատասխան հղումներով (օրինակ՝ կանխարգելման /աղետների ծրագրեր):
(iv) Պատասխանատու այցելություն Համաշխարհային ժառանգության հուշարձաններ	Տրամադրեք հուշարձանի հաճախելիության պատկերը (մատչելի ելակետային տվյալներ; օգտագործման օրինակներ՝ ներառյալ հուշարձանի առանձին մասերում գործունեության համակենտրոնացումը և հետագայում պլանավորվող գործունեությունը): Նկարագրեք հաճախելիության կանխատեսված մակարդակները՝ հուշարձանի Համաշխարհային ժառանգության ցանկում ներառվելու կամ այլ գործոնների ազդեցության արդյունքում: Նկարագրեք հուշարձանի թողունակությունը և նշեք, թե ինչպես կարելի է բարձրացնել հուշարձանի կառավարման արդյունավե-	• Թողունակությունը որոշող մեթոդը պետք է հակիրճ նկարագրվի: • Պետք է նախանշված լինի ապագա այցելուների քանակը կանխատեսող հիմքը: • Հարկավոր է նշել ապագա այցելուների քանակի իրական պատկերը՝ հատկապես հաշվի առնելով Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի ընդգրկվելու փաստը: • Պետք է ներկայացնել ապացույցներ կամ հղումներ, որոնք կհիմնավորեն հուշարձանի ընդգրկուն լինելու փաստը և այն փաստը, որ հուշարձանը կարող է տեղավորել ներկա կամ ապագայում նախատեսվող այցելուների քանակն առանց բացասական

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	տությունը, որպեսզի հուշարձանը կարողանա տեղավորել ներկա կամ ապագայում սպասվող այցելուների քանակը և համապատասխան լարվածությունն առանց բացասական հետևանքների: Հաշվի առնք հուշարձանի մաշվածության հնարավոր եղանակները, որը կարող է պատահել այցելուների մեծ հոսքի և վարքի արդյունքում, ներառյալ այն վնասը, որ կարող է հասցվել հուշարձանի ոչ նյութական ատրիբուտներին:	հետևանքների: Ուղղակի հավաստիացումն անբավարար է: Ինչ վերաբերում է ներկա թվերին. իրականացվել է արդյոք ազդեցությունների մոնիթորինգ, որին կարելի է հղում կատարել: • Արդյոք գոյություն ունի հուշարձանի համար նախատեսված այցելության /տուրիստական կառավարման պլան: Արդյոք այն համապատասխան և արդյունավետ է: • Այցելության /տուրիստական փորձի նկարագրության ցանկալի պայմանները հետևյալն են՝ համապատասխան ուղերձները, տեխնիկաները, փորձի որակը, ինչպես նաև մատչելի հարմարությունները: Այս տեղեկատվությունը կարող է ներառվել այցելության /տուրիստական կառավարման պլանում: Այդ պլանի հիմնական կետերը կարող են ներառվել նաև անվանակարգային փաթեթում և փաթեթին կից պլանում: •Փաստաթղթում նշվող այցելության /տուրիստական տվյալները պետք է լինեն ամենավերջին տարվա տվյալները: • Հնարավոր է, հուշարձանը չունենա տարբեր տարածքներ կամ գոտիներ, այդ իսկ պատճառով այցելության /տուրիստական տվյալները նշված կլինեն ամբողջ հուշարձանի համար:
(v) Հուշարձանի և պահպանական գոտու տարածքում ապրող բնակիչների քանակը **Բնակչության մոտավոր թիվը, որը բնակվում է՝** **Առաջադրված հուշարձանի տարածքում** _____ **Պահպանական գոտում** _____ **Ընդամենը** _____ **Տարի** _____	Նշեք առաջադրված հուշարձանի և ցանկացած պահպանական գոտու տարածքում ապրող բնակչության ամենաճշգրիտ տվյալները կամ մոտավոր հաշվարկված թիվը: Նշեք, թե որ տարում են կատարվել այդ հաշվարկները:	
5.Հուշարձանի պաշտպանություն և կառավարում	Անվանակարգի այս բաժնի նպատակն է տրամադրել հստակ պատկեր օրենսդրական, կարգավորող, պայմանագրային, պլանավորման, ինստիտուցիոնալ և/կամ ավանդական միջոցների (տես Գործառնական ուղեցույցի պարագրաֆ 132) և կառավարման պլանների կամ այլ կառավարման համակարգերի մասին (Գործառնական ուղեցույցի 108–18 պարագրաֆներ), որոնք անհրաժեշտ են Համաշխարհային ժառանգության կոնվենցիայով նախատեսված հուշարձանը պաշտպանելու և կառավարելու համար: Բաժինը պետք է ներառի քաղաքական ասպեկտները, իրավական կարգավիճակը, պաշտպանիչ միջոցները և առօրյա կառավարման գործառույթներն ու կառավարումը:	• Տես սույն ձեռնարկի 87–91 էջերը: • Արդյունավետ պաշտպանությունը շատ կարևոր է Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար, և անվանակարգը պետք է ներկայացնի, թե ինչպես է այն տրամադրվում և իրականացվում տեղում: • Ակնկալվում է, որ անվանակարգի ներկայացման ժամանակ հուշարձանը պետք է ունենա արդյունավետ կառավարման պլան կամ փաստաթղթավորված համակարգ: • Զբոսաշրջության կայուն կառավարման սկզբունքներին կարելի է ծանոթանալ հետևյալ ձեռնարկում՝ Տուրիզմի կառավարումը Համաշխարհային ժառանգության հուշարձաններում. Գործնական ձեռնարկներ Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարիչների համար, Համաշխարհային ժառանգության ձեռնարկ 1 (Պեդերսեն, 2002).

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
5.a Սեփականություն	Նշեք հողի սեփականության հիմնական կատեգորիաները (ներառյալ՝ պետական, տարածաշրջանային, մասնավոր, համայնքային, ավանդական, սովորական և ոչ կառավարական սեփականություն և այլն):	• Համալիր հուշարձանների դեպքում այս տեղեկատվությունը լավագույնս կարելի է ներկայացնել աղյուսակով և մեկնաբանություններով, քարտեզով կամ պլանով:
5.b Պաշտպանական կարգավիճակը	Թվարկեք հուշարձանի համապատասխան օրենսդրական, կարգավորող, պայմանագրային, պլանավորման, ինստիտուցիոնալ և/կամ ավանդական կարգավիճակը: Օրինակ՝ ազգային կամ շրջանային պարկ, պատմական հուշարձան, ազգային օրենքով պաշտպանվող կամ այլ նշանակության տարածք: Ներկայացրեք նշանակման տարին և այն օրենսդրական ակտերը, որոնցով հաստատվում է կարգավիճակի շնորհումը: Եթե հնարավոր չէ փաստաթուղթը ներկայացնել անգլերենով կամ ֆրանսերենով, պետք է ներկայացվի ընդհանուր եզրակացություն անգլերեն կամ ֆրանսերեն՝ նշելով հիմնական դրույթները:	• Բացի ցուցակից, այս տեղեկատվությունը կարելի է ներկայացնել նաև մեկնաբանություններով, քարտեզով կամ պլանով: • Սահմանների կամ պահպանական գոտու հիմնավորումը պետք է ներկայացվի այս բաժնում:
5.c Պաշտպանական միջոցառումների իրականացման միջոցներ	Նկարագրեք, թե ինչպես է իրականացվում 5.b բաժնում նշված օրենսդրական, կարգավորող, պայմանագրային, պլանավորման, ինստիտուցիոնալ և/կամ ավանդական կարգավիճակով պայմանավորված հուշարձանի պաշտպանությունը:	• Մեծ տարբերություն կարող է լինել հնարավոր տեսական պաշտպանության և փաստացի պաշտպանության մեխանիզմների միջև: Փաստացի իրավիճակի մասին տեղեկատվությունը ամենակարևոր մասն է և պետք է անպայման ներառվի: • Անհրաժեշտ է հողում կատարել նաև պնդումները փաստող ցանկացած ապացույցին:
5.d Առկա պլաններ կապված քաղաքապետարանի կամ այն շրջանի հետ, որտեղ գտնվում է առաջադրված հուշարձանը (օրինակ՝ տարածաշրջանային կամ տեղական պլան, պահպանման ծրագիր, զբոսաշրջության զարգացման ծրագիր):	Թվարկեք հաստատված պլաններն ու ծրագրերը՝ նշելով ընդունման ամսաթիվը և ծրագրի պատրաստման համար պատասխանատու կազմակերպությունը: Այս բաժնում պետք է ամփոփել համապատասխան դրույթները: Ծրագրի /պլանի պատճենը պետք է ներկայացվի որպես կից փաստաթուղթ, ինչպես նշված է 7.b բաժնում: Եթե ծրագիրը /պլանը առկա չէ անգլերենով կամ ֆրանսերենով, հարկավոր է ներկայացնել անգլերեն կամ ֆրանսերեն ամփոփագիր, որտեղ կնշվեն հիմնական դրույթները:	• Ծրագրերի /պլանների արդյունավետության գնահատման հետ մեկտեղ պետք է նշվի նաև դրանց կարգավիճակը: • Բացի այդ, պետք է ներկայացվի տեղեկատվություն այն մասին, թե արդյոք նման ծրագրերը համահունչ են հուշարձանի պաշտպանության, պահպանության և կառավարման հետ: • Հարկավոր է նշել նաև ծրագրի իրականացման աշխարհագրական կամ այլ շրջանակները (օրինակ՝ ծրագիրը վերաբերում է ամբողջ հուշարձանին, թե միայն դրա մի մասին):
5.e Հուշարձանի կառավարման պլան կամ այլ կառավարման համակարգ	Ինչպես նշված է Գործառնական ուղեցույցի պարագրաֆ 132-ում շատ կարևոր է անվանակարգում ներկայացնել համապատասխան կառավարման պլան կամ այլ կառավարման համակարգ: Հարկավոր է նաև նշել համապատասխան կառավարման պլանի կամ այլ կառավարման համակարգի արդյունավետ իրականացման հավաստիացումը: Կայուն զարգացման սկզբունքները պետք է ներառվեն կառավարման համակարգում: Անվանակարգին պետք է կցել նաև կառավարման պլանի պատճենը կամ դրա հետ կապված այլ փաստաթղթեր անգլերեն կամ	• Տես սույն ձեռնարկի 89–91 էջերը: • Հարկավոր է տրամադրել կառավարման պլանի /համակարգի արդյունավետության ապացույցներ, այլ ոչ միայն հավաստիացումներ կամ պնդումներ: • Կառավարման պլանը /համակարգը առաջին հերթին պետք է ապահովի հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանումն ու պաշտպանությունը: • Կառավարման պլանում /համակարգում պետք է հաշվի առնվեն հուշարձանի հետ կապված իրական ներկա հանգամանքները, մասնավորապես՝ խնդիրները:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	ֆրանսերեն, ինչպես նշված է 7.b բաժնում: Եթե կառավարման պլանը անգլերենով կամ ֆրանսերենով չէ, ապա պետք է կցել նաև դրա դրույթների մանրամասն նկարագրությունը անգլերեն կամ ֆրանսերեն: Անվանակարգին կից ներկայացված կառավարման պլանում նշեք նաև վերնագիրը, ամսաթիվն ու հեղինակին: Անհրաժեշտ է նաև տրամադրել կառավարման պլանի կամ փաստաթղթավորված կառավարման համակարգի մանրամասն վերլուծություն կամ բացատրություն: Խորհուրդ է տրվում ներկայացնել նաև կառավարման պլանի իրականացման ժամանակացույց:	• Սերիական կամ անդրազգային հուշարձանների կամ բազմաթիվ կառավարման պլաններ /համակարգեր ունեցող համալիր հուշարձանների դեպքում հարկավոր է ներկայացնել այդ պլանների /համակարգերի կոմպլեմենտարությունը (միմյանց լրացնելը): Անհրաժեշտ է փաստաթղթավորել առանձին բաղադրիչների համակարգված կառավարումը:
5.f Ֆինանսավորման աղբյուրներն ու ծավալը	Տարեկան կտրվածքով ներկայացրեք հուշարձանին հատկացված ֆինանսավորման աղբյուրներն ու ծավալը: Կարելի է նաև գնահատել առկա ռեսուրսների համապատասխանությունը՝ մասնավորապես նշելով բացթողումները կամ թերությունները կամ ցանկացած օղակ, որտեղ անհրաժեշտ է օգնություն:	
5.g Փորձի փոխանակման և վերապատրաստման աղբյուրները պահպանման և կառավարման հմտությունների յուրացման գործընթացում	Նշեք վերապատրաստման կամ փորձի փոխանակման դասընթացները, որոնք կազմակերպվում են հուշարձանների համար իշխանությունների կամ այլ կազմակերպությունների կողմից:	• Հարկավոր է նշել հուշարձանին տրամադրվող իրական վերապատրաստման կամ ուսումնառության փորձի առկայությունը, ինչպես նաև նշել այն, ինչ կարող է հետագայում տրամադրվել: • Փորձի փոխանակումն ու վերապատրաստումը կարող են իրականացվել հուշարձանի սահմաններում գործող կառավարման գործակալության, ինչպես նաև այլ կազմակերպության կողմից: • Անհրաժեշտ է գնահատել փորձի փոխանակման և վերապատրաստման հարմարավետությունն ու ծավալը՝ հուշարձանի հատուկ կարիքները բավարարելու նպատակով:
5.h Այցելուների համար նախատեսված հարմարություններ և ենթակառուցվածք	Այս բաժնում պետք է նկարագրել հուշարձանի տարածքում այցելուների համար նախատեսված հարմարությունները և ցույց տալ, որ դրանք համապատասխանում են հուշարձանի պաշտպանության և կառավարման պահանջներին: Այստեղ պետք է ներկայացնել, թե ինչպես են ենթակառուցվածքներն ու ծառայությունները ապահովում հուշարձանի արդյունավետ և ամբողջական ներկայացումը՝ այցելուների կարիքները բավարարելու նպատակով՝ ներառյալ դեպի հուշարձան ապահով և համապատասխան հասանելիության ապահովումը: Այստեղ պետք է ներառել այնպիսի հարմարություններ, որոնք կարող են կապված լինել հետևյալ բնագավառների հետ՝ թարգմանություն /բացատրություն (ցուցանակներ, արահետներ, ծանուցումներ կամ հրապարակում, ուղեցույցներ), հուշարձանին նվիրված թանգարաններ /ցուցահանդեսներ, այցելուների կամ տեղեկատվական կենտրոն և/կամ թվային տեխնոլոգիաների հնարավոր օգտագործում և այլ ծառայություններ (գիշերակացի ապահովում, ռեստորան, մեքենայի կայանատեղի, զուգարաններ, փրկարար ծառայություն և այլն):	• Անհրաժեշտ է գնահատել ենթակառուցվածքների հարմարավետությունն ու ծավալը՝ հուշարձանի հատուկ կարիքները բավարարելու նպատակով: • Պետք է հաշվի առնել այդ ենթակառուցվածքների և հուշարձանի պաշտպանության և պահպանության միջև հնարավոր ցանկացած անհամատեղելիություն, կոնֆլիկտ:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
5.i Քաղաքականություն և ծրագրեր՝ կապված հուշարձանի ներկայացման և խթանման հետ	Այս բաժինը վերաբերում է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 4-րդ և 5-րդ կետերին, որոնց նպատակն է ապագա սերունդներին ներկայացնել և փոխանցել մշակութային և բնության ժառանգությունը: Անդամ պետություններին խրախուսում ենք տեղեկատվություն տրամադրել առաջադրված հուշարձանի ներկայացմանն ու խթանմանն ուղղված քաղաքականության կամ ծրագրերի վերաբերյալ:	• Հարկավոր է տրամադրել միայն ամփոփ տեղեկատվություն: • Այդ ծրագրերն ու քաղաքականությունը կարող են ներառվել բացատրական և այլ ծրագրերում կամ պլաններում: • Հարկավոր է տրամադրել նաև ծրագրերի համար միջոցներ հայթայթելու և այդ ծրագրերի և քաղաքականության արդյունավետության մասին տեղեկատվություն: • Արդյո՞ք ծրագրերն իրականում ներկայացնում և խթանում են հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը: • Արդյո՞ք կան հակասություններ ներկայացման /խթանման և պաշտպանության / պահպանման հարցերում:
5.j Աշխատակազմի մակարդակը և որակավորումը (մասնագիտական, տեխնիկական, սպասարկման)	Նշե՛ք հուշարձանի լավ կառավարման համար անհրաժեշտ հմտություններն ու որակավորումները՝ ներառելով նաև հուշարձանի այցելությունների մակարդակը և հետագա վերապատրաստման կարիքը:	• Արդյո՞ք աշխատակազմի մակարդակը բավարար է: • Արդյո՞ք հմտություններն ու վերապատրաստման մակարդակը համապատասխանում են հուշարձանի արժեքներին:
6. Մոնիթորինգ	Անվանակարգի այս բաժնի նպատակն է փաստեր տրամադրել հուշարձանի պահպանվածության վիճակի մասին, որոնք պարբերաբար կարող են վերանայվել և զեկուցվել՝ ժամանակի միտումները հայտնաբերելու նպատակով:	
6.a Հուշարձանի պահպանվածության վիճակի չափման հիմնական ցուցանիշները	Աղյուսակում թվարկե՛ք այն հիմնական ցուցանիշները, որոնք ընտրվել են որպես ամբողջ հուշարձանի պահպանվածության վիճակի չափման միավոր (տես վերևում նշված 4.a բաժինը): Նշե՛ք այդ ցուցանիշների վերանայման պարբերականությունը և գրանցումների պահպանման վայրը: Նրանք կարող են հուշարձանի կարևոր ասպեկտը ներկայացնել և շատ սերտ կապ ունենալ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության հետ: (տես վերևում նշված 2.b բաժինը): Հնարավորության դեպքում դրանք պետք է արտահայտվեն թվերով, իսկ եթե դա հնարավոր չէ՝ պետք է լինեն այնպիսին, որ հնարավոր լինի դրանք վերարտադրել և կրկնել, օրինակ՝ նույն կետից նկարներ անելով: Լավ ցուցանիշների օրինակներ են՝ (i) տեսակների քանակը կամ հիմնական տեսակների բնակեցվածության քանակը բնության հուշարձանում, (ii) պատմական քաղաքում կամ շրջանում հիմնովին վերանորոգում պահանջող շենքերի տոկոսը, (iii) քանի տարի է նախատեսվում նախքան խոշոր պահպանման ծրագրի հավանական ավարտը, (iv) կայունությունը կամ առանձին շենքի կամ շենքի մի հատվածի տեղաշարժի աստիճանը, (v) հուշարձանի վրա որևէ ազդեցության ավելացման կամ նվազման աստիճանը:	• Ցուցանիշները պետք է վերաբերեն պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքին, այլ ոչ թե ցանկացած չափելի որևէ բանին:

Անվանակարգի առկա ձևաչափ			Լրացուցիչ խորհրդատվություն
Ցուցանիշ	Պարբերականություն	Գրանցումների պահպանման վայր	

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
6.b Հուշարձանի մոնիթորինգի համար նախատեսված վարչական կարգավորումներ	Նշեք այն գործակալությունների անուններն ու կոնտակտային տվյալները, որոնք պատասխանատու են 6.a. կետում նշված մոնիթորինգի իրականացման համար:	
6.c Նախորդ հաշվետվությունների արդյունքները	Համառոտ ամփոփմամբ թվարկեք հուշարձանի պահպանվածության վիճակի մասին նախորդ հաշվետվությունները և տրամադրեք հրապարակված աղբյուրների քաղվածքներ և հղումներ (օրինակ՝ միջազգային համաձայնագրերի և ծրագրերի համաձայն ներկայացված զեկույցները՝ Ռամսար, MAB («Մարդը և Կենսոլորտը»):	• Նկատելի խնդիրների կամ պահպանվածության վատ վիճակի դեպքում հարկավոր է նկարագրել ներկա իրավիճակը կամ նախաձեռնված վերականգնող գործողությունները: • Եթե դեռ առկա են խնդիրներ կամ պահպանվածության վատ վիճակ, այդ մասին պետք է զեկուցել վերոնշյալ 4 բաժնում:
7. Փաստաթղթավորում	Անվանակարգի այս բաժնում ներկայացվում է ամբողջական անվանակարգի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:	
7.a Նկարների, աուդիովիզուալ պատկերների գույքացուցակ և օգտագործման թույլտվություն	Հուշարձանի ընդհանուր պատկերի ցուցադրման նպատակով անդամ պետությունները պետք է ներկայացնեն բավարար քանակությամբ պատկերներ (նկարներ, սլայդեր, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային ֆորմատով տեսանյութեր և օդից արված լուսանկարներ՝ աէրոլուսանկարներ): Սլայդերը պետք է լինեն 35մմ ֆորմատով, իսկ էլեկտրոնային նկարները jpg ֆորմատով և 300 dpi լուծումով: Եթե ներկայացնում եք տեսանյութ, ապա այն պետք է լինի Beta SP ֆորմատով՝ լավ որակ ապահովելու նպատակով: Այս նյութը պետք է ուղեկցվի պատկերների գույքացանկով և նկարներով, ինչպես նաև ստորև նշված աուդիովիզուալ թույլտվության ձևով: Պետք է ներառել առնվազն մեկ նկար, որը կարող է օգտագործվել հանրային ինտերնետային էջում: Անդամ պետություններին կոչ է արվում գրավոր և անվճար հիմունքներով ՅՈՒՆԵՍԿՕ-ին տրամադրել տարածման, հանրային հաղորդակցման, հրատարակման, վերարտադրման, ցանկացած ձևով և հիմքերով՝ ներառյալ թվային, տրամադրված պատկերների շահագործման ոչ բացառիկ իրավունքը, ինչպես նաև երրորդ կողմին այդ	• Նկարները պետք է արտացոլեն հուշարձանի պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեքը, ինչպես նաև դրա համատեքստը:

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
	իրավունքների օգտագործման փոխանցման իրավունքը: Ոչ բացառիկ իրավունքների փոխանցումը չի վերաբերում մտավոր սեփականության իրավունքին (լուսանկարչի իրավունք /տեսանյութի ռեժիսոր կամ հեղինակային իրավունքի կրող, եթե տարբեր անձիք են), իսկ երբ պատկերները տարածվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից, միշտ նշվում է լուսանկարչի /տեսանյութի ռեժիսորի անունը, եթե այն հստակ նշված է ձևաչափում: Իրավունքի փոխանցումից առաջացած բոլոր եկամուտներն ուղղվելու են Համաշխարհային ժառանգության հիմնադրամ:	

Անվանակարգի առկա ձևաչափ								Լրացուցիչ խորհրդատվություն
No	ձևաչափ (Սլայդ / Նկար / Տեսանյութ)	Վերնագիր	Նկարի ամսաթիվ (ամիս/տարի)	Լուսանկարիչ /Տեսանյութի ռեժիսոր	Հեղինակային իրավունքի կրող (եթե այլ է, քան լուսանկարիչ / տեսանյութի ռեժիսոր)	Հեղինակային իրավունքի կրողի կոնտակտային տվյալներ (անուն, հասցե, հեռ./ֆաքս և էլեկտրոնային հասցե)	Իրավունքների ոչ բացառիկ փոխանցում	

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
7.b Հուշարձանի պաշտպանական նշանակմանը, կառավարման պլանների պատճեններին, փաստաթղթային կառավարման համակարգերին և հուշարձանի հետ կապված այլ ծրագրերի քաղվածքներին վերաբերող փաստաթղթեր	Կցեք 5.b, 5.d և 5.e բաժիններում նշված փաստաթղթերը:	
7.c Հուշարձանի գույքացանկի վերջին գրանցումների ձևն ու ամսաթիվը	Ներկայացրեք հուշարձանի գույքացանկի վերջին գրանցումների ձևն ու ամսաթիվը նշող պարզ հայտարարություն:	
7.d Գույքացանկի, գրանցումների և արխիվների պահման հասցեն	Նշեք գույքացանկի գրանցումները (շենքեր, հուշարձաններ, ֆլորայի և ֆաունայի տեսակներ) պահող գործակալությունների անուններն ու հասցեները	
7.e Մատենագրություն	Թվարկեք հիմնական հրատարակված տեղեկանքները՝ օգտագործելով ստանդարտ մատենագրական ձևաչափ:	

Անվանակարգի առկա ձևաչափ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ	Անվանակարգի առկա ձևաչափ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	Լրացուցիչ խորհրդատվություն
8. Պատասխանատու մարմինների կոնտակտային տվյալները	Անվանակարգի այս բաժինը հնարավորություն է տալիս քարտուղարությանը հուշարձանին տրամադրել Համաշխարհային ժառանգության նորությունների և այլ խնդիրների վերաբերյալ ընթացիկ տեղեկություններ:	
8.a Պատրաստող **Անուն՝** **Պաշտոն՝** **Հասցե՝** **Քաղաք,** **մարզ /նահանգ, երկիր՝** **Հեռ.՝** **Ֆաքս՝** **Էլեկտրոնային հասցե՝**	Նշեք անվանակարգի պատրաստման համար պատասխանատու անձի անունը, հասցեն և այլ տվյալները: Եթե էլեկտրոնային հասցեն առկա չէ, անհրաժեշտ է նշել ֆաքսի համարը:	
8.b Տեղական պաշտոնական հաստատություն / գործակալություն **8.c Այլ տեղական հաստատություն**	Նշեք գործակալության, թանգարանի, հաստատության, համայնքի կամ հուշարձանի կառավարման համար պատասխանատու ղեկավարի անունը: Եթե հաշվետու հաստատությունը ազգային գործակալություն է, նշեք նաև դրա կոնտակտային տվյալները: Թվարկեք Համաշխարհային ժառանգության հետ կապված իրադարձությունների և խնդիրների մասին Համաշխարհային ժառանգության անվճար տեղեկագիրք ստացող բոլոր թանգարանների, այցելուների կենտրոնների և զբոսաշրջության պաշտոնական գրասենյակների հասցեները, հեռախոսահամարները, ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեները:	
8.d Պաշտոնական ինտերնետային էջի հասցե **http://** **Կոնտակտային անձ՝** **Էլեկտրոնային հասցե՝**	Նշեք առաջադրված հուշարձանի պաշտոնական կայքի ցանկացած գործող հասցե: Եթե նման կայքէջը դեռ ստեղծման փուլում է, խնդրում ենք նշել կոնտակտային անձի անունը և էլեկտրոնային փոստի հասցեն:	
9. Անդամ պետության անունից ստորագրությունը	Անվանակարգի վերջում պետք է ստորագրի անդամ պետության անունից լիազորված պաշտոնյան:	

4.3 Լրացուցիչ խորհրդատվություն

Ստուգում և վերանայում

Անվանակարգի պատրաստման գործընթացն ավարտելուց հետո, կարող եք օգտվել մի շարք օգտակար հուշումներից, որոնք կարող են օգնել ապահովել լավ արդյունք.

• ստուգեք, և անհրաժեշտության դեպքում, վերանայեք ամփոփագիրը՝ համոզվելու, որ այն համահունչ է անվանակարգի հիմնական տեքստի հետ,

• ստուգեք անվանակարգը՝ համոզվելու, որ բոլոր հիմնական հաղորդագրությունները փոխանցված են և հստակ արտահայտված,

• խմբագրեք անվանակարգի տեքստը համահունչության և ոճի առումով, մասնավորապես, եթե այն պատրաստվել է տարբեր հեղինակների կողմից: Այդուհանդերձ, համոզվեք, որ կարևոր բովանդակությունը չի կորում կամ խեղաթյուրվում,

• անվանակարգի նախագիծը ուղարկեք մեկ այլ անձի վերանայման, մասնավորապես այնպիսի մեկի, ով կապված չէ հուշարձանի հետ և տեղյակ չէ երկրից կամ դրա ժառանգությունից: Անպայման հաշվի առեք վերանայման արդյունքում առաջացած կարիքներն ու դիտողությունները,

• ստուգեք անվանակարգի ամբողջական լինելը՝ Գործառնական ուղեցույցի 132 պարագրաֆի համաձայն:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Իրականացրեք անվանակարգի անկախ ուսումնասիրությունը:

Սերիական անվանակարգեր

Սերիական անվանակարգերի դեպքում ներառվող տեղեկատվության քանակը կարող է բավականին մեծ լինել, քանի որ այն բազմապատկվում է հուշարձանի բաղադրիչների քանակով (օրինակ՝ յուրաքանչյուր բաղադրիչի նկարագրությունը): Չափից շատ տեղեկատվությունը բարդացնում է անվանակարգի ընթերցումն ու ընկալումը:

Հարկավոր է գտնել յուրաքանչյուր բաղադրիչի մասին հիմնական տեղեկատվության ներառման ճիշտ հավասարակշռությունը:

Տարբերակներից մեկը կլինի ներառել միայն ամփոփ տեղեկատվություն անվանակարգի հիմնական մասում, իսկ բաղադրիչների մասին մանրամասն տեղեկատվությունը կցել հավելվածներով և հղում տալ հիմնական տեքստին:

5 Գնահատման գործընթաց

5.1 Հիմնական

Բոլոր անհրաժեշտ պատճեններով հանդերձ անվանակարգային փաթեթի ներկայացումից հետո սկսում է գնահատման գործընթացը:

Առաջին քայլն արվում է Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից, որը ստուգում է անվանակարգային փաթեթի ամբողջականությունը: Եթե այն ամբողջական չէ, այն չի ուղարկվի խորհրդատվական մարմին գնահատման համար, այլ կվերադարձվի և պետք է այնուհետ լրացվի՝ հաջորդ տարի ներկայացնելու համար:

Այն դեպքում, եթե անվանակարգն ամբողջական է, այն ուղարկվում է համապատասխան խորհրդատվական մարմիններին գնահատման համար: Խորհրդատվական մարմինները պետք է գնահատեն, թե արդյոք առաջադրված հուշարձանն ունի Համաշխարհային բացառիկ արժեք, թե արդյոք համապատասխանում է ամբողջականության և իսկության պայմաններին, պաշտպանության և կառավարման պահանջներին: ԻԿՕՄՈՍ-ի և IUCN -ի գնահատման գործընթացի մանրամասները ներկայացված են Գործառնական ուղեցույցի 6-րդ հավելվածում և նկարագրված են ստորև:

Խորհրդատվական մարմինների կողմից գնահատումից հետո, սակայն մինչև Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից անվանակարգի ընդունվելը խորհրդատվական մարմինները կարող են հարցեր ուղղել կամ տեղեկատվություն պահանջել անդամ պետությունից մինչև կոմիտեի կողմից անվանակարգի քննարկման տարվա հունվարի 31-ը (Գործառնական ուղեցույց, պարագրաֆ149):

Այս տեղեկատվությունը պետք է ուղարկվի մինչև փետրվարի 28-ը, որպեսզի այն քննարկվի խորհրդատվական մարմինների կողմից: Համաձայն Գործառնական ուղեցույցի՝ խորհրդատվական մարմիններին արգելվում է քննարկել այդ ամսաթվից հետո ուղարկված որևէ տեղեկատվություն:

Անդամ պետությունները, նախքան կոմիտեի նիստը, նաև կարող են գրել կոմիտեի նախագահին՝ նշելով խորհրդատվական մարմինների կողմից տրված գնահատականում փաստացի սխալները (Գործառնական ուղեցույց, պարագրաֆ 150):

Շատ կարևոր է, որ անդամ պետությունը Համաշխարհային ժառանգության կոմիտեին տեղեկացնի գնահատման ընթացքում առաջադրված հուշարձանի վրա ներազդող որևէ փոփոխության մասին: Նման տեղեկությունը կարևոր ազդեցություն կարող է ունենալ գնահատման արդյունքի վրա:

Համաշխարհային ժառանգության կոմիտեն է որոշում կայացնում հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ներառելու կամ չներառելու մասին: Այս որոշումը կայացնելիս կոմիտեին օգնում է նաև համապատասխան խորհրդատվական մարմինների կողմից տրված գնահատականը:

5.2 IUCN-ի գնահատման գործընթացը

Անվանակարգերի տեխնիկական գնահատումն իրականացնելիս IUCN-ն ուղղորդվում է կոնվենցիայի Գործառնական ուղեցույցով: Գնահատման գործընթացը տևում է մեկ տարուց ավել՝ ապրիլից, երբ IUCN -ը ստանում է անվանակարգը, մինչև հաջորդ տարվա մայիս, երբ IUCN-ը գնահատման հաշվետվությունն ուղարկում է Համաշխարհային ժառանգության կենտրոն: Գործընթացը ներառում է հետևյալ քայլերը՝

1. Տվյալների հավաքագրում: Օգտագործելով անվանակագի փաստաթուղթը՝ պաշտպանված տարածքների վերաբերյալ համաշխարհային տվյալների շտեմարանը և այլ օգտակար տեղեկատու նյութեր, ստեղծվում է ստանդարտ տվյալների ցանկը:
2. Անկախ վերլուծություն: Անվանակարգն ուղարկվում է անկախ փորձագետներին, ովքեր քաջատեղյակ են հուշարձանից և դրա բնական արժեքներից՝ ներառյալ WCPA-ի անդամները, IUCN-ի այլ մասնագիտական հանձնաժողովներն ու գիտական օղակները կամ տարածաշրջանում գործող հասարակական կազմակերպությունները (յուրաքանչյուր տարի նման վերլուծությունների են մասնակցում 100-150 անկախ փորձագետ):

3. Հուշարձանի այցելություն: IUCN-ի և անկախ փորձագետներից բաղկացած առաքելությունները կատարում են հուշարձանի գնահատումը հենց տեղում, և քննարկում են անվանակարգը համապատասխան ազգային և տեղական իշխանությունների, համայնքների, հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ կողմերի հետ: Առաքելությունների այցը սովորաբար տեղի է ունենում մայիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Խառը հուշարձանների և որոշ մշակութային լանդշաֆտների դեպքում առաքելություններն իրականացվում են ԻԿՕՄՕՍ-ի հետ համատեղ:

4. IUCN-ի Համաշխարհային ժառանգության խորհրդի քննարկում: IUCN Համաշխարհային ժառանգության խորհուրդը հանդիպում է առնվազն տարին մեկ անգամ, սովորաբար դեկտեմբերին՝ Շվեյցարիայում IUCN-ի կենտրոնակայանում յուրաքանչյուր անվանակարգը գնահատելու համար: Երկրորդ հանդիպումը կամ կոնֆերանս հեռախոսազրույցը անհրաժեշտության դեպքում տեղի է ունենում հաջորդող մարտ ամսին: Խորհուրդը քննարկում է անվանակարգային փաթեթները, հուշարձանների այցելությունների հաշվետվությունները, անկախ փորձագետների մեկնաբանությունները, հուշարձանի տվյալների թերթիկները և այլ համապատասխան տեղեկատու նյութեր: IUCN-ին տրամադրում է տեխնիկական խորհրդատվություն և յուրաքանչյուր անվանակարգի համար առաջարկություններ: Վերջնական հաշվետվությունը պատրաստվում և ուղարկվում է Համաշխարհային ժառանգության կենտրոն մայիսին՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամներին բաժանելու համար:

5. Վերջնական առաջարկություններ: Հունիսին կամ հուլիսին կայանալիք Համաշխարհային ժառանգության կոմիտեի տարեկան նիստի ժամանակ IUCN-ը պատկերների և քարտեզների օգնությամբ ներկայացնում է իր գնահատման գործընթացի առաջարկություններն ու արդյունքները և պատասխանում հարցերի: Համաշխարհային ժառանգության կենտրոնը կայացնում է վերջնական որոշում հուշարձանի՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ներառելու կամ չներառելու վերաբերյալ:

Հարկավոր է նշել, որ IUCN-ը գնահատման գործընթացի ժամանակ փորձում է անդամ պետության հետ ստեղծել և պահպանել երկխոսություն՝ հնարավորություն տալով անդամ պետությանը տրամադրել բոլոր հնարավոր տվյալները և հստակեցնել ընթացքում ծագող ցանկացած հարց և խնդիր: Այդ պատճառով, գոյություն ունի երեք դեպք, որի ժամանակ IUCN-ը կարող է հավելյալ տեղեկատվություն պահանջել անդամ պետությունից: Այդ դեպքերը հետևյալն են՝

- Նախքան հուշարձանի այցելությունը: IUCN-ը անդամ պետությանը, սովորաբար հենց ընդունող երկրում այցելությունը կազմակերպող անձին, ուղարկում է այցելող առաքելության մասին մանրամասներ, շատ դեպքերում նաև ուղարկելով հստակ հարցեր և խնդիրներ, որոնք պետք է քննարկվեն առաքելության ընթացքում: Սա անդամ պետությանը հնարավորություն է տալիս ավելի լավ պատրաստվել այցելությանը:
- Անմիջապես հուշարձանի այցելությունից հետո: Հուշարձանի այցելության ժամանակ տեղի ունեցած քննարկումների հիման վրա IUCN-ը կարող է պաշտոնական նամակ ուղարկել՝ խնդրելով տրամադրել հավելյալ տեղեկատվություն մինչև դեկտեմբերին կայանալիք IUCN-ի Համաշխարհային ժառանգության խորհրդի նիստը, որպեսզի խորհուրդն ապահովված լինի անվանակարգի վերաբերյալ առաջարկություն կատարելու անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությամբ:
- IUCN-ի Համաշխարհային ժառանգության խորհրդի նիստից հետո: Եթե խորհուրդը գտնում է, որ որոշ հարցերի պատասխաններ դեռ անհրաժեշտ են կամ դեռևս կան պարզաբանելու խնդիրներ, անդամ պետությանը կուղարկվի վերջնական նամակ՝ խնդրելով հավելյալ տեղեկատվություն տրամադրել մինչև հստակ վերջնաժամկետը: Վերջնաժամկետը պետք է հստակորեն պահպանվի, որպեսզի IUCN-ը կարողանա ավարտել գնահատման գործընթացը:

Նշում. Եթե անդամ պետության կողմից առաջադրման պահին և առաքելության ընթացքում տրամադրված տեղեկատվությունը բավարար է, IUCN-ը չի պահանջում հավելյալ տեղեկատվություն: Ակնկալվում է, որ հավելյալ տեղեկատվություն պահանջվում է ի պատասխան հատուկ հարցի կամ խնդրի և չպետք է ներառի ամբողջապես վերանայված անվանակարգը կամ մեծ քանակությամբ նոր տեղեկատվություն:

Անվանակարգի տեխնիկական գնահատման մեջ օգտագործվում է Ուդվարդի կենսաաշխարհագրական գաղափարը անվանակարգը՝ այլ նմանատիպ հուշարձանների հետ համեմատելու նպատակով: Այս մեթոդի շնորհիվ բնության հուշարձանների համեմատությունն ավելի օբյեկտիվ է կատարվում և հանդիսանում է համաշխարհային մակարդակում նմանությունները գնահատելու գործնական միջոց: Միևնույն ժամանակ Համաշխարհային ժառանգության հուշարձանները պետք է ունենան հատուկ առանձնահատկություններ, բնակավայրեր, ֆաունիստական կամ ֆլորիստական հատկություններ, որոնք կարելի է համեմատել ավելի լայն բիոմից ելնելով: Կարևոր է նշել, որ կենսաաշխարհագրական գաղափարը օգտագործվում է միայն որպես համեմատության հիմք և չի նշանակում, որ Համաշխարհային ժառանգության հուշարձանները պետք է ընտրվեն միայն հիմնվելով այդ չափորոշիչի վրա: Բացի այդ, համընդանուր նշանակության հուշարձանների բացահայտման համար

օգտագործվում են գլոբալ առաջնահերթության համակարգեր, ինչպիսիք են Պահպանման միջազգային կենսաբազմազանության կետերը, Վայրի բնության համաշխարհային հիմ–նադրամի էկոռեգիոնները, թռչունների պաշտպանության միջազգային կազմակերպության (BirdLife International) էնդեմիկ թռչունների շրջանները, IUCN/WWF բույսերի բազմազանու–թյան կենտրոնները և IUCN/SSC բնակավայրերի դասակարգումը և IUCN/UNEP-WCMC 2004 թվականի Համաշխարհային ժառանգության ցանցի վերլուծությունը: Ուղղորդող սկզբունքն այն է, որ Համաշխարհային ժառանգության հուշարձանները պետք է ունենան Համաշխարհային բացառիկ արժեք:

Վերջապես, գնահատման գործընթացը համալրվում է IUCN, UNEP-WCMC կողմից հրատարակված 20 հատորից բաղկացած աշխարհի պաշտպանվող տարածքների մասին գրքերի տպագրմամբ: Դրանք են՝

- Աֆրիկայում, Ասիայում և Օվկիանայում պահպանվող տարածքների համակարգերի մասին տեսություն,
- Քառահատոր ուղեցույց՝ աշխարհի պահպանվող տարածքների մասին,
- Վեց հատորից բաղկացած գլոբալ կենսաբազմազանության ատլաս,
- Եռահատոր ուղեցույց՝ բույսերի բազմազանության կենտրոնների մասին,
- Եռահատոր ուղեցույց՝ աշխարհի կորալային խութերի մասին,
- Քառահատոր վերլուծություն՝ ծովային պաշտպանված տարածքների համընդանուր ներկա–յացուցչական համակարգի մասին:

Այս փաստաթղթերը միասին ապահովում են համակարգային լայնածավալ վերլուծություններ, որոնք թույլ են տալիս ամբողջ աշխարհում կատարել պաշտպանվող տարածքների պահպանման կարևորության համեմատությունը:

5.3 ԻԿՕՄՕՍ -ի գնահատման գործընթացը

Մշակութային հուշարձանների անվանակարգերը գնահատելիս ԻԿՕՄՕՍ-ը (Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ) ղեկավարվում է Գործառնական ուղեցույցով (տես պարագրաֆ 148).

Գնահատման գործընթացը (տես 125 էջի պատկերը) ներառում է մեծածավալ խորհրդատվություն փորձագետների կողմից, ովքեր ներկայացնում են ԻԿՕՄՕՍ-ի անդամներին, նրա ազգային և միջազգային կոմիտեները, ինչպես նաև դրանց հետ կապված շատ այլ մասնագիտական

օղակներ: Անդամներին՝ տարբեր փորձագիտական առաքելության կազմում նաև ուղարկում են հուշարձան՝ կոնֆիդենցիալ գնահատումներ կատարելու նպատակով: Այս լայնածավալ խորհրդատվության արդյունքում պատրաստվում է մանրամասն խորհրդատվական փաստաթուղթ, որը ներկայացվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեին տարեկան հանդիպումների ժամանակ:

Փորձագետների ընտրությունը

Գոյություն ունի հստակ սահմանված տարեկան ընթացակարգ՝ հուշարձանները Համաշխարհային ժառանգության ցանկում ներառման ներկայացնելու համար: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից նոր անվանակարգերի ամբողջականության ստուգումից հետո անվանակարգային փաթեթներն ուղարկվում են ԻԿՕՄՈՍ, որտեղ դրանցով զբաղվում է ԻԿՕՄՈՍ-ի Համաշխարհային ժառանգության քարտուղարությունը: Առաջին քայլը փորձագետների ընտրությունն է: Դրանք բաղկացած են երկու խմբերից: Առաջին խմբում նրանք են, ովքեր կարող են խորհրդատվություն տրամադրել առաջադրված հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ: Ըստ էության, սա «գրադարանային» առաջադրանք է արհեստավարժ գիտնականների համար և երբեմն կարող է ներառել ԻԿՕՄՈՍ-ի անդամ չհանդիսացող անձանց, այն դեպքում երբ ԻԿՕՄՈՍ-ի անդամների մեջ բացակայում են տվյալ խնդրով զբաղվող համապատասխան փորձագետներ: Օրինակ՝ հին մարդու բրածոների տեղանքի պատահական առաջադրման դեպքում, երբ անհրաժեշտ էին մասնագետ պալեոնթոլոգների ծառայությունները:

Փորձագետների երկրորդ խումբը բաղկացած է այն մասնագետներից, ովքեր ունեն հուշարձանների կառավարման, պահպանման և իսկության բնագավառում գործնական փորձ և պետք է իրականացնեն հուշարձանի այցելությունները: Այդ փորձագետների ընտրության նպատակով օգտագործվում է ԻԿՕՄՈՍ-ի ցանցը: Կարիք է առաջանում օգտվել նաև Միջազգային գիտական կոմիտեների և անհատ անդամների խորհրդից, նաև այն մասնագիտացված կազմակերպությունների, որոնց հետ ԻԿՕՄՈՍ-ն ունի գործընկերային համաձայնագրեր, ինչպիսիք են Արդյունաբերական ժառանգության պահպանման միջազգային կոմիտեն (TICCIH), Լանդշաֆտային ճարտարապետների միջազգային ֆեդերացիան (IFLA), և ժամանակակից քաղաքաշինության շենքերի, հուշարձանների և հարակից տարածքների փաստաթղթավորման և պահպանման միջազգային կոմիտեն (Docomomo):

Հուշարձանի այցելություն

Տեղում գնահատումներ իրականացնելու համար փորձագետներին ընտրելիս՝ ԻԿՕՄՈՍ-ի քաղաքականության համաձայն, հնարավորության դեպքում ընտրվում են տեղացի փորձագետները, որոնք բնակվում են այն վայրում, որտեղ գտնվում է հուշարձանը: Այդ փորձագետները պետք է լավ իրազեկ լինեն ժառանգության կառավարման և պահպանման խնդիրներից. պարտադիր չէ, որ նրանք լինեն նման հուշարձանների փորձագետ – գիտնականներ: Նրանք պետք է կարողանան խոսել հուշարձանի կառավարիչների հետ մասնագիտական հավասարության սկզբունքով և իրականացնել կառավարման պլանների, պահպանման պրակտիկայի, այցելուների հետ աշխատանքի մասնագիտական գնահատում: Այդ փորձագետներին տրվում են մանրամասն ցուցումներ, որոնք ներառում են անվանակարգային փաթեթների համապատասխան տեղեկատվության պատճեններ: Նրանց այցելության ծրագրերն ու ժամանակը համաձայնեցվում են անդամ պետությունների հետ, որոնք պետք է երաշխավորեն ԻԿՕՄՈՍ-ի գնահատման առաքելության հնարավորինս քիչ լուսաբանումը ԶԼՄ-ներում: ԻԿՕՄՈՍ-ի փորձագետները կոնֆիդենցիալ կերպով հուշարձանների գործնական ասպեկտի մասին իրենց զեկույցները հանձնում են Գործադիր կոմիտեին, իսկ դրանց ժամանակից շուտ լուսաբանումը կարող է անհարմարություններ պատճառել ինչպես ԻԿՕՄՈՍ-ին, այնպես էլ անդամ պետությանն ու Համաշխարհային ժառանգության կոմիտեին:

Համաշխարհային ժառանգության խորհուրդ

Այս խորհրդատվությունների արդյունքում ձևավորվող երկու զեկույցները (մշակութային գնահատում և հուշարձանի այցելության զեկույց) հանձնվում են Փարիզում ԻԿՕՄՈՍ-ի քարտուղարություն, որոնց հիման վրա պատրաստվում է գնահատման նախագիծ: Դրա մեջ մտնում են հուշարձանի հակիրճ նկարագրությունն ու պատմությունը, դրա օրենսդրական պաշտպանության, կառավարման և պահպանվածության վիճակի մասին ամփոփագիրը, տվյալ հարցերով մեկնաբանություններ և Համաշխարհային ժառանգության կոմիտեին ուղղված առաջարկությունների նախագիծ: Այնուհետև, գնահատման եզրակացությունների նախագիծը ներկայացվում է ԻԿՕՄՈՍ-ի Համաշխարհային ժառանգության խորհրդի երկօրյա կամ եռօրյա նիստին: Խորհրդի մեջ են մտնում Գործադիր կոմիտեի անդամները, ովքեր

գալիս են աշխարհի բոլոր մասերից և ունեն բազմազան հմտություններ և փորձ: Գործադիր կոմիտեի անդամներին կցվում են որոշակի դասի ժառանգության փորձագետներ, որոնք ներառված են անվանակարգերի տարեկան ցանկում, բայց ներգրավված չեն կոմիտեում: Կախված անվանակարգի բնույթից, ԻԿՕՄՈՍ-ը կարող է հրավիրել նաև TICCIH-ի և Docomomo ներկայացուցիչներին՝ խորհրդի քննարկումներին միանալու համար:

Խորհուրդն աշխատում է գաղտնիության պայմաններում՝ ուղղորդվելով ԻԿՕՄՈՍ-ի քաղաքականության փաստաթղթով (առկա է ԻԿՕՄՈՍ-ի պաշտոնական էջում): Յուրաքանչյուր անվանակարգ ներկայացվում է ԻԿՕՄՈՍ-ի ներկայացուցչի կողմից 10–15 րոպեների ընթացքում, որից հետո սկսվում է քննարկումը: Անվանակարգի օբյեկտիվ և սպառիչ ուսումնասիրությունից հետո պատրաստվում են ԻԿՕՄՈՍ-ի խմբային առաջարկությունները, իսկ գնահատման եզրակացությունները վերանայվում և տպվում են Համաշխարհային ժառանգության կոմիտեին ներկայացնելու նպատակով:



Մատենագիտություն

Ընդհանուր

Բադման Թ., Բոմհարդ Բ. և Դինգուալ Փ., 2008 թ., Համաշխարհային ժառանգության անվանակարգերը բնության հուշարձանների համար. տեղեկատվական ձեռնարկ կիրառողների համար, Շվեյցարիա, IUCN:

Քեմերոն Ս., 2005 թ., Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի հարցերով հատուկ փորձագիտական հանդիպման տեղեկատվական փաստաթուղթ. Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայեցակարգ, Կազան, Թաթարստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն.
http://cmsdata.iucn.org/downloads/kazan_abs_english.pdf

Դե Մեռոդ Ե., Սմիթս Ռ. և Ուեսթրիք Ս., 2004 թ., Կապելով համաշխարհային և տեղական արժեքները. նախապատրաստելով կայուն ապագա համաշխարհային ժառանգության համար, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 13).
http://whc.unesco.org/en/series/ (անգլերեն կայքէջ)
http://whc.unesco.org/fr/series/ (ֆրանսերեն կայքէջ)

Դինգուոլ Փ., Ուեյգել Թ. և Բադման Թ. 2005 թ. Համաշխարհային երկրաբանական ժառանգություն. Գլոբալ շրջանակ: Գլանդ, Շվեյցարիա, IUCN

Էնգելս Բ., Օհնեզորգ Բ. և Բուրմեստեր Ա. (խմբ.): 2009 թ. Բնության համաշխարհային ժառանգության սերիական հուշարձանների անվանակարգումն ու կառավարումը – ներկա վիճակը, մարտահրավերներն ու հնարավորությունները: 2008 թ. Նոյեմբերի 26-30-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի և IUCN- ի համատեղ համագործակցությամբ Գերմանիայի բնապահպանության դաշնային գործակալության (BfN) կողմից կազմակերպված սեմինարի նյութեր:

Հոքինգս Մ., Ջեյմս Ռ., Սթոլթոն Ս., Դադլի Ն., Մաթուր Վ., Մակոմբո Ջ., Կուռռո Ջ. և Փերիշ Ջ., 2008 թ., Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը. Գնահատելով կառավարման արդյունավետությունը Համաշխարհային բնության ժառանգության հուշարձանների համար, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 23).
http://whc.unesco.org/en/series/23/ (անգլերեն կայքէջ)
http://whc.unesco.org/fr/series/23 / (ֆրանսերեն կայքէջ)

ԻԿՕՄՕՍ, 1965 թ., Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության ու վերականգնման միջազգային խարտիա (1964 թ. Վենետիկյան խարտիա), Փարիզ, ԻԿՕՄՕՍ.
http://www.icomos.org/venice_charter.html

ԻԿՕՄՕՍ, 2005 թ., Համաշխարհային ժառանգության ցանկ. լրացնելով բացթողումները - գործողությունների պլան ապագայի համար, Փարիզ, ԻԿՕՄՕՍ.
http://www.international.icomos.org/world_heritage/gaps.pdf

ԻԿՕՄՕՍ, 2005 թ., Ժառանգության կառուցվածքների, տեսարժան վայրերի և տարածքների կոնսերվացման մասին Սիանի հռչակագիր.
http://www.international.icomos.org/charters/xian-declaration.pdf

ԻԿՕՄՕՍ, 2008 թ., Համաշխարհային ժառանգության ցանկում մշակութային հուշարձանների ընդգրկման ստանդարտների կոմպենդիում.
http://whc.unesco.org/en/sessions/32COM/documents/

IUCN, 2000 թ. Համաշխարհային ժառանգություն և հանքարդյունաբերություն:
http://unesdoc.unesco.org/images/0012/001231/123112e.pdf

IUCN, 2003 թ. Համաշխարհային ժառանգությունը Բորեալ գոտում: Հասանելի է IUCN կայքէջում:

Մատենագիտություն

IUCN, 2004 թ. Համաշխարհային ժառանգության ցանցի վերանայում. Կենսաաշխարհագրություն, բնակավայրեր, կենսաբազմազանություն. Համաշխարհային ժառանգության բնական տեղանքապատկերների գլոբալ ռազմավարության ներդրում: Հասանելի է IUCN –ի կայքէջում:

IUCN, 2005 թ. a. Բարելավելով Համաշխարհային ժառանգության անվանակարգերի IUCN-ի գնահատման գործընթացները: Ներդրում արժանահավատ և հավասարակշռված համաշխարհային ժառանգության ցանկ մշակելու համար: Հասանելի է IUCN-ի կայքէջում:

IUCN, 2005 թ. b. Համաշխարհային ժառանգության թեմատիկ ուսումնասիրություն Կենտրոնական Ասիայի համար. տարածաշրջանային ակնարկ: Հասանել է IUCN –ի կայքէջում:

IUCN, 2006 թ. Համաշխարհային ժառանգության ցանկ. ուղեցույց և ապագա առաջնահերթություններ՝ պոտենցիալ Համաշխարհային բացառիկ արժեք ներկայացնող բնության ժառանգությունը բացահայտելու համար: Հասանելի է IUCN կայքէջում:

IUCN, 2007 թ. Նախնական ցանկերի ներդաշնակությունը Կենտրոնական, Արևելյան և Հարավ-Արևելյան Եվրոպայում: Հասանելի է IUCN կայքէջում:

IUCN, 2008 թ. a. Բնության համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման պլանավորում, մեթոդական ձեռնարկ ոլորտի մասնագետների համար, միջանկյալ տարբերակ: Պաշտպանված տարածքների IUCN ծրագիր (IUCN Համաշխարհային ժառանգության ուսումնասիրություն 5.): Հասանելի է IUCN կայքէջում:

IUCN, 2008 թ. b, Համաշխարհային բացառիկ արժեք - Համաշխարհային բնության ժառանգության ստանդարտներ, Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար բնության հուշարձանների ընդգրկման ստանդարտների կոմպենդիում : Հասանելի է IUCN կայքէջում:

IUCN, 2008 թ. c, Համաշխարհային ժառանգություն և պաշտպանված տարածքներ: Հասանելի է IUCN կայքէջում:

IUCN, 2008 թ. d: Համաշխարհային ժառանգության քարանձավները և կարստային տարածքները: Հասանելի է IUCN կայքէջում:

IUCN, 2009 թ. Բնության Համաշխարհային ժառանգության սերիական հուշարձաններ: Հասանելի է IUCN կայքէջում:

Յոկիլեհթո Ջ., 2008 թ. Համաշխարհային ժառանգության ցանկ: Ի՞նչ է Համաշխարհային բացառիկ արժեքը: Մշակութային համաշխարհային ժառանգության Համաշխարհային բացառիկ արժեքի սահմանում: Փարիզ, ԻԿՕՄՕՍ: (Հուշարձաններ և տեսարժան վայրեր): http://www.international.icomos.org/publications/index.html

Մեյգին Կ. Չեյպ Ս. 2004 թ. Համաշխարհային ժառանգության ցանցի ակնարկ: Կենսաաշխարհագրություն, բնակավայրեր և կենսաբազմազանություն: IUCN/UNEP-WCMC:

Մարտին Օ., և Պիատտի Ջ. (խմբ.) 2009 Համաշխարհային ժառանգությունը և պահպանական գոտիները, Համաշխարհային ժառանգության և պահպանական գոտիների հարցերով միջազգային փորձագիտական հանդիպում, Դավոս, Շվեյցարիա, 11-14 մարտի, 2008 թ., Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն, (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 25):
http://whc.unesco.org/en/series/25 (անգլերեն կայքէջ)
http://whc.unesco.org/fr/series/25 (ֆրանսերեն կայքէջ)

Պեդերսեն Ա. 2002 թ. Զբոսաշրջության կառավարումը Համաշխարհային ժառանգության հուշարձաններում. գործնական ձեռնարկ համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարիչների համար: Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն: (Համաշխարհային ժառանգության ձեռնարկներ 1)»
http://whc.unesco.org/en/series/1 (անգլերեն կայքէջ)

http://whc.unesco.org/fr/series/1 (ֆրանսերեն կայքէջ)

ՅՈՒՆԵՍԿՕ 1972, Համաշխարհային մշակութային և բնության ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա: (Համաշխարհային ժառանգության կոնվենցիա):
http://whc.unesco.org/en/conventiontext/ (անգլերեն կայքէջ)
http://whc.unesco.org/fr/conventiontexte/ (ֆրանսերեն կայքէջ)

ՅՈՒՆԵՍԿՕ 2003, Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա:
http://www.unesco.org/culture/ich/index.php?lg=en&pg=00022 (անգլերեն կայքէջ)
http://www.unesco.org/culture/ich/index.php?lg=fr&pg=00022 (ֆանսերեն կայքէջ)

ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Համաշխարհային ժառանգության կենտրոն: Նախնական ցանկեր
http://whc.unesco.org/en/tentativelists/ (անգլերեն կայքէջ)
http://whc.unesco.org/fr/listesindicatives/ (ֆրանսերեն կայքէջ)

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն: Համաշխարհային ժառանգության ցանկ:
http://whc.unesco.org/en/list/ (անգլերեն կայքէջ)
http://whc.unesco.org/fr/list/ (ֆրանսերեն կայքէջ)

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն: 1994 թ., Իսկության վերաբերյալ Նարայի փաստաթուղթ: http://www.international.icomos.org/charters/nara_e.htm: (Հրատարակվել է նաև որպես Գործառնական ուղեցույցների հավելված 4):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն: 2005թ., Համաշխարհային ժառանգության և ժամանակակից ճարտարապետության՝ «Պատմական քաղաքային տեղանքապատկերների կառավարման մասին» Վիեննայի հուշագիր:
http://whc.unesco.org/archive/2005/whc05-15ga-inf7e.doc

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն: 2011 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման Գործառնական ուղեցույց:
http://whc.unesco.org/en/guidelines/ (անգլերեն կայքէջ)
http://whc.unesco.org/fr// (ֆրանսերեն կայքէջ)

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն /Նիդերլանդների կառավարություն/, 1998թ. Համաշխարհային ժառանգության գլոբալ ռազմավարության զեկույց. բնության և մշակութային ժառանգության փորձագետների հանդիպում, 1998թ. մարտի 25-29-ը, Ամստերդամ, Նիդերլանդներ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն /ԻԿԿՌՕՄ, 2004թ. համաշխարհային ժառանգության մոնիթորինգ (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 10):
http://www.international.icomos.org/world_heritage/gaps.pdf (անգլերեն կայքէջ)
http://www.international.icomos.org/world_heritage_fre/whlgaps.htm (ֆրանսերեն կայքէջ)

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ բնության հուշարձանների գլոբալ համեմատական վերլուծության և նախնական ցանկերի վերանայման և թարմացման համար

IUCN-ի տեխնիկական և թեմատիկ ուսումնասիրություններ

• Աշխարհի ամենամեծ բնական տարածքները. Համաշխարհային ժառանգության որակական հատկանիշ ունեցող բնության հուշարձանների ինդիկատիվ գույքագրում (1982 թ.):

• Մոլորակի երկրաբանական պատմությունը. բովանդակային կառուցվածք Համաշխարհային ժառանգության բրածո վայրերի անվանակարգերի գնահատման համար (1994 թ.)

• Համաշխարհային ժառանգության ափամերձ և ծովային պաշտպանվող տարածքների գլոբալ ակնարկ (1997 թ.)

• Համաշխարհային ժառանգության անտառային պաշտպանվող տարածքների գլոբալ ակնարկ (1997 թ.)
• Մարդու կողմից օգտագործվող Համաշխարհային ժառանգության բնության հուշարձանների գլոբալ ակնարկ (1997 թ.)
• Համաշխարհային ժառանգության կենսաբազմազանության համար առանձնահատուկ կարևորություն ունեցող պաշտպանվող տարածքների գլոբալ ակնարկ (2000 թ.)
• Օվկիանոսյան ո՞ր կղզիներն են արժանի Համաշխարհային ժառանգության կարգավիճակի (1991 թ.):
• Հարավօվկիանոսյան կղզիներում Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման հարցերով աշխատանքային խմբի զեկույց (1992 թ.)
• Բնության համաշխարհային ժառանգության վայրերի հետագա ուղղությունները Արևելյան և Հարավարևելյան Ասիայում: Լրացնելով բիոմի բացերը՝ Համաշխարհային ժառանգության միջոցով կենսաբազմազանության պահպանմանն ուղղված թեմատիկ մոտեցում, Լես Մոլոյ (2000 թ.):
• Բնության Համաշխարհային ժառանգության պոտենցիալ հուշարձանները Եվրոպայում, Լարս-Էրիկ Էսպինգ (1998 թ.)
• Ծովային պաշտպանվող տարածքների գլոբալ ներկայացուցչական համակարգ, համաշխարհային բանկ /IUCN/, 4 հատոր (1995 թ.)

Տարածաշրջանային հանդիպումներից զեկույցներ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախաձեռնություններ՝ ուղղված բնության Համաշխարհային ժառանգության պոտենցիալ հուշարձանների բացահայտմանը

• Աշխատանքային խումբ բրածո հուշարձանների գլոբալ գույքագրման համար (1991 թ.)
• Հյուսիսային Համաշխարհային ժառանգություն - նոր տարածքների առաջարկներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար (1996 թ.)
• Համաշխարհային ժառանգության հուշարձանների բացահայտում Արաբական երկրներում (1999 թ.)
• Արևադարձային անտառներ (Բերաստագիի հանիպման զեկույց-1998 թ.)
• Համաշխարհային ժառանգության հուշարձանների բացահայտում խաղաղօվկիանոսյան տարածշրջանում (1999 թ.)
• Համաշխարհային ժառանգության հուշարձանների առաջադրման վերաբերյալ տարածաշրջանային աշխատաժողով, Մոզամբիկ (2000թ.)
• Բնության ժառանգության վերաբերյալ սեմինար Կարիբյան տարածաշրջանում, Սուրինամ (2000 թ.)
• Կենտրոնական Ասիայի հանդիպում (2000 թ.)
• Կարստային հուշարձաններ արևելյան և Հարավարևելյան Ասիայում (2001թ.)
• Ալպյան կամարի հանդիպում (2000-2001 թթ.)
• Արևադարձային ծովային և ափամերձ տարածքներ (Վիետնամի աշխատաժողով 2002 թ.)
• Բորեալ անտառի պաշտպանվող տարածք (Ռուսաստանի Դաշնություն, հոկտեմբեր 2003 թ.)

Հղումներ

Բրդլայֆ ինտերնեշնլ (BirdLife International), 1998 թ. Աշխարհի էնդեմիկ թռչունների տարածք, Կենսաբազմազանության պահպանման առաջնայնությունները, Քեմբրիջ, Միացյալ Թագավորություն, Բրդլայֆ ինտերնեշնլ:

Բրդլայֆ ինտերնեշնլ (BirdLife International), 2000 թ. Աշխարհի վտանգված թռչուններ, Բարսելոնա /Քեմբրիջ, Lynx Edicions/ Բրդլայֆ ինտերնեշնլ:

Հիլարի Ա., Կոկկոնեն Մ. և Մաքս Լ. (խմբ.) 2003 թ. Համաշխարհային ժառանգության ծովային կենսաբազմազանության վերաբերյալ աշխատաժողովի նյութեր, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 4):

ԻԿՕՄՕՍ, 2004 թ., ԻԿՕՄՕՍ-ի Համաշխարհային ժառանգության ցանկի և նախնական

ցանկերի վերլուծություն և արդյունքներից բխող գործողությունների ծրագիր, Փարիզ, ԻԿՕՄՕՍ:

IUCN, Համաշխարհային ժառանգության հատուկ հարցեր, Փարքս, հատոր 7, No 2

IUCN, 2004 թ. Համաշխարհային ժառանգության ցանկ, ապագա առաջնահերթություններ Համաշխարհային ժառանգության բնության և խառը հուշարձանների արժանահավատ և ամբողջական ցանկ ունենալու համար: Գլանդ, Շվեյցարիա, IUCN-ի պաշտպանվող տարածքների ծրագիր:

Միկլոշ Դ. և Ուդվարդի Մ. 1975 թ. Աշխարհի կենսաաշխարհագրական շրջանների դասակարգում՝ պատրաստված որպես ներդրում ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մարդը և կենսոլորտը» ծրագրին: Մորժ, Շվեյցարիա, IUCN: (փաստաթղթեր No 18)

Սմիթ Գ. և Յակուբովսկա Ջ. 2000 թ. Համաշխարհային ժառանգության ցանկի կենսաբազմազանության համար կարևոր նշանակություն ունեցող պաշտպանվող տարածքների վերաբերյալ գլոբալ ակնարկ, Քեմբրիջ, Միացյալ Թագավորություն, UNEP-ի Համաշխարհային պահպանության մոնիթորինգի կենտրոն:

Թորսել Ջ. Ֆերստեր Լեվի Ռ. և Սիգատի Տ., 1997: Համաշխարհային ժառանգության ցանկի ափամերձ և ծովային պաշտպանվող տարածքների գլոբալ ակնարկ: Գլանդ, Շվեյցարիա, IUCN-ի Բնության ժառանգություն ծրագիր:

Թորսել Ջ. և Համիլտոն Լ. 2002 թ. Համաշխարհային ժառանգության ցանկի լեռնային պաշտպանվող տարածքների գլոբալ ակնարկ: Գլանդ, Շվեյցարիա, IUCN-ի պաշտպանվող տարածքների ծրագիր:

Թորսել Ջ. և Սիգատի Տ. 1997թ. a: Համաշխարհային ժառանգության ցանկի անտառային պաշտպանվող տարածքների գլոբալ ակնարկ: Գլանդ, Շվեյցարիա, IUCN-ի Բնության ժառանգություն ծրագիր:

Թորսել Ջ. և Սիգատի Տ. 1997թ. b: Բնության Համաշխարհային ժառանգության հուշարձանների օգտագործումը մարդու կողմից: Գլոբալ ակնարկ, Շվեյցարիա, IUCN-ի Բնության ժառանգություն ծրագիր:

UNEP-WCMC 1992 թ. Գլոբալ կենսաբազմազանություն. մոլորակի կենդանի ռեսուրսների վիճակը: Լոնդոն, Chapman & Hall պահպանության Համաշխարհային մոնիթորինգի կենտրոն:

UNEP-WCMC 2004 թ. Համաշխարհային ժառանգության ցանցի վերաբերյալ ակնարկ. կենսաաշխարհագրություն, բնակավայրեր և կենսաբազմազանություն: Քեմբրիջ, Միացյալ Թագավորություն, UNEP-ի պահպանության Համաշխարհային մոնիթորինգի կենտրոն:

Ուելս Ռ. Տ. 1996 թ. Մոլորակի երկրաբանական պատմությունը. կոնտեքստային ցանց Համաշխարհային ժառանգության բրածո վայրերի անվանակարգերի գնահատման համար: Գլանդ, Շվեյցարիա, IUCN-ի Բնության ժառանգություն ծրագիր:

WWF/IUCN 1994 թ. Բույսերի բազմազանության կենտրոններ. Ուղեցույց և դրանց պահպանության ռազմավարություն – հատոր 1, եռահատոր, Քեմբրիջ, Միացյալ Թագավորություն, IUCN- ի հրատարակությունների բաժին:

Կոնտակտային տեղեկատվություն

Անուն և հասցե	Համառոտ մանրամասներ	Կոնվենցիայի շրջանակներում պատասխանատվություններ
ԻԿԿՌՕՄ **Դի Սան Միշել 13** **I-00153 Հռոմ** **Իտալիա** **Հեռ. +39 06 585-531** **Ֆաքս. +39 06 585-53349** **Էլ. Փոստ. iccrom@iccrom.org** **http://www.iccrom.org**	ԻԿԿՌՕՄ–ը (Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման ուսումնասիրության միջազգային կենտրոն) միջկառավարական կազմակերպություն է, որի կենտրոնակայանը Հռոմում է, Իտալիա: Հիմնվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1956 թ., ԻԿԿՌՕՄ –ը, համաձայն իր կանոնադրության, իրականացնում է հետազոտություն, փաստաթղթավորում, տեխնիկական աջակցություն, վերապատրաստման և հանրային իրազեկման ծրագրեր՝ անշարժ և շարժական մշակութային ժառանգության պահպանությունը ամրապնդելու նպատակով	ԻԿԿՌՕՄ-ի հատուկ դերը կապված կոնվենցիայի հետ ներառում է. •Լինել վերապատրաստման առաջնահերթ գործընկեր մշակութային ժառանգության համար •Վերահսկել Համաշխարհային ժառանգության մշակութային հուշարձանների պահպանվածության վիճակը •Վերանայել անդամ պետությունների կողմից ներկայացված միջազգային օժանդակության համար հարցումները, •Ներդրում ունենալ և աջակցություն տրամադրել կարողությունների զարգացման համար
ԻԿՕՄՕՍ **Սեմինար դե Կոնֆլանս** **փողոց 11** **94220 Շարենտոն-լե-Պոնտ** **75015 Փարիզ** **Ֆրանսիա** **Հեռ. +33 (0)1 45 67 67 70** **Ֆաքս. +33 (0)1 45 66 06 22** **Էլ. փոստ. secretariat@ icomos.org** **http://www.icomos.org**	ԻԿՕՄՕՍ-ը (Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ) ոչ կառավարական կազմակերպություն է, որի կենտրոնակայանը գտնվում է Փարիզում, Ֆրանսիա: Հիմնադրվել է 1965 թ.: Նրա դերն է նպաստել ճարտարապետական և հնէագիտական ժառանգության պահպանությանն ուղղված տեսության, մեթոդաբանության և գիտության մեթոդների կիրառմանը: Դրա աշխատանքը հիմնված է 1964 թ. Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության և վերականգնման միջազգային Խարտիայի (Վենետիկյան խարտիա) սկզբունքների վրա	ԻԿՕՄՕՍ-ի հատուկ դերը կապված կոնվենցիայի հետ ներառում է. • Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու համար առաջադրված հուշարձանների գնահատումը • Վերահսկել Համաշխարհային ժառանգության մշակութային հուշարձանների պահպանության վիճակը • Վերանայել անդամ պետությունների կողմից ներկայացված միջազգային օժանդակության համար հարցումները, • Ներդրում ունենալ և աջակցություն տրամադրել կարողությունների զարգացման համար
IUCN **Մովերնեյ փողոց 28** **1196 Գլանդ** **Շվեյցարիա** **Հեռ. +41 (22) 999-0000** **Ֆաքս. +41 (22) 999-0002** **Էլ. փոստ.** **worldheritage@iucn.org** **http://www.iucn.org**	IUCN-ը (Բնության պահպանության միջազգային միություն) հիմնադրվել է 1948 թվականին և համաշխարհային գործընկերության մեջ համախմբում է ազգային կառավարություններին, ՀԿ-ներին և գիտնականներին: Դրա առաքելությունն է ազդել, խրախուսել և աջակցել ամբողջ աշխարհի հասարակություններին՝ պաշտպանելու բնության ամբողջականությունն ու բազմազանությունը և ապահովել, որ բնական ռեսուրսների ցանկացած օգտագործում լինի արդարացի և էկոլոգիապես կայուն: IUCN - ի կենտրոնակայանը գտնվում է Գլանդում, Շվեյցարիա:	IUCN-ի հատուկ դերը կապված կոնվենցիայի հետ ներառում է. • Համաշխարհային ժառանգության ցուցակում ընդգրկվելու համար առաջադրված հուշարձանների գնահատումը • Վերահսկել Համաշխարհային ժառանգության բնության հուշարձանների պահպանության վիճակը • վերանայել անդամ պետությունների կողմից ներկայացված միջազգային օժանդակության համար հարցումները, • Ներդրում ունենալ և աջակցություն տրամադրել կարողությունների զարգացման համար
ՅՈՒՆԵՍԿՕ-ի **Համաշխարհային ժառանգության կենտրոն** **7, Ֆոնտենոյ հրապարակ** **75352 Փարիզ 07 SP** **Ֆրանսիա** **Հեռ. +33 (0)1 45 68 11 04** **http://whc.unesco.org**	Համաշխարհային ժառանգության կենտրոնը հիմնադրվել է 1992 թվականին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի առանցքային կետն ու համակարգողն է Համաշխարհային ժառանգության հետ կապված բոլոր հարցերի համար: Ապահովելով կոնվենցիայի ամենօրյա կառավարումը՝ կենտրոնը կազմակերպում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի ամենամյա նիստեր, խորհուրդ է տրամադրում անդամ պետություններին հուշարձանների անվանակարգերի նախապատրաստման գործում, խնդրանքի դեպքում կազմակերպում է Համաշխարհային ժառանգության ֆոնդից միջազգային աջակցություն և համակարգում է հուշարձանների վիճակի մասին հաշվետվությունն ու սպառնալիքի դեպքում ձեռնարկված արտակարգ գործողությունները: Կենտրոնը կազմակերպում է նաև տեխնիկական սեմինարներ, թարմացնում է Համաշխարհային ժառանգության ցանկը և տվյալների բազան, մշակում է ուսուցողական նյութեր՝ երիտասարդների շրջանում ժառանգության պահպանման կարիքների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով, ինչպես նաև հանրությանը տեղեկացնում է Համաշխարհային ժառանգության հարցերի մասին:	

ՅՈՒՆԵՍԿՕ

Համաշխարհային
ժառանգության
կոնվենցիա

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք՝
ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն

Ֆոնտենոյ հրապարակ 7
75352 Փարիզ 07 SP, Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0) 1 45 68 11 04
http://whc.unesco.org